ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ a.davtyan@prosecutor.am

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
պարոն Ա. Սիմոնյանին

Հարգարժան պարոն Սիմոնյան

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ուղարկում եմ Հայաստանի Հանրապետության դատախազության 2021 թվականի գործունեության մասին հաղորդումը:

Առդիր՝ 312 թերթ:

Խորին հարգանքով՝

Արդարադատության երկրորդ
դասի պետական խորհրդական ***Ա.Դավթյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը. հանցագործությունների դեմ պայքարի, հանցավորության հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքները.....3
2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.....47
3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.....96
4. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ 123
5. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ.....154
6. Պետական շահերի պաշտպանության ոլորտ.....209
7. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ 235
8. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 243
9. Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ 268
10. Քաղաքացիների ընդունելության, դիմումների քննարկման և հանրային կապերի ոլորտ.....306

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը. հանցագործությունների դեմ պայքարի, հանցավորության հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքները

2021թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման մարմինների կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ հանրապետությունում հանցավորության հակազդման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության, օրինականության ապահովման ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2021թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 30.245 դեպք (2020թ.՝ 26.468), որոնցից 16.438-ը (2020թ.՝ 13.892)՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 3777-ով կամ 14.3%-ով:

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ 2021թ. արձանագրվել է ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի աճ:

Այսպես, ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերը աճել են 2831-ով կամ 19.3%-ով (14629-17460), միջին ծանրության հանցագործությունների դեպքերը՝ 522-ով (7466-7988) կամ 7.0%-ով, ծանր հանցագործությունների դեպքերը՝ 370-ով (4077-4447) կամ 9.1%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը՝ 54-ով կամ 18.2%-ով (296-350):

Տարեթիվը	Հանցագործության դեպքեր	ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	միջին ծանրության հանցագործության դեպքեր	ծանր հանցագործության դեպքեր	առանձնապես ծանր հանցագործության դեպքեր
2020թ.	26.468	14.629	7466	4077	296
2021թ.	30.245	17.460	7988	4447	350
աճ/ նվազում	+3777	+2831	+522	+370	+54
	+14.3%	+19.3%	+7.0%	+9.1%	+18.2%

Հանցագործության 30.245 դեպքերի բացարձակ մեծամասնությունը՝ 84.1%-ը կազմում են ոչ մեծ (17.460 դեպք կամ 57.7%) և միջին ծանրության (7988 դեպք կամ 26.4%-ը), այսինքն՝ նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող հանցագործությունները: Առանձնապես ծանր հանցագործությունները ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմել են 1.2%-ը (2020թ.՝ 1.1%), իսկ ծանր հանցագործությունները՝ 14.7%-ը (2020թ.՝ 15.4%):

2020 թվական **2021 թվական**





2011-2021 թվականների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 18.1%: Մինչդեռ, 2021թ. ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների ընդամենը 15.9%-ը: Վերջին 10 տարվա նշված ցուցանիշից ավելի ցածր ցուցանիշ արձանագրվել է միայն 2017թ.՝ 14.3%:

Ստորև ներկայացվում է 2011-2021թթ. հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

Տարեթիվը	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Ոչ մեծ ծանրության հանցագործություններ		Միջին ծանրության հանցագործություններ		Ծանր հանցագործություններ		Առանձնապես ծանր հանցագործություններ		Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ	
2011	16572	8478	51.1%	3785	22.8%	3818	23.0%	491	3.1%	4309	26.0%
2012	15776	9420	59.7%	3656	23.2%	2544	16.1%	156	1.0%	2700	17.1%
2013	18333	11372	62.0%	3743	20,4%	3088	16,9%	130	0,7%	3218	17.5%
2014	17546	9981	56.9%	4073	23.2%	3319	18.9%	173	1.0%	3492	19.9%
2015	17043	9185	53.9%	4455	26.1%	3238	19.0%	165	1.0%	3403	20.0%
2016	18.764	10757	57.3%	4728	25.2%	3081	16.4%	198	1.1%	3279	17.5%
2017	20.285	12380	61.0%	5012	24,7%	2729	13,4%	164	0,8%	2893	14.3%
2018	22.551	11989	53.2%	6700	29.7%	3638	16.1%	224	1.0%	3862	17.1%
2019	26.850	14613	54.4%	7463	27.8%	4490	16.7%	284	1.1%	4774	17.8%
2020	26.468	14629	55.3%	7466	28.2%	4077	15.4%	296	1.1%	4373	16.5%
2021	30.245	17460	57.7%	7988	26.4%	4447	14.7%	350	1.2%	4797	15.9%

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորվել է հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության (4910-6356 կամ 29.5%-ով), սեփականության (13.129-15.149 կամ 15.4%-ով) և տնտեսական գործունեության դեմ ուղղված (783-1034 կամ 32.1%-ով) հանցագործությունների դեպքերի աճով: Մասնավորապես, էականորեն աճել են թմրամիջոցների մաքսանենգության (222-420 կամ 89.2%-ով), համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված (55-96 կամ 74.5%-ով), թմրամիջոցների հետ կապված (1226-1544 կամ 25.9%-ով) հանցագործությունների, հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու (164-265 կամ 61.6%-ով), ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության (48-58 կամ 28%-ով), գողությունների (9523-11.218 կամ 17.8%-ով), համակարգչային տեխնիկայի միջոցով հափշտակությունների (154-181 կամ 17.5%-ով) դեպքերը:

2021թ. թեև ոչ էականորեն, սակայն նվազել են մարդու դեմ ուղղված (4410-4375 կամ 0.8%-ով) և պետական իշխանության, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված (2842-2794 կամ 1.7%-ով) հանցագործությունները: Մասնավորապես, նվազել են բռնաբարության և բռնաբարության փորձի (25-14 կամ 44.0%-ով), պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու (452-346 կամ 23.5%-ով), իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու (65-52 կամ 20.0%-ով), ժամկետային զինվորական ծառայությունից, վարժական հավաքներից խուսափելու (994-935 կամ 5.9%-ով), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (1024-976 կամ 4.7%-ով), այդ թվում՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու (224-218 կամ 2.7%-ով), խուլիգանության (338-322 կամ 4.7%-ով) դեպքերը: Հուսադրող է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի նվազումը: Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության նման դեպքերի թիվը նվազել է 26-ով կամ 31.3%-ով (83-57):

Վերջին 10 տարվա ընթացքում հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի թիվը ներկայացվում է ստորև.

Տարեթիվը	**Հրազենի գործադրմամբ հանցագործություններ**
2012թ.	63
2013թ.	66
2014թ.	68
2015թ.	69
2016թ.	62
2017թ.	52
2018թ.	60
2019թ.	74
2020թ.	83

2021թ.	57

2021 թվականին արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 950 դեպք, որոնցից 105-ը՝ կաշառք ստանալու (2020թ.՝ 88), 80-ը՝ կաշառք տալու (2020թ.՝ 55), 129-ը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացման (2020թ.՝ 160), 113-ը՝ պաշտոնեական կեղծիքի (2020թ.՝ 155), 271-ը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (2020թ.՝ 389), 50-ը՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքեր (2020թ.՝ 52) են:

Ինչպես վերը նշվեց, 2021թ. հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 30.245 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է հասնում 1020 դեպք /2020թ.՝ 894/: Պետք է նշել, որ այս ցուցանիշով մեր երկիրն էական դրական պատկեր է ապահովել (համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշը Մոլդովայում 1371 է, իսկ ԱՊՀ երկրների միջին ցուցանիշը՝ 1037 է):

2022թ. մարտի 3-ի դրությամբ worldpopulationreview.com կայքում հրապարակված տվյալների համաձայն՝ հանցավորության մակարդակի 2022 թվականի ցուցիչով (ցուցիչը հաշվարկվում է 0-ից 100 ինդեքսով՝ հանցավորության ցածր մակարդակից դեպի բարձր մակարդակ կարգով) Հայաստանը զբաղեցնում է 10-րդ տեղը՝ 22.79 ինդեքսով՝ առաջ անցնելով ինչպես ԱՊՀ բոլոր երկրներից, այնպես էլ եվրոպական երկրների մեծ մասից[1]: Համեմատության համար նշենք, որ Դանիան զբաղեցնում է 20-րդ տեղը՝ 26.22 ինդեքսով, Ֆինլանդիան՝ 23-րդ տեղը՝ 27.59 ինդեքսով, Նորվեգիան՝ 39-րդ տեղը՝ 33.72 ինդեքսով, Գերմանիան՝ 42-րդ տեղը՝ 35.79 ինդեքսով, Ռուսաստանը՝ 51-րդ տեղը՝ 39.99 ինդեքսով, Ղազախստանը՝ 97-րդ տեղը՝ 53.77 ինդեքսով, Բելառուսը՝ 113-րդ տեղը՝ 59.58 ինդեքսով:

Հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց՝ 2021թ. արձանագրվել է նաև հանցագործությունների բացահայտման ցուցանիշի աճ:

Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2021 թվականին հանրապետության քրեական հետապնդման մարմինների վարույթում գտնված քրեական գործերով և նյութերով անցնող բացահայտման տոկոսում հաշվվող 37. 510 դեպքից (2020թ.՝ 31.953) բացահայտվել է 21.636-ը (2020թ.՝ 17.806), չի բացահայտվել 15.874-ը (2020թ.՝ 14.147):

Այսինքն 2021թ. բացահայտման ցուցանիշը կազմել է 57.7%՝ նախորդ տարվա 55.7%-ի դիմաց: Այսպիսով, 2020թ. համեմատ, 2021թ. բացահայտման ցուցանիշը աճել է 2.0%-ով:

[1] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://worldpopulationreview.com/country-rankings/crime-rate-by-country

Պետք է փաստել, որ հաշվետու տարում բացահայտվել է 3830-ով ավելի հանցագործություն, քան նախորդ տարի /17.806-21.636/:

2021թ. նվազել է ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը, իսկ միջին ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշն աճել է:

Այսպես.

Միջին ծանրության հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 45.1%, այն դեպքում, երբ 2020թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը եղել է 42.8%:

Ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 34.4%, այն դեպքում, երբ 2020թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 35.3%:

Առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 58.0%՝ նախորդ տարվա 54.9%- ի դիմաց:

Որպես դրական ցուցանիշ պետք է նշել հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի բացահայտման ցուցանիշի բարձրացումը: Եթե 2020թ. բացահայտվել էր այդ հանցագործությունների 74.2%-ը, ապա 2021թ.՝ 74.8%-ը:

Նախորդ տարվա համեմատությամբ 2021թ. նվազել են մարդու դեմ ուղղված (75.9%-75.3%), տնտեսական գործունեության դեմ ուղղված (25.5%-23.0%), պետական իշխանության, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված (63.9%-63.4%) հանցագործությունների բացահայտման ցուցանիշները և, հակառակը, աճել են հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված (66.5%-69.3%) և սեփականության դեմ ուղղված (46.0%-50.3%) հանցագործությունների բացահայտման ցուցանիշները:

Ըստ հիմնական հանցատեսակների՝ բացահայտման ընդհանուր ցուցանիշից առավել բարձր է սպանությունների՝ 77.1%, սպանության փորձերի՝ 84.1%, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու՝ 85.2%, այդ թվում՝ ծանր՝ 71.3%, ճանապարհային երթևեկության կանոնների խախտման՝ 86.0%, ավազակության՝ 73.0%, կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության՝ 70.9%, իշխանության ներկայացուցչի դեմ բռնություն գործադրելու՝ 86.8% և տրանսպորտային միջոց փախցնելու՝ 80.0%, դեպքերի բացահայտման արդյունավետությունը, իսկ ցածր է՝ ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության՝ 0.0%, կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու՝ 2.2%, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների՝ 4.1%, թմրամիջոցների մաքսանենգության՝ 10.5%, դեպքերի բացահայտման ցուցանիշը:

Պետք է փաստել, որ 2021թ. նվազմամբ են դրսևորվել այն հանցագործությունների բացահայտման ցուցանիշները, օրինակ՝ համակարգչային

տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու, թմրամիջոցների մաքսանենգությունը, որոնցով արձանագրվել է դեպքերի էական աճ:

Չնայած ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշի աճին՝ պետք է փաստել, որ մարդու դեմ ուղղված հանցավորության մակարդակում արձանագրվել է նվազում: Այսպես՝ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4375 դեպք, որոնցից 1675-ը կամ 38.3%-ը՝ Երևան քաղաքում, իսկ 2700-ը կամ 61.7%-ը՝ ՀՀ մարզերում: /Նախորդ տարվա նույն ցուցանիշների հարաբերակցությունը համապատասխանաբար կազմել է 40%-60%:/

Փաստորեն, նախորդ տարվա համեմատությամբ (4410 դեպք), մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը նվազել են 35-ով կամ 0.8%-ով, ինչը, ընդհանուր հանցավորության աճի ֆոնի վրա, դրական ցուցանիշ է, հատկապես այն տվյալի հաշվառմամբ, որ 2021 թվականին ավելացել է մարդու դեմ ուղղված նոր հանցատեսակ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով:

Նշենք, որ 2021 թվականին արձանագրվել է նշված հոդվածով նախատեսված հանցագործության 268 դեպք: Եթե բովանդակային առումով համարժեք տվյալներ համեմատելու լինենք և այդ տվյալը 2021 թվականին արձանագրված մարդու դեմ ուղղված հանցագործությունների թվից՝ 4375-ից հանենք, ապա մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը կկազմի 4107, իսկ նվազման ցուցանիշը՝ 303 կամ **7%:**

Այսպիսով, արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցավորության մակարդակի նվազում՝ ընդհանուր հանցավորության աճի պայմաններում:

Հաշվետու ժամանակահատվածում բացահայտման տոկոսում հաշվառված մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերից բացահայտվել է 75.3%-ը, 2020 թվականի 75.9%-ի դիմաց: 2021 թվականի ընթացքում դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.6%-ով:

Պետք է փաստել, որ նախորդ տարիներին, բացառությամբ 2020թ., արձանագրվել էր մարդու դեմ ուղղված հանցագործությունների անընդմեջ նվազում՝ 2016 թվականի համեմատությամբ 2021 թվականին նվազումը 520-ով կամ 10.6%-ով: Այսպես՝

Տարեթիվը	մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը	Նվազման կամ աճի քանակային ցուցանիշը	Նվազման կամ աճի տոկոսային ցուցանիշը
2016թ.	4895		
2017թ.	4868	-27	-0.6
2018թ.	4799	-69	-1.4
2019թ.	4293	-506	-10.5

2020թ.	4410	+117	+2.7
2021թ.	4375	-35	-0.8

Մտահոգիչ է, որ աճել են մարդու դեմ ուղղված ամենածանր հանցագործությունների՝ սպանության՝ 10-ով կամ 20.0%-ով /50-60/ և սպանության փորձի՝ 7-ով կամ 17.9%-ով /39-47/ աճը:

Փաստենք, որ սպանության դեպքերի թվի աճն արձանագրվել է Երևան քաղաքում կատարված դեպքերի հաշվին. աճը 15-ով կամ 136.4%-ով /11-26/, իսկ սպանության փորձի դեպքերի թիվը՝ մարզերում կատարված դեպքերի հաշվին՝ 9-ով կամ 45.0%-ով /20-29/:

2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված սպանության 60 դեպքից 50-ը բացահայտվել է, չի բացահայտվել 10-ը, որոնցից 2-ը վերաբերում է անձի անհետ կորելու դեպքերին:

Հաշվետու ժամանակահատվածի և նախորդող 10 տարվա արձանագրված սպանությունների տվյալները ներկայացվում են ստորև՝

Տարեթիվը	2012-2021թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	2012-2021թթ. մշտական բնակչության թիվը ՀՀ-ում[2]	Գործակիցը 100 հազար մարդու հաշվով
2012թ.	50	3.021.400	1.65
2013թ.	48	3.026.900	1.59
2014թ.	53	3.017.100	1.76
2015թ.	52	3.010.600	1.73
2016թ.	66	2.998.600	2.2
2017թ.	49	2.986.100	1.64
2018թ.	35	2972700	1.18
2019թ.	47	2965300	1.58
2020թ.	50	2959700	1.69
2021թ.	60	2963300	2.02
Տարեկան	51	2992170	1.7

[2]Մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից՝ https://www.armstat.am/file/doc/99520878.pdf էջ 5:

միջին			

2012-2021թթ. տարեկան կատարված սպանությունների միջին թիվը կազմել է 51:

Նշենք, որ 2021 թվականին 100.000 բնակչին բաժին է ընկնում սպանության 2.02 դեպք: Այս ցուցանիշը վերջին 10 տարվա տարեկան միջին ցուցանիշից /1.7/ բարձր է 0.32-ով:

Սպանությունների դեպքերի վիճակագրությունը, դրա շարժընթացի միտումները կարևորագույն ցուցիչ են հանցավորության ընդհանուր վիճակի, հանցավորության դեմ տարվող պայքարի, այդ թվում՝ կանխարգելիչ միջոցների, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության, սոցիալ-հոգեբանական բազում գործոնների և, որ ամենակարևորն է, հասարակությունում անձի անվտանգության մակարդակի գնահատման համար:

Սպանության /այդ թվում՝ չավարտված/ դեպքերի կապակցությամբ դատախազական լիազորությունների արդյունավետության բարձրացման հրամայականը ՀՀ դատախազությունում մշտապես, հատկապես վերջին տարիներին, եղել է ընդգծված առաջնահերթություն: Սպանության դեպքերով մշտապես կատարվել են ամփոփումներ և ուսումնասիրություններ ու դրանց արդյունքներով ՀՀ ոստիկանությանը տրվել են համապատասխան հանձնարարականներ:

2021 թվականին նույնպես ընդգծվել է վերը նշված ոլորտի հանցավորության վիճակի վերլուծության և դրա արդյունքներով հանցավորության վիճակում դրական տեղաշարժ կատարելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

2021 թվականի ընթացքում սպանության և սպանության փորձի դեպքերի ուսումնասիրություն ու ամփոփում կատարվել է երեք անգամ: Ուսումնասիրության առարկա են դարձել 2021 թվականի երկու, ապա՝ երեք, այնուհետև՝ ութ ամսվա տվյալները:

Հաշվի առնելով սպանության և սպանության փորձի դեպքերի աճի կայուն բացասական միտումը, ինչպես նաև Երևան քաղաքում նշված հանցատեսակների շարունակական աճի միտումը, հերթական ուսումնասիրության առարկան են դարձել 2021 թվականի առաջին ութ ամիսներին արձանագրված սպանության և սպանության փորձի դեպքերը՝ առավել թիրախային ուսումնասիրության առարկա դարձնելով Երևանում սպանության դեպքերը:

Ուսումնասիրությունը փաստել է, որ 2021 թվականի առաջին ութ ամիսներին ՀՀ-ում արձանագրված սպանության և սպանության փորձի 73 դեպքից (37+36) 24-ը կամ 33%-ը կատարվել է հրազենի գործադրմամբ, ընդ որում՝ սպանության 37 դեպքից 7-ը կամ 19%-ը, սպանության փորձի 36 դեպքից 17-ը կամ 47.2%-ը:

Երևան քաղաքում կատարված սպանության և սպանության փորձի վերոնշյալ դեպքերից 10-ով հանցագործության գործիք է հանդիսացել հրազենը[3] (ատրճանակ, ինքնաձիգ):

Նշված ցուցանիշներն անհանգստացնող են գնահատվել՝ նկատի ունենալով ոչ միայն զենքի ապօրինի շրջանառության հանրային վտանգավորությունը, այլև հանցավոր նպատակներով նշված առարկաների օգտագործման իրական հնարավորությունը, տվյալ դեպքում՝ կյանքի դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքների կատարումը, որպիսի պարագայում ապօրինի զենք-զինամթերքի դեմ պայքարի շրջանակներում անհրաժեշտ է առավել ակտիվ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ձեռնարկում՝ նկատի ունենալով նաև Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի ռազմական գործողություններով պայմանավորված՝ հենց ռազմական գործողությունների ընթացքում կամ հրադադարի հաստատումից հետո զինամթերքի, պայթուցիկ նյութերի կամ սարքերի ապօրինի ձեռքբերման, հափշտակության, Արցախից Հայաստան փոխադրման դեպքերի առկայությունն ու նշված երևույթի դեմ անզիջում պայքարի անհրաժեշտությունը:

Ընդ որում, Երևան քաղաքում կատարված սպանության և սպանության փորձի դեպքերից 6-ը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, որպիսի պարագայում իրական վտանգի տակ է դրվում նաև այլ անձանց կյանքը՝ ստեղծելով համապատասխան վնասակար հետևանքներ առաջացնելու հավանականություն, որն ավելի մտահոգիչ է դարձնում նշյալ հանրորեն վտանգավոր արարքների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցված աճը:

Ուշագրավ է նաև, որ Երևան քաղաքում սպանություն կատարած անձանցից մեկը նախկինում դատապարտված է եղել հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարած սպանության և անզգուշությամբ մահ պատճառելու համար, մեկ հոգի դատապարտված է եղել զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու և ապօրինի կերպով զենք կրելու համար, իսկ ևս մեկ անձ՝ դիտավորությամբ մեկ ուրիշին ծանր մարմնական վնասվածք պատճառելու համար, ինչը վկայում է նախկինում կյանքի դեմ ուղղված առավել ծանր հանցանք կատարած, ինչպես նաև զենքի գործադրմամբ հանցանք կատարած անձանց վարքագծի նկատմամբ

[3] Նշենք, որ 2019 թվականին ՀՀ գլխավոր դատախազությունում կատարվել էր 2018 թվականի ընթացքում ՀՀ-ում հանցավորության վիճակի, կառուցվածքի և շարժընթացի ուսումնասիրություն ու վերլուծություն, որի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ոստիկանության պետին հանձնարարվել է (28.03.2019թ. 15/21-19 թվակիր գրություն) ձեռնարկել անհետաձգելի միջոցներ՝ իրավիճակն ուսումնասիրելու, պատճառներն ու նպաստող պայմանները վեր հանելու, գնահատելու, բացահայտման ցուցանիշները բարելավելու, հանցավորության վիճակն առավել վերահսկելի դարձնելու նպատակով:

օպերատիվ վերահսկողություն իրականացնելու համապատասխան մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտության մասին:

Նշենք, որ հանցագործությունների բացահայտումն ու պատասխանատվության անխուսափելիության /այդ թվում՝ նաև պատժի/ ապահովումը ոչ միայն հանցագործությունները նախականխելու նշանակություն ունեն, այլ նաև կարևոր է սոցիալական արդարությունը վերականգնելու առումով: Հանցագործությունից տուժած անձինք կամ նրանց մերձավորները, քրեական վարույթի միջոցով սոցիալական արդարության չհասնելու պարագայում, երբեմն փորձում են այդ «արդարությանը» հասնել մասնավոր, ոչ օրինական, այսպես ասած՝ ինքնադատաստանի միջոցով, ինչը հանցավորության վիճակի վրա կարող է վատթարագույն ազդեցություն ունենալ: Հենց այս առումով է կարևոր պատասխանատվության անխուսափելիության ժամանակին ապահովումը:

Որպես բերված փաստարկի հիմնավորում՝ նշենք 2021թ. Արարատի մարզում կատարված դեպքը, երբ ենթադրյալ սպանություն կատարած անձի տունն այրվել էր սպանությունից տուժածի հարազատների կողմից:

Անհանգստացնող է նաև այն, որ սպանության դեպքերի շարքում զգալի մաս են կազմում նաև այնպիսիք, որոնք նախկինում կատարված հանցագործության, այդ թվում՝ սպանության դեպքերի շարունակությունն են, ինչը վկայում է ոչ բոլոր դեպքերում հանցագործությունները նախականխելուն և կանխելուն ուղղված միջոցների պատշաճ մակարդակի մասին:

Վերը նշված տվյալները վկայում են այս ոլորտի հանցավորության վիճակի վատթարացման մասին, որպիսի հանգամանքը պահանջում է առավել մեծ ջանքերի գործադրում և համապարփակ միջոցառումների ձեռնարկում, հաշվի առնելով, նախորդ տարիների տվյալների հաշվառմամբ, ոլորտի հանցավորության բացասական կայուն աճի միտումը:

Սպանության և սպանության փորձի դեպքերի ուսումնասիրության արդյունքներով ՀՀ ոստիկանությանը հանձնարարվել է՝

- Ձեռնարկել անհետաձգելի համալիր միջոցառումներ՝ ոլորտի հանցավորության վիճակն ուսումնասիրելու, արձանագրված բացասական ցուցանիշների պատճառներն ու նպաստող պայմանները վեր հանելու, գնահատելու, բացահայտման ցուցանիշները բարելավելու, բացասական ցուցիչների վատթարացող տեմպը կանխելու, տվյալ ոլորտի հանցավորության վիճակն առավել վերահսկելի դարձնելու նպատակով:

- Հանցագործությունների կանխման ու նախականխման համատեքստում ձեռնարկել գործուն միջոցներ՝ նպատակ ունենալով ապահովելու անվտանգությունը, ուստիև՝ անձի ու հասարակության պաշտպանությունը քննարկվող առավել վտանգավոր հանցատեսակներից: Այդ նպատակով ձեռնարկել միջոցներ՝ ուղղված

հանցածին միջավայր ստեղծող իրավիճակները պարզելուն, շարունակություն ենթադրող լարված իրավիճակները հսկողության տակ պահելուն:

- Ձեռնարկել գործուն միջոցներ՝ ինչպես 2021թ., այնպես էլ նախորդ տարիներին կատարված սպանության և սպանության փորձի դեպքերը բացահայտելու ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ակտիվացնելու, դրանք առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

- Քննարկել նախկինում անձի կյանքի դեմ ուղղված, ինչպես նաև զենքի գործադրմամբ հանցանք կատարած անձանց վարքագծի նկատմամբ օպերատիվ վերահսկողություն իրականացնելու համապատասխան մեխանիզմներ մշակելու, առկա մեխանիզմները կատարելագործելու ընթացակարգեր մշակելու հարցը:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է այս բնույթի հանցագործությունների դեմ պայքարում ներդնել բոլոր ռեսուրսները, իսկ դրանց պատճառների, հանգամանքների արագ բացահայտման, ինչպես նաև քրեածին տարրերի նկատմամբ շարունակական վերահսկողություն իրականացնելու համար ցուցաբերել գերնախաձեռնողականություն՝ կոնկրետ գործողությունների մատնանշմամբ նախաքննական և օպերատիվ-հետախուզական մարմիններին ցուցումներ ու հանձնարարություններ տալու, դրանցով կոնկրետ արդյունքներ ապահովելու հարցում:

48-ով կամ 4.7%-ով /1024-976/ նվազել են առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերը: Ընդ որում՝ Երևան քաղաքում նշված դեպքերը նվազել են 21-ով կամ 5.8%-ով, ՀՀ մարզերում՝ 27-ով կամ 4%-ով:

2021 թվականին արձանագրվել է առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելու դեպքերի նվազում 6-ով կամ 2.7%-ով /224-218/: Ընդ որում՝ Երևանում նշված դեպքերը նվազել են 7-ով կամ 8.4%-ով /83-76/, իսկ մարզերում աճել են 1-ով կամ 0.7%-ով /141-142/:

Փաստենք նաև, որ 2021 թվականին շարունակվել են հանցավորության վիճակի վերլուծությունը և դատախազական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվող ամփոփումները նաև անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերով:

Միայն 2021 թվականին երկու անգամ հանցավորության վիճակի ուսումնասիրության առարկա են դարձել նաև անձի առողջության դեմ ուղղված ամենածանր հանցատեսակի՝ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելու դեպքերը՝ մի դեպքում ուսումնասիրության առարկան է դարձել 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քննված քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ

դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը, մյուս դեպքում՝ 2021 թվականի առաջին ութ ամիսներին կատարված տվյալ հանցատեսակի դեպքերը:

Ամփոփումների ընթացքում վերհանվել են տեսական և գործնական հիմնախնդիրներ՝ կապված նշված հանցագործությունների քրեաիրավական որակման, ապացույցների ձեռքբերման, դրանց թույլատրելիության գնահատման և նախաքննության ընթացքում ձեռնարկվող քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման հետ:

Ամփոփման արդյունքներով, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու, միասնական քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականություն ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումներին տրվել է համապատասխան հանձնարարական:

Ստորև ներկայացվում է 2012-2021թթ. սպանության, սպանության փորձի, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի վերաբերյալ աղյուսակը.

Տարեթիվը	**Սպանություն**	**Սպանության փորձ**	**Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը**
2012	50	25	170
2013	48	25	186
2014	53	28	216
2015	52	35	173
2016	66	36	200
2017	49	23	194
2018	35	30	191
2019	47	30	231
2020	50	49	224
2021	60	47	218

2021 թվականին արձանագրվել է ինքնասպանության և ինքնասպանության փորձի 564 դեպք՝ նախորդ տարվա 663-ի դիմաց: Փաստորեն՝ այդ դեպքերի թիվը նվազել է 99-ով կամ 14.9%-ով: Ընդ որում՝

հաշվետու ժամանակահատվածում ինքնասպանությունների թիվն առանձին կազմել է 191՝ նախորդ տարվա 183-ի դիմաց:

Փաստորեն, ինքնասպանության դեպքերն աճել են 8-ով կամ 4.4%-ով, իսկ ինքնասպանության փորձի դեպքերը նվազել՝ 107-ով կամ 22%-ով:

Նշենք, որ 100.000 բնակչի հաշվով ինքնասպանության գործակիցը 2021 թվականին կազմում է 6.45, ինչը գրեթե հավասար է վերջին 10 տարվա տարեկան միջին գործակցին:

Վերջին 10 տարվա ինքնասպանության դեպքերի թիվը և 100 հազար բնակչի հաշվով գործակիցները ներկայացվում են ստորև՝

Տարեթիվը	Մշտական բնակչության թիվը ՀՀ-ում	Ինքնասպանությունների թիվը	100.000 բնակչի հաշվով ինքնասպանությունների գործակիցը
2012թ.	**3021400**	**214**	**7.08**
2013թ.	**3026900**	**203**	**6.7**
2014թ.	**3017100**	**168**	**5.56**
2015թ.	**3010600**	**208**	**6.91**
2016թ.	**2998600**	**195**	**6.5**
2017թ.	**2986100**	**157**	**5.25**
2018թ.	**2972700**	**179**	**5.59**
2019թ.	**2965300**	**153**	**5.16**
2020թ.	**2959700**	**183**	**6.18**
2021թ.	**2963300**	**191**	**6.45**
Տարեկան միջին	**2992170**	**185.1**	**6.18**

Փաստենք, որ 2021 թվականին ինքնասպանություն կատարած անձանց կազմում 14 տարեկանից ցածր անձինք չկան, իսկ նախորդ տարի նշված անձանց թիվը 1 էր:

2021 թվականին ինքնասպանության դիմած 14-17 տարեկանների թիվը կազմել է 7՝ նախորդ տարվա 4-ի դիմաց:

Նշենք, որ 2021 թվականին ինքնասպանության դիմած 191 անձից 67-ը եղել է գործազուրկ, 51-ը՝ թոշակառու: Գործազուրկ կամ թոշակառու են եղել ինքնասպանություն դիմած անձանց 62 %-ը կամ 118-ը:

Նախորդ տարի ինքնասպանության դիմած 183 անձանց գերակշիռ մասը՝ 63.4 %-ը կամ 116-ը եղել են գործազուրկ կամ թոշակառու, այդ թվում՝ գործազուրկ են եղել 68-ը, թոշակառու՝ 48-ը:

Փաստորեն, 2021 թվականին, ինչպես և նախորդ տարի ինքնասպանության դիմած անձանց թվում շարունակում եմ գերակշիռ մաս կազմել գործազուրկներն և թոշակառուները:

Տվյալները՝ ըստ տարիների ստորև բերված աղյուսակում՝

Տարեթիվը	Ինքնասպանություն կատարած անձանց թիվը	գործազուրկ և թոշակառու	գործազուրկ և թոշակառու ինքնասպանություն կատարած անձանց %-ը ընդհանուր նքնասպանություն կատարածների թվում	65 տարեկանից բարձր ինքնասպանության դիմած անձինք	65 տարեկանից բարձր անձանց տոկոսային կազմը ընդհանուր թվում
2015թ.	208	148	71	62	30
2016թ.	195	154	79	56	29
2017թ.	157	126	80	29	18
2018թ.	179	141	79	48	27
2019թ.	153	110	72	53	35
2020թ.	183	116	63	52	28
2021թ.	191	118	62	49	26
Տարեկան միջին	181	130	72	50	28

Մարդկանց թրաֆիքինգի արձանագրված դեպքերն աճել են 4-ով կամ 66.7%-ով /6-10/: Այս ցուցանիշը պետք է գնահատել դրական՝ հաշվի առնելով տվյալ տեսակի հանցագործությունների լատենտայնության բարձր հավանականությունը:

Նախորդ տարվա համեմատությամբ կտրուկ աճել են սեռական շահագործման դեպքերը /9-ը՝ նախորդ տարվա 1-ի դիմաց/:

Վերոնշյալ դրական ցուցանիշներն ու միտումները ազդակ են հանդիսացել, որ մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության 2021թ. ամենամյա զեկույցում թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում երկրների դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքը բարելավվել է, թրաֆիքինգի դեմ պայքարի երկրների 2-րդ խմբի 2-րդ ենթախմբից Հայաստանը տեղափոխվել է նույն խմբի 1-ին ենթախումբ:

Այս երևույթի դեմ պայքարում առաջընթացի գրավականներից է միջգերատեսչական համագործակցության բարձր մակարդակը, ինչպես նաև Հայաստանին մեծապես աջակցող գործընկերների՝ Եվրոպայի խորհրդի, ԱՄՆ կառավարության ու միջազգային և հասարակական կազմակերպությունների ջանքերը:

Այդուհանդերձ, չնայած ոլորտում գրանցած առաջընթացին՝ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներն ուղղորդում են մեզ առավել մեծ ջանքեր գործադրել և առավել ակտիվ գործունեություն ծավալել այս հանցատեսակի դեմ պայքարում դիրքերը բարելավելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բռնաբարության և բռնաբարության փորձի դեպքերը նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 11-ով կամ 44.0%-ով /25-14/, իսկ ընդհանուր առմամբ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններն աճել են 12-ով կամ 14.8%-ով: Վերլուծությունը ցույց է տվել, որ աճն ապահովվել է ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված հանցատեսակի /անառակաբարո գործողություններ/ հաշվին: Եթե 2020 թվականին արձանագրվել է այդ տեսակի հանցագործության 6 դեպք, ապա 2021 թվականին այդ ցուցանիշը կազմել է 23: Դեպքերն աճել են 17-ով կամ 283.0%-ով:

2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործության 6356 դեպք՝ նախորդ տարվա 4910 դեպքի դիմաց, որոնցից 3102-ը կամ 48.8%-ը՝ Երևան քաղաքում, իսկ 3254-ը կամ 51.2%-ը՝ ՀՀ մարզերում[4]:

Նախորդ տարվա համեմատությամբ (4910 դեպք) հանցագործությունների դեպքերն աճել են 1446-ով կամ 29.5%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում բացահայտման տոկոսում հաշվառված հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործության դեպքերից բացահայտվել է 69.3%-ը՝ 2020 թվականի 66.5%-ի դիմաց: 2021 թվականի ընթացքում դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 2.8%-ով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների առանձին հանցատեսակներով արձանագրվել է դեպքերի զգալի աճ:

Այսպես. 2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում զգալիորեն աճել են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը: Եթե 2020 թվականին արձանագրվել է 1360 դեպք, ապա 2021

[4] ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի վիճակագրական տվյալները ներառում են ինչպես հասարակական անվտանգության, այնպես էլ՝ հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

թվականին՝ 1548 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 188-ով կամ 13.8%-ով: Բացահայտումը կազմել է 83,4%՝ նախորդ տարվա 82.1%-ի դիմաց:

Նախորդ տարվա համեմատությամբ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու վերաբերյալ գործերով բացահայտման տոկոսային ցուցանիշն աճել է 1.3%-ով:

Սրա հետ մեկտեղ, աճել են նաև մահվան ելքով դեպքերը: Եթե 2020 թվականին արձանագրվել է մահվան 229 դեպք, ապա 2021 թվականին՝ 239 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 10-ով կամ 4.4%-ով: Բացահայտումը կազմել է 60.8%՝ նախորդ տարվա 57.1%-ի դիմաց:

2021 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու 1548 դեպքից 625-ը կամ 40.4%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 923-ը կամ 59.6%-ը՝ ՀՀ մարզերում:

Մահվան ելքով արձանագրված 239 դեպքից 64-ը կամ 26,8%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 175-ը կամ 73,2%-ը՝ ՀՀ մարզերում:

Պետք է փաստել, որ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերն աճել են ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ՝ մարզերում: Առավել մտահոգիչ է պատկերը մահվան դեպքերով, քանի որ 2021 թվականին մահվան ելքով դեպքերը ՀՀ-ում ավելացել են 10-ով, որոնցից 5-ով՝ Երևան քաղաքում, 5-ով՝ մարզերում:

Մահվան, ինչպես նաև մարմնական վնասվածքների ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով դատախազները պարբերաբար իրականացնում են ուսումնասիրություններ՝ դրանց ծնող պատճառները հայտնաբերելու նպատակով և ձեռնարկվում են միջոցառումներ՝ դրանք հնարավորինս կանխելու ուղղությամբ:

Արձանագրված դեպքերի քանակի ավելացման ուղղությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է ընդհանուր 4604 ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում մահացել է 368 անձ, իսկ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 6699-ը: Ընդհանուր պատահարների թիվը 2021 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 588-ով կամ 13.9 %-ով, մահացած անձանց թիվը՝ 20-ով կամ 5,7%-ով, իսկ դրանց արդյունքում վնասվածքներ ստացած անձանց թիվը՝ 853-ով կամ 14,6%-ով:

Հաշվի առնելով, որ համեմատության ենթակա նախորդ՝ 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տևական ժամանակ գործել են նաև անձանց տեղաշարժման սահմանափակումներ, ուստի, առավել իրական պատկերացում կազմելու նպատակով, 2021 թվականի ընթացքում արձանագրված դեպքերը համեմատվել են նաև 2019 թվականին արձանագրված դեպքերի հետ, որի արդյունքում պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը 2019 թվականի

համեմատությամբ նվազել է 195-ով (2019թ.՝ 4799 ՃՏՊ, 2021թ.՝ 4604 ՃՏՊ), կամ՝ 4,1%-ով: Սրան հակառակ՝ 2021թ. ընթացքում ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով զոհերի թիվ 2019 թ. համեմատությամբ ավելացել է 27-ով (2019թ.՝ 341 զոհ, 2021թ.՝ 368 զոհ) կամ 7.9%-ով: 2019թ. համեմատությամբ 2021 թվականի ընթացքում ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում մարմնական վնասվածքներ է ստացել 6699 անձ՝ 2019 թվականի 6801-ի դիմաց, մարմնական վնասվածք ստացած անձանց թիվը նվազել է 102-ով կամ 1,5 %-ով:

Ստորև ներկայացնում ենք 2012-2021 թթ. ՀՀ-ում պետական վիճակագրական հաշվառման վերցված ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ տվյալները՝ աղյուսակով.

Տարեթիվ	Քանակ			Աճ / նվազում		
	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր
2012թ.	2602	311	3739	+ 283	- 16	+ 385
2013թ.	2824	316	3994	+ 222	+ 5	+ 255
2014թ.	3156	297	4479	+ 332	- 19	+ 485
2015թ.	3399	346	4738	+ 243	+ 49	+ 259
2016թ.	3203	267	4451	- 196	- 79	- 287
2017թ.	3535	279	5179	+ 332	+ 12	+ 728
2018թ.	4111	343	5950	+ 576	+ 64	+ 771
2019թ.	4799	341	6801	+ 688	- 2	+ 851
2020թ.	4016	348	5846	- 783	+ 7	- 955
2021թ.	4604	368	6699	+ 588	+ 20	+ 853

Մահվան ելքով ճանապարհատրանսպորտային հանցագործությունների կանխարգելման նպատակով դատախազներն իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են համարժեք քրեական, այդ թվում՝ խիստ պատժողական քաղաքականություն վարելը: Չևավորված մոտեցման համաձայն՝ դատախազները չեն համաձայնում ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն այն դեպքերում, երբ անզգուշությամբ մարդու մահ առաջացրած ճանապարհատրանսպորտային հանցագործությունը հետևանք է ճանապարհային երթևեկության կանոնների կոպիտ խախտումների:

Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու և անզգուշությամբ անձանց մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը հիմնականում պայմանավորված են վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելու, երթևեկության հանդիպակաց գոտի դուրս գալու, տրանսպորտային միջոցի ղեկին քնելու, ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու և մի շարք այլ հանգամանքներով: Հարկ է նշել նաև, որ քիչ չեն այն դեպքերը, երբ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառ է հանդիսանում նաև հետիոտների ոչ իրավաչափ վարքագիծը, արտահայտված առավելապես ճանապարհներն արգելված հատվածներում հատելով, որի հետևանքով ստեղծված իրավիճակում վարորդները տեխնիկական տեսակետից վրաերթը կանխելու հնարավորություն չեն ունենում:

Ճանապարհատրանսպորտային պատահարները երբեմն տեղի են ունենում հետիոտնային անցումների գծանշումների անտեսանելիության, հետիոտնային կարգավորվող անցումների լուսացույցները վարորդների տեսադաշտից դուրս գտնվելու, տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի բացակայության պատճառով:

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի հատկանիշներով քննված մի շարք քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ինչպես նախորդող, այնպես էլ՝ հաշվետու ժամանակահատվածում ճանապարհատրանսպորտային պատահարները երբեմն տեղի են ունենում ճանապարհի այն հատվածներում, որտեղ իրականացվում են շինարարական կամ այլ աշխատանքներ, և պատահարի պատճառ առերևույթ հանդիսանում է ճանապարհի տվյալ հատվածում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար լրացուցիչ միջոցների բացակայությունը:

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել նաև խորհրդակցություններ, տրվել են կոնկրետ հանձնարարություններ:

Բացի այդ, Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցը քննարկելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է հասցեագրվել նաև ՀՀ վարչապետին:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարածքային ստորաբաժանումների դատախազներին հանձնարարվել է նաև մահվան ելքով տեղի ունեցած յուրաքանչյուր դեպքով այցելել դեպքի վայր, տեղում անձամբ ուսումնասիրել ճանապարհի երթեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկված լինելու հանգամանքը և, ըստ այդմ, ձեռնարկել գործուն միջոցներ՝ հնարավոր թերությունները շտապ կարգով վերացնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով ճանապարհատրանսպորտային պատահարները նախականխելու, դրանցում մեղավոր բոլոր անձանց բացահայտելու անհրաժեշտությունից, դեռևս հաշվետու տարվա սկզբում դատախազության տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է ապահովել, որպեսզի շինարարական կամ այլ աշխատանքների կատարման վայրերում տեղի ունեցած ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների դեպքերում պատշաճ քննության առարկա դարձվեն և իրավական գնահատականի արժանանան նաև այդ աշխատանքների ժամանակ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու համար պատասխանատու անձանց արարքները, քննությամբ պարզվեն կոնկրետ դեպքին նպաստող պատճառներն ու պայմանները՝ հատկապես ճանապարհի, դրա ինժեներական կառույցների համապատասխանությունը գործող ստանդարտներին, դրանց համաչափությանը, և պատկան մարմիններին ներկայացվեն միջնորդագրեր՝ խախտումները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ, դրանց նկատմամբ ցուցաբերել անհրաժեշտ հետևողականություն:

Հանձնարարության կատարման նկատմամբ ցուցաբերված հետևողականության արդյունքում 2021թ. ընթացքում մահվան ելքով արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների նման դեպքերում քրեական գործեր են հարուցվել ոչ միայն ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու, այլ նաև շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնները խախտելու դեպքերի առթիվ:

Որպես օրինակ հարկ է նշել 2021 թվականի հոկտեմբերի 20-ին Երևան-Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհի 51-րդ կիլոմետրի հատվածում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարը, մասնավորապես, նշված օրը՝ ժամը 07-ի սահմաններում, «ԳԱԶԵԼ» մակնիշի 37 FR 886 հաշվառման համարանիշով ավտոմեքենան Երևան-Գյումրի ավտոճանապարհի 51-րդ կիլոմետրի շրջադարձային հատվածում՝ իրականացվող ճանապարհաշինարարական աշխատանքների վայրում, դեպի Երևան ընթանալիս դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց աջ և կողաշրջվել է, որի հետևանքով ավտոմեքենայի վարորդն ու չորս ուղևոր ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել են, իսկ ևս 17 ուղևոր ստացած մարմնական վնասվածքներով տեղափոխվել են տարբեր բժշկական կենտրոններ:

Դեպքի առթիվ 2021 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային վարչության Թալինի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով և 230-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 54102021 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նշված դեպքն առավել մտահոգիչ է այն առումով, որ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի ծնող պատճառների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրության ընթացքում վերհանվել

էին մի շարք խնդիրներ, այդ թվում՝ առանձնացվել էին ՀՀ տարածքում ճանապարհների կոնկրետ հատվածներ, որոնք երթևեկության անվտանգության առումով ոչ բավարար չափով էին կահավորված ճանապարհային նշաններով: Ուսումնասիրության արդյունքներով դեռևս 2021 թվականի սեպտեմբերին միջնորդագրեր էին ներկայացվել ինչպես ՀՀ ոստիկանություն, այնպես էլ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որում, որպես անվտանգ երթևեկության առումով ոչ բավարար չափով կահավորված ճանապարհահատված, նշվել էր նաև կոնկրետ Երևան-Աշտարակ-Գյումրի ճանապարհահատվածի 51-րդ կմ-ը, որտեղ էլ միջնորդագրի ներկայացումից շուրջ 20 օր անց տեղի էր ունեցել նշված վթարը: Ներկայացված միջնորդագրով բարձրացված խնդիրները լուծվել են միայն տվյալ պատահարից հետո:

Հարկ է արձանագրել, որ դեպքերի աճը պայմանավորված է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր տարի ավելանում է ինչպես շահագործվող տրանսպորտային միջոցների, այնպես էլ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց քանակը: Այսպես, կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ իրավասու մարմինների կողմից միայն 2021 թվականի ընթացքում տրվել է 173.953 տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագիր, ինչպես նաև հատկացվել է 110.730 վարորդական իրավունքի վկայական: Հատկանշական է, որ յուրաքանչյուր տարի այս թվերը ՀՀ-ում էականորեն աճում են: Ստորև ներկայացվում է վերջին 10 տարվա ընթացքում հատկացված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի և վարորդական վկայականների վիճակագրությունը.

Հատկացված հաշվառման վկայագրերի քանակը									
2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
61765	117457	131625	103449	109396	139418	176763	267304	138010	173953
Հատկացված վարորդական վկայականների քանակը									
50873	86311	78759	69061	74972	81839	68316	77513	74113	110730

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել նաև անտառային ֆոնդի կամ դրանցից դուրս գտնվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով:

Այսպես, եթե 2020 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով հարուցվել է 369 քրեական գործ, ապա 2021 թվականին՝ 455 գործ, այսինքն՝ դեպքերի աճը կազմել է 86 դեպք կամ 23,3%:

Ապօրինի ծառահատումների դեպքերի շարունակական բնույթ կրող աճման միտումը պայմանավորված է ինչպես քրեական քաղաքականության փոփոխությամբ՝ հատկապես վնասի հաշվարկի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի մոտ դեռևս 2017 թվականի հուլիսի 19-ին տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցության արդյունքներով կայացված որոշման պահանջներն արդյունավետ և հետևողական կերպով կենսագործելու հանգամանքով, այնպես էլ 2019 թվականին այդ ոլորտում կատարված օրենսդրական համակարգային փոփոխություններով, որի արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի դիսպոզիցիան ենթարկվել է խմբագրության, որի արդյունքում զգալիորեն ընդլայնվել են տվյալ հանցակազմի ինչպես օբյեկտիվ կողմի գործողությունների դրսևորման եղանակները, այնպես էլ՝ հանցագործության առարկաների ցանկը:

Այսինքն՝ այս բնույթի հաշվառված հանցագործությունների թվի աճը ոչ թե բացասական բովանդակություն ունի, այլ ճիշտ հակառակը՝ քանի որ էապես բարելավվել է նշված հանցատեսակի դեմ վարվող քրեական քաղաքականությունը՝ դրանց բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ:

2021 թվականի ընթացքում ինչպես դատախազության տարածքային ստորաբաժանումներում, այնպես էլ ՀՀ գլխավոր դատախազությունում, պարբերաբար ուսումնասիրվել են ապօրինի ծառահատումների դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերը, վերհանվել են այս բնույթի հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքների ընթացքում ծագող խնդիրները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ապօրինի ծառահատումների կանխարգելմանն ուղղված միջոցառումները պատասխանատու աշխատակիցների կողմից հաճախակի արդյունավետ չեն իրականացվել: Նշվածի մասին է վկայում այն, որ հաշվետու ժամանակահատվածում անտառների պահպանության համար պատասխանատու անձանց կողմից իրենց պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելու համար հարուցվել են տասնյակ քրեական գործեր, որոնց մի մասը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Դատախազության կողմից այս հանցագործությունների նախականխման, հայտնաբերման ու բացահայտման ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ հանձնարարվել է իրավասու մարմիններին՝ ինչպես շրջիկ, այնպես էլ կոնկրետ վայրերում տեղակայված ծառայությունների կողմից

փայտանյութով բարձված յուրաքանչյուր ավտոմեքենա հայտնաբերելու դեպքում ստուգել փայտանյութի ձեռքբերման կամ իրացման համար նախատեսված համապատասխան փաստաթղթերը, իսկ անհամապատասխանությունների հայտնաբերման յուրաքանչյուր դեպքով տրանսպորտային միջոցը տեղափոխել համապատասխան պահպանվող վայր և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ստուգել փայտանյութի ձեռքբերման և փոխադրման օրինականությունը:

Այս հանցագործությունների նախականխման ուղղությամբ բավարար միջոցառումներ ձեռնարկելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազությունում, շահագրգիռ մարմինների (ՀՀ Անտառային կոմիտե, «Հայանտառ» ՊՈԱԿ, ՀՀ ոստիկանություն) ներկայացուցիչների մասնակցությամբ, անցկացվել է նաև խորհրդակցություն, որի ընթացքում տրվել են կոնկրետ հանձնարարականներ՝ անտառների պահպանության արդյունավետության բարձրացման, անտառախախտման դեպքերի հայտնաբերման ու բացահայտման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2021թ. Հանրապետությունում ամենամեծ անտառային ֆոնդ ունեցող 2 մարզում էապես ակտիվացել է անտառահատումների դեմ տարվող պայքարը:

Մասնավորապես, հիշյալ ժամանակահատվածում ապօրինի ծառահատման հատկանիշներով Լոռու մարզում իրավասու մարմինների կողմից հարուցվել է 130 քրեական գործ, իսկ 29 քրեական գործ՝ 31 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, ինչը մոտ 10%-ով ավելի է 2020թ. համեմատ:

Դատարան ուղարկված գործերով 14 անձ դատապարտվել է ազատազրկման, որոնցից 10-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ նշանակվելով փորձաշրջան, 16-ը ենթարկվել է տուգանքի, իսկ 1 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է գործուն զղջալու՝ ոչ արդարացնող հիմքով:

Իրականացվող կանխարգելիչ, հսկողական գործողությունների, ինչպես նաև դատախազության կողմից վարվող խիստ պատժողական քաղաքականության արդյունքում անհամեմատ նվազել են ապօրինի հատված ծառերի քանակը, ինչպես նաև պետությանը պատճառված վնասները: Մասնավորապես՝ եթե 2020թ. արձանագրվել է ապօրինի հատված 3939 ծառ, ապա 2021թ.՝ 2187 ծառ, կամ 44%-ով պակաս: Եթե ապօրինի ծառահատմամբ պետությանը պատճառված վնասը 2020թ. կազմել է ընդհանուր 457.085.634 ՀՀ դրամ գումար, որից հաջողվել էր վերականգնել 1.949.670 ՀՀ դրամը կամ 0.4%-ը, ապա 2021թ. պատճառված վնասը կազմել է 193.074.160 ՀՀ դրամ (2020թ. համեմատ շուրջ 2.4 անգամ պակաս), որից վերականգնվել է 29.745.000 ՀՀ դրամը կամ 15.4%-ը: Պատճառված վնասները վերականգնելու համար Լոռու մարզի դատախազությունը բոլոր դեպքերում,

բավարար հիմքերի առկայությամբ, ձեռնարկում է մեղադրյալներից բռնագանձման պատշաճ իրավական գործընթաց:

Հետևողական աշխատանք է իրականացվել նաև անտառահատման յուրաքանչյուր դեպքում պաշտոնական հանցագործության առկայությունն ստուգելու, անտառների պահպանության համար պատասխանատու պաշտոնատար անձանց գործողություններին համարժեք քրեաիրավական կամ կարգապահական գնահատական տալու առումով: Մասնավորապես, 2021թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի (պաշտոնական անփութությունը) տարբեր մասերով հարուցվել է 54 քրեական գործ: 22 քրեական գործ՝ 34 պաշտոնատար անձի վերաբերյալ, ուղարկվել է դատարան: Պետությանը պատճառված վնասը վերականգնելու համար որպես մեղադրյալ ներգրավված պաշտոնատար անձանց պատկանող գույքերի վրա դրվել են կալանքներ: Համեմատության համար նշենք, որ, 2020թ. նշված հանցակազմով հարուցվել է 7 քրեական գործ, դատարան է ուղարկվել 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ:

Բացի այդ, 2021թ. ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարին, ՊՈԱԿ-ի տարբեր մասնաճյուղերի տնօրեններին մարզի դատախազությունից հասցեագրվել է 50 միջնորդագիր՝ պատասխանատու աշխատակիցների աշխատանքում տեղ գտած թերությունների, դրանց պատճառների վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

Առանձին միջնորդագրերի քննարկման արդյունքում աշխատանքից ազատվել են անտառտնտեսության մասնաճյուղի պահպանության գծով փոխտնօրեն, տարբեր մասնաճյուղերի անտառպետությունների 4 անտառապետ, տարբեր պահաբաժինների 7 անտառապահ: Տարբեր կարգապահական տույժերի են ենթարկվել 20 անտառապահ և 9 անտառապետ: Բազմաթիվ միջնորդագրեր դեռևս քննարկման փուլում են:

2021թ. արդյունքներից ելնելով՝ Լոռու մարզի դատախազի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ ոստիկանապետի առաջին տեղակալին: Դրական գնահատելով արձանագրված ցուցանիշները և առաջնորդվելով դրանք զարգացնելու հրամայականով՝ մարզի դատախազը մտահոգություն է հայտնել շարունակվող ապօրինի անտառահատումների կապակցությամբ: Ուշադրություն է դարձվել հատկապես այն հանգամանքին, որ միայն վարույթը կասեցված՝ չբացահայտված քրեական գործերով արձանագրվել է 1263 ապօրինի ծառահատման դեպք, որոնցով պատճառված վնասը կազմել է 92.5մլն ՀՀ դրամ:

Առաջարկվել է ամենօրյա հսկողություն սահմանել մարզի անտառամերձ հատվածներին հարակից ճանապարհներին, անտառամերձ բնակավայրերում բնակվող այն անձանց նկատմամբ, որոնք ունեն ամենագնաց, բենզասղոցներ, ինչպես նաև պարբերաբար ստուգել նշված բնակավայրերում և հարակից տարածք-ներում գործող փայտամշակման արտադրամասերը, փայտագործությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերերի արհեստանոցները: Խնդիր է դրվել նաև ձեռնարկել

անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ կասեցված վարույթներով չբացահայտված ապօրինի ծառահատումները կատարողներին, դրա հետ կապված պաշտոնատար անձանց ներգրավմամբ հնարավոր կոռուպցիոն գործարքները բացահայտելու ուղղությամբ:

Տավուշի մարզում, նույնպես, 2021թ. ընթացքում շարունակվել է հետևողական պայքարը ապօրինի անտառահատումների, դրանց կանխարգելման համար պատասխանատու պաշտոնատար անձանց հանցավոր գործողությունների դեմ:

2021թ. մարզի տարածքում գրանցվել է ապօրինի ծառահատման, ինչպես նաև փայտանյութի ապօրինի տեղափոխման 382 հանցագործության դեպք:

Դրանցից 207-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հիմնականում պատճառված վնասը քրեական գործի հարուցման համար բավարար չլինելու պատճառով: Չնայած դրան, այս դեպքերով 90 անձ ենթարկվել է վարչական պատասխանատվության, արդեն իսկ վերականգնվել է պետությանը պատճառված վնասների 64%-ը, մյուս մասի վերականգնումն ընթացքի մեջ է:

Մնացած դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել են քրեական գործեր, որոնցից 23-ը ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի կամ 308-րդ հոդվածի տարբեր մասերի համակցությամբ՝ նկատի ունենալով այդ դեպքերի կապվածությունը անտառների պահպանության համար պատասխանատու անտառապահների կողմից դրսևորած պաշտոնեական անփութության կամ պաշտոնեական լիազորությունների չարաշահման հետ: 2 քրեական գործ ուղարկվել է դատարան: Դրանցից մեկով «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մի անտառապահի մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական անփութություն կատարելու համար, որի արդյունքում ապօրինի կերպով հատվել է 46 ծառ՝ բնությանը պատճառելով 6.8մլն ՀՀ դրամ, իսկ մյուս գործով մեկ այլ անտառապահի մեղադրանք է առաջադրվել կաշառք ստանալու դիմաց կանգուն 15 ծառեր ապօրինի հատելը թույլ տալու համար, որի արդյունքում պետությանը պատճառված վնասը կազմել է շուրջ 2մլն դրամ: Երկու դեպքում էլ, վնասի վերականգնման համար երաշխիքներ ապահովելու նպատակով մեղադրյալների գույքի նկատմամբ կիրառվել է արգելանք:

2021թ. անտառների պահպանության համար պատասխանատու՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսության» նախկին տնօրենի կողմից առերևույթ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, ներկայիս տնօրենի, ավագ անտառապետի, պահպանության ինժեների կողմից առերևույթ պաշտոնեական կեղծիք կատարելու և դրանց արդյունքում անտառից ապօրինի փայտանյութ դուրս բերելու դեպքերի առթիվ քննվում է մեկ քրեական գործ, որի նախաքննությունը շարունակվում է:

Բացի այդ, Տավուշի մարզի դատախազության դատախազների հսկողության ներքո քննվում է նախկինում հարուցված ծավալուն, բազմադրվագ 3 քրեական գործ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ «Իջևանի անտառտնտեսության» պաշտոնատար անձանց

կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու, դրանց հետևանքով անտառներից կատարված ապօրինի՝ ընդհանուր առմամբ 228 ծառերի հատումների, բազմաթիվ դրվագներով կաշառքի, կաշառքի միջնորդության դեպքերի առթիվ: Այս քրեական գործերով մեղադրանք է առաջադրվել ընդհանուր առմամբ 15 անտառապահի:

Նշված 3 քրեական գործով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմում է 21.4մլն ՀՀ դրամ, վնասի վերականգնման համար երաշխիքներ ապահովելու նպատակով մեղադրյալների գույքի նկատմամբ կիրառվել է արգելանք:

Վերոնշյալից բացի՝ ապօրինի անտառահատումների առթիվ քննված քրեական գործերով, նախապատրաստված նյութերով պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված խախտումների կապակցությամբ, Տավուշի մարզի դատախազների կողմից, նշված ժամանակահատվածում խախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց վերադասներին ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու 9 միջնորդագիր և 9 հաղորդում: Դրանց արդյունքում 18 անձ (4 անտառապետ և 14 անտառապահ) ենթարկվել է կարգապահական տույժի: Ընդ որում՝ 2 անտառապահ ազատվել է զբաղեցրած պաշտոնից, իսկ նրանց անմիջական վերադաս մասնաճյուղի ղեկավարներին հայտարարվել է խիստ նկատողություն: Դատախազների կողմից այս ուղղությամբ կատարած աշխատանքի ցուցանիշը, ըստ էության, կրկնակի ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ:

2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի զգալի աճ է արձանագրվել նաև համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով: Եթե 2020 թվականին արձանագրվել է 55 դեպք, ապա 2021 թվականին՝ 96 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 41-ով կամ 74.5%-ով: Դեպքերի աճին զուգահեռ՝ 2021 թվականի ընթացքում աճել է նաև բացահայտման ցուցանիշը՝ բացահայտումը կազմել է 4.1%-ը՝ 2020 թվականի 2.6%-ի դիմաց:

Նախորդ տարվա համեմատությամբ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերով բացահայտման տոկոսային ցուցանիշը աճել է 1.5%-ով, սակայն, պետք է նշել, որ այս ցուցանիշը բնավ գոհացուցիչ չէ: Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք հարցերի պարզաբանման համար բոլոր գործերով նախաքննության ընթացքում այլ պետություններ ուղարկվում են իրավական օգնության վերաբերյալ հարցումներ, որոնց պատասխանները տևական ժամանակ չեն ստացվում:

Հաշվետու տարում զգալիորեն աճել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերը: Եթե 2020 թվականին արձանագրվել է նման բնույթի 641 դեպք, ապա 2021

թվականի ընթացքում՝ 714 դեպք, այսինքն՝ դեպքերը աճել են 73-ով կամ 11.4%-ով: Բացահայտումը կազմել է 86%՝ նախորդ տարվա 82,9%-ի դիմաց:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերի աճին նպաստել է Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը, որի ընթացքում բազմաթիվ անձանց կողմից ապօրինի կերպով ՀՀ է փոխադրվել և պահվել զենք-զինամթերք: 2021 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ միայն 2020 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում հայտնաբերվել է նման 47 դեպք, իսկ 2021 թվականի ընթացքում հայտնաբերված նմանատիպ դեպքերը բազում անգամ ավելի են:

Անհրաժեշտ է փաստել սակայն, որ նկատի ունենալով զենքի ապօրինի շրջանառության դեպքերի լատենտայնությունը, դեպքերի արձանագրված աճը ոչ թե մտահոգիչ է, այլև որոշակի առումով՝ դրական, քանի որ վկայում է նաև դրա դեմ պայքարի արդյունավետության աճի մասին և բացի այդ ապօրինի պահվող զենքի, ռազմամթերքի հայտնաբերումն ու առգրավումը նպաստում է դրանց հետագա ապօրինի շրջանառության նվազմանն ու դրանց գործադրմամբ նոր, ավելի ծանր հանցագործությունների կանխմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ հանձնարարվել է ավելի ակտիվացնել օպերատիվ-հետախուզական աշխատանքներն՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ուղղությամբ:

2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի զգալի աճ է արձանագրվել նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններով: Եթե 2020 թվականին արձանագրվել է 1290 դեպք, ապա 2021 թվականին արձանագրվել է այդպիսի 2132 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 842-ով կամ 65,3%-ով: Բացահայտումը կազմել է 77%՝ նախորդ տարվա 67,3%-ի դիմաց:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններով 2132 դեպքից 1102-ը կամ 51.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 1030-ը կամ 48.3%-ը՝ ՀՀ մարզերում:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածում 2019 թվականի դեկտեմբերի 9-ին կատարված փոփոխություններով ու լրացումներով, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ից: Այսպես,

միայն 2021 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածով արձանագրվել է 1732 դեպք, որոնցից 1720-ով հարուցվել է քրեական գործ: Նույն ժամանակահատվածում 1218 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2020 թվականի հունվարի 22-ին ընդունվել և 2020 թվականի փետրվարի 18-ից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով սահմանվել են քրեական ենթամշակույթին առնչվող նոր հանցատեսակներ: 2021 թվականի ընթացքում այս հանցատեսակներով արձանագրվել է 14 դեպք՝ նախորդ տարվա 16-ի դիմաց (նշված հանցատեսակներին ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի հաղորդման հաջորդ գլխում):

2021թ. 16-ով կամ 4.7%-ով /338-322/ նվազել են խուլիգանության դեպքերն այն պարագայում, երբ նախորդող 5 տարիներին՝ 2016-2020թթ., դրսևորվել էր խուլիգանության դեպքերի կայուն աճի միտում՝ 195-202-234-326-338: Աճը հաջորդաբար կազմել է 7-32-92-12 դեպք կամ 3.6%-15.8%-39.3%-3.7%: Այսինքն՝ 2021թ. վերջին 6 տարում առաջին անգամ արձանագրել է խուլիգանության դեպքերի նվազում:

Թեև խուլիգանության դեպքերը նվազել են, սակայն աճ է արձանագրվել որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանությունների թվում՝ աճը 9-ով կամ 10.5%-ով /86-95/:

Վերջին 6 տարում՝ 2016-2020թթ., արձանագրվել է զենքի գործադրմամբ խուլիգանությունների դեպքերի անընդմեջ աճ՝ քանակական ցուցանիշները կազմել են՝ 32-41-53-75-86-95 դեպք: Աճը հաջորդաբար կազմել է 9-12-22-11-9 դեպք կամ 28,1%-29,3%-41,5%-14.7%-10.5%:

Որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերի աճի կապակցությամբ նշենք նաև, որ հաշվետու ժամանակահատվածին նախորդող տարիներին խուլիգանության հանցակազմի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի հայտնի իրավական դիրքորոշումներն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում էին ակնհայտորեն լայն, անձնական փոխհարաբերությունների և կենցաղային վեճի շրջանակները ընկալվում էին չափազանց ընդարձակ՝ երբեմն ներառելով անձի ինքնահաստատման, այլոց հանդեպ առավելություններն ընդգծելու, հասարակությանը հակադրվելու ձգտումներով ակնհայտորեն պայմանավորված դեպքերը: Արդյունքում, դեպքի սկզբնական նկարագրությամբ խուլիգանության հատկանիշներ պարունակող արարքները հանցագործության դեպքի վերաբերյալ ամփոփագրերում վերնագրվում էին որպես ծեծ կամ մարմնական վնասվածքի պատճառում, և վարույթն իրականացնող մարմնի կողմից դիտվում էին որպես այդպիսիք՝ ոչ խուլիգանական դրդմամբ կատարված լինելու կանխավարկածով, այդ դեպքերին արագ դատավարական արձագանք չէր տրվում՝ հնարավորություն տալով շահագրգիռ անձանց պայմանավորվելու արարքի

արհեստական ոչ խուլիգանական շարժառիթի շուրջ և մատուցելու այն վարույթն իրականացնող մարմնին՝ պատճառ դառնալով հասարակական կարգի կոպիտ խախտման վերաբերյալ ապացույցների կորստի: Ընդ որում, նկատելի էր նաև, որ վիճաբանության ժամանակ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու ոչ հազվադեպ դեպքերում քննությունը կենտրոնանում էր բացառապես վերջինիս վրա՝ լավագույն դեպքում ուշացած ուշադրություն ցույց տալով խուլիգանության հատկանիշներին:

Այս մոտեցումը կրկնակի մտահոգիչ էր այնքանով, որքանով վտանգում, իսկ երբեմն անհնարին էր դարձնում հասարակության անդամների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը խախտած, անպաշտպանության սեփական անվտանգության համար վախի զգացում պատճառած արարքների բացահայտումը: Ձեռնարկված միջոցներն էականորեն փոխել են ձևավորված անընդունելի դատավարական վարքագիծը, որի շարունակականության ապահովումը դատախազության ամենօրյա ուշադրության կենտրոնում է:

Վերը նշված վերլուծության հաշվառմամբ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերի աճը, ի թիվս այլ հանգամանքների, կարող է պայմանավորված լինել նրանով, որ, ըստ էության, առերևույթ խուլիգանություն հանդիսացող դեպքերը, որոնց հանգամանքներում ներառված են ծեծի և սպառնալիքի հատկանիշներ, առավել հաճախ, քան նախորդող տարիներին, գնահատվում են որպես խուլիգանություն:

Նշված փաստարկի օգտին կարող է խոսել հենց առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերի 48-ով կամ 4.7%-ով նվազումը /1024-976/, այդ թվում՝ առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելու դեպքերը նվազել են 13-ով կամ 2%-ով /553-540/, իսկ սպառնալիքի դեպքերը՝ 34-ով կամ 11%-ով /308-274/:

Հաշվի առնելով վերոգրյալը, չնայած նախորդիվ բազմիցս կատարվել են խուլիգանության դեպքերի ուսումնասիրություններ և ամփոփումներ, սակայն հաշվի առնելով որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերի կայուն, շարունակական աճի միտումը /անընդմեջ 6 տարի/, նախատեսվել է 2022 թվականի ՀՀ դատախազության տարեկան աշխատանքի ծրագրում ներառել այդ դեպքերի ստուգման, դրանցով հարուցված քրեական գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակի ուսումնասիրության հարցը:

2021 թվականի ընթացքում արձանագրվել է բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 1592 դեպք՝ 2020թ. արձանագրված 1272 դեպքի դիմաց: Դեպքերն աճել են 326-ով կամ 25.6 %-ով:

Հաշվետու ժամանակահատվածում թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների արձանագրված դեպքերի թիվը կազմել է 1544՝ նախորդ տարվա 1226-ի դիմաց: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության արձանագրված

դեպքերի թիվն աճել է 102-ով կամ 11,7%-ով՝ կազմելով 974՝ նախորդ տարվա 872-ի դիմաց: Ընդ որում, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը նվազել են 3-ով՝ կազմելով 529՝ նախորդ տարվա 532-ի դիմաց:

Ստորև ներկայացվում են 2020 և 2021 թվականների ընթացքում ապօրինի շրջանառությունից հանված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վիճակագրական համեմատական տվյալները.

Թմրամիջոցների տեսակներ	**2020թ.**	**2021թ.**	**+ /-**
Մարիխուանա	19476.615	18354.046	-1122.569
Կանեփ	49655.887	107341.2953	+57685.4083
Հաշիշ	95.73	838.271	+742.541
Հաշիշի յուղ	199.0573	346.9561	+147.8988
Կակաչի ծղոտ	108.21	102.62	-5.59
Կոկաին	91.251	973.28	+882.029
Ափիոն	19052.034	5262	-13790.034
Ացետիլացված ափիոն	24.302	12.236	-12.066
Մզվածքային ափիոն	-	12015	+12015
Հերոին	13067.834	447074.299	+434006.465
Ամֆետամին	8.57	5.53	-3.04
Մեթամֆետամին	11300.434	11847.632	+547.198
Դեզոմորֆին	1.3192	-	-1.3192
Մեթադոն	119.197664	32.500263	-86.697401
Տետրահիդրոկանաբինոլ	0.36206	11.48545	+11.12339
ՏՀԿ պարունակող բուս. խառն.	222.452	621.3268	+398.8748
Բուպրենորֆին	3.730622	0.636788	-3.093834
Կոդեին	38.4429	51.55925	+13.11635
Ացետիլ կոդեին	0.93	-	-0.93
Մորֆին	1.06	0.0195	-1.0405
Մեֆեդրոն	-	354.175	+354.175

Ֆենտանիլ	0.0007	0.26475	+0.26405
ՄԴՄԱ	130.351	21.67	-108.681
Պսիլոցին	5.53	20.09	+14.56
դիմեթիլտրիպտամին	2.85	0.89	-1.96
α-PVP	882.94	1165.5725	+282.6325
Ծխախոտային կրիչ /սպայս/	24.88	1.7	-23.18
Տիլիդին	7	2.5	-4.5
ԼՍԴ	0.011789	0.473	+0.461211
MDMB /N/-2201	1.808	-	-1.808
ֆենոբարբիտալ	0.4395	-	-0.4395
MDMB-2201/5F-MDMB-PICA/	24.685	-	-24.685
Դիհիդրոկոդեին	0.23	-	-0.23
Դիհիդրոկոդոն	-	1	+1
Օքսիկոդոն	-	0.275	+0.275
Հիդրոկոդոն	0.755	0.85	+0.095
Հիդրոմորֆոն	122.6296	-	-122.6296
2C-B	-	0.369	+0.369
Ընդհանուր	**114671.529**	**606460.258**	**+491788.729**

Քնաբեր կակաչ	5100 հատ	-	-5100 հատ
Կանեփի բույս	10194 հատ	12922 հատ	+2728 հատ

Ինչպես երևում է վերը նշված վիճակագրական տվյալներից, 2021թ. ընթացքում ավելացել է ապօրինի շրջանառությունից առգրավված թմրամիջոցների ընդհանուր քանակը: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախորդ տարվա համեմատությամբ աճել է ապօրինի շրջանառությունից հանված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող այնպիսի թմրամիջոցների քանակը, ինչպիսիք են՝ հերոինը, կոկաինը, մեթամֆետամինը:

Պետք է արձանագրել, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության գրանցված դեպքերի քանակն ակնհայտորեն չի արտացոլում իրական կյանքում

առկա պատկերը, իսկ իրացման նպատակով ապօրինի շրջանառության գրանցված դեպքերի թվի նվազումը տվյալ հանցատեսակի դեպքում ոչ թե դրական, այլ բացասական ցուցանիշ է:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին հատկապես մեծ ծավալներ են ստացել սոցիալական կայքերի, համացանցային հեռահաղորդակցության համակարգերի, առավելապես «Telegram»-ի օգտագործմամբ թմրամիջոցների ապօրինի իրացման դեպքերը, որոնց պարագայում, որպես կանոն, իրացման ենթակա թմրամիջոցը նախապես տեղադրվում է որևէ վայրում, դրա դիմաց վճարումը կատարվում է անկանխիկ (էլեկտրոնային դրամապանակներ, կրիպտոարժույթ, բանկային հաշվեհամարներ), որից հետո գնորդին փոխանցվում են ապօրինի շրջանառության առարկայի տեղադրման վայրերի վերաբերյալ տվյալները:

Նշված եղանակով կատարվող հանցագործությունների տարածվածության իրական աստիճանի, դեպքերի թվի, ապօրինի շրջանառվող թմրամիջոցների տեսակների և քանակի, հանցավոր գործունեությունից առաջացող եկամուտների չափերի, հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց թվի մասին իրական պատկերացում կարելի է ստանալ տելեգրամյան ալիքների միջոցով 2018-2021 թվականների ընթացքում իրականացված հանցավոր գործունեության դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործի նախաքննության արդյունքներից:

Նշված գործով իրականացված դատավարական և օպերատիվ-հետախուզական համագործակցված միջոցառումների արդյունքում բացահայտվել են տևական բնույթ կրող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացման դեպքեր, քրեական հետապնդում է հարուցվել և իրականացվում շուրջ 2 տասնյակ անձանց նկատմամբ, որոնցից 10-ը ներկայումս կալանավորված են, հայտնաբերվել և վերցվել են առանձնապես խոշոր չափերի «Մեթամֆետամին», «ԼՍԴ», «ՄԴՄԱ», «α-PVP», «Մեֆեդրոն», «Մարիխուանա», «Հաշիշի յուղ», «Հաշիշ» և այլ տեսակի թմրամիջոցներ:

Ինչպես նշված, այնպես էլ մի շարք այլ քրեական գործերով ձեռք բերված տվյալները վկայում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար բացված և շահագործվող բազմաթիվ համացանցային ռեսուրսների առկայության մասին, որոնցում իրականացվում է թմրամիջոցների բացահայտ գովազդ, տեղադրված են տեղեկություններ առաջարկվող թմրամիջոցների տեսակների, չափաբաժինների և դրանց արժեքի վերաբերյալ:

Նշված դրսևորումների ահագնացող չափերն ակնհայտ կերպով վկայում են դրանց դեմ ձեռնարկվող միջոցների ցածր արդյունավետության և անհամարժեքության մասին:

Սոցիալական կայքերի, համացանցային հավելվածների օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի

բացահայտման առումով առանցքային նշանակություն ունի բերման ենթարկված անձանց անձնական խուզարկությամբ, օրենքով սահմանված կարգով, բջջային հեռախոսները, համակարգիչները և այլ էլեկտրոնային կրիչները վերցնելը, դրանց ապաբլոկավորման համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռբերումը և պատշաճ արձանագրումը համապատասխան փաստաթղթերում:

Նշված դեպքերի բացահայտման առումով մեծ կարևորություն ունի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի համար իրականացվող օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումների կիրառումը, որոնք պետք է միտված լինեն սոցիալական կայքի, հեռահաղորդակցման համացանցային հավելվածի օգտատիրոջ անձնական տվյալների, գրանցման ընթացքում մուտքագրված անհատական տվյալների, շահագործված հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, համացանցի հասանելիության IP հասցեների, թմրամիջոցի դիմաց վճարման եղանակների, էլեկտրոնային դրամապանակների օգտագործման դեպքում՝ դրանց բացման և շահագործման հանգամանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություն ձեռք բերելուն:

Հարկ է նշել նաև, որ սոցիալական կայքերի, համացանցային հավելվածների օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 15-րդ կետերով նախատեսված և նույն հոդվածի 2-րդ մասով ՀՀ ոստիկանության իրավասությանը վերապահված՝ վերահսկելի մատակարարում և գնում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:

Թվարկված խնդիրներից ոչ պակաս կարևորություն ունեն ոստիկանության մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորություններն օրենսդրությամբ ներկայացված պահանջներին խիստ համապատասխան իրականացումը և դրանց ընթացքի ու արդյունքների պատշաճ արձանագրումը, որի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքը հետևողականորեն պետք է շարունակել:

Օպերատիվ ամփոփագրերի, ինչպես նաև քրեական գործերի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մի շարք դեպքերում թմրամիջոցների ապօրինի շրջանառության կասկածով բերման ենթարկված անձինք ազատ են արձակվում՝ նրանց մոտ կամ շահագործվող տրանսպորտային միջոցներում հայտնաբերված նյութի բաղադրությունը պարզելու նպատակով նշանակված փորձաքննության եզրակացությունը ստացված չլինելու պատճառով: Նույն պատճառով դեպքի առթիվ քրեական գործը հարուցվում է օրեր անց, ինչն էապես նվազեցնում է դեպքի

իրական հանգամանքները պարզելուն միտված անհետաձգելի գործողությունների արդյունավետությունը:

Անհարկի ձգձգումներից խուսափելու, դեպքի հանգամանքները պարզելուն միտված դատավարական ողջ գործիքակազմը ժամանակին և արդյունավետ օգտագործելու նպատակով, նախաքննության և հետաքննության մարմինների ուշադրությունը հրավիրվել է այն հանգամանքին, որ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել կարճ ժամկետում փորձագետի եզրակացությունը, կամ, դրա անհնարինության դեպքում, արդեն իսկ կատարված հետազոտության արդյունքների մասին փաստաթուղթ ստանալու և առանց հապաղման քրեական գործ հարուցելու հարցը լուծելու ուղղությամբ՝ առավել ևս առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ինչպես նաև հայտնաբերված նյութի փաթեթավորմամբ կամ դեպքի այլ առանձնահատկություններով պայմանավորված առերևույթ իրացման նպատակով շրջանառության մասին վկայող տվյալների առկայության պայմաններում:

Հաշվի առնելով ՀՀ ոստիկանության մարմինների առանձնահատուկ դերը, հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման գործում, դրանով պայմանավորված՝ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակը, ունեցած ռեսուրսները՝ հանձնարարվել է անհրաժեշտ գործուն միջոցներ ձեռնարկել թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես նշված հանցատեսակի առումով անձանց առավել խոցելի խմբերին, ինչպես նաև այդ առումով առավել ռիսկային վայրերը՝ ուսումնական հաստատությունները, ժամանցի վայրերը և այլն:

Սոցիալական կայքերի, համացանցային հավելվածների օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխման և խափանման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտում հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման, խափանման և բացահայտման նպատակով համարժեք կառուցակարգերի մշակումը և ներդրումը, որոնք հնարավորություն կտան սահմանափակել արգելված տեղեկատվության ոչ իրավաչափ տարածումը, արգելափակել համացանցային հասանելիությունն արգելված տեղեկատվությանը, հետևաբար՝ առկա է այլ շահագրգիռ գերատեսչությունների հետ ոլորտի իրավակարգավորումների կատարելագործման շուրջ քննարկումների և դրանց արդյունքներով համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն:

Թվարկված խնդիրների լուծմանը կարող է նպաստել հետաքննության մարմինների կողմից համապատասխան համացանցային ռեսուրսների վարչակազմերի հետ ուղղակի կապերի ակտիվացումը:

Հարկ է նշել նաև, որ սոցիալական կայքերի, հեռահաղորդակցության հավելվածների օգտագործմամբ կատարվող հանցագործությունների դեմ պայքարի

ոլորտում ոչ պակաս կարևոր խնդիր է ցանցային կրիչներից առավել ամբողջական տեղեկատվություն ստանալու՝ իրավապահ մարմինների կարողությունների շարունակական կատարելագործումը:

Նշված խնդիրները լուծելու նպատակով 2021 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2 գրություն է հասցեագրվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին, դրանց հիման վրա, նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ, ՀՀ գլխավոր դատախազի մոտ տեղի է ունեցել քննարկում, որի ընթացքում նախարարության համապատասխան պաշտոնատար անձինք մանրամասն իրազեկվել են սոցիալական կայքերի, հեռահաղորդակցության հավելվածների օգտագործմամբ կատարվող հանցագործությունների, այդ թվում՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության ու մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում առկա հիմնախնդիրների մասին և պատրաստակամություն են հայտնել սեղմ ժամկետներում ամփոփել նախկինում այդ ոլորտում կատարված աշխատանքներն ու նախաձեռնել անհրաժեշտ միջոցներ նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Բացի այդ, 2021 թվականին կատարված աշխատանքների ամփոփմանը զուգահեռ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալին՝ վերոհիշյալ խնդիրները լուծելու և թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության ու մաքսանենգության դեմ տարվող պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին:

2021 թվականին գրանցվել է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության կտրուկ աճ: Մասնավորապես, գրանցվել է նշված հանցագործության 420 դեպք, նախորդ տարվա 222-ի դիմաց, այսինքն՝ դեպքերի թիվն աճել է 198-ով կամ 89,2%-ով:

Թեև բարձր լատենտայնությամբ օժտված նշված հանցագործության դեպքերի աճն ինքնին դրական ցուցանիշ է, սակայն խիստ մտահոգիչ է արձանագրված դեպքերի բացահայտման ցածր ցուցանիշը, որը, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ նախաքննության արդյունքների մասին տվյալների համաձայն, կազմում է 3.8%՝ նախորդ տարվա 13.2%-ի դիմաց:

Վերոհիշյալ ցուցանիշները վկայում են տվյալ հանցատեսակի դեմ մղվող պայքարի՝ օպերատիվ-հետախուզական գործունեության, հետաքննության և նախաքննության արդյունավետության բարձրացմանը միտված գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեպքերի առթիվ հարուցված և չբացահայտված քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ տարեցտարի ավելի մեծ տարածում են ձեռք բերում հանցագործության

առարկան միջազգային փոստային առաքումների միջոցով ՀՀ պետական սահմանով տեղափոխման դեպքերը:

Նշված առաքումներն իրականացնող կազմակերպությունների կողմից վերջին տարիներին լայնորեն կիրառվում են զանազան համացանցային հավելվածներ, հարթակներ և այլ ռեսուրսներ, որոնք հնարավորություն են տալիս առցանց պատվիրել առաքումներ, հետևել դրանց հետագծին: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից չեն ձեռնարկվում բավարար միջոցներ հաճախորդների նույնականացումն ապահովելու համար: Մասնավորապես, մեծ տարածում ունեն այն դեպքերը, երբ նշված համացանցային ռեսուրսներում օգտահաշիվները գրանցվում են այլ անձանց կամ մտացածին տվյալներով, նշվում են պատահական կամ ՀՀ տարածքում չկիրառվող նիշերի քանակով հեռախոսահամարներ, օգտագործվում են ոչ իրական տվյալներով բացված էլեկտրոնային փոստի հասցեներ, որպես առաքման հասցեատեր նշվում են անձինք, որոնք երբեմն տեղեկացված չեն լինում հանցավոր սխեմայի մանրամասնությունների, առաքանու իրական պատվիրատուների մասին, որպես առաքման հասցեատեր նշված անձինք հաճախ ընդհանրապես չեն ներկայանում մաքսային հսկողության ենթարկված առաքանին ստանալու, իսկ քրեական գործերի քննության ընթացքում հերքում են իրենց առնչությունն առաքման պատվիրմանը և տեղեկացվածությունը՝ առաքանու պարունակության վերաբերյալ:

Վերոհիշյալ գործոններն էական դժվարություններ են ստեղծում դեպքերի բացահայտման, առաքմանն առնչություն ունեցած անձանց շրջանակի, դեպքերի իրական հանգամանքների պարզման համար: Ավելին՝ նշված գործոններով պայմանավորված, էապես նվազում է առաքման վերաբերյալ փաստաթղթերում նշված տվյալների հիման վրա հարցաքննությունների, խուզարկությունների և իրավակիրառ պրակտիկայում լայնորեն կիրառվող այլ դատավարական գործողությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությունը:

Նման պայմաններում հանցագործության դեպքերի բացահայտման առումով առաջնային նշանակություն է ձեռք բերում կիբեռհանցագործությունների դեմ պայքարի համար իրականացվող միջոցառումների կիրառումը, ինչը ենթադրում է փոստային առաքում իրականացնող կազմակերպություններից առաքման համար օգտագործված օգտահաշիվների գրանցման բաժանորդային տվյալների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեների, համացանցային հասանելիության IP հասցեների, առաքման դիմաց վճարման եղանակների, էլեկտրոնային դրամապանակների օգտագործման դեպքում՝ դրանց բացման և շահագործման հանգամանքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ժամանակին ստացումն ու վերլուծությունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ստորաբաժանումները վճռորոշ դերակատարություն ունեն մաքսանենգության դեմ պայքարի գործում: Մաքսային

մարմիններին է վերապահված մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողության իրականացումը, մաքսանենգության խափանման և բացահայտման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու լիազորությունը, իսկ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի գերակշիռ մասը քննվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննիչների վարույթում:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության հանրային վտանգավորության խիստ բարձր աստիճանը, նշված նյութերի մաքսանենգության և ապօրինի շրջանառության միջև անխզելի կապը վկայում են նշված հանցատեսակի դեմ պայքարին նաև ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների առավել ակտիվ ներգրավման անհրաժեշտության մասին:

Վերը նշված հանգամանքներով պայմանավորված՝ միջազգային փոստային առաքումների միջոցով իրականացվող թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեպքերով ձեռնարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն կարող է ունենալ կիբեռհանցավորության դեմ պայքարի ոլորտում ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման և համապատասխան ծառայողների ներուժի օգտագործումը:

2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված 15.149 հանցագործություն՝ նախորդ տարվա 13.129-ի դիմաց: Դեպքերն աճել են 2020-ով կամ 15.4%-ով և հատել հանցագործությունների ընդհանուր զանգվածում 50%-ի ցուցանիշը: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացարձակ մեծամասնությունը հափշտակություններն են. 2021 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է պետական կամ հանրային գույքի հափշտակության 418 դեպք՝ նախորդ տարվա 383-ի դիմաց, աճը՝ 9. 1%, և անձնական գույքի հափշտակության 13.303 դեպք՝ 11.583-ի դիմաց, աճը՝ 1720 կամ 14. 8%:

2021 թվականին ավազակության դեպքերն աճել են 2-ով կամ 5.1%-ով (39-41), գողության դեպքերը՝ 1695-ով կամ 17.8%-ով (9523-11218), խարդախության դեպքերը՝ 127-ով կամ 7.4%-ով (1716-1843), համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության դեպքերը՝ 27-ով կամ 17.5%-ով (154-181): Դրա հետ մեկտեղ, արձանագրվել է կողոպուտի 17-ով կամ 10.4%-ով (163-146), բնակարանային գողությունների՝ 66-ով կամ 5.2%-ով (1258-1192), յուրացման կամ վատնման դեպքերի՝ 52-ով կամ 9.9%-ով (525-473) նվազում:

2021թ. արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշի աճ՝ կազմելով 50. 3%՝ 2020 թվականի 46. 8%-ի դիմաց: Բացահայտվել է կողոպուտի դեպքերի 57.7%-ը՝ նախորդ տարվա 52%-ի, գողության դեպքերի 48.9%-ը՝ նախորդ տարվա 42.6%-ի, այդ թվում՝ բնակարանային

գողությունների 27.2%-ը՝ նախորդ տարվա 26.7%-ի, խարդախությունների 57.8%-ը՝ նախորդ տարվա 55%-ի, յուրացման կամ վատնման 54.4%-ը՝ նախորդ տարվա 51.4%-ի, տրանսպորտային միջոցը փախցնելու դեպքերի 80%-ը՝ նախորդ տարվա 74.4%-ի դիմաց: Չնայած դրան, ավազակության բացահայտման ցուցանիշները նվազել են՝ կազմելով 73%՝ 2020 թվականի 75%-ի համեմատ, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների դեպքերը՝ 29.3%՝ 38.3%-ի համեմատ:

Անդրադառնալով սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքին՝ անհրաժեշտ եմ համարում փաստել, որ բնակարանային գողությունների դեմ պայքարին ուղղված աշխատանքը դրական փոփոխություններ է կրել: Զգալի աշխատանք է կատարվել հատկապես մարզային համայնքներում տեսանկարահանող սարքերի տեղադրման և դրանց հաշվառման ուղղությամբ: Բնակարանային գողությունների դեպքերով ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքների աշխատանքային քննարկումներն ու դրանց հիման վրա քննության համատեղ պլանավորումը դատախազության ստորաբաժանումների մեծ մասում դարձել են աշխատաոճ: Միաժամանակ, բնակարանային գողությունների պատճառներն ու նպաստող պայմանները վերացնելուն ուղղված աշխատանքը համակարգված բնույթ չի կրում, այդ կապակցությամբ կատարվող դատախազական ահռելի աշխատանքը հասարակության անդամների կողմից անհրաժեշտ արձագանք չի ստանում, պետական և տեղական ինքնակառավարման պատասխանատու մարմինները օբյեկտիվ, իսկ երբեմն սուբյեկտիվ պատճառներով հնարավորություն չեն ունենում ապահովելու դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի պահանջների անհապաղ կատարումը, այն դեպքում, երբ նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ միջնորդագրերում նշված միջոցների գործադրումն էական դրական ազդեցություն է ունենում այս հանցատեսակի կանխման վրա:

Այսպես, հատկապես մայրաքաղաքում բնակարանային գողությունների դեպքերի նվազման, ինչպես նաև բացահայտման ցուցանիշների թեև դանդաղ, սակայն բարելավման միտումները պայմանավորված են 2018թ.-ից ՀՀ դատախազության նախաձեռնությամբ սկսված՝ այս բնույթի հանցագործությունների նախականխմանը, ինչպես նաև տաք հետքերով բացահայտմանը, կատարվող քննությունների, դրանց նկատմամբ դատախազական հսկողության որակի և արդյունավետության բարելավմանն ուղղված միջոցառումներով:

Մասնավորապես, նկատի ունենալով, որ բնակարանային գողությունների զգալի մասը կատարվում է հենց դռնից բնակարան մուտք գործելով, ի սկզբանե խնդիր է դրվել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ներգրավմամբ շենքերի մուտքերը կահավորել անվտանգության միջոցներով՝ այդտեղ հանցավորների անարգել մուտքն անհնարին դարձնելու նպատակով:

Երևանի քաղաքապետարան կատարված հարցմամբ պարզվել է, որ մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերում 2021թ. տեղադրվել են 218 մուտքի դուռ և 213 կոդավորված փական/դոմաֆոն/: Բազմաբնակարան շենքերի առկա 12.641 մուտքերից 176-ը դեռևս չունեն դուռ, իսկ 7836-ը չունեն կոդավորված փականներով դուռ: Վերջին տարիների ընթացքում տեղադրվել են 4757 կոդավորված փականներով դռներ: Հաշվի առնելով, որ նման միջոցներով համալրված շենքերում կտրուկ նվազում են բնակարանային գողությունները, ինչը դրականորեն է ազդում այս հանցատեսակով կրիմինոգեն վիճակի վրա, խնդիր է դրվել շարունակելու ազգաբնակչության հետ բացատրական աշխատանքներով այս գործընթացի առաջմղումը:

Արձանագրելով, որ ամենացածրը բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշն է, անհրաժեշտ եմ համարում փաստել, որ դրանք շատ հաճախ պայմանավորված են քննության ոչ պատշաճությամբ: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են դրսևորվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բնակարանային գողությունների վերաբերյալ գործերով անհրաժեշտ քննչական գործողությունները չկատարելը, իսկ ավելի հաճախ՝ դրանք ուշ կամ մակերեսային կատարելը, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների հետ համագործակցության չկազմակերպվածությունն ու անարդյունավետությունը, հանձնարարությունները ձևականորեն՝ առանց գործի համար կարևոր հանգամանքների մասին շեշտադրումների տալը, հափշտակված գույքը հայտնաբերելուն ուղղված պատշաճ միջոցառումներ չիրականացնելը և այլն:

Նմանատիպ դեպքերը գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում վերհանվել են և ստացել համապատասխան արձագանք: Բացի այդ, 2021 թվականին մշակվել և շրջանառության մեջ է դրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից մշակված՝ բնակարանային գողությունների քննության մեթոդական ուղեցույցը, որում, ի թիվս այլնի, բնակարանային գողությունների կրիմինալիստիկական բնութագրի, վերահսկողության ընթացքում վեր հանված գործնական խնդիրների վերլուծությամբ առանձնացվել են այդ գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները, սահմանվել քննության պլանավորման առանձնահատկությունները, հնարավոր քննչական վարկածները, դրանք ստուգելուն, հանցագործությունները բացահայտելուն, այն կատարած անձանց հայտնաբերելուն ուղղված միջոցառումները, անհետաձգելի քննչական գործողությունները, դրանց տակտիկական առանձնահատկությունները և այլն:

Անհրաժեշտ եմ համարում շեշտել ուսումնասիրությամբ վեր հանված՝ խարդախության դեպքերի կանխման համար էական այն հանգամանքը, որ դրանք բազմաթիվ դեպքերում պայմանավորված են լինում տարբեր իրավիճակներում հասարակության անդամների զգոնության իսպառ բացակայությամբ և ակնհայտորեն չհիմնավորված վստահություն ցուցաբերելով: Խարդախությունների և

համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների զգալի մասը կատարվում է առցանց գնումների և գույքի վաճառքի մասին հայտարարությունների համացանցային հարթակներն օգտագործելով կամ տարբեր պատրվակներով էլեկտրոնային դրամապանակների տվյալները կամ դրանք ստեղծելու համար անհրաժեշտ կենսաչափական տվյալներն այլ անձանց վստահելու արդյունքում:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նշված բնույթի հանցագործությունները, որպես կանոն, կատարվում են կոնկրետ հանցավոր սխեմայի կիրառմամբ: Մասնավորապես, հանցագործները տարբեր սոցիալական ցանցերում և, առավելապես, «facebook.com» սոցիալական կայքում, ստեղծում են տարբեր անվանումներով օգտահաշիվներ, որոնց միջոցով նամակագրություն են հաստատում և վարում նույն կայքերում գրանցված տարբեր անձանց հետ: Վերջիններիս անվամբ, «Իդրամ» էլեկտրոնային դրամապանակ գրանցելու, դրանք նույնականացնելուն աջակցելու, բոնուսներ տրամադրելու և այլ պատրվակներով, այդ անձանցից ստանում են նրանց անձնագրային տվյալները, բջջային հեռախոսահամարները, հեռախոսահամարներին «Իդրամ» համակարգից ստացված ծածկագրերը: Որոշ դեպքում նաև ուղղորդում են նշված անձանց «Իդրամ» վճարային համակարգում «Իդրամ» դրամապանակները նույնականացնելու գործընթացում: Այնուհետև, ունենալով վերջիններիս անվամբ գրանցված և նույնականացված «Իդրամ» էլեկտրոնային դրամապանակների տվյալները, փոխում են դրանց կցված բջջային հեռախոսահամարները ու կցում իրենց անվամբ գրանցված և իրենց կողմից օգտագործվող հեռախոսահամարներ: Ապա դրամապանակների միջոցով տարբեր անձանց անվամբ, տարբեր բանկերում, առցանց եղանակով ձևակերպում են վարկային պայմանագրեր և հափշտակում պայմանագրերով հաստատված ու իրենց (կամ այլ անձանց) կողմից կառավարվող էլեկտրոնային դրամապանակներին, դրանց կցված բանկային քարտերին մուտքագրված գումարները:

Առանձին դեպքերում հանցագործներն անձանց անձնագրային տվյալներն օգտագործել են առանց նրանց գիտության, նրանց անվամբ առցանց տարբերակով ձևակերպած և ստացած վարկերը հափշտակելով, ստացված գումարը փոխանցել են բուքմեյքերական կայքերում իրենց կամ այլ անձանց անվամբ գրանցված և իրենց կողմից օգտագործվող խաղային հաշիվներին կամ ուղղակի կանխիկացրել:

Դրան զուգահեռ, վերջին շրջանում կտրուկ ընդլայնվում է բանկային գործառնությունները (վարկերի ձևակերպում, գումարների փոխանցում և այլն) առցանց եղանակով իրականացնելու հնարավորությունը, մինչդեռ դրանց պաշտպանության, բանկային վերահսկողական մեխանիզմները համաչափ չեն կատարելագործվել: Արդյունքում՝ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ոչ բավարար պաշտպանվածությունը, բանկային վերահսկողական

բավարար մեխանիզմերի բացակայությունը նվազեցնում են այս բնույթի հանցագործությունների նախականխման արդյունավետությունը:

Այսպիսի մեխանիզմներով կատարված հանցագործությունների նախականխման նպատակով դատախազության կողմից արդեն իսկ միջոցներ են ձեռնարկվում՝ ուղղված՝ մի կողմից հասարակության անդամների զգոնության բարձրացմանը, մյուս կողմից՝ առցանց բանկային գործառնությունների համար կիրառվող գործիքների անվտանգության բարձրացմանը:

Մասնավորապես, նշված հարցով ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահին:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ շորթման դեպքերը բացահայտելու հիմնական խոչընդոտներից մեկը (ինչպես գրեթե բոլոր կիբեռհանցագործությունների դեպքում) կապված է հանցավորի IP հասցեի բաժանորդային տվյալների ստացման հետ: Տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ հաճախ հնարավոր չի լինում ստանալ հանցավորի IP հասցեի բաժանորդային տվյալները: Դրա պատճառները տարբեր են՝ քողարկման ծրագրերի օգտագործում, տվյալների պահպանության կարճ ժամկետ, տվյալ օպերատորի տեխնիկական հագեցվածության հետ կապված կամ այլ աշխատանքային խնդիրներ և այլն: Շատ դեպքերում IP հասցեի բաժանորդային տվյալների բացակայությունը քրեական գործի քննությունը կարող է փակուղի մտցնել: Հատկապես խնդիրը առավել սուր է մի շարք բջջային օպերատորների հետ համագործակցության ոլորտում, վերջիններս որևէ օրենքով սահմանված պարտականություն չեն կրում պահպանելու IP հասցեի բաժանորդային տվյալները:

2021 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 251 դեպքով կամ 32.1%-ով աճ (783-1034):

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ նվազել է այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 23.0%՝ նախորդ տարվա 25.5%-ի դիմաց: 2021 թվականի ընթացքում դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 2.5%-ով:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճը արձանագրվել է հիմնականում ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության, կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելո իրացնելու, հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերի և տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի աճի հաշվին: Այսպես, կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու դեպքերն աճել են 119-ով կամ 35.8%-ով /332-451/, ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերը՝ 10-ով կամ 20.8%-ով (48-58), հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը՝ 101-ով կամ 61.6%-ով

(164-265), իսկ տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 34-ով կամ 16.4%-ով (207-241):

Միաժամանակ, 2021թ. ընթացքում 4 դեպքով կամ 80.0%-ով նվազել են ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության, 9-ով կամ 33.3%-ով՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեպքերը: Այսպես, եթե 2020թ. արձանագրվել էր հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման 27 դեպք, ապա 2021թ.՝ 18 դեպք, եթե 2020թ. արձանագրվել էր ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության 5 դեպք, ապա 2020թ. ՝ ընդամենը 1 դեպք:

Տնտեսական բնույթի որոշակի հանցատեսակներով դեպքերի աճը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ՝ ինչպես ՀՀ ՊԵԿ-ի նախաձեռնությունների, այնպես էլ տնտեսական գործունեության առանձին՝ հանցավորության առումով առավել խնդրահարույց ոլորտների առնչությամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրված կոնկրետ հանձնարարականների կատարման արդյունքում էապես ավելացել են ՀՀ ՊԵԿ ստորաբաժանումների կողմից հարկային պարտավորությունների չկատարման, կանխամտածված սնանկության, ապօրինի ձեռնարկատիրության ավելի շատ հայտնաբերման դեպքերը:

Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչության կողմից տրված հանձնարարությամբ ՀՀ ՊԵԿ-ում ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ-ում ռեզիդենտ համարվող շոու-բիզնեսի ներկայացուցիչների կողմից, առանց հարկային մարմիններում հաշվառման, այսինքն՝ առանց հարկեր վճարելու ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու, ինչպես նաև կառուցապատման, բենզինի, դիզվառելիքի ներմուծման և վաճառքի ոլորտներում: Դրանց արդյունքում հայտնաբերվել են հարկային բնույթի հանցավոր իրավախախտումներ, որոնք քրեաիրավական ընթացք են ստացել:

Բացի այդ, վերջին շրջանում բանկերը, վարկային կազմակերպություններն առավել նախաձեռնող են դարձել կեղծ փողեր հայտնաբերելու դեպքում այդ մասին իրավապահ մարմիններին հաղորդումներ ներկայացնելու, վերջիններիս հետ համագործակցելու հարցում: Դրան նպաստել է նախ այն հանգամանքը, որ բանկային կամ վարկային, վճարային համակարգերի բնագավառում գործող կազմակերպությունների հետ աշխատանքներ են տարվել կեղծ փողերի հայտնաբերման նոր սարքավորումների ներդրման, աշխատակիցների զգոնությունը բարձրացնելու ուղղությամբ: Բացի այդ, դրան նպաստել է նաև ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ Կենտրոնական բանկի և բանկերի ներկայացուցիչների մասնակցությամբ նախորդ տարի կազմակերպված՝ կեղծ փողերի դեմ պայքարի շրջանակում նման դեպքերի մասին ՀՀ իրավապահ մարմիններին տեղեկացնելու, այս բնույթի հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության ձևերի շուրջ քննարկումը:

Բացի այդ, քրեական գործերի ոսումնասիրմամբ արձանագրվել են առանձին գերակա ոլորտներում իրականացվող՝ ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բացկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանների այնպիսի խախտման դեպքեր, երբ ՀՀ կառավարության որոշումներով արտոնյալ պայմաններով ՀՀ տարածք ներմուծված ապրանքները չեն ծառայել իրենց նպատակային նշանակությանը: Հաշվի առնելով, որ նման արտոնություններ տրվել են բազմաթիվ տնտեսվարողների՝ ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչությանը հանձնարարվել է պարբերաբար իրականացնել միջոցառումներ վերջիններիս կողմից դրանց նպատակային օգտագործման հանգամանքները պարզելու և խախտման դեպքերի մասին ՀՀ գլխավոր դատախազությանը տեղեկություն տրամադրելու ուղղությամբ: Ելնելով գործնական խնդիրներից՝ 2021թ. համապատասխան իրավակարգավորումներում փոփոխությունների կոնկրետ առաջարկություններով համապատասխան միջնորդագիր է ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, որի քննարկման արդյունքում այդ առաջարկությունները ներառվել են ՀՀ կառավարության որոշման մեջ:

2021 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 48 դեպքով կամ 1.7%-ով նվազում (2842-2794):

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 63.4%՝ նախորդ տարվա 63.9%-ի դիմաց:

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազումը արձանագրվել է հիմնականում իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու և ժամկետային զինվորական ծառայությունից, վարժական հավաքներից խուսափելու դեպքերի աճի հաշվին: Այսպես, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը նվազել են 13-ով կամ 20.0%-ով /65-52/, իսկ ժամկետային զինվորական ծառայությունից, վարժական հավաքներից խուսափելու դեպքերը՝ 59-ով կամ 5.9%-ով (994-935):

Ամփոփելով՝ պետք է փաստել, որ 2021թ. ընթացքում, չնայած հետպատերազմյան իրավիճակով, ինչպես և Ազգային ժողովի ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով, համավարակով պայմանավորված գերծանրաբեռնված օրակարգին, ՀՀ իրավապահ մարմինները կատարել են իրենց առջև դրված խնդիրները, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել հասարակական

կարգն ու անվտանգությունը: Չնայած հանցագործությունների դեպքերի որոշակի աճին, հանցավորության վիճակը Հայաստանի Հանրապետությունում վերահսկելի է, իսկ հանցավորության դեմ պայքարի քանակական և որակական ցուցանիշների բարելավման խնդիրը Հանրապետության քրեական հետապնդման մարմինների, այդ թվում՝ դատախազության ամենօրյա ուշադրության կենտրոնում է:

Պետք է նշել, որ հանցավորության վիճակն իրական գնահատելու նպատակով նույնպես ՀՀ դատախազության կողմից մշտապես կատարվում են ուսումնասիրություններ ու ստուգումներ, որոնց արդյունքում հետաքննության մարմիններին տրվում են համապատասխան հանձնարարություններ:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության կողմից իրականացված ստուգումների ընթացքում հայտնաբերվել են ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգի խախտումներ:

Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ առերևույթ հանցագործության դեպքերը չեն գրանցվել ոստիկանության ավտոմատացված տեղեկատվական համակարգի օպերատիվ հաղորդագրությունների հաշվառման շտեմարանում և միայն դատախազների կողմից տրված համապատասխան հանձնարարություններից հետո են դրանք գրանցվել: Բացի այդ, արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ նույնաբովանդակ հաղորդումները գրանցելիս և դրանց ընթացքը լուծելիս դրսևորվել է տարբերակված մոտեցում: Մասնավորապես, ընտանիքում բռնության վերաբերյալ ահազանգերը, բջջային հեռախոսների, դրամապանակների գողության-կորցնելու մի շարք դեպքեր զեկուցագրով թողնվել են անհետևանք, իսկ նմանատիպ մյուս դեպքերում դրանց ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով:

Բացի այդ, հայտնաբերվել են մի շարք դեպքեր, երբ, ստանալով քաղաքացիների դիմումները, ահազանգերը, ոստիկանության աշխատակիցները ձեռնարկել են որոշակի դատավարական գործողություններ /օրինակ՝ բացատրություններ են վերցրել/, որոնք ուղղված են եղել դրանցում պարունակվող տեղեկությունները քննարկելուն, ստուգելուն և լուծելուն, որից հետո, սակայն, դիմումը կամ ահազանգը թողնվել է անհետևանք, մինչդեռ դա հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0635/11/19 գործով արտահայտած դիրքորոշմանը, համաձայն որի, եթե դիմումի քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված ձեռնարկվում են որոշակի դատավարական գործողություններ, ապա վարույթն իրականացնողի մոտ պարտավորություն է առաջանում դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Նշված, ինչպես նաև այլ հանցատեսակների դինամիկայի ուսումնասիրությունների արդյունքներով հայտնաբերված մի շարք այլ

թերացումների և բացթողումների, ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի կողմից, ըստ պատասխանատվության ոլորտների, գրություններ են ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ ԱԱԾ տնօրենին, ՀՀ ՊԵԿ նախագահին, ՀՀ արդարադատության նախարարին, ՀՀ քննչական կոմիտեի նախագահին և այլ պատասխանատուների:

2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

2021թ. ընթացքում հանրապետությունում նախապատրաստվել է 63.305 նյութ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 58.703-ի դիմաց: Փաստորեն՝ նախապատրաստված նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 4602-ով կամ 7.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստված 63.305 ավարտված նյութից 36.370-ով կամ 57.4%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 28.542-ը կամ 78.5%-ը՝ արդարացման, 7828-ը կամ 21.5%-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

Համեմատության համար նշենք, որ 2020թ. նախապատրաստված 58.703 ավարտված նյութից 34.700-ով կամ 59.1%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 28.086-ը կամ 80.9%-ը՝ արդարացման, 6614-ը կամ 19.1%-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2021թ. ընթացքում նախապատրաստված 63.305 նյութից 26.935-ով կամ 42.6%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 432-ը կամ 1.6%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 432 քրեական գործից 54-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից:

2020թ. համեմատ, 2021թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշումների քանակը աճել է 4188-ով (22.747-26.935) կամ 18.4%-ով: 123-ով կամ 39.8%-ով աճել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերը (309-432), 1670-ով կամ 4.8%-ով (34.700-36.370)՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվը:

2021թ. ընթացքում հանրապետության նախաքննության մարմինների կողմից քննվել է 44.751 քրեական գործ (2020թ.՝ 34.737): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը աճել է 10.014-ով կամ 28.8%-ով:

2021թ. ՀՀ նախաքննության մարմինների քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 76.1 քրեական գործ՝ նախորդ տարվա 65.0 քրեական գործի դիմաց, իսկ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 122.9 քրեական գործ՝ նախորդ տարվա 112.4 քրեական գործի դիմաց:

2021թ. քննված 44.751 քրեական գործից 8237-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2020թ.՝ 4811), որը 3426-ով կամ 71.2 %-ով ավելի է, քան 2020 թվականին, իսկ 36.374-ը վարույթ է ընդունվել 2021թ. ընթացքում (2020թ.՝ 29.923), որը 6451-ով կամ 21.5%-ով ավելի է, քան 2020 թվականին:

2021թ. վարույթ ընդունված 36.374 քրեական գործից 25.672-ը հարուցվել է հաշվետու ժամանակաշրջանում (2020թ.՝ 22.430). այդ թվում՝ 7092-ը հարուցվել է նախաքննության մարմինների (2020թ.՝ 5873), 17.571-ը՝ հետաքննության մարմինների (2020թ.՝ 15.207), իսկ 1009-ը՝ դատախազների կողմից (2020թ.՝ 1350):

2021թ. ավարտվել է 14.480 քրեական գործի վարույթ (2020թ.՝ 11.559), այդ թվում՝ 4732-ը՝ 5912 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2020թ.՝ 3664-ը՝ 4671 անձի վերաբերյալ)[5], 54-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2020թ.՝ 38), 9694-ը կարճվել է (2020թ.՝ 7857), որոնցից 4945-ը՝ արդարացման (2020թ.՝ 3380), 4749-ը՝ ոչ արդարացման հիմքերով (2020թ.՝ 4477) :

Հաշվետու ժամանակաշրջանում 12.683 քրեական գործով վարույթները կասեցվել են (2020թ.՝ 9499), որոնցից 10.679-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2020թ.՝ 8036), 1923-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2020թ.՝ 1379), իսկ 81-ը՝ այլ հիմքերով (2020թ.՝ 66):

2021թ. 6180 քրեական գործ միացվել է (2020թ.՝ 3711), քրեական գործ հարուցելու մասին 10 որոշում վերացվել է դատախազի կողմից (2020թ.՝ 2):

2021թ. վերջին անավարտ է մնացել 7078 քրեական գործ (2020թ.՝ 8237), ինչը 1159-ով կամ 14.1%-ով պակաս է, քան 2020 թվականին:

2021թ. ընթացքում դատախազների կողմից ստուգվել է /վերստուգվել է/ վարույթը կարճելու մասին 17.668 որոշման օրինականություն: 2021 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 544 որոշում կամ ստուգված որոշումների 3.1%-ը, որոնցից 121-ը կամ 22.2%-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 76 որոշում, որոնցից 4-ը կամ 5.3%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 43 որոշում, որոնցից 2-ը կամ 4.6% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2020 թվականին ստուգվել է /վերստուգվել է/ վարույթը կարճելու մասին 12.130 որոշման օրինականությունը: 2020 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 269 որոշում կամ ստուգված որոշումների 2.2%-ը, որոնցից 82-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 38 որոշում, որոնցից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

[5]Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի և անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները վերաբերում են առանց կրկնակիի դատարան ուղարկված վիճակագրական տվյալներին, որոնք արտացոլում են «Քննչական աշխատանքի մասին» (ՁԼ1 Մ) հաշվետվության (**այսուհետ՝ հաշվետվություն**) 1-ին բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 52-րդ տողում նշված վիճակագրական տվյալները: Մատնանշված տողում արտացոլված թվերն են հաշվարկվել հաշվետու ժամանակաշրջանում վարույթ ընդունված թվերին, որոնք էլ համապատասխանեցվել են վարույթում քննված քրեական գործերի բաշխման բանաձևին (հաշվետվության 1-ին բաժնի 2-րդ աղյուսակի 2-րդ տող, 1-ին և 2-րդ տողերի գումարի բաշխում):

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 21 որոշում, որոնցից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 285 բողոք (2020թ.՝ 216), որոնցից բավարարվել է 34-ը (2020թ.՝ 17) կամ 11.9%-ը (2020թ.՝ 7.9%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 55 բողոք (2020թ.՝ 61): Նշված բողոքներից բավարարվել է 3-ը (2020թ.՝ 5):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բերվել է 25 բողոք (2020թ.՝ 14), որոնցից 1-ը բավարարվել է (2020թ.՝ 3):

Փաստենք, որ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2021թ. ավել է 74-ով կամ 25.4%-ով՝ կազմելով 365 բողոք՝ նախորդ տարվա 291-ի դիմաց: Բերված բողոքներից բավարարվել է 38-ը կամ 10.4%-ը (2020թ.՝ 25 կամ 8.6%):

Փաստորեն, 2021թ. ստուգվել է վարույթը կարճելու մասին 5538 որոշում ավելի, քան 2020թ., իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը ավելացել է 275-ով կամ 102.6%-ով:

2021թ. ստուգվել է /վերստուգվել է/ վարույթը կասեցնելու մասին 21.982 որոշման օրինականությունը, ինչը 5057-ով կամ 29.8%-ով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից (2020թ.՝ 16.925):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 293 բողոք, որոնցից 9-ը բավարարվել է: Նախորդ տարի բերվել է նման 58 բողոք, որոնցից բավարարվել է 3-ը: Նախորդ տարվա համեմատ բողոքների թիվը ավելացել է 235-ով կամ 405.1%-ով:

2021 թվականին վարույթը կասեցնելու մասին ստուգված 21.982 որոշումից 620-ը կամ 2.8%-ը վերացվել է (2020թ.՝ 16.925-ից վերացվել է 196-ը կամ 1.2%-ը):

2021թ. ընթացքում դատարան ուղարկված 1403 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 17.126.554.997 ՀՀ դրամի գույքային վնաս (2020թ.՝ 6.663.259.641), որից պետությանը՝ 15.081.551.509 ՀՀ դրամի (2020թ.՝ 4.181.808.755), իրավաբանական անձանց՝ 358.906.617 ՀՀ դրամի (2020թ.՝ 960.473.971), ֆիզիկական անձանց՝ 1.686.096.871 ՀՀ դրամի (2020թ.՝ 1.520.976.915):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 10.649.655.093 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2020թ.՝ 2.257.933.288), որից պետությանը՝ 10.335.045.439 ՀՀ դրամի (2020թ.՝ 1.806.580.940), իրավաբանական անձանց՝ 77.483.535 ՀՀ դրամի (2020թ.՝ 54.518.260), ֆիզիկական անձանց՝ 237.126.119 ՀՀ դրամի չափով (2020թ.՝ 396.834.088):

2021թ. ընթացքում ոչ արդարացման հիմքերով կարճված քրեական գործերով և նույն հիմքերով մերժված նյութերով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 1.087.705.271 ՀՀ դրամի գույքային վնաս (2020թ.՝ 7.289.300.006), որից պետությանը՝ 744.062.958 ՀՀ դրամի (2020թ.՝ 6.910.553.769), իրավաբանական անձանց՝ 69.036.944 ՀՀ դրամի (2020թ.՝ 37.376.453), ֆիզիկական անձանց՝ 274.605.369 ՀՀ դրամի (2020թ.՝ 341.369.784):

Նյութերի նախապատրաստման և նախաքննության ընթացքում վերականգնվել է 785.825.067 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2020թ.՝ 6.406.668.967), որից պետությանը՝ 565.762.604 ՀՀ դրամի (2020թ.՝ 6.144.115.011), իրավաբանական անձանց՝ 50.637.118 ՀՀ դրամի (2020թ.՝ 25.104.720), ֆիզիկական անձանց՝ 169.425.345 ՀՀ դրամի (2020թ.՝ 237.449.236) չափով:

2020թ. ընթացքում քննված քրեական գործերով դատարան է ներկայացվել 5222 խուզարկության միջնորդություն (2019թ.՝ 4482), որոնցից 4908-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 314-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 5222 միջնորդությունից բավարարվել է 4891-ը կամ 93.7%-ը (2020թ.՝ 4264-ը կամ 95.1%-ը), մերժվել է 331-ը կամ 6.3%-ը (2020թ.՝ 218-ը կամ 4.9%-ը), որոնցից 319-ը՝ բնակարանի խուզարկության, իսկ 12-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման:

2021թ. ընթացքում դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 5200 ցուցում՝ նախորդ տարվա 2740 ցուցումի դիմաց, այսինքն՝ ցուցումների թիվն աճել է 2460-ով կամ 89.7%-ով:

2021թ. ընթացքում դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 972 միջնորդագիր՝ նախորդ տարվա 618 միջնորդագրի դիմաց, այսինքն՝ միջնորդագրերի թիվն աճել է 354-ով կամ 57.3%-ով:

2021թ. ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ քննության է վերադարձվել 154 քրեական գործ՝ նախորդ տարվա 138 քրեական գործի դիմաց, այսինքն՝ լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործերի թիվն աճել է 16-ով կամ 11.6%-ով:

2021թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 497 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 94 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, 12 անձ՝ քրեական պատասխանատվության:

Համեմատության համար նշենք, որ 2020թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 268 միջնորդություն, որոնց

քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 72 անձ, 3 անձ՝ քրեական պատասխանատվության:

2021թ. ընթացքում դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 692 անձ՝ նախորդ տարվա 294-ի դիմաց, այսինքն՝ վարույթից հեռացված անձանց թիվն աճել է 398-ով կամ 135.4%-ով:

2021թ. ընթացքում ձերբակալվել է 1008 անձ՝ նախորդ տարվա 1140-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը նվազել է 132-ով կամ 11.6%-ով: Ձերբակալումից ազատվել է 431 անձ՝ 2020թ. 589-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվը նվազել է 158-ով կամ 26.8%-ով:

2021թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1277 միջնորդություն **(**այս ցուցանիշը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները), որոնցից բավարարվել է 986-ը կամ 77.2%-ը, մերժվել՝ 291-ը կամ 22.8%-ը:

Համեմատության համար նշենք, որ 2020թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1223 միջնորդություն, որոնցից բավարարվել է 961-ը կամ 78.6%-ը, մերժվել՝ 262-ը կամ 21.4%-ը: Այսպիսով, 2020թ. համեմատ, 2021 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը աճել է 54-ով կամ 4.4%-ով:

Նշված աճն առավելապես պայմանավորված է 2021 թվականի ընթացքում մեղադրյալների թվի աճով: Մասնավորապես, եթե 2020 թվականին որպես մեղադրյալ է ներգրավվել 8505 անձ, ապա 2021 թվականին մեղադրյալների թիվը շեշտակի ավելացել է՝ կազմելով 10.044 անձ **(**ներկայացված ցուցանիշները չեն պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները), այսինքն, 2021 թվականին, 2020 թվականի համեմատությամբ, որպես մեղադրյալ ներգրավված անձանց թիվն ավելացել է 1539-ով կամ 15.3%-ով:

Հետևաբար, 2021 թվականին, մեղադրյալների թվի հետ հարաբերակցությամբ՝ վերջիններիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ավելի քիչ միջնորդություն է ներկայացվել, քան 2020 թվականին: Մասնավորապես, 2021թ. կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել մեղադրյալների 12.71%-ի, իսկ 2020 թվականին 14.38 %-ի նկատմամբ:

Հատկանշական է, որ դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 354 անձ դատապարտվել է ազատազրկման (2020թ.՝ 342):

Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ նախքան դատապարտումը մեղադրյալների ազատության իրավունքի սահմանափակման դեպքերի նվազեցումը

հանդիսանում է քրեական հետապնդման գործառույթն իրականացնելիս դատախազության դատավարական դիրքորոշման առանցքը: Դրա վկայությունն այն է, որ դեռևս 2017 թվականին ՀՀ դատախազության կոլեգիայի որոշմամաբ սահմանվել են կալանավորման հիմքերի գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք ակնհայտորեն միտված են դրան: Բացի այդ, հաշվի առնելով այդ մոտեցման ավելի ամբողջական իրացման համար կալանավորման անհրաժեշտ այլընտրանքների գոյությունը, դատախազությունը դեռևս 2017թվականից հանդես է եկել խափանման միջոցների համակարգը հիմնովին վերափոխելու և կալանավորման բավարար այլընտրանքներ նախատեսելու նախաձեռնությամբ:

Դրանում առաջ քաշված մոտեցումները վերջնականապես իրացված են ամիսներ անց ուժի մեջ մտնող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և դրանով նախատեսված նոր խափանման միջոցի՝ տնային կալանքի կիրառությունը վստահաբար դրական նշանակություն կունենա խափանման միջոցների համաչափ և արդյունավետ պրակտիկա արմատավորելու գործում:

Բայց կրկնենք, որ ՀՀ դատախազությունը գործող կարգավորումների պայմաններում էլ մեծապես կարևորում է խափանման այս միջոցի համաչափ և որոշակի կիրառման պրակտիկան՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշիռ հարաբերակցության համատեքստում: Արդյունքում, բազմաթիվ են դեպքերը, երբ դատախազները հետ են վերցրել նախաքննության մարմինների կողմից դատարան ներկայացված կալանավորման միջնորդությունները /13 դեպք/ կամ իրենց որոշումներով վերացրել են մեղադրյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցները /56դեպք (ներկայացված ցուցանիշը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները)/ կամ համաձայնելով կալանավորումը որպես խափանման միջոց չընտրելու կամ դրա ժամկետը չերկարացնելու մասին դատարանի որոշումներում ներկայացված պատճառաբանությունների հետ՝ չեն բողոքարկել այդ ակտերը /86 դեպք/:

Հիշյալ խափանման միջոցի կիրառման պրակտիկան՝ ինչպես առանձին դեպքերով, այնպես էլ համակարգված մոտեցումներով, մշտապես ուսումնասիրվում և վերլուծության է ենթարկվում:

Այդ աշխատանքը դատախազության ամենօրյա աշխատանքի մասն է կազմում:

Ընդ որում, ՀՀ դատախազության իրականացրած ուսումնասիրությունը վկայում է, որ 2021 թվականի ընթացքում, քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառված լինելու պայմաններում, **26 անձ թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, իսկ 43 անձ կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք:**

Բացի նշյալ դեպքերից, 10 անձ, քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից անազատության մեջ պահելու

հետ չկապված խափանման միջոց կիրառված լինելու պայմաններում, և՛ թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, և՛ կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք:

Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու, նշված միջնորդությունը մասնակի բավարարելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացվելուց հետո, այդ մասին անհապաղ հայտնվում է ՀՀ գլխավոր դատախազություն (իսկ այդ ակտերը ստանալուց հետո անհապաղ ուղարկվում է նաև դրանց պատճենը) և նման ամեն դեպք առանձին քննարկման առարկա է դառնում, ինչի արդյունքում, դատական ակտերը բողոքարկելու հիմքերի բացակայության դեպքում, ինչպես նաև երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանավորման ժամկետն առանց բավարար հիմքերի և հիմնավորումների երկարացնելու դեպքերում, վերհանվում են գործը քննող քննիչի և հսկող դատախազի կողմից թույլ տրված թերացումները և նրանց կողմից առերևույթ խախտումներ կատարած լինելու վերաբերյալ տվյալների առկայության դեպքում ծառայողական ուսումնասիրության արդյունքներով հսկող դատախազի նկատմամբ հարուցվում է կարգապահական վարույթ, իսկ գործը քննող քննիչի դեպքում ներկայացվում է վերջինիս նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդություն:

ՀՀ դատախազության իրականացրած ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ 2021 թվականի ընթացքում, դատարանի կողմից անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառված լինելու պայմաններում, 5 անձ թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, իսկ 10 անձ կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք:

Ընդ որում, բացի նշյալ դեպքերից, 2 անձ, դատարանի կողմից անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառված լինելու պայմաններում, և՛ թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, և՛ կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ բազմաթիվ դեպքեր են առկա, որոնք ակնհայտորեն վկայում են դատարանների կողմից հատկապես կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման անհիմն, անհամաչափ և անորոշ պրակտիկայի մասին:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա տվյալները շատ դեպքերում ակնառու կերպով վկայել են դատավորների կողմից կատարված էական խախտումների մասին, երբ դատարանի հետևությունները չեն բխել քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք

բերված ծանրակշիռ փաստական հանգամանքներից: Այսպիսի պատկերը մտահոգիչ է: Այսպես՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի հատկանիշներով հարուցված քրեական գործի շրջանակներում անձի նկատմամբ կիրառված է եղել խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին, սակայն այն չի ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, և վերջինս դիտավորությամբ կրկին կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք: Նման պայմաններում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը՝ նշելով, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար չեն արձանագրելու, որ առկա է մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքները կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկած: Ավելին, դատարանը նշել է, որ ներկայացված նյութերում բացակայում է խուլիգանության դրսևորումը, չեն ներկայացվել դրա վերաբերյալ փաստական տվյալներ:

Հատկանշական է, որ դատարան ներկայացված միջնորդությանը կից ներկայացվել են երեք տուժողի, երկու վկայի ցուցմունքները, որոնցում նկարագրված են եղել մեղադրյալի՝ խուլիգանության հանցակազմի հատկանիշներին համապատասխանող գործողությունները, մեղադրյալի տված ցուցմունքները, որոնցում վերջինս իրեն մեղավոր է ճանաչել վերագրվող հանցանքները կատարելու մեջ և տվել է խոստովանական ցուցմունք: Դատարանին ներկայացված են եղել նաև դեպքի վայրի զննության արձանագրությունները, որոնցով հիմնավորվել է, որ մեղադրյալը վնասել է տուժողներից մեկի ավտոմեքենան, բնակարանի դուռը, ինչպես նաև մյուս տուժողին պատկանող խանութի ապակիները: Դատարանին են ներկայացվել նաև այլ փաստական տվյալներ:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նշյալ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ բավարարել է, դատական ակտը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության առնելու նպատակով: Այնուհետև, դատարանում, գործի՝ ըստ էության քննության արդյունքում, ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի հատկանիշներով:

2. ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցվել է երեք քրական գործ, այնուհետև դրանք միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է թիվ 13981719 համարով: Դրանից հետո, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 13174421 քրեական գործը, որը նույնպես միացվել է թիվ 13981719 քրեական գործին, և 2021 թվականի մարտի 23-ին Հայկ Գարգրցյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել

ստորագրությունը չհեռանալու մասին: Այնուհետև, 2021 թվականի մայիսի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13888021 քրեական գործը, և նույն օրը Հայկ Գարգրցյանը ձերբակալվել է: 2021 թվականի մայիսի 13-ին որոշում է կայացվել թիվ 13888021 քրեական գործը թիվ 13981719 քրեական գործին միացնելու մասին:

Արդյունքում՝ Հայկ Գարգրցյանին մեղադրանք է առաջադրվել երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքներ կատարելու համար և միջնորդություն է ներկայացվել վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին: Միջնորդության քննության արդյունքում դատարանը մերժել է այն՝ նշելով, որ առկա չէ Հ. Գարգրցյանի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը: Դատարանը նշել է նաև, որ չի հիմնավորվում նոր ենթադրյալ հանցանք կատարելուն մեղադրյալի առնչակցությունը և վերջինիս նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի պայմանների խախտման բացակայության պայմաններում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը ենթակա է մերժման: Արդյունքում՝ դատարանը չի անդրադարձել կալանավորման հիմքերին: Դատարանի նշյալ որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը բավարարվել է և գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Վերոգրյալով առնվազն հաստատվում է առաջին ատյանի դատարանի կողմից կամայական եղանակով ակտ կայացնելու հանգամանքը, ինչի արդյունքում, ակնհայտ կալանավորման հիմքերի առկայության պայմաններում, անձը մնացել է ազատության մեջ և կատարել ավելի ծանր հանցանք: Այսպես, նախքան գործն այլ կազմով քննելը, 2021 թվականի հունիսի 26-ին Հ. Գարգրցյանի կողմից կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված ենթադրյալ նոր հանցանք, որի վերաբերյալ վարույթի շրջանակներում միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, ինչը բավարարվել է: Այսինքն, ստացվում է, որ դատարանի ոչ իրավաչափ դատական ակտի՝ խափանման միջոց կալանավորումը չկիրառելու արդյունքում, Հ. Գարգրցյանի կողմից կատարվել է նոր ծանր հանցանք:

3. Անդրանիկ Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, այնուհետև արդեն կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը 2019 թվականի հունիսի 3-ին բավարարվել է: Այս քրեական

գործը 2019 թվականի հունիսի 17-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դրանից հետո, հենց հաջորդ օրը, հունիսի 18-ին Ա. Առաքելյանը կատարել է ենթադրյալ նոր հանցանք, որի համար վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 25-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Արդեն դատական քննության փուլում, դատարանը, ամբաստանյալի կողմից նոր հանցանք կատարած լինելու վերաբերյալ փաստական տվյալների առկայության պայմաններում, որոշում է կայացրել կալանավորումը փոխարինել գրավով: Այս գործի դատական քննության ընթացքում, մասնավորապես, 2021 թվականի մայիսի 30-ին, ամբաստանյալը կրկին կատարել է նույնաբնույթ հանցանք, ինչի համար նույն թվականի մայիսի 31-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է նոր քրական գործ և Ա.Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ: Ընդ որում. Ա. Առաքելյանը դեպքի վայրից դիմել է փախուստի, և ոստիկանության աշխատակիցները հետապնդել են նրան, սակայն չեն կարողացել բռնել ու բերման ենթարկել:

2021 թվականի հունիսի 11-ին մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նոր միջնորդություն է ներկայացվել դատարան, որը նույն թվականի հունիսի 14-ին մերժվել է:

Ստացվում է, որ Ա. Առաքելյանը, խախտելով խափանման միջոցի պայմանները, դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, այն է՝ կատարել է նոր հանցագործություն, մինչդեռ դատարանները, անտեսելով գործում առկա կոնկրետ փաստական տվյալները, բնակարանային գողության փորձի և բնակարանային գողություն կատարելու մեջ մեղադրվող անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չեն ընտրել:

4. Սամվել Հասանյանը, նախկինում դատապարտված լինելով բնակարանային գողություն կատարելու համար, դատվածությունը չմարված, չվերացված լինելու պայմաններում դարձյալ կատարել է նույնասեռ հանցագործություն, այն է՝ բնակարանային գողության փորձ: Դրանից հետո վերջինս հայտնաբերվել է ոստիկանության աշխատակիցների կողմից: Այնուհետև, հիշյալ գործը դեռևս գտնվելով դատաքննության փուլում, Ս. Հասանյանը կատարել է ևս երկու դրվագ դիտավորյալ հանցավոր արարքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով: Նշյալ հանցավոր արարքները կատարելու համար վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, ինչը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ փոխարինվել է գրավով: Այս առումով ուշագրավ է նաև այն, որ նման պայմաններում, Ս. Հասանյանը, գտնվելով ազատության մեջ, կրկին կատարել է

դիտավորյալ ծանր հանցագործություն, այն է՝ բնակարանային գողության օժանդակություն:

5. 2020 թվականի փետրվարի 12-ին որոշում է կայացվել Գևորգ Գևորգյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-267.1-րդ հոդվածի 1-ին մասով և 34-266-րդ հոդվածի 1-ին մասով և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: 2020 թվականի փետրվարի 13-ին նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին պատշաճ կերպով պաշտպանի միջոցով ծանուցված մեղադրյալ Գևորգ Գևորգյանն անհարգելի պատճառով դատարան չի ներկայացել և նույն օրը դատարանի կողմից իր նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառվելուց հետո, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը դարձյալ թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից՝ այդ ընթացքում գտնվելով հետախուզման մեջ:

2021 թվականի ապրիլի 11-ին որոշում է կայացվել Գևորգ Գևորգյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին ու նույն օրը նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: 2021 թվականի ապրիլի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննության առնելու: Առաջին ատյանի դատարանը, գործը դատաքննության նախապատրաստելիս ընտրված խափանման միջոցի հարցը քննարկելու մասին 2021 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ, մեղադրյալ Գևորգ Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողել է անփոփոխ:

2021 թվականի հոկտեմբերի 27-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով իր վարույթում գտնվող թիվ ԵԴ/0471/01/21 քրեական գործով ամբաստանյալ Գևորգ Գևորգյանի պաշտպանի միջնորդությունը՝ Գևորգ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ, որոշում է կայացրել այն բավարարելու մասին: Նշված գումարը վճարվել է, և նա ազատ է արձակվել:

2021 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքը բավարարելու, դատարանի որոշումը բեկանելու, ամբաստանյալի պաշտպանի միջնորդությունը՝ Գևորգ Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոփոխելու մասին, մերժելու և ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու մասին:

2021 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը հանձնվել է ամբաստանյալին և նրա պաշտպանին, սակայն Գևորգ Գևորգյանը, տեղյակ լինելով իր վերաբերյալ կայացված որոշման մասին, քրեակատարողական հիմնարկ չի ներկայացել: Ամբաստանյալը չի ներկայացել նաև 2021 թվականի դեկտեմբերի 22-ին և դեկտեմբերի 29-ին նշանակված դատական նիստերին՝ փաստացի 2021 թվականի դեկտեմբերի 1-ից թաքնվելով քննությունից:

2021 թվականի դեկտեմբերի 29-ին, դատարանը, քննության առնելով մեղադրողի միջնորդությունը՝ ամբաստանյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, որոշում է կայացրել այն բավարարելու և քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ ամբաստանյալը նախկինում հինգ անգամ դատապարտվել է դիտավորյալ արարքների կատարման համար, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների կատարման համար: Վերջին անգամ պատժի կրումից ազատվել է 14.11.2018 թվականին՝ համաներման մասին օրենքի կիրառման հիմքով, որից հետո, հինգ ամիս անց՝ 11.04.2019 թվականին, կրկին կալանավորվել է համասեռ արարքի՝ թմրամիջոց ապօրինի իրացնելու՝ քրեորեն պատժելի արարքի կատարման մեղսագրմամբ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է ընդգծել, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից մեղադրող դատախազի բողոքը բավարարվելուց հետո, ամբաստանյալը թաքնվել է քննությունից, ձեռնարկված միջոցառումներով նրա գտնվելու վայրը չի պարզվել, արդյունքում՝ քրեական գործով վարույթը կասեցվել է և հայտարարվել հետախուզում: Այսինքն՝ դատարանի անհիմն որոշման կայացման պատճառով քննությունից քանիցս թաքնված և նոր հանցանք կատարած անձին կրկին այդպիսի հնարավորություն է տրվել, որի հետևանքով, ինչպես նշյալ թիվ ԵԳ/0471/01/21, այնպես էլ մեկ այլ՝ թիվ ՍԴ/0038/01/20 քրեական գործերով, վերջնական դատական ակտ չի կայացվել:

6. 2019 թվականի օգոստոսի 30-ին վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու մեջ մեղադրվող Աղասի Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխարինվել է գրավով: Մեկ այլ քրեական գործով մեկ այլ անձի՝ Կորյուն Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: 2018 թվականի նոյեմբերի 9-ին, վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ, Կորյուն Մուրադյանի պաշտպանի բողոքը բավարարվել է և բեկանվել է վերջինիս կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը: Հատկանշական է, որ վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ որպես հիմնավորում, ի թիվս այլնի, արձանագրել է, որ Կ.Մուրադյանը նախկինում անձի

դեմ ուղղված հանցագործություններ կատարելու համար մի քանի անգամ դատապարտվել է ազատազրկման, սակայն հետևություններ չկատարելով, կատարել է նույնանման հանցագործություն: Անտեսելով ներկայացված հիմնավոր փաստարկները՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ինչպես նշվեց, բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը, ինչից հետո, հայտնվելով ազատության մեջ, Կ. Մուրադյանը կատարել է ավելի ծանր հանցագործություն, մասնավորապես, հրազենի գործադրմամբ երկու անձի սպանություն, նաև խուլիգանական դրդումներով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս է պատճառել: Ընդ որում, սպանված երկու անձից մեկը վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ առաջին որոշմամբ կալանքից ազատ արձակված մեղադրյալ Աղասի Հովհաննիսյանն է եղել:

Այսինքն, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կայացրած դատական ակտերի արդյունքում ծանր հանցագործություններ կատարած անձը դարձյալ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ է կատարել, ինչի արդյունքում երկու անձ սպանվել է:

Օրինակները, երբ կալանավորման հիմքերի և պայմանների առկայության պայմաններում անձինքն անհիմն ազատ են արձակվել կալանքից, իսկ ավելի ուշ դատախազների բողոքների հիման վրա նշված դատական ակտերը բեկանվել են, և փաստվել է կայացված որոշումների ակնհայտ ապօրինի լինելը, քիչ չեն: Մասնավորապես, մի քանի դեպքերում ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների վճռաբեկ բողոքների հիման վրա կայացված ՀՀ վճռաբեկ դատարանի 13 որոշումներով է փաստվել ստորադաս դատարանների կողմից բավարար հիմքերի առկայության դեպքում կալանքը որպես խափանման միջոց չկիրառելու անօրինականությունն ու անհիմն լինելը:

Բացի այդ, 2 գործով ՀՀ վճռաբեկ դատարանը ընդունելի է համարել բողոքում ներկայացված փաստարկները, սակայն հաշվի առնելով այն, որ տվյալ քրեական գործն արդեն ուղարկված է եղել դատարան, վիճարկվող դատական ակտը չի բեկանվել:

Ընդ որում, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի կողմից անձին անհիմն կալանավորելը փաստելու դեպք չի արձանագրվել:

Ինչպես ակնհայտ է բերված օրինակներից, մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց անհիմն չկիրառելու մի քանի դեպքեր ունեցել են հետևանքներ՝ արտահայտված մեղադրյալների կողմից քննությունից խուսափելով կամ նոր հանցանք կատարելով և դա այն դեպքում, երբ կալանավորման պայման հիմնավոր կասկածի և կալանավորման հիմքերի առկայությունը գնահատելու չափանիշների վերաբերյալ Եվրոպական դատարանի և վճռաբեկ դատարանի որոշումներով ձևավորված դատական նախադեպային իրավունքը բավարար է, կայուն և հստակ:

Վերը նկարագրված և նմանատիպ բոլոր այլ դեպքերում ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություններ են ներկայացվել ՀՀ արդարադատության

նախարարին՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նպատակով, սակայն այդ դեպքերը, որպես կանոն, մեր գնահատմամբ համաչափ գնահատականի չեն արժանացել: ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված պատասխաններից պարզ է դառնում, որ նման դեպքերը քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում չեն համարվել, դիտվել են որպես դատավորների կողմից ազատ իրավամեկնաբանության և փաստերի և ապացույցների ազատ գնահատման դրսևորում, հետևաբար դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

Այսպիսի մոտեցումը, սակայն ընդունելի չէ նախ այն պատճառով, որ կալանավորման հիմքերը, թեև ունեն և կարող են ունենալ գնահատողական բաղադրիչ, սակայն առնվազն բերված օրինակներում դատարանների հետևությունները հիմնված են եղել ոչ թե ներկայացված փաստերի գնահատման, այլ դրանց բովանդակության խեղաթյուրման, երբեմն ակնհայտորեն առկա՝ անձի կողմից հանցանքի կատարումը մատնանշող մի քանի տվյալների պայմաններում այդպիսի տվյալներ ներկայացված չլինելը փաստելու վրա:

Բացի այդ, նմանատիպ դեպքերում կոպիտ խախտումներ թույլ տված դատավորների կարգապահական պատասխանատվությունը ինքնուրույն միջոց պետք է հանդիսանա ապացույցների ազատ գնահատումը կամայական մեկնաբանությունների չհանգեցնելու, դատական հայեցողությունը թույլատրելի սահմաններում պահելու և ի վերջո՝ դատական իրավունքում ձևավորված չափանիշների կիրառումն ապահովելու համար: Իսկ վերադաս դատարանների կողմից այդ դատական ակտերի բեկանումը ոչ միայն չի ունենում կամայական գնահատումը սահմանափակող ընդհանուր ազդեցություն, այլ նաև բազմաթիվ դեպքերում չի չեզոքացնում հենց տվյալ գործով առաջացած արդեն անդառնալի հետևանքները: Բանն այն է, որ մեղադրյալներին չկալանավորելու վերաբերյալ ապօրինի որոշումները երբեմն բեկանվում են այն ժամանակ, երբ վերջիններս գտնված լինելով ազատության մեջ արդեն իսկ կատարած են լինում նոր հանցագործություններ կամ դրսևորած են լինում ոչ պատշաճ այլ վարքագիծ և դատական ակտի բեկանումը խափանման միջոցի ապահովող նշանակությունն այլևս չի երաշխավորում:

Հետևաբար, ՀՀ դատախազությունը ցուցաբերելու է կայուն հետևողականություն, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումներով, օրենսդրությամբ նախատեսված, իրավասու մարմիններին դիմելու գործիքակազմն օգտագործելու հարցում:

2021 թվականի ընթացքում հետախուզվել է 15.581 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 3178-ը կամ 20.4%-ը: Համեմատության համար նշենք, որ 2020թ.

ընթացքում հետախուզվել է 14.954 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1769-ը կամ 11.8%-ը:

Այսպիսով, պետք է փաստել, որ, 2020 թվականի համեմատությամբ, 2021 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 627-ով կամ 4.2%-ով: Միաժամանակ, էականորեն աճել են հետախուզվողների հայտնաբերման քանակական և տոկոսային ցուցանիշները: Մասնավորապես, հայտնաբերված հետախուզվող մեղադրյալների թիվը աճել է 1409-ով կամ 79.6%-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

2021 թվականին հետախուզվել է 4475 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1459-ը կամ 32.6%-ը:

2020 թվականին հետախուզվել է 3850 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1127-ը կամ 29.3%-ը:

Փաստորեն՝ 2020 թվականի համեմատությամբ 2021 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 625-ով կամ 16.2%-ով:

2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվել է 11.106 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1719-ը կամ 15.5%-ը:

2020 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 11.104 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 642-ը կամ 5.8%-ը:

Փաստորեն՝ 2020 թվականի համեմատությամբ, 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների թիվը ավելացել է 2-ով, հայտնաբերման քանակական ցուցանիշը ավելացել է 1077-ով, իսկ տոկոսային ցուցանիշը պակասել է 167.7%-ով:

Տարի	**Հետախուզվել են**			**Հայտնաբերվել են**			
	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ. տարվա ընթացքում	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ.	Հայտն. %-ը
2018	12191	3733	15924	1251	1159	2410	15.1
2019	11711	3639	15350	1245	1109	2354	15.3
2020	11104	3850	14954	642	1127	1769	11.8
2021	11106	4475	15581	1719	1459	3178	20.4

Հետախուզվողների հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքներում, վերը նշված դրական ցուցանիշների կողքին, արձանագրվել են նաև բացասական երևույթներ: Մասնավորապես, մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության լիազորության իրականացման ընթացքում դատախազների կողմից հայտնաբերվել են մեղադրյալների նկատմամբ փաստացի հետախուզում չիրականացնելու դեպքեր: Նշված դեպքերից մեկով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, մեկով հետախուզման պարտականություն կրող 1 անձ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Նմանատիպ խախտումները բացառելու նպատակով դատախազներին հանձնարարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կասեցված քրեական գործերի օրինականության ստուգման ընթացքում առանձնակի ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ քրեական գործում առկա լինի մեղադրյալի վերաբերյալ հետաքննության մարմնում համապատասխան հետախուզական գործ կազմված լինելու վերաբերյալ փաստաթուղթը: Առանց նշված փաստաթղթի առկայության քրեական գործով վարույթի կասեցման որոշումը աներկբա համարվում է ոչ օրինաչափ և վերացման ենթակա:

ՀՀ գլխավոր դատախազությունում ամփոփվել են 2021թ. ընթացքում խոշտանգումների դեմ քրեաիրավական պայքարի արդյունքները:

2021թ. ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների այլ ենթադրյալ խախտումների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ, 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 341-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քննվել է 156 քրեական գործ, ինչը 2020թ. համեմատ ավելի է շուրջ 10 տոկոսով, որոնցից 64-ի վարույթը կարճվել է (2020թ.՝ 80), 31-ի վարույթը կասեցվել է որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով: Քննված քրեական գործերից կոնկրետ խոշտանգման հանցակազմով 2021թ. քրեական հետապնդում հարուցվել է 1 անձի նկատմամբ:

Վարույթները կարճելու որոշումները մեծամասամբ պայմանավորված են եղել նրանով, որ հանցագործություններ կատարած անձինք, իրենց մեղադրանքից պաշտպանվելու, նախաքննության ընթացքում տված խոստովանական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու, հաճախ նաև իրավապահ մարմնի այս կամ այն աշխատակցից վրեժ լուծելու նպատակով, իշխանության տարբեր մարմիններին բազմաթիվ դիմում-բողոքներ են ներկայացրել իրենց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու մասին: Խոշտանգման

փաստով քննված քրեական գործերի նախաքննության արդյունքներով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի (սուտ մատնությունը) տարբեր մասերի հատկանիշներով հարուցվել է 3 քրեական գործ, որոնցից 2-ը՝ 2 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների ու պնդումների մասին քննությունը օպերատիվ, անաչառ, մանրակրկիտ և արդյունավետ կատարելու, դրա պատշաճ արագությունն ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին դեռևս 2020թ. օգոստոսին հանձնարարվել է խոշտանգման ենթարկված անձանց բողոքներն ու պնդումները, անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայություն (ներկայում՝ ՀՀ ԱԱԾ) ուղարկելու հարցը քննարկելու համար:

Վարույթում քննված՝ վերոնշյալ բնույթի քրեական գործերով դատախազական պատշաճ հսկողության պայմաններում ապահովվել է գործերի քննության լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը: Շեշտադրումը կատարվել է խոշտանգման դատական պրակտիկայի ձևավորման վրա, որի տեսանկյունից 2021թ. եղել է առանձնահատուկ:

Մասնավորապես, 2021թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի շրջանակում լուծվել է խոշտանգման հանցակազմը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ՝ 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բռնությամբ ուղեկցված պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմից ճշգրիտ սահմանազատելու խնդիրը (Արմեն Հովհաննիսյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0558/01/18 քրեական գործով 2021թ. հոկտեմբերի 15-ի որոշումը): Վերջինս էական նշանակություն ունի նմանատիպ գործերով նախաքննության ընթացքում հանցավոր արարքներին ճիշտ քրեաիրավական որակում տալու տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանն այդ կարևոր որոշմամբ գտել է, որ խոշտանգման արդյունքում անձի առողջությանը կարող է նույնիսկ առհասարակ վնաս չպատճառվել. տվյալ դեպքում կարևոր է ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի պատճառումը: Ավելին, իրավապահի կողմից իր հսկողության տակ գտնվող անհատին հասցված ապտակը դատարանը դիտում է որպես խոշտանգման դրսևորում, լուրջ հարձակում անձի արժանապատվության վրա, քանի որ դեմքին հասցված ապտակն ազդում է անձի մարմնի այն մասի վրա, որն արտահայտում է նրա անհատականությունը, դրսևորում նրա սոցիալական ինքնությունը:

Բացի այդ, հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի դրսևորումների քրեականացումից հետո, 2021թ. դատարանում կայացվել է այդ հանցակազմով առաջին մեղադրական

դատավճիռը, որը ևս նախադեպային կարևոր նշանակություն ունի դատարանում քննվող նմանատիպ գործերի լուծման տեսանկյունից: Մեղադրող դատախազի կողմից ներկայացված ապացույցները հիմնավորված համարելով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2021թ. դեկտեմբերի 28-ին կայացրել է մեղադրական դատավճիռ, որով ոստիկանության երկու աշխատակից մեղավոր է ճանաչվել խմբի կազմում խոշտանգում կատարելու համար և դատապարտվել ազատազրկման՝ 7 տարի ժամկետով:

Ավելին՝ խոշտանգման նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու հիմնավորմամբ «Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի» գործով դատախազության ներկայացրած վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընդունվել է վարույթ: Խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով Վճռաբեկ դատարանը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եվրոպական դատարանի առաջ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը բարձրացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին՝ խոշտանգման կամ դրան հավասարեցված հանցանքներով միջազգային իրավունքի աղբյուրների վկայակոչմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառման համապատասխանության հարցը:

Ոստիկանության բաժիններում քաղաքացիներին խոշտանգումներից զերծ պահելու հետ կապված որոշ խնդիրների լուծման նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունը հանդես է եկել նաև կոնկրետ նախաձեռնություններով:

Մասնավորապես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի («Ոստիկանությունում խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի նախականխումը») համաձայն.

«1. Մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերի մուտքերն ու ելքերը կահավորվում են տեսագրող, իսկ ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերում հարցաքննության համար օգտագործվող տարածքները (աշխատասենյակները)՝ տեսաձայնագրող համակարգերով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի տեսագրել ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքեր անձանց մուտք գործելու և ելքի ժամանակը, տեսաձայնագրել ոստիկանության ծառայողների կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող հարցաքննությունները:

3. **Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեսագրությունները ոստիկանությունում պահպանվում են երեք ամիս, իսկ տեսաձայնագրությունները՝ երկու տարի:**

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեսագրություններն ու տեսաձայնագրությունները տրամադրվում են՝

1) հարցաքննված անձին, ինչպես նաև նրա ներկայացուցչին.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին.

3) Մարդու իրավունքների պաշտպանին՝ իր իրավասությունների սահմաններում սկսված քննարկման շրջանակում.

4) ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի անդամներին:

(...)»:

Ուսումնասիրությունները վկայուն են, որ, թեև ոստիկանության համար օրենքով սահմանված նման պարտավորությանը, այդուհանդերձ, խոշտանգման կամ բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու փաստերով հարուցված և քննված բազմաթիվ քրեական գործերով անձանց կողմից արված հայտարարությունները ստուգելու նպատակով ոստիկանությունից պահանջվել է ներկայացնել ենթադրյալ դեպքը արտացոլող տեսաձայնագրությունները, որոնց ի պատասխան հայտնվել է նաև, որ կամ տեսաձայնագրությունները չեն պահպանվել կամ նկարահանումն իրականացվել է առցանց ռեժիմով՝ ինչով պայմանավորված չի կարող տրամադրվել, որպիսի հանգամանքը քննության առումով ստեղծում է որոշակի բարդություններ:

Նշվածից հետևում է, որ գործնականում ոստիկանության կողմից գրեթե չեն ապահովվում «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի պահանջները, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ նախ՝ օրենքով նախատեսված նշված պահանջը դառնում է ձևական, բացի այդ՝ քննության առումով ստեղծվում են բարդություններ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին, որով հանձնարարվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի պահանջների անշեղ կատարումն ապահովելու ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

ՀՀ դատախազության և իրավապահ մյուս մարմինների կողմից, համատեղ, 2021թ. շարունակվել է հետևողական քրեաիրավական պայքարը հանրային մեծ վտանգավորություն ներկայացնող՝ քրեական ենթամշակույթին բնորոշ հանցագործությունների դեմ:

Այդ պայքարի շրջանակներում, դատախազական հետևողական հսկողության ներքո օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող, քրեակատարողական ծառայության, ինչպես նաև քննչական մարմինների

աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող՝ «օրենքով գողի» կամ, այսպես կոչված, «զոն նայող» հանդիսացող «քրեական հեղինակության» կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու, խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու, մասնավորապես, իրենց անօրինական ազդեցությունը, որպես կանոն, մասնավոր հարցերին առնչվող վեճերը /խնդիրները/ լուծելու և անօրինական օգուտ ստանալու, կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված և ճանաչված վարքագծի կանոններ խախտած անձանց համապատասխան վերաբերմունքի արժանացնելու նպատակով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներին, ներգրավված այլ անձանց տարբեր հանձնարարություններ տալու, դրանց շրջանակներում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավվելու, անօրինական ազդեցությունն օգտագործելով մասնավոր խնդիրներին վերաբերող վեճերը լուծելու համար քաղաքացիների կողմից քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողներին դիմելու տարբեր հանգամանքներ:

ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ամփոփման համաձայն՝ վերոնշյալ փաստերի կապակցությամբ նախապատրաստված նյութերով մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-223.4-րդ հոդվածների հատկանիշներով, դրանց տարբեր համակցություններով հարուցվել է 25 քրեական գործ, որոնցից 1–ի վարույթը կասեցվել է, 7 քրեական գործով կայացվել է հանցակազմի բացակայության հիմքով վարույթը կաճելու մասին որոշում:

Նախաքննությունը շարունակվում է 11 քրեական գործով, 6 քրեական գործ՝ 25 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Քննված քրեական գործերով, ընդհանուր առմամբ, որպես մեղադրյալ է ներգրավվել 48 անձ, որոնցից 5-ն ունեցել են, այսպես կոչված, «օրենքով գողի» կարգավիճակ:

Մեղադրյալներից 17-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված եղել կալանավորումը, 2-ի նկատմամբ՝ գրավը, 21-ի նկատմամբ՝ չհեռանալու մասին ստորագրությունը, իսկ մյուսների նկատմամբ խափանման միջոց չի կիրառվել, քանի որ գտնվել են այլ գործով կալանքի տակ կամ հանդիսացել են քրեակատարողական հիմնարկի դատապարտյալներ:

Դատարան ուղարկված բոլոր 6 քրեական գործերը ներկայում դատական քննության փուլում են: Քրեական ենթամշակույթի հանցակազմերով դատի տրված 25 անձից 6-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 4-ն ունեցել են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, որոնցից 3-ը՝ այսպես կոչված, «օրենքով գողի»:

Ելնելով հանրային կյանքի և հարաբերությունների վրա ակնհայտ բացասական և հանցածին ազդեցություն ունեցող այս երևույթը վերացնելու որդեգրված քրեական քաղաքականությունից՝ ինչպես քննվող քրեական գործերի շրջանակում, այնպես էլ դրանից դուրս, իրավապահ մարմինների կողմից համակարգված կերպով ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ քրեական ենթամշակույթի հետ կապված հանցավոր հնարավոր այլ դրսևորմներ հայտնաբերելու և խափանելու, դրանցում ներգրավված անձանց շրջանակը պարզելու, նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

ՀՀ դատախազությունում իրականացված ամփոփմամբ պարզվել է, որ 2021թ. ընթացքում քննվել է ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ հարուցված 556 քրեական գործ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով դատախազին բացառիկ իրավունք է վերապահված հանրային մեղադրանքի կարգով, այսինքն՝ նաև առանց դիմողի բողոքի առկայության, քրեական վարույթ հարուցել ընտանիքում բռնության մասնավոր մեղադրանքի բոլոր այն դեպքերով, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Հիմնվելով այս իրավակարգավորման վրա՝ դատախազության տարածքային ստորաբաժանումների դատախազների կողմից 2021թ. ընթացքում հանրային մեղադրանքի կարգով հարուցվել է ընդհանուր 51 քրեական գործ, որը 2020թ. համեմատ ավելի է շուրջ 3.5 անգամ:

Քրեական գործերի գերակշիռ մասը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ, 137-րդ հոդվածների հատկանիշներով:

Ընդ որում, դրանց մի մասը դատախազների կողմից հարուցվել է ՀՀ ոստիկանության համապատասխան բաժիններում քրեադատավարական կարգով նախապատրատված նյութերի հիման վրա: Իսկ մի մասի դեպքում դատախազները քրեական գործեր հարուցել են այն բանից հետո, երբ, ստուգելով նախապատրաստված նյութերով հետաքննության մարմինների կողմից հիմնականում հաշտության հիմքով կայացված՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականությունը, պարզել են, որ բռնարարքներից տուժած անձինք, ըստ էության, գտնվում են անօգնական վիճակում կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ, ինչի պատճառով չեն կարող ինքնուրույնաբար պաշտպանել իրենց իրավաչափ շահերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ դատախազական վերոնշյալ գործառույթի կատարումը պատշաճ ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, դեռևս 2018թ. դատախազների համար մշակվել է ուղեցույց: Համաձայն վերջինիս՝ ընտանիքում բռնության յուրաքանչյուր դեպքով պարտադիր ստուգվում է բռնության

ենթարկվածի՝ անօգնական վիճակում գտնվելու կամ ենթադրյալ հանցանք կատարողից ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական կախվածության մեջ լինելու հանգամանքը:

Այս համատեքստում վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազները վերոնշյալ բոլոր դեպքերով կազմակերպել են ենթադրյալ բռնությունից տուժած անձանց ընդունելություններ՝ անձամբ հավաստիանալու ընտանիքում բռնության ենթարկված անձի անօգնական վիճակում գտնվելու, ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու, կյանքին կամ առողջությանն իրական և անմիջական վտանգ սպառնալու մեջ:

Ընդհանուր առմամբ, 2021թ. մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել ընտանեկան բռնությունների վերաբերյալ 129 քրեական գործ՝ 135 անձի վերաբերյալ:

Հարկ է նշել նաև, որ 2016թ. Լոռու մարզում տեղի ունեցած ընտանեկան բռնության դեպքի վերաբերյալ գործով 2021թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, բավարարելով ՀՀ գլխավոր դատախազության բողոքը և համաձայնելով դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, կայացրել է ընտանեկան բռնությունների դեպքերով քննությունների, արարքի որակման տեսանկյունից կարևոր, նախադեպային որոշում՝ տուժողի՝ բռնարարից նյութական կախվածության մեջ գտնվելու, վերջինիս գործողություններն առանձին դաժանությամբ կատարված լինելու քրեաիրավական հատկանիշների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վատ վերաբերմունքի վերաբերյալ ՄԻԵԴ-ի մոտեցումները, փաստել է, որ առանձին դաժանությունն անգթության, անողոքության, վայրագության և անխղճության դրսևորման բարձր աստիճանն է և ուղղված է տուժողին առանձնակի տանջալից ապրումներ պատճառելուն: Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում էր արտահայտել նաև առ այն, որ հանցավորից տուժողի նյութական կախվածություն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ վերջինս ֆինանսական տեսանկյունից ուղղակիորեն կախված է հանցավորից, այլև, երբ տուժողի համար նախատեսված նյութական օգնությունը կամ եկամուտն ամբողջությամբ կամ դրա էական մասը տնօրինվում է հանցավորի կողմից, վերջինս զրկում է տուժողին դրանից ինքնակամ օգտվելու հանցավորությունից:

ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է նաև Covid-19 համավարակի դեմ միջոցառումներում արձանագրված հանցավոր չարաշահումների դեպքերը:

Պետք է փաստել, որ 2021թ. ընթացքում Հանրապետությունում կորոնավիրուսային համաճարակի կանխարգելման տեսանկյունից խիստ արդիական և անհանգստացնող են դարձել պետության կողմից այդ նպատակով համապատասխան կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման ջանքերի խաթարմանն ուղղված հանցավոր դրսևորումները:

2021թ. ընթացքում ՀՀ ոստիկանության և, հատկապես, ՀՀ ԱԱԾ-ի կողմից կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել են Covid-19 համավարակի տարածման կանխարգելման միջոցառումների գործընթացում մի շարք բուժհաստատությունների տասնյակ աշխատակիցների կողմից գրեթե նույն սխեմայով կատարված պաշտոնեական դիրքի չարաշահման, պաշտոնեական կեղծիքների և կաշառքի բազմաթիվ դեպքեր:

Մասնավորապես, բուժհաստատությունների, պետական այլ մարմինների կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ ունեցող մի շարք պաշտոնատար անձինք, լիազորված լինելով կազմակերպելու «Covid-19» համավարակի դեմ պատվաստման գործընթացը, բուժանձնակազմի այլ ներկայացուցիչների հետ գործակցությամբ, այլ անձանց կողմից համոզելու, նյութապես շահագրգռելու պայմաններում, հարյուրավոր քաղաքացիների չեն պատվաստել սահմանված դեղատեսակներով և դեղաչափերով, սակայն կազմել են նրանց կողմից կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստանյութի առաջին կամ երկու չափաբաժիններով պատվաստված լինելը հավաստող, բովանդակությամբ կեղծ սերտիֆիկատներ և դրանք մուտքագրել էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ:

Առանձին դեպքերում էլ պարզված կոռուպցիոն չարաշահումները պայմանավորված են եղել քաղաքացիների, այդ թվում՝ ՀՀ ժամանող ուղևորների համար կորոնավիրուսային հիվանդության ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունք ապահովելով: Մասնավորապես, առանձին բժիշկ համաճարակաբաններ, բուժհաստատությունների՝ կոնկրետ գործառույթներով օժտված անձինք պատրաստել և առանձին քաղաքացիների, ՀՀ ժամանած ուղևորների իրացրել են կորոնավիրուսի թեստի կեղծ բացասական պատասխաններ, որոնք վերջիններս ներկայացրել են ըստ պահանջի: Այդպիսով նրանք իրավունք են ստացել առանց նմուշառման, հետազոտման դեպքում դրական պատասխան ստանալու պարագայում պարտադիր ինքնամեկուսացման ենթարկվելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոսպիտալացվելու՝ անարգել տեղաշարժվել, մուտք գործել ՀՀ տարածք:

Այս ապօրինի գործողությունների հետևանքով նշված քաղաքացիներին հնարավորություն է տրվել շրջանցելու ՀՀ-ում, օտարերկրյա պետություններում հակահամաճարակային սահմանափակումները՝ վտանգելով համավարակի պայմաններում, ՀՀ-ում հիվանդության տարածման և առաջացած համաճարակի հետագա կանխման, բնակչության առողջության պահպանման նպատակով պետության կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների արդյունավետությունը:

Ընդ որում, ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ բժշկական սպասարկում իրականացնող և համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձինք պատվաստված լինելու կեղծ սերտիֆիկատ, կամ առանց

նմուշառման կորոնավիրուսի թեստի կեղծ բացասական պատասխաններ ստացած քաղաքացիներից անձամբ կամ միջնորդների միջոցով վերը նկարագրված ակնհայտ ապօրինի գործողությունների համար ստացել են տարբեր չափերի՝ 5000-ից մինչև 40.000 ՀՀ դրամ կաշառք:

Վերոնշյալ հանցագործությունների առթիվ ՀՀ ԱԱԾ-ում և ոստիկանությունում հարուցվել է 20 քրեական գործ, որոնք վերաբերում են Երևան քաղաքի և Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի մարզերի բազմաթիվ բուժհաստատություններին, հիմնականում՝ պոլիկլինիկաներին:

Քրեական գործերով նախնական տվյալներով պատվաստման բովանդակությամբ կեղծ սերտիֆիկատներ է ստացել և դրանց հիման վրա «ԱՐՄԵԴ» համակարգում ապօրինաբար գրանցվել, կամ կորոնավիրուսի թեստի կեղծ բացասական պատասխաններ է ստացել ընդհանուր 310 քաղաքացի:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ քրեական գործերով արդեն իսկ մեղադրանքներ են առաջադրվել ընդհանուր 15 անձի, որոնցից 9-ը կալանավորվել է:

Քրեական գործերը գտնվում են նախաքննության փուլում: Դատախազության հետևողական հսկողության ներքո ձեռնարկվում են քննչական, դատավարական, օպերատիվ-հետախուզական լայնածավալ միջոցառումներ՝ նմանատիպ այլ դրսևորումներ բացահայտելու, պարզված դեպքերով առերևույթ հանցավոր գործակցության մեջ ներգրավված անձանց ամբողջական շրջանակները ի հայտ բերելու, յուրաքանչյուրի գործողությանը իրավական գնահատականներ տալու ուղղությամբ:

Պետք է փաստել, որ նման չարաշահումները լրջորեն սպառնում են հանրապետության առողջապահական անվտանգությանը, խոչընդոտում պետության կողմից իրականացվող հակահամաճարակային և բնակչության առողջության պահպանման միջոցառումների արդյունավետությանը:

Ելնելով վերոնշյալից՝ ինչպես քաղաքացիներին, այնպես էլ Covid-19 համավարակի տարածման կանխարգելման միջոցառումներում ներգրավված բուժաշխատողներին, հանրային ծառայողներին ՀՀ դատախազությունը իր պաշտոնական կայքէջի միջոցով պարբերաբար հորդորում է զերծ մնալ նման անպատասխանատու, ինչպես իրենց, այնպես էլ հանրության առողջությունը վտանգող և քրեորեն հետապնդելի քայլերից: ՀՀ դատախազության մոտեցումը նման դեպքերում լինելու է անվերապահորեն խիստ, կիրառվելու են իրավաչափ և օրինական բոլոր անհրաժեշտ ներգործության միջոցները՝ նման հանցագործություններ կատարած բոլոր անձանց քրեական համաչափ պատասխանատվության ենթարկելու համար:

2021թ. օգոստոսի 30-ին ուժի մեջ է մտել ծանր վիրավորանքի քրեականացման վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված լրացումը: Համաձայն վերջինիս՝ քրեական պատասխանատվություն է նախատեսվում

հայհոյելու կամ արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով անձին վիրավորելու, այդպիսիք պարունակող նյութերը, նաև անձի՝ հանրային գործունեությամբ պայմանավորված, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով տարածելու, նշված արարքները պարբերաբար կատարելու համար: Ընդ որում՝ տվյալ հոդվածի իմաստով «հանրային գործունեություն» է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը:

ՀՀ գլխավոր դատախազությունում ամփոփվել է 2021թ. ընթացքում արձանագրված՝ նշված հանցավոր արարքով քրեական շարժընթացը:

Այսպես, 2021թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 263 քրեական գործ, որոնցից 25-ի դեպքում կայացվել է վարույթը կարճելու, 5-ի դեպքում՝ վարույթը կասեցնելու մասին որոշում, 11-ը միացվել է այլ քրեական գործերի:

214 քրեական գործով նախաքննությունը շարունակվել է: ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար մեղադրանք է առաջադրվել 31 անձի: 8 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Հաշվի առնելով այս արարքի նոր քրեականացման պատճառով նոր քրեական պրակտիկայի ձևավորման հանգամանքը, ինչպես նաև այն իրողությունը, որ վերջին շրջանում լայն տարածում գտած՝ հրապարակայնորեն ծանր վիրավորանք հասցնելու բացասական, հանցածին երևույթների կանխարգումը, այդ կերպ հանրային հարաբերություններում առկա լարվածությունը վերացնելու անհրաժեշտությունը ՀՀ դատախազության համար առանցքային խնդիր է, հանրությանը պարբերաբար տեղեկացվում է դրա դեմ տարվող քրեաիրավական պայքարի ընթացիկ արդյունքների մասին:

ՀՀ դատախազության կողմից այս հանցատեսակի դեմ պայքարը կարևորվում է նրանով, որ հայհոյանքով, անձի արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորանքով ուղեկցվող խոսույթն ինքնին նաև այլ բնույթի հանցագործություններ ծնող, դրանց կատարմանը նպաստող էական գործոն է:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ գլխավոր դատախազությունը հասարակության բոլոր անդամներին իր պաշտոնական կայքէջի միջոցով պարբերաբար հորդորում է ձեռնպահ մնալ վիրավորանքը և դրա ծանր դրսևորումները հանրային հարաբերություններում կիրառելուց՝ ոչ միայն անխուսափելի քրեական պատասխանատվության չենթարկվելու, այլ նաև հանրային խոսակցական և վարքագծային մշակույթում ատելության խոսքն օրինաչափության

չվերածելու, հանրային համակեցության և համերաշխության մթնոլորտը վերականգնելու համար:

Հայաստանի Հանրապետության դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձեռնմխելիությունից օգտվող բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերագրվող առերևույթ հանցագործության դեպքերով քրեական վարույթ նախաձեռնելու և անձեռնմխելիությունը հաղթահարելու իրավակարգավորումները և նշված վարույթներով դատախազական հսկողության ու դատավարական ղեկավարման վիճակը:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ գործնականում առավել հաճախ առաջանում են խնդիրներ դատավորների անձեռնմխելիության հաղթահարման գործընթացում, ուստի ուսումնասիրության շրջանակում մանրամասն անդրադարձ է կատարվել քրեական վարույթի շրջանակներում դատավորների անձեռնմխելիության երաշխիքի հաղթահարման կապակցությամբ առաջացած խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված մոտեցումներին, ինչի արդյունքում կատարվել են հետևյալ եզրահանգումները.

ա) Բոլոր այն դեպքերում երբ անձեռնմխելիությունից օգտվող դատավորի նկատմամբ հարուցվում է քրեական հետապնդում, իրավասու մարմնին դիմելու և թույլտվություն ստանալու անհրաժեշտության կամ բացակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք կատարված ենթադրյալ ապօրինի գործողությունները բխել են այդ անձի կարգավիճակից, այլ կերպ՝ կապված են եղել արդյոք այդ գործողությունները նրա մասնագիտական գործունեության հետ, թե՝ ոչ: Դատավորի լիազորություններից դուրս (անկախ հեղինակությունից օգտվելու կամ պաշտոնեական դիրքն օգտագործելու հանգամանքից) որևէ հանրորեն վտանգավոր արարք կատարելու դեպքում վերջինիս անձեռնմխելիության հաղթահարման անհրաժեշտություն չի պահանջվում:

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներով նախատեսված ենթադրյալ արարքներ կատարելու համար դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում՝ վերջինիս անձեռնմխելիության հաղթահարման անհրաժեշտություն չի պահանջվում:

գ) Բոլոր այն դեպքերում երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ մատնանշվում է կոնկրետ դատավորի՝ որպես ենթադրյալ արարք կատարողի, կամ այդպիսի տվյալներ չեն մատնանշվում, մինչդեռ որոշման նկարագրական-պատճառաբանական մասում արտացոլված տեղեկություններն ուղղակիորեն վկայում են այդ անձի մասին՝ քրեական գործ հարուցելուն նախորդող ժամանակահատվածում ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ դիմելու անհրաժեշտությունը բացակայում է:

դ) Նկատի ունենալով, որ դատավորի կողմից իր լիազորությունների հետ չկապված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարք կատարելու կապակցությամբ

վերջինիս անձեռնմխելիությունը հաղթահարելու անհրաժեշտությունը բացակայում է, մինչդեռ յուրաքանչյուր դեպքում դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, ուստի գտնում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի և «Դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումների լույսի ներքո բոլոր այն դեպքերում, երբ անձեռնմխելիությունից օգտվող դատավորի ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքի կապակցությամբ հարուցվում է քրեական գործ, սակայն այդ արարքը կապված չէ վերջինիս լիազորությունների իրականացման հետ, ապա նպատակահարմար է, որպեսզի քրեական գործ հարուցելու մասին որոշումը (նկատի ունենալով, որ այն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը) կայացվի ՀՀ գլխավոր դատախազի կողմից կամ հանձնարարության առկայության դեպքում՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից:

Նշվածի կապակցությամբ հարկ ենք համարում նաև նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1619 որոշմամբ քննության առնելով պատգամավորական անձեռնմխելիության հարցը, արտահայտել է որոշակի իրավական դիրքորոշումներ, որոնք հակասում են այս հարցի վերաբերյալ ՀՀ դատախազության դիրքորոշումներին:

Մասնավորապես, ՀՀ դատախազության դիրքորոշումը, հիմնվելով ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի տառացի մեկնաբանության և պատգամավորական անձեռնմխելիության հայեցակարգի հիմքում ընկած գործառութային անհրաժեշտության գաղափարի վրա, եղել է այն, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի անձեռնմխելիությունը վերաբերում է արդեն իսկ այդպիսի կարգավիճակ ունեցողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն և նրան ազատությունից զրկելուն: Այն ոչ մի դեպքում չի ենթադրում, որ ՀՀ Ազգային ժողովից համաձայնություն պետք է հայցվի, և Ազգային ժողովը համաձայնություն պետք է տա նաև նախքան պատգամավորի կարգավիճակ ստանալն անձի նկատմամբ սկսված քրեական հետապնդմանը կամ արդեն իսկ տեղի ունեցած ազատությունից զրկմանը, դրանք շարունակելուն:

Սահմանադրական դատարանի որոշումից ակնհայտ է, որ վերջինս քրեական հետապնդում հարուցելուց անձեռնմխելիության կապակցությամբ փաստացի համաձայնել է վերը նշված հստակ, սահմանադրի պարզ կամքն արտահայտող մոտեցմանը և գտել, որ նախքան պատգամավորի կարգավիճակ ստանալը անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո շարունակելու համար ՀՀ Ազգային ժողովի համաձայնություն չի պահանջվում:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը բացարձակ անկանխատեսելիորեն հակառակ մոտեցում է ցուցաբերել նախքան պատգամավորի կարգավիճակ ստանալը տեղի ունեցած ազատությունից զրկումը անձի կողմից պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո շարունակելու կապակցությամբ և փաստել, որ պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո նախքան այդ տեղի ունեցած ազատությունից զրկումը շարունակվել չի կարող՝ դրա հիմքում անհասկանալիորեն դնելով այն պատճառաբանությունը, որ պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո կոնկրետ անձի նկատմամբ նախկինում տեղի ունեցած ազատությունից զրկումը շարունակելը կարող է խոչընդոտել Ազգային ժողովի գործունեությանը:

Սահմանադրական դատարանի դիրքորոշումը նախ խնդրահարույց է այն առումով, որ պատգամավորական անձեռնմխելիության չարաշահման, այն՝ որպես նախկինում կատարած հանցանքի համար ենթադրվող պետական հարկադրանքի միջոցից խուսափելու միջոց դիտարկելու հիմքեր է տալիս: Այս առումով հատկանշական է հենց Սահմանադրական դատարանի որոշմամբ արձանագրված այն հանգամանքը, որ պատգամավորական անձեռնմխելիության հաղթահարման գործընթացը քաղաքական բաղադրիչ ունի, և դրա արդյունքը կախված է Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի կամքից: Նման մոտեցմամբ ստացվում է, օրինակ, որ անձը, որի նկատմամբ սպանության կամ բռնաբարության համար որպես պատիժ նշանակվել է ազատազրկում ավելի քան տասը տարի ժամկետով, կարող է ընդգրկվել թեկնածուների ցուցակում, ձեռք բերել պատգամավորի կարգավիճակ և ուղղակի ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այս առումով խեղաթյուրվում է նաև անձեռնմխելիության հիմքում ընկած գործառութային անհրաժեշտության գաղափարը: Բանն այն է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին անձեռնմխելիություն շնորհված է իբրև պատգամավորի՝ նրա գործունեության ազատությունն ապահովելու, դրանով պայմանավորված՝ քրեական հետապնդումը և ազատությունից զրկելը բացառելու նպատակով: Ավելի պարզ՝ պատգամավորն անձեռնմխելի է, որպեսզի իր գործունեության ընթացքում կաշկանդված չլինի՝ դրանով անմիջականորեն կամ անուղղակիորեն պայմանավորված հետապնդման ենթարկվելու մտավախությամբ: Հետևաբար, այնքանով, որքանով, նախքան պատգամավորի մանդատն ստանալը, անձի նկատմամբ հարուցված և սկսված քրեական հետապնդումը, տեղի ունեցած ազատությունից զրկումը չեն էլ կարող պայմանավորված լինել նրա պատգամավորական գործունեությամբ, չեն կարող կապված լինել դրա ազատությունը սահմանափակելու հետ, հետևաբար դրա նկատմամբ պատգամավորական անձեռնմխելիությունը տարածվել չի կարող:

Բացի այդ, Սահմանադրական դատարանի որոշումը իրավական անկանխատեսելիության, սահմանադրի կամքի խեղաթյուրման լուրջ վտանգներ է

ներկայացնում մեկ այլ առումով ևս: Խնդիրն այն է, որ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու կապակցությամբ պատգամավորական անձեռնմխելիության՝ ամբողջությամբ նույնական իրավակարգավորումները Սահմանադրական դատարանի որոշմամբ անհասկանալի կերպով ենթարկվել են սկզբունքորեն տարբերակված մեկնաբանության այն դեպքում, երբ մեջբերված սահմանադրական դրույթից ակնհայտ է, որ սահմանադրի կամքը այդ երկու դեպքը միատեսակ իրավակարգավորման ենթարկելն է: Ավելի պարզ՝ ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի դրույթից ակնհայտ է, որ սահմանադրի միասնական կամքն այն է, որ պատգամավորական անձեռնմխելիությունը տարածվում է քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու նկատմամբ, իսկ նախքան պատգամավորի մանդատն ստանալը հարուցված քրեական հետապնդումը և տեղի ունեցած ազատությունից զրկումը շարունակելու նկատմամբ չի տարածվում: Այնինչ, Սահմանադրական դատարանը, փաստացի տարբերակված մեկնաբանության ենթարկելով սահմանադրի միասնական մոտեցումը, գտել է, որ նախքան պատգամավորի կարգավիճակ ստանալը հարուցված քրեական հետապնդումը շարունակելու համար ՀՀ Ազգային ժողովի համաձայնությունը չի պահանջվում, իսկ ազատությունից զրկումը շարունակելու համար՝ պահանջվում է: Այսպիսի մեկնաբանությունը մտահոգություն է առաջացնում, որ սահմանադրական հստակ ու միանշանակ կարգավորման ենթարկված ցանկացած հարցի՝ նաև հետագայում անկանխատեսելի, սահմանադրի միանշանակ կամքին հակառակ մեկնաբանությունները բացառված չեն:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանը որոշմամբ արձանագրել է, որ անձեռնմխելիությունից հրաժարվելը կամ այն սահմանափակելը կայացած և իրական ժողովրդավարական պետություններում դրսևորվող միտում է: Եվ չնայած այդ կերպ անձեռնմխելիությունն ուժեղացնելը դիտարկվում է որպես ժողովրդավարական չհամարվող պետություններին բնորոշ երևույթ՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր վտանգավոր իրավամեկնաբանությամբ փաստացի ինքն է ուժեղացնում այդ ինտիստուտը:

2021թ. ՀՀ դատախազությունում ամփոփվել են նաև 2020թ. նոյեմբերի 10-ին ստորագրված՝ արցախյան պատերազմի հրադադարի հաստատման եռակողմ հայտարարության հրապարակումից հետո արձանագրված՝ պատերազմի ընթացքում անհետ կորած, զոհված, ինչպես նաև գերության մեջ հայտնված զինծառայողների ծնողներից, հարազատներից խարդախությամբ խոշոր չափերի գումարներ հափշտակելու դեպքերը:

Մասնավորապես, անձինք տարբեր եղանակներով կապեր են հաստատել ՀՀ ԶՈՒ զոհված, անհայտ կորած համարվող կամ Ադրբեջանում գերության մեջ գտնվող զինծառայողների ծնողների, հարազատների հետ՝ ներկայանալով որպես բարձրաստիճան զինվորականներ կամ ՀՀ ԱԱԾ-ի, այլ երկրի անվտանգության

ծառայությունների ներկայացուցիչների հետ սերտ կապեր ունեցողներ: Շահելով ծնողների, հարազատների վստահությունը՝ այդ անձինք վերջիններիս հավաստիացրել են, որ հստակ տեղեկություններ ունեն նրանց որդու ողջ լինելու, Ադրբեջանի կոնկրետ բնակավայրում կամ կոնկրետ քրեակատարողական հիմնարկում գտնվելու վերաբերյալ, ունեն հնարավորություններ միջնորդավորված, այլ երկրներում իրենց անձնական կապերն օգտագործելով, համապատասխան գումարի, կաշառքի դիմաց ապահովելու գերության մեջ գտնվող իրենց հարազատի բուժումը, ինչպես նաև գերությունից ազատումը և երրորդ երկրի տարածքով ՀՀ տեղափոխումը:

Առանձին դեպքերում նրանց հաջողվել է նշված պատրվակներով ստանալ առաջարկված խոշոր չափերի գումարների մի մասը, սակայն խարդախությամբ նրանցից հափշտակություն կատարելու իրենց հանցավոր մտադրությունները տվյալ անձինք մեծամասամբ մինչև վերջ իրականացնել չեն կարողացել, քանի որ իրացված օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումների արդյունքում բռնվել են ՀՀ իրավապահ մարմինների կողմից:

Գերության մեջ գտնվող, անհետ կորած կամ զոհված անձանց հարազատներից վերոնշյալ սխեմայով հափշտակություններ կատարելու փաստերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, կամ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերի, 34-178-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 12 քրեական գործ: Կատարված նախաքննության արդյունքում 9 քրեական գործով 9 անձի նկատմամբ նույն հոդվածներով առաջադրվել են մեղադրանքներ, որոնցից 8-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ 1-ի նկատմամբ՝ ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

8 քրեական գործ՝ 8 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացություններով ուղարկվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որոնցով ներկայումս դատաքննությունը շարունակվում է:

2021թ. ՀՀ դատախազության հիմնական առաջնահերթություններից է եղել հունիսի 20-ին նախատեսված Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների պատշաճ իրականացման, դրա շրջանակներում ընտրական և ընտրություններին առնչվող այլ հանցավոր դրսևորումների կանխարգելման, հակազդման բացահայտման, արձանագրված հանցավոր դեպքերը պատշաճ իրավական ընթացակարգերով ստուգման առարկա դարձնելու, քաղաքացիների ազատ կամարտահայտության ապահովման ուղությամբ իրավապահ մարմինների համակարգված գործունեության ապահովումը:

Մասնավորապես, 2021թ. հունիսի 20-ին նշանակված ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական հանցագործությունների վերաբերյալ հրապարակումները, քաղաքացիների հաղորդումներն ու ահազանգերը գրանցելու և հաշվառելու, հաղորդումների քննարկման և դրանց հիման վրա նախապատրաստվող նյութերի ու

հարուցված քրեական գործերի՝ նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծվել է աշխատանքային խումբ:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազը, մինչև ընտրական գործընթացի սկիզբը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի, ՀՀ ոստիկանության պետի, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալի, ՀՀ դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի անդամների մասնակցությամբ անցկացրել է խորհրդակցություն, որի ընթացքում հստակ և մանրամասն մատնանշել է այն հիմնական թիրախները, որոնց չեզոքացմանը, կամ որոնց շրջանակներում հնարավոր ընտրական հանցագործությունների բացահայտմանը, դրանք կատարող անձանց պատասխանատվության ենթարկելուն պետք է ուղղվեին իրավապահների համատեղ ջանքերը:

ՀՀ գլխավոր դատախազը նաև կարևորել է ընտրական խախտումների դեմ պայքարում պատասխանատու, բարեխիղճ, ազատ ու թափանցիկ ընտրություններ անցկացնելու հարցում շահագրգիռ քաղաքացիների հետ իրավապահ մարմինների աշխատանքը, և ստացված հանցավոր ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններին, ահազանգերին իրավապահ համակարգի արագ արձագանքելու անհրաժեշտությունը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական հանցագործությունների վերաբերյալ հրապարակումները, քաղաքացիների հաղորդումներին և ահազանգերին պատշաճ արձագանքելու, ստուգման առարկա դարձնելու, քրեադատավարական գործընթացներ նախաձեռնվելու դեպքում յուրաքանչյուր օղակի կողմից իր պարտականությունների կատարման անխափան ընթացքն ապահովելու կառուցակարգերը, աշխատանքային հնարավոր խնդիրները, դրանց կարգավորման եղանակները:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից տրվել են իրավապահ մարմինների արդյունավետ համագործակցության երաշխավորմանն ուղղված կոնկրետ հանձնարարություններ, որոնց հիման վրա կազմակերպվել են իրավապահ մարմինների աշխատանքները:

Ընտրարշավի շրջանում ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Անկախ պետությունների համագործակցության դիտորդական առաքելության շտաբի պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ընտրությունների ամբողջ ընթացքում դիտորդական առաքելության և ՀՀ դատախազության միջև հաղորդակցության ու գործակցության եղանակներին, ՀՀ իրավապահ մարմինների կողմից ընտրական հանցավոր իրավախախտումների դեմ համակարգված պայքարի ընթացիկ արդյունքներին, այս ուղղությամբ ՀՀ դատախազության նախաձեռնություններին վերաբերող հարցեր: ՀՀ գլխավոր դատախազն

ընտրությունների ընթացքի վերահսկելիության մակարդակի բարձրացման տեսանկյունից կարևոր է համարել արտահերթ ընտրություններին դիտորդական առաքելությունների և, մասնավորապես, ԱՊՀ դիտորդական խմբի ներկայությունն ու մասնակցությունը: Նա հավելել է, որ դատախազությունը հանձնառու է առաջիկա ընտրությունների օրինականությունը, ժողովրդավարության չափանիշներին համապատասխանությունն ապահովելու, մեր քաղաքացիների ազատ կամարտահայտման իրավունքը պաշտպանելու հարցում և նշել է այդ նպատակով վերջին շրջանում իրականացված ակտիվ նախաձեռնողական աշխատանքը, ներկայացրել մինչ այս պահը առերևույթ հանցավոր ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների, ահազանգերի, դրանցով իրականացվող ստուգողական աշխատանքների, քրեական վարույթների շրջանակում իրականացվող գործողությունների արդյունքները: Դիտորդական խմբին առաջարկվել է իրենց առաքելության շրջանակում ցանկացած առերևույթ հանցավոր իրավախախտման վերաբերյալ տեղեկություններ, տվյալներ ստանալու դեպքում դրանք փոխանցել դատախազությանը՝ հավաստիացնելով, որ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խումբն անխափան կերպով ապահովում է բոլոր հաղորդումների պատշաճ ստուգումը: ԱՊՀ դիտորդական առաքելության շտաբի ղեկավար Եվգենի Կոզյակը փոխանցել է տեղեկության փոխանակման միջոցով ՀՀ դատախազության հետ համագործակցելու դիտորդական առաքելության շահագրգռությունը: Այս առումով հանդիպման արդյունքում ձեռք են բերվել շփումներն աշխատանքային կարգով շարունակելու պայմանավորվածություններ:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության պատվիրակության ղեկավար Օուեն Մերֆիին և առաքելության իրավական հարցերով վերլուծաբան Սվետլանա Չետայկինային: Արթուր Դավթյանը շնորհակալություն է հայտնել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությանը՝ մեր երկրի համար բացառիկ կարևորության՝ առաջիկա խորհրդարանական արտահերթ ընտրությունների դիտարկման գործընթացներն արդեն տևական ժամանակ իրականացնելու կապակցությամբ: Նա նշել է, որ բազմափորձ դիտորդական խմբի անաչառ ներգրավվածությունն ընտրությունների ընթացքի վերահսկելիության բարձր մակարդակի ապահովման կարևոր նախադրյալներից է: ՀՀ գլխավոր դատախազը շեշտել է, որ ՀՀ դատախազության նախաձեռնողականությամբ իրավապահ մարմինները, առաջնորդվելով քաղաքական զսպվածության և բացարձակ անաչառության սկզբունքով, մոբիլիզացրել են անհրաժեշտ բոլոր ռեսուրսները՝ ինչպես ընտրարշավի, այնպես էլ բուն քվեարկության օրը, նաև հետընտրական շրջանում, գործընթացների օրինականությունն ապահովելու, քաղաքացիների, ընտրությունների մասնակից ուժերի, այլ սուբյեկտների իրավունքները պաշտպանելու նպատակով: Հավաստիացվել է, որ լիարժեք անհանդուրժողականություն է դրսևորվելու

ընտրական հանցավոր ցանկացած դրսևորման նկատմամբ, և այդ հարցում լիարժեք հավասարություն է լինելու բոլոր մասնակիցների նկատմամբ՝ անկախ նրանից՝ քաղաքական որ բևեռն են ներկայացնում: Դիտորդական խմբի ներկայացուցիչներին տեղեկացվել է այդ նպատակով գլխավոր դատախազության իրականացրած նախապատրաստական աշխատանքների մասին, այդ շրջանակում ներկայացվել են հնարավոր ընտրական խախտումների վերաբերյալ հրապարակումների, հաղորդումների և ահազանգերի գրանցման, հաշվառման, դրանց ստուգման, նախապատրաստվող նյութերի ու հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության միասնականության ապահովման նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի գործունեության ընթացիկ արդյունքները, ընտրությունների ընթացքում քրեական օրենքով արգելված արարքների, դրանց համար նախատեսված պատիժների վերաբերյալ հանրության իրազեկվածությունն ապահովելու նպատակով իրականացված միջոցառումները: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության խմբի ղեկավարը նշել է, որ երկարաժամկետ դիտորդներն ուշիուշով հետևում են նախընտրական գործընթացներին, իսկ քվեարկության նախօրեին Հայաստան կժամանի նաև կարճաժամկետ դիտորդների մեծաթիվ խումբը, և հանրապետության ողջ տարածքի ընդգրկմամբ կիրականացվի դիտարկում: Յոհան Մերֆին հավելել է, որ COVID19-ով պայմանավորված գլոբալ սահմանափակումներ մտցվելուց հետո առաջին անգամ են որևէ երկրում կարճաժամկետ դիտորդներ տեղակայում, ինչը վկայում է, թե որքան լուրջ է մոտենում առաքելությունը Հայաստանում սպասվող ընտրություններին: Հանդիպման ընթացքում մանրամասն քննարկվել են ՀՀ քրեական օրենսգրքում կատարված բարեփոխումներին, քաղաքացիների հանցավոր արարքներից զերծ պահելուն ուղղված իրազեկման աշխատանքներին, գրանցված առերևույթ ընտրական հանցագործությունների դեպքերով կատարվող ստուգողական աշխատանքների, քննությունների ընթացիկ դրությանը վերաբերող հարցեր: ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է, որ իրավապահ մարմիններն ընտրական հանցագործությունների հակազդման շատ ավելի լայն գործիքակազմ ունեն: ՀՀ քրեական օրենսգրքում ընտրական հանցագործությունների զգալի մասի սանկցիաների խստացմամբ նախկինում միջին ծանրության համարվող հանցավոր արարքները դարձան ծանր, ինչը հնարավորություն է տալիս հանցագործությունների լիարժեք բացահայտման համար կիրառել օպերատիվ-հետախուզական միջոցառումների ավելի լայն գործիքակազմ: Ընտրություններից առաջ քրեական օրենսգրքում կատարված լրացումներով և փոփոխություններով քրեականացվել են նախընտրական քարոզչությանը խոչընդոտելու, ընտրատեղամասում կամ դրա հարակից շրջանում բռնություններ կիրառելու կամ նման սպառնալիքներ տալու արարքները, որոնք կարևոր են ընտրարշավների և բուն քվեարկության բնականոն, անվտանգ ընթացքն ապահովելու տեսանկյունից: Ընդգծվել է, որ ինչպես

ընտրական մյուս սուբյեկտներին, այնպես էլ դիտորդական առաքելություններին դատախազությունը մոտնում է որպես գործընկերների, և պատրաստ է լայն համագործակցության՝ օրինական, թափանցիկ և լեգիտիմ ընտրությունների անցկացումը երաշխավորելու նպատակով: Նախընտրական շրջանում ընտրողների զգոնությունը բարձրացնելու, ընտրական հանցագործություններից զերծ մնալու, ընտրական հանցագործությունների համար նախատեսված պատժաչափերի խստացման, նոր արարքների քրեականացման, իրենց ընտրական իրավունքի նկատմամբ հանցավոր ոտնձգությունների առերեսվելու դեպքում անկաշկանդ իրավապահ մարմիններին տեղեկացնելու և նրանց հետ համագործակցության վերաբերյալ համապատասխան ազդակները փոխանցելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունն իրականացրել է հանրային իրազեկման արշավ:

2021թ. հունիսի 20-ին կայացած ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ողջ ընթացքում, ՀՀ գլխավոր դատախազությունը, աշխատանքային խմբի ռեսուրսներով, ԶԼՄ-ների և համացանցի մշտադիտարկման միջոցով, նախընտրական շրջանում, քվեարկության օրը և հետընտրական շրջանում իրականացրել է ընտրական իրավախախտումների վերաբերյալ տվյալների հավաքագրման, գործընթաց: Ընտրությունների ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ տեղեկության ստացման, այդ նպատակով հանրության հետ անմիջական հաղորդակցություն ապահովելու, ինչպես նաև ընտրական գործընթացում ներգրավված սուբյեկտների կողմից ընտրական հանցավոր իրավախախտումների վերաբերյալ ահազանգերին, բարձրացված հրատապ խնդիրներին օպերատիվ արձագանքելու նկատառումներով ՀՀ գլխավոր դատախազությունում գործարկվել է թեժ գիծ:

Ընդհանուր առմամբ, ինչպես ՀՀ դատախազությունը, այնպես էլ այլ իրավապահ մարմինները ստացել և ուսումնասիրել են վերոնշյալ բնույթի ենթադրյալ հանցավոր իրավախախտումների վերաբերյալ 861 հաղորդում և ահազանգ: Դրանցից՝

- 269-ը՝ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներ են,
- 281-ը՝ ֆիզիկական անձի կողմից, այդ թվում՝ նաև ՀՀ դատախազության թեժ գծի միջոցով ստացված հաղորդումներ,
- 2-ը՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից ստացված գրություններ,
- 106-ը՝ սոցիալական ցանցերում քաղաքացիների կողմից կատարված գրառումներ,
- 203-ը՝ ոստիկանության աշխատակիցների կողմից ստացված օպերատիվ տվյալներ:

Նախաքննության և հետաքննության մարմիններին ուղարկված հաղորդումների առթիվ, ընդհանուր առմամբ, հարուցվել է 87 քրեական գործ, որոնցով որպես մեղադրյալ ընդհանուր անցել է 91 անձ: Ընդ որում՝ վերջիններից 67-

ին կամ ընդհանուրի շուրջ 73.5 տոկոսին մեղադրանքն առաջադրվել է ընտրակաշառքի հետ կապված հանցագործություններ կատարելու համար: 2022թ. հունվարի 1-ի դրությամբ քրեական գործերից 14-ի վարույթը կասեցվել է, 24 քրեական գործով կայացվել են քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, որոշ դեպքերում՝ նաև քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումներ:

Նախաքննության փուլում շարունակել է մնալ 20 քրեական գործ, որոնցով մեղադրյալի կարգավիճակով անցել է 34 անձ:

Այդ թվում՝

- 24-ին՝ ընտրակաշառք տալու, ընտրակաշառք ստանալու, ընտրակաշառքի միջնորդության, ընտրակաշառք տալու փորձի, օժանդակության կամ կազմակերպելու,
- 6-ին՝ քվեարկության գաղտնիությունը խախտելու,
- 1-ին՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու կամ քվերակելու փորձ կատարելու,
- 1-ին՝ մի խումբ անձանց կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու նախապատրաստության,
- 1-ին՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով նախընտրական քարոզչությանը մասնակցելուն կամ նախընտրական քարոզչությանը մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու կամ նախընտրական քարոզչությանը մասնակցելուն կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն որևէ եղանակով խոչընդոտելու,
- 1-ին՝ տեղամասային կենտրոնում կամ դրան հարող տարածքում բռնություն գործադրելու, կամ տեղամասային կենտրոնում կամ դրան հարակից տարածքում բռնություն գործադրելու համար և զենքով տեղամասային կենտրոն մուտք գործելու համար:

Բոլոր գործերով մեղադրյալներից 8-ը եղել է արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցության կամ կուսակցության դաշինքի թեկնածու, մասնավորապես՝ 2-ը՝ «Հայաստան» դաշինքի, 4-ը՝ «Պատիվ ունեմ» դաշինքի, 1-ը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, 1-ը՝ «Վերելք» կուսակցության պատգամավորության թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձինք: Մեղադրյալներից 24-ի, այդ թվում՝ պատգամավորության բոլոր թեկնածուների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Քննության ընթացքում դատախազի կամ դատարանի որոշումներով կալանավորումը անազատության հետ չկապված այլ խափանման միջոցներով փոփոխվել կամ վերացվել է 12 անձի նկատմամբ: 2022թ. հունվարի 1-ի դրությամբ կալանքի տակ շարունակել է մնալ ընտրական բնույթի հանցագործություն կատարելու համար որպես մեղադրյալ ներգրավված 6 անձ:

Ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել ընտրական և ընտրությունների հետ կապված հանցագործությունների առթիվ քննված 29 քրեական գործ:

Դրանցով դատի է տրվել ընդհանուր 53 անձ, այդ թվում՝

- 42-ին՝ մեկ կամ մի քանի անձանց ընտրակաշառք տալու, ընտրակաշառք ստանալու, առանձին դեպքերում՝ նաև ընտրակաշառքի միջնորդություն կատարելու, կամ մեկից ավելի անձանց ընտրակաշառք տալուն օժանդակելու, նախապատրաստելու,
- 4-ին՝ քարոզչական նշանակության պաստառներ վնասելու և նյութական վնաս պատճառելու հանցավոր արարքներ կատարելու,
- 2-ին՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ մեկ կամ մեկից ավելի անձանց կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի նախընտրական քարոզչությանը մասնակցելուն հարկադրելու,
- 1-ին՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ կատարելու,
- 1-ին՝ երկու և ավելի անձանց ընտրություններին մասնակցելուն, կուսակցությունների կամ դաշինքի օգտին կողմ քվեարկելուն հարկադրելու,
- 1-ին՝ մի խումբ անձանց կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ընտրական իրավունքիիրականացմանը խոչընդոտելու նախապատրաստության,
- 1-ին՝ տեղամասային կենտրոնում կամ դրան հարող տարածքում բռնություն գործադրելու,
- 1-ին՝ ընտրական գործընթացների հետ կապված ծեծի համար:

Այսինքն՝ դատի տրված անձանց շուրջ 80%-ը եղել են ընտրակաշառքի հետ կապված հանցագործություններ կատարելու համար մեղադրվողները: Դատի տրված անձանցից 11-ը արտահերթ ընտրություններին մասնակցած «Հայաստան» դաշինքի, 23-ը՝ «Պատիվ ունեմ» դաշինքի, 2-ը՝ ԲՀԿ-ի, 1-ը՝ «Վերելք» կուսակցության պատգամավորական ցուցակներում ընդգրկված կամ այդ ուժերին սատարած անձինք են: Դատարան ուղարկված գործերից 5-ով նշված ժամանակահատվածում կայացվել է մեղադրական դատավճիռ: Դրանցից 3-ով 4 անձի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկումը, որոնցից 3-ի պարագայում դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան: Իսկ 2 գործով 2 անձ դատապարտվել է տուգանքի: Դատարան ուղարկված՝ 42 անձի վերաբերյալ 22 գործով դատական քննությունը շարունակվել է:

Բացի այդ, 2021թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին հանրապետության գրեթե բոլոր մարզերում տեղի են ունեցել խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների խմբավորված ընտրություններ, որոնց նկատմամբ, ինչպես ՀՀ գլխավոր դատախազությունում, այնպես էլ մարզերի դատախազություններում, իրականացվել է մշտադիտարկում՝ հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ տվյալների

հավաքագրման, արձանագրման, բավարար հիմքերի դեպքում ստուգման ենթարկելու պատշաճ ընթացակարգ ապահովելու նպատակով: Մասնավորապես, ՏԻՄ ընտրությունների ողջ գործընթացի, ներառյալ՝ ընտրարշավի, քվեարկության օրվա, քվեների հաշվարկի ժամանակահատվածի վերաբերյալ իրավապահ մարմիններն ստացել են առերևույթ ընտրական կամ ընտրություններին առնչվող այլ բնույթի հանցագործությունների մասին ընդհանուր 122 հաղորդում-ահազանգ՝ ներկայացված՝ ինչպես ՀԼՄ հրապարակումներով և սոցցանցերի օգտատերերի առանձին գրառումներով, այնպես էլ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ ընտրության մասնակիցների՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների, դիտորդների կողմից տրված հաղորդումներով, ոստիկանության աշխատակիցների զեկուցագրերով: Նշված 122 հաղորդման զգալի մասն ուղարկվել է նախաքննության մարմին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու նպատակով, իսկ մի մասի կապակցությամբ, հաշվի առնելով դրանց վերացական կամ ընդհանրական բնույթը, ոստիկանության բաժիններում նախաձեռնվել են ստուգողական գործողություններ: Դրանց արդյունքում 113 հաղորդում-ահազանգերից մեծ մասի դեպքում օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ստուգման ենթակա հանգամանքները չեն հաստատվել և թողնվել են անհետևանք, իսկ մյուս մասի դեպքում նախապատրաստված նյութերով կայացվել են հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներ: 9 դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Մասնավորապես՝

- 5-ը՝ առերևույթ ընտրակաշառք տալու, ստանալու հատկանիշով,
- 1-ը՝ քվեարկության գաղտնիությունը խախտելու,
- 1-ը՝ կրկնակի քվեարկության փորձ կատարելու,
- 1-ը՝ ընտրական իրավունքի իրացմանն առերևույթ խոչընդոտելու,
- 1-ը՝ ընտրական գործընթացներով պայմանավորված՝ ծանր վիրավորանք հասցնելու դեպքերի առթիվ:

Նշված քրեական գործերից մեկը՝ հարուցված կրկնակի քվեարկության փորձի փաստով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, ընթանում է դատաքննություն: Ընտրակաշառք տալու և ստանալու հատկանիշներով հարուցված 3 քրեական գործով, որոնցից երկուսը միացվել է մեկ վարույթում, նախաքննությունը շարունակվում է, մյուս քրեական գործերի վարույթը կարճվել է հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով:

2021թ. ընթացքում ՀՀ քննչական մարմինների կողմից որոշակի աշխատանք է կատարվել նաև հասարակական հնչեղություն ունեցող մի շարք քրեական գործերով:

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող թիվ 62207199/1 քրեական գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով,

նախաքննական մարմնի կողմից 2021 թվականի ընթացքում կատարվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ:

Այսպես.

1999 թվականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի և մյուսների կողմից տեռորիստական ակտ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով հանցավոր գործողություններին հնարավոր այլ մասնակիցների, դրանք կանխելու հնարավորություն ու պարտականություն ունեցած այլ պաշտոնատար անձանց, օգտագործված զենքերի ու ռազմամթերքի հետ առնչություն ունեցած անձանց պարզելու նպատակով հարցաքննվել կամ լրացուցիչ են հարցաքննվել բազմաթիվ անձինք, այդ թվում՝ Նաիրի Հունանյանը, Կարեն Հունանյանը, Դերենիկ Բեջանյանը, Աշոտ Կնյազյանը, Անահիտ Բախշյանը, Աշոտ Գասպարյանը, Հրաչյա Սարգսյանը, Կարեն Խաչատուրյանը, Գագիկ Հարությունյանը, Տարոն Սահակյանը և Ժորա Սարգսյանը:

Նշված ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների հիման վրա կատարվել են բազմաթիվ առգրավումներ:

Մասնավորապես.

Համապատասխան քրեակատարողական հիմնարկներից առգրավվել են խմբի անդամներ Էդուարդ Գրիգորյանի, Վռամ Գալստյանի և Համլետ Ստեփանյանի անձնական գործերը՝ նրանց մահվան պատճառների վերաբերյալ քննության ընթացքում մի շարք հարցեր պարզաբանելու համար:

Քննության ընթացքում ՀՀ ոստիկանությունից և այլ ստորաբաժանումներից առգրավվել են սույն դեպքի վերաբերյալ հետաքրքրություն ներկայացնող գործեր, որոնք ներկայումս ուսումնասիրության փուլում են:

Ստացվել են նաև սույն գործով դատապարտյալներին տեսակցած անձանց տվյալները:

Նախաքննության ընթացքում առգրավված տեսագրություններով և ձայնագրություններով նշանակվել են տեսաձայնագրային փորձաքննություններ, որոնք կատարման փուլում են:

Նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից ՀՀ ԱԱԾ տարբեր օպերատիվ ստորաբաժանումների տրվել են անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ հանձնարարություններ:

Ստացվել են բազմաթիվ դիմումներ և դրանց կից փաստաթղթեր, սկավառակներ, որոնց շուրջ հարցաքննվել են դիմումատուները, զննվել ներկայացված փաստաթղթերը և սկավառակները, իսկ դիմումատուների հայտնած տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից հետաքննության մարմնին տրվել են համապատասխան հանձնարարություններ:

Ակտիվ միջոցներ են ձեռնարկվում նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ԱԱԾ տնօրենին տրված ծավալուն հանձնարարության կատարման ուղղությամբ:

Նախաքննության ընթացքում կատարված դատավարական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու նպատակով առաջ են քաշվել մի շարք քննչական վարկածներ և դրանք ստուգելու նպատակով կազմվել է քննության պլան:

Ներկայումս 1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու, ինչպես նաև գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով կատարվում են համապատասխան դատավարական գործողություններ:

2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների փաստի առթիվ քննվող թիվ 62202608 քրեական գործով, այդ թվում նաև 10 անձի մահվան հանգամանքները բացահայտելու ուղղությամբ, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության (հակակոռուպցիոն կոմիտեի) քննիչների կողմից ձեռնարկվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ, մասնավորապես՝ հարցաքննվել են բազմաթիվ անձինք, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, կատարվել են առգրավումներ, զննություններ և հետաքննության մարմիններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գրավոր հանձնարարություններ:

««Հատուկ քննչական ծառայության մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-255-Ն օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԱԺ-ի կողմից 2021թ. մարտի 24-ին ընդունված՝ ՀՕ-163-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, նշված օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով 2021թ. հոկտեմբերի 23-ին թիվ 62202608 քրեական գործն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Թիվ 62202608 քրեական գործից անջատված և հաստատված մեղադրական եզրակացությամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան 2019թ. ապրիլի 29-ին ուղարկված թիվ 62202919 քրեական գործով (դատական գործ՝ թիվ ԵԴ/0253/01/19), դատարանի և ամբաստանյալ Ռ. Քոչարյանի դիմումների հիման վրա, ՀՀ Սահմանադրական դատարանի 2021թ. մարտի 26-ի թիվ ՍԴՈ-1586 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածը ճանաչվել է Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող ու անվավեր:

Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ վերացել է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ և 300.1-րդ հոդվածների միջև առկա ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունը, որպիսի պարագայում առերևույթ հանցավոր արարքը պետք է որակվի ընդհանուր նորմով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով համապատասխան փոփոխություն է կատարվել Միքայել Հարությունյանին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ՝ կայացնելով որպես մեղադրյալ ներգրավելու

նոր որոշում և Միքայել Հարությունյանի արարքները որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նույն կերպ, համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև հիշյալ դրվագով անցնող այլ մեղադրյալների՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշումներում:

Հարկ ենք համարում ավելացնել, որ ՀՀ գլխավոր դատախազը 2021թ. ապրիլի 1-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ որոշելու Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող Ռոբերտ Քոչարյանի և մյուսների վերաբերյալ թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով կիրառման ենթակա՝ մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու լիազորությունը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2021թ. մայիսի 14-ի աշխատակարգային որոշմամբ, ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա, գործի քննությունը մերժել է՝ գտնելով, որ գլխավոր դատախազն իրավասու չէ դիմելու ՀՀ Սահմանադրական դատարան՝ դատական քննության փուլում քննվող քրեական գործով կիրառման ենթակա նորմի Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Սահմանադրական դատարանի որոշումը խնդրահարույց է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ գլխավոր դատախազը Սահմանադրական դատարան կարող է դիմել դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գլխավոր դատախազը Սահմանադրական դատարան կարող է դիմել դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-934 որոշմամբ արձանագրել է, որ « (…) դատական քննության փուլում մեղադրանքը պաշտպանելու՝ դատախազության սահմանադրական գործառույթն իրականացվում է արդարադատության ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ մրցակցության սկզբունքի շրջանակներում, և վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ օժտված է դատարանը: Ուստի այս փուլում կոնկրետ գործը գտնվում է դատարանի վարույթում, և վերջինս է ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում ՀՀ Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ: Այս ընդհանուր կանոնից կարող են առանձնացվել միայն այն դեպքերը, երբ դատախազը գործի դատական քննության փուլում ինքնուրույն որոշում

կայացնելու իրավասությամբ է օժտված: Դա կարող է լինել, օրինակ, մեղադրանքից հրաժարվելիս կամ մեղադրանքը փոխելիս (…)»:

Հարկ ենք համարում շեշտել, որ Սահմանադրական դատարանը մեջբերված ՍԴՈ-934 որոշումը կայացրել է հենց ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա, հենց մեղադրանքը փոփոխելու լիազորությունը սահմանող նորմերի սահմանադրականության հարցով, դրա շրջանակներում անդրադարձել է դատարանում քննվող գործով գլխավոր դատախազի կողմից Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությանը և հաստատել այն՝ նկատի ունենալով, որ պատասխանող կողմը տվյալ գործով այդ հնարավորությունը վիճարկել է:

Նման պայմաններում, Սահմանադրական դատարանը ՀՀ գլխավոր դատախազի դիմումը վարույթ չի ընդունել՝ նշելով, որ վերը մեջբերված ՍԴՈ-934 որոշմամբ արձանագրվել է նաև դատարանում քննվող գործով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու՝ ՀՀ գլխավոր դատախազի իրավասությունը իրավակարգավորման ենթարկելու անհրաժեշտությունը, սակայն հետագայում փոփոխված Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով իրավակարգավորումը մնացել է նույնը:

Ավելի պարզ՝ Սահմանադրական դատարանը նախ ուղղակիորեն և անվերապահ կերպով արձանագրել է, որ գլխավոր դատախազն իրավասու է դատական քննության փուլում քննվող գործով Սահմանադրական դատարան դիմելու, եթե վիճարկվող նորմերը վերաբերում են մեղադրողի կողմից իր սահմանադրական գործառույթի իրականացմանը, այդ թվում՝ դրա շրջանակներում մեղադրանքը փոփոխելուն և նշել, որ այդ հանգամանքը ենթակա է օրենսդրական ամրագրման: Իսկ կայացված աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը, փաստելով, որ Սահմանադրական դատարանի որոշման այդ պահանջը օրենսդիր մարմնի կողմից չի կատարվել, այսինքն՝ Սահմանադրական դատարանի որոշումն անտեսվել է, գտել է, որ իր կողմից նախկինում կայացված որոշումն այլևս ուժ չունի:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Սահմանադրական դատարանը նմանօրինակ այլ դեպքերում ցուցաբերել է կտրականապես հակառակ մոտեցումը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պատճառաբանելու անհրաժեշտությունը 2007թ.ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ փաստելուց հետո, նկատի ունենալով, որ հետագայում կատարված օրենսդրական փոփոխություններով այդ որոշման պահանջներն ամբողջությամբ կատարված չեն, այլ գործով 2009թ.հուլիսի 29-ի ՍԴՈ-818 որոշմամբ կրկին վերահաստատել է իր դիրքորոշումը և կրկին պնդել, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Հետևաբար, ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը ոչ միայն ուղղակիորեն հակասում է իր՝ նախկինում արտահայտված դիրքորոշումներին, այլև կոնկրետ

Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործով սեփական նախկին դիրքորոշումն անտեսելու, դրա նկատմամբ անհետևողականության, սահմանադրական դատարանի որոշման սահմանադրաիրավական արժեքը նսեմացնելու օրինակը չունեցող, նախկինում երբեք չդրսևորված ակտ է:

Արձանագրված դրական ցուցանիշների հետ մեկտեղ պետք է փաստել, որ հանրապետությունում մինչդատական վարույթը դեռևս որոշ ուղղություններով բարելավվելու անհրաժեշտություն ունի, դեռևս առկա են խնդիրներ և բացթողումներ, որոնք բացասաբար են անդրադառնում քրեադատավարական խնդիրների արդյունավետ լուծման վրա:

Այսպես.

Շարունակում է մտահոգիչ մնալ քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման հարցը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ **2021թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 55.1%-ը (2020թ.՝ 53.3%) քննվել է մինչև 2 ամիս,** 15.8%-ը (2020թ.՝ 17.4%)՝ մինչև 4 ամիս, 9.6%-ը (2020թ.՝ 10.6%)՝ մինչև 6 ամիս, 13.4%-ը (2020թ.՝ 12.8%)՝ մինչև 1 տարի, 6.1 %-ը (2020թ.՝ 5.9%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

Նշվածից հետևում է, որ 2021թ. ընթացքում քննված քրեական գործերի 19.5% -ի նախաքննությունը տևել է 6 ամսից ավելի, այդ թվում՝ 6.1%-ը մեկ տարուց ավելի: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քրեական գործերի քննության ժամկետների ձգձգումը ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ:

Պետք է փաստել, որ քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման պատճառներ են շարունակում մնալ քրեական հետապնդման մարմինների աշխատակիցների տարեցտարի ավելացող ծանրաբեռնվածությունը, ինչը բացասական ազդեցություն է թողնում նախաքննության արդյունավետության վրա, ինչպես նաև նշանակված փորձաքննությունների կատարման ուշացումները, որոնք, իրենց հերթին, առավելապես փորձագետների խիստ ծանրաբեռնվածության հետևանք են:

Բացի այդ, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մի շարք հանցատեսակներով, մասնավորապես, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների և համակարգչային տեխնիկայի միջոցով կատարված հանցագործությունների գործերով քննության ժամկետների ձգձգումը հիմնականում պայմանավորված է օտարերկրյա պետություններ ուղարկվող իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ միջնորդությունների կատարման ժամկետներով և արդյունավետությամբ:

Նախաքննական մարմինները, որպես կանոն, ողջամիտ ժամկետում ուղարկում են այդ միջնորդությունները, սակայն դրանց պատասխանները ստացվում են հիմնականում մի քանի ամիս, իսկ որոշ դեպքերում՝ 1 տարի անց, ինչպես նաև եղել են դեպքեր, երբ պատասխաններ ընդհանրապես չեն ստացվել: Հանդիպել են դեպքեր, երբ միջնորդության պահանջները կատարվել են թերի կամ ձևականորեն,

ինչն էլ առաջ է բերել նոր միջնորդություն ուղարկելու անհրաժեշտություն, մինչդեռ միջնորդության բարեխիղճ կատարման դեպքում դրա կարիքը չէր լինի:

Այդուհանդերձ, արձանագրվել են նաև բազմաթիվ դեպքեր, երբ քրեական գործերի քննության ժամկետների ձգձգումը պայմանավորված է եղել քննիչների կողմից, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով անգործություն դրսևորելով, մասնավորապես, անհրաժեշտ քննչական կամ այլ դատավարական գործողություններ չկատարելով: Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության տարածքային ստորաբաժանումներից մեկում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քննվող քրեական գործով 2021թ. մարտի 16-ից մինչև հոկտեմբերի 7-ը՝ շուրջ 7 ամիս որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարվել:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ՀՀ դատախազության ստորաբաժանումներին մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ ինչպես հսկողական, այնպես էլ վերահսկողական լիազորություններ իրականացնելիս, յուրաքանչյուր նման դեպք հայտնաբերելու դեպքում նախաձեռնել ինչպես գործը քննող քննիչի, նրա վերադասի, այնպես էլ համապատասխան դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգ:

Բացի այդ, 2021թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված առերևույթ խախտումների փաստերով ծառայողական քննություն իրականացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 497 միջնորդություն, վարույթից հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 692 անձ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից պարբերաբար չեն պահպանվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետները, որոնք հանգեցնում են քրեական գործերով դատախազական հսկողության արդյունավետության նվազման, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ դրանց իրականացման փաստացի անհնարինության:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից ևս վերը նշված խախտումների վրա հրավիրվել է ՀՀ հետաքննության և նախաքննության մարմինների ղեկավարների ուշադրությունը, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով նախաձեռնվել է առերևույթ խախտում թույլ տված աշխատակիցների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ընթացակարգ:

Գործնականում խնդրահարույց է շարունակում մնալ խարդախության դեպքերի քննության պրակտիկան՝ պայմանավորված հատկապես խարդախությունների և քաղաքացիաիրավական հարաբերությունների սահմանազատման բարդություններով և արտահայտված՝ առանձին դեպքերում ակնհայտ քաղաքացիաիրավական հարաբերությունների կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնելով: Խնդրի տևական գոյությունը պայմանավորված

է վերը նշված իրավիճակները զանազանելու համար անհրաժեշտ միասնական չափանիշների բացակայությամբ, ինչի արդյունքում ամբողջությամբ նույնական իրավիճակում՝ մի դեպքում քրեական գործի հարուցումը կարող է մերժվել, մեկ այլ դեպքում հարուցվել քրեական գործ և քննվել մինչև մեկ տարի: Վերոգրյալն անընդունելի է ոչ միայն այն պատճառով, որ անհարկի ծանրաբեռնում է առանց այդ էլ գերծանրաբեռնված քրեական հետապնդման մարմիններին, այլ նաև նրանով, որ այն պարունակում է քրեադատավարական գործիքակազմի ներգործությամբ գույքային շահեր սպասարկելու վտանգ: Բանն այն է, որ առանձին դեպքերում պարտատերը հանցագործության մասին հաղորդում է ներկայացնում բացառապես քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ մեկ ուրիշի կողմից իր հանդեպ պարտավորություն ունենալու փաստը արձանագրվելու և այն հետագայում քաղաքացիադատավարական ընթացակարգում օգտագործելու համար:

Ինչպես այս, այնպես էլ խարդախության դեպքերի ճիշտ քրեաիրավական գնահատման բազմաթիվ խնդիրներ պայմանավորված են մեկ ուրիշի հաշվին, այդ թվում՝ գործարքի միջոցով, գույքային օգուտ ստանալու իրավիճակների բազմազանությամբ և մինչ օրս գործնականում ընդունված կանոնների՝ այդ իրավիճակներում ոչ միանշանակ կիրառելիությամբ: Օրինակ, մոտեցումն առ այն, թե տարաժամկետ վճարման պայմանով գույք գնելու և գումարը չվճարելու դեպքերում առկա է պարզ քաղաքացիաիրավական գործարք, խարդախության հատկանիշները բացակայում են և այդպիսիք կարող են առկա լինել միայն այդ գույքը խաբեությամբ՝ որպես իր սեփականությունը ներկայացնելով մեկ ուրիշին իրացնելու և վերջինից գումար ստանալու պարագայում, սկզբունքորեն կիրառելի չէ այն դեպքերում, երբ տարաժամկետ վճարման պայմանով վերցված գույքը թաքցվում է՝ դրա դիմաց չվճարելը պարզապես բացատրելով անհրաժեշտ միջոցների բացակայությամբ: Վերջին շրջանում ոչ միասնական մոտեցումներ են առկա նաև խարդախության և համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության դեպքերը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու դեպքերից սահմանազատելիս:

Տարբերակված մոտեցումները բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքում սահմանվել են որոշակի հստակ կանոններ՝ խարդախությունը ակնհայտ քաղաքացիաիրավական հարաբերություններից ի սկզբանե տարբերակելու, ինչպես նաև ուրիշի հաշվին գույքային օգուտ ստանալու տարբեր իրավիճակներին քրեաիրավական միատեսակ գնահատականներ տալու համար:

Քրեական ենթամշակույթին առնչվող քրեական գործերով քննության ընթացքում շարունակում են առաջ գալ մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են նման արարքների ապացուցմամբ: Մասնավորապես, սովորաբար նման գործերով վկաները խուսափում են քրեական ենթամշակույթին առնչվող անձանց մերկացնող ցուցմունքներ տալուց, ինչի արդյունքում

ապացուցման գրեթե ողջ բազան կառուցվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալների վրա:

Այստեղ երբեմն առաջ են գալիս նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների կողմից թույլ տրված թերացումներ, ինչի կապակցությամբ համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ ոստիկանապետի առաջին տեղակալին՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով թույլ տրված թերացումների վերաբերյալ օպերատիվ քննարկում անցկացնելու համար:

Ավելին, ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2021թ. ընթացքում ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից քրեական ենթամշակույթին առնչվող հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները էապես ակտիվացնելու անհրաժեշտություն կա, մասնավորապես, այս հանցագործությունների հայտնաբերման ու բացահայտման դեպքերի մեջ ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում կատարված բացահայտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության հնարավորությունները, փոքր մաս են կազմում ընդհանուր դեպքերի հաշվեկշռում:

Նշված օրենքն ընդունվել էր նաև այն հիմնավորմամբ, որ վերոգրյալ արարքները լուրջ մարտահրավեր են հասարակության համար, քանի որ այդպիսի երևույթները սպառնում են խաթարել կամ աղավաղել հասարակության մեջ ձևավորված արժեքներն ու պատկերացումները:

Այլ խոսքով՝ քրեական օրենսդրության շրջանակներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության լայն շերտերի շրջանում այն կանխելու միտումով, քանզի պետք է գիտակցել, որ դրա դեմ պայքարը նպաստելու է միջանձնային հարաբերությունների, մարդկանց արժեհամակարգի բարելավմանը, անօրինական առավելությունների բացառմանը, ինչպես նաև պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների պահպանմանը և օրինապահ վարքագծի խթանմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, 2021թ. արդյունքներով պայմանավորված՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետին, որով, ի թիվս այլնի, հանձնարարվել է հնարավորինս ակտիվացնել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ

ունեցող անձին դիմելու արարքների հայտնաբերման ու բացահայտման ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

Հաշվի առնելով այս արարքների բարձր հանրային վտանգավորությունը՝ ՀՀ դատախազության կողմից մշտապես ձեռնարկվում են միջոցներ՝ այս հանցագործության դեպքերի հայտնաբերման ու բացահայտման ուղղությամբ:

Որոշակի խնդիրներ են ծագում «Զվարթնոց» օդանավակայանով ՀՀ ժամանած անձանց ուղեկցվող բեռներում թմրամիջոցիների հայտնաբերման դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում: Մասնավորապես, «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոցի մաքսանենգության դեպքերի առթիվ հարուցված մի շարք քրեական գործերի նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել, որ նշված թմրամիջոցը մաքսային սահմանով տեղափոխող անձին նշանակված է եղել կամ դրա օգտագործման վերաբերյալ խորհուրդ է տրվել ԱՄՆ տարածքում գործունեություն ծավալող բժիշկների կողմից՝ տվյալ պետության տարածքում դրա շրջանառությունն արգելված չլինելու պայմաններում:

Նշված քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մաքսային իրավախախտման վերաբերյալ կազմված փաստաթղթերում, այդ թվում՝ ներկայացված զեկուցագրերում, բացակայում են տվյալներ այն մասին, թե մինչև զննության հրավիրելը ինչ գործողություններ է կատարել տվյալ անձը, կոնկրետ որ հատվածում և ինչ գործողություններից հետո է վերջինս հրավիրվել զննության, ենթարկվել է արդյոք բանավոր հարցման թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ պատասխաններ է տվել:

Գործող իրավակարգավորումների վերլուծությունը վկայում է, որ ՀՀ օրենսդրությամբ բավարար որոշակիությամբ և հստակությամբ սահմանված չեն մաքսային և պետական սահմանով տեղափոխելու համար թույլատրված թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի շրջանակը, քանակը, փաթեթավորմանը և բժշկական նշանակմանը, նշանակման վերաբերյալ փաստաթղթերի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, հետևաբար՝ առկա է այլ շահագրգիռ գերատեսչությունների հետ ոլորտի իրավակարգավորումների կատարելագործման շուրջ քննարկումների և դրանց արդյունքներով համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում արձանագրված դեպքերի առանձնահատկությունները:

Քրեական գործերի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ մաքսային զննման և մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություններում, որպես կանոն, մանրամասն չեն նկարագրվում զննված ուղեբեռի (փոստային ծանրոցի, առաքանու) ամբողջական տեսքը, դրանում առկա բոլոր իրերն ու առարկաները, չի նշվում ենթադրյալ հանցագործության առարկայի կոնկրետ տեղը, մյուս առարկաների նկատմամբ դիրքը:

Նշված և քրեական գործերի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կարող է ստեղծվել մաքսային հսկողության ընթացքում լուսանկարահանման և տեսաձայնագրառման կիրառումը:

2021 թվականին կատարված աշխատանքների ամփոփման արդյունքներով նշված խնդիրները լուծելու և մաքսանենգության դեմ տարվող պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ ՊԵԿ-ի նախագահին, իսկ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից՝ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալին:

Պետք է փաստել, որ օրենքի միատեսակ կիրառման և միասնական պրակտիկայի ձևավորման տեսանկյունից որոշակի խնդրահարույց հարցեր են առաջանում նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանների կայացրած որոշումներում ներառված մեկնաբանությունների արդյունքում:

Մասնավորապես՝ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ որոշ դեպքերում վերադաս դատական ատյանը բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումները և մերժել հեռախոսային խոսակցությունների վերահսկում՝ ՕՀՄ անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունները՝ արձանագրելով, որ դատարանին չեն ներկայացվել «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող նյութեր, բացի օպերատիվ տեղեկանքից, ինչը հիմք է այդ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տալու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և հետաքննության մարմնի միջնորդությունը մերժելու համար: Ընդ որում՝ դատական ակտերից ակնհայտ է, որ դատարանները օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնելը թույլատրելու համար ակնկալում են բացահայտել համապատասխան մարմինների հետ համագործակցող անձանց ինչն ակնհայտորեն հակասում է այդ գործունեության սկզբունքներին:

Մասնավորապես՝ այդպիսի դիրքորոշումներ է հայտնել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը՝ 2021 թվականի հուլիսի 8-ին և 15-ին կայացրած որոշումներով:

Նշված դատական ակտերի դեմ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2021թ. հունիսի 10-ին ներկայացվել են վճռաբեկ բողոքներ, ի թիվս այլնի, հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ օրենսդրությունը, մինչ քրեական գործի հարուցումը, հետաքննության մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու և արդեն հարուցված քրեական գործով նախաքննության ընթացքում դատական վերահսկողության առարկա հանդիսացող քննչական

գործողություններ կատարելու համար սահմանել է անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման տարբեր երաշխիքներ, իրենց առջև դրված խնդիրներով պայմանավորված՝ այդպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և քննչական գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունը հիմնավորող տարբեր չափանիշներ, ինչը վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է:

Ներկայացված բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանի 2021 թվականի նոյեմբերի 10-ին կայացրած որոշումներով ընդունվել են վարույթ և ներկայումս քննության փուլում են:

Բացի այդ, դատական պրակտիկայի միատեսակության առումով կարևոր նշանակություն ունի ավարտված քրեական վարույթի պայմաններում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կարգով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելիս, անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ անձեռնմխելիության արգելքը հաղթահարելու գործընթաց սկսելու անհրաժեշտության և քրեական գործ հարուցելու որոշման մեջ ենթադրյալ հանցանք կատարած անձի մասին տվյալների հիշատակումը որպես քրեական հետապնդում հարուցել դիտարկելու կապակցությամբ առաջացող խնդիրների բարձրաձայնումը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում դատարանները որպես անձեռնմխելիության արգելքի հաղթահարման բացակայություն և փաստացի քրեական հետապնդման իրականացում են դիտարկում ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կարգով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելը և քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելը: Մասնավորապես՝ այդպիսի դիրքորոշում է հայտնել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը՝ 2021 թվականի հունվարի 29-ին կայացրած թիվ ԵԴ/0455/01/20 գործով որոշմամբ:

Նշված դատական ակտի դեմ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2021թ. մարտի 22-ին ներկայացվել է վճռաբեկ բողոքով, որով, ի թիվս այլնի, բարձրագույն դատական ատյանի առջև հարց է բարձրացվել, թե արդյոք իրավաչափ է ստորադաս դատարանների այն հետևությունը, որ դատավորի անձեռնմխելիությունը հաղթահարված չլինելու պայմաններում նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում և գործող օրենսդրության իրավակարգավորումների պայմաններում, երբ քրեական գործ հարուցելու որոշման մեջ հիշատակվում են անձի մասին տվյալներ, որպես ենթադրյալ հանցանք կատարողի, անհրաժեշտ է արդյոք ստանալ Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությունը, թե՝ ոչ, ինչպես նաև հարց է բարձրացվել, թե ավարտված վարույթի պայմաններում իրավասու է արդյոք ՀՀ գլխավոր դատախազը դիմելու Բարձրագույն դատական խորհրդին՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու նպատակով, նկատի ունենալով, որ ոչ թե ի սկզբանե քրեական գործ է հարուցվել, այլ գլխավոր

դատախազը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կարգով վերացրել է քննիչի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը:

Վճռաբեկ դատարանի 2021թ. հունիսի 25-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ, սակայն դեռևս վերջնական որոշում չի կայացվել:

Ամփոփելով պետք է փաստել, որ ՀՀ դատախազության կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում: Դատախազները, իրենց սահմանադրական վերոնշյալ լիազորությունն իրացնելիս, 2021թ. ընթացքում, ընդհանուր առմամբ, կայացրել են աննախադեպ թվով՝ շուրջ 9000 դատախազական ակտ, ինչն ընդգծում է քրեական վարույթների շրջանակում, հատկապես իրականացվող քննությունների որակի, արդյունավետության բարձրացման տեսանկյունից, դատախազների դերակատարության աճը:

Ընդ որում՝ դատախազական ակտերից 440-ը քրեական վարույթների և դրանցով անցնող անձանց համար ունեցել է շրջադարձային նշանակություն: Մասնավորապես, արձանագրվել է 50 դեպք, երբ քրեական գործերով մեղադրական եզրակացությունները դատախազների կողմից չեն հաստատվել և դրանով հետագա քննության արդյունքում կայացվել է վարույթը կարճելու որոշում: Այսինքն՝ դատախազների այդ որոշումների արդյունքում առնվազն նույնքան մարդ անհիմն դատի չի տրվել: Կամ՝ արձանագրվել է 38 դեպք, երբ դատախազները վերացրել են քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի որոշումները, և հետագա քննության արդյունքում այդ գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Այսինքն՝ դատախազական այդ ակտերով ապահովվել է, որ առնվազն նույնքան մարդ չխուսափի քրեական պատասխանատվությունից:

3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

2021թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 4451 գործ՝ 5573 անձի վերաբերյալ (2020թ.՝ 3352 գործ՝ 4166 անձի վերաբերյալ), որոնցից 4398-ը 5519 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 53-ը 54 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Համեմատության համար նշենք, որ 2020թ. ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 3352 գործ՝ 4166 անձի վերաբերյալ: Նշվածից հետևում է, որ 2021թ. դատարան ուղարկված գործերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 1099-ով կամ 32.8%-ով, ինչը անշուշտ, պետք է դրական ցուցանիշ համարել:

Դատարաններում քննվել և ավարտվել է 2921 քրեական գործ՝ 3375 անձի վերաբերյալ (2020թ.՝ 2121 գործ՝ 2427 անձի վերաբերյալ, 2019թ.՝ 2004 քրեական գործ՝ 2483 անձի վերաբերյալ):

Նշված քրեական գործերից 2365-ով դատապարտվել է 2701 անձ (2020թ.՝ 1808 գործով՝ 2038 անձ, 2019թ.՝ 1511 գործով՝ 1838 անձ): 37 քրեական գործով 38 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2020թ.՝ 35 քրեական գործով՝ 35 անձի նկատմամբ, 2019թ.՝ 59 քրեական գործով՝ 60 անձի նկատմամբ):

2021թ. դատարաններում քննված և ավարտված՝ 3375 անձի վերաբերյալ 2921 քրեական գործից 1674-ը կամ 57.3%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 1775 անձի նկատմամբ (52.6%), 738-ը՝ միջին ծանրության (25.3%)՝ 921 անձի նկատմամբ (27.3%), 448-ը՝ ծանր (15.3%)՝ 579 անձի նկատմամբ (17.2%) և 61-ը՝ առանձնապես ծանր (2.1%)՝ 100 անձի նկատմամբ (2.9%):

2021թ. ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 52%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը՝ 21.5%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը՝ 29.8%-ով, առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը՝ 82%-ով:

Դատապարտված անձանցից 35-ը եղել է անչափահաս (2020թ.՝ 43 անձ, 2019թ.՝ 53 անձ), 120-ը՝ կին (2020թ.՝ 142 կին, 2019թ.՝ 149 կին), 255-ը՝ նախկինում դատված (2020թ.՝ 217 անձ, 2019թ.՝ 222 անձ), 37-ը՝ օտարերկրացի (2020թ.՝ 28 անձ, 2019թ.՝ 47 անձ): 7 գործով 8 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2020թ.՝ 5 գործ՝ 6 անչափահաս, 2019թ.՝ 8 գործ՝ 8 անչափահաս):

2021թ. դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 18.6%-ով, դատապարտված կանանց թիվը՝ 15.5%-ով, իսկ նախկինում դատված անձանց թիվն աճել է՝ 17.5%-ով:

2021թ. ընթացքում 107 գործով ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից արդարացվել է 134 անձ (2020թ.61 գործով 85 անձ), իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 1 գործով 1 անձ (2020թ.՝ 3 գործով՝ 3 անձ):

2021թ. ՀՀ դատարանների կողմից մասնակի արդարացվել է 6 անձ (2020թ.՝ 1 անձ), իսկ մեկ կամ մի քանի դրվագով՝ 4 անձ (2020թ.՝ 5 անձ):

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը, մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 65 անձ (48.5%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 33 անձ (24.7%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 31 անձ (23.1%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 5 անձ (3.7%):

ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններն ունեն հետևյալ պատկերը. մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 30 գործով արդարացվել է 44 անձ, սեփականության դեմ ուղղված հանցագործություններով՝ 12 գործով՝ 13 անձ, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 2 գործով՝ 2 անձ, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ 49 գործով՝ 55 անձ, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններով՝ 10 գործով՝ 13 անձ, կոռուպցիոն հանցագործություններով՝ 6 գործով՝ 11 անձ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններն ունեն հետևյալ պատկերը. հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ 1 գործով արդարացվել է 1 անձ: Մասնավորապես, 1 գործով 1 անձի մեղադրանք է առաջադրված եղել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (Սպանությունը), 3 գործով 3 անձի՝ 112-րդ հոդվածով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 10 գործով 12 անձի՝ 118-րդ հոդվածով (Ծեծը), 4 գործով 4 անձի՝ 177-րդ հոդվածով (Գողությունը), 17 գործով 17 անձի՝ 243.1 հոդվածով, 3 գործով 3 անձի՝ 266-րդ հոդվածով (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը), 3 գործով 6 անձի՝ 268-րդ հոդվածով (Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի), 2 գործով 3 անձի՝ 214-րդ հոդվածով (Առևտրային

կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը), 2 գործով 4 անձի՝ 311-րդ հոդվածով (Կաշառք ստանալը):

2021 թվականի ընթացքում արդարացման դատավճիռների դեմ բերվել է 75 վերաքննիչ և վճռաբեկ բողոք, որոնցից 23-ը մերժվել է, 48-ը ընթացքի մեջ է, իսկ 4-ը բավարարվել է:

ՀՀ գլխավոր դատախազի՝ «Մեղադրանքի պաշտպանության ոլորտում դատախազության գործունեության արդյունավետությունն ապահովելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 14-ի N 115 հրամանը, 2009 թվականի հունիսի 3-ի N 20/2(3)-152-09 և 2015 թվականի մայիսի 27-ի N 30/8-19-15 հանձնարարականները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 2014 թվականի փետրվարի 19-ի N 35/11-14 հանձնարարականն ու Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2017 թվականի մարտի 3-ի նիստի արձանագրության 1-ին կետի 22-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչելու մասին» 11.04.2018թ. N 32 հրամանի 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումները արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում անհապաղ պետք է այդ մասին հաղորդում ուղարկեն ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչություն՝ կցելով կայացված որոշումների և/կամ դատավճիռների պատճենները: Նշված դրույթը նպատակ է հետապնդում ապահովելու ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողական գործառույթների իրականացման շրջանակում արդարացման դատավճիռների կայացման պատճառների, դրանց հիմքերի և հիմնավորումների նկատմամբ պատշաճ հսկողությունը: Ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվում այն դեպքերին, երբ արդարացման դատավճռի հիմքում դրված է մեղադրանքի համար էական նշանակություն ունեցող որևէ ապացույց դատարանի կողմից անթույլատրելի ճանաչելու հանգամանքը, որը, իր հերթին, պայմանավորված է քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական ոչ պատշաճ հսկողությամբ: Նմանատիպ դեպքերում քննարկվում է նաև հսկող դատախազի կարգապահական պատասխանատվության հարցը՝ ի տարբերություն այն դեպքերի, երբ արդարացման դատավճիռը պայմանավորված է լինում մեղադրանքը հիմնավորող ապացույցների բավարար համակցության վերաբերյալ մեղադրող դատախազի և դատարանի ներքին համոզմունքների տարբերությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի 11.04.2018թ. N 32 հրամանի 5-րդ կետի խախտում թույլ տալու համար կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 2 դատախազ:

2021թ. 405 քրեական գործ՝ 494 անձի վերաբերյալ կարճվել է (2020թ.՝ 212 քրեական գործ՝ 263 անձի վերաբերյալ), որոնցից 137-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 21-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 39-

ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 233-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 64-ը՝ այլ հիմքով:

2021թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 1.866.825.138 ՀՀ դրամ (2020թ.՝ 2.292.355.796 ՀՀ դրամ), որից 648.257.511 ՀՀ դրամի վնասը (2020թ.՝ 589.725.846 ՀՀ դրամ)՝ պատճառվել է պետությանը, 51.689.603 ՀՀ դրամի վնասը՝ համայնքներին (2020թ.՝ 16.550.507 ՀՀ դրամ), իսկ 1.166.888.024 ՀՀ դրամի վնասը (2020թ.՝ 1.686.079.443 ՀՀ դրամ)՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 1.328.479.932 ՀՀ դրամ (2020թ.՝ 279.825.703 ՀՀ դրամ), որից 72.989.160 ՀՀ դրամը (2020թ.՝ 168.493.403 ՀՀ դրամ)՝ պետությանը, 23.641.789 ՀՀ դրամը՝ համայնքներին (2020թ.՝ 13.337.907 ՀՀ դրամ), 727.848.983 ՀՀ դրամը (2020թ.՝ 97.994.393 ՀՀ դրամ)՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

2021թ. դատարաններում քննված քրեական գործերից 942-ով 1062 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ 2021թ. հուլիսի 27-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-200-Ն օրենքը, որով քրեական դատավարությունում ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթները: Նշվածի արդյունքում արագացված կարգ կիրառելու ինստիտուտը վերոնշյալ օրվանից այլևս չի գործել: Հետևաբար, հարկ է նկատի ունենալ, որ ներկայացված վիճակագրությունը վերաբերում է 2021 թվականի հունվարի մեկից մինչև 2021 թվականի հուլիսի 27-ն ընկած ժամանակահատվածին:

Համաձայնեցման և համագործակցության վարույթներով միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է հանձնարարական, որում նշվել է, որ անհրաժեշտ է հիշյալ օրենքի կիրարկման յուրաքանչյուր դեպք նախապես քննարկել ՀՀ գլխավոր դատախազության (ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության) համապատասխան ստորաբաժանման հետ:

Բացի այդ, հաշվի առնելով հիշյալ վարույթների կիրառման ընթացքում հնարավոր դատավարական փաստաթղթերն օրենքին համապատասխան կազմելու անհրաժեշտությունը, ՀՀ գլխավոր դատախազությունում պատրաստվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375^3-րդ հոդվածով սահմանված կարգով համաձայնության գալու վերաբերյալ արձանագրության և 375.11-րդ հոդվածով նախատեսված համագործակցության համաձայնագրի տիպային օրինակներ և ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375^3-րդ հոդվածով սահմանված կարգով համաձայնության գալու վերաբերյալ արձանագրություն և 375.11-րդ հոդվածով նախատեսված

համագործակցության համաձայնագիր կնքելիս հիմք ընդունել այդ տիպային օրինակները:

2021թ. դատապարտված 2701 անձից 593-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 21.9%-ը (2020թ. 2038 անձից ազատազրկման է դատապարտվել 525-ը կամ 25.8%-ը):

2021 թվականին 3 անձ դատապարտվել է ցմահ ազատազրկման՝ մեկ անձ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով, երկու անձ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 389-րդ հոդվածով, 34-390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-390-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 395-րդ հոդվածի 3-րդ մասով (2019 և 2020 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել):

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 23 անձ (2020թ.՝ 19 անձ): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 0.85%-ը:

Տուգանքի է դատապարտվել 1425 անձ (2020թ.՝ 945 անձ): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 52.76%-ը:

657 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 24.3%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2020թ.՝ 548 անձի կամ 26.9%-ի նկատմամբ): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 218-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 227-ը՝ միջին ծանրության, 208-ը՝ ծանր, 4-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար:

2021թ. դատապարտված 16 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2020թ.՝ 5 անձի, 2019թ.՝ 7 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2021թ. դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 20 անձ (2020թ.՝ 15), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից: Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 354 անձ դատապարտվել է ազատազրկման (2020թ.՝ 342):

2021 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 329 վերաքննիչ բողոք, իսկ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին դատարանների վարույթում մնացորդ բողոքներն եղել են 150, որոնցից 2-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 4-ը վարույթ չի ընդունվել: Բերված բողոքներից 88-ը կամ 18.3%-ը եղել է արդարացման, 7-ը կամ 1.5%-ը՝ կարճման, 271-ը կամ 56.6%-ը՝ պատժի

մեղմության, 3-ը կամ 0.6%-ը՝ պատժի խստության, 22-ը կամ 4.6%-ը՝ արարքի վերաորակման դեմ, իսկ 78-ը կամ 16.3%-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 59-ը կամ 17.9%-ը բավարարվել է, 216-ը կամ 65.6%-ը մերժվել է, 5-ով կամ 1.5%-ով կայացվել է այլ որոշում, 162-ով կամ 49.2%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 550-ն են, որոնցից 1-ը հետ է վերցվել, 3-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 4-ը կամ 0.7%-ը եղել է արդարացման, 16-ը կամ 2.9%-ը՝ պատժի մեղմության դեմ, 465-ը կամ 84.5%-ը պատժի խստության դեմ, 3-ը կամ 0.5%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 50-ը կամ 9.1%-ը՝ այլ հիմքով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 46-ը կամ 8.4%-ը, 31-ը կամ 5.6%-ը բավարարվել է մասնակի, 288-ը կամ 52.4%-ը մերժվել է, 9-ով կամ 1.6%-ով կայացվել է այլ որոշում, 170-ով կամ 31%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2021 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 86 (2020թ.՝ 65) վճռաբեկ բողոքից և նախորդ տարվանից փոխանցված 4 (2020թ.՝ 12) բողոքից 34-ով (2020թ.՝ 12) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 30-ով (2020թ.՝ 39) որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 26-ը (2020թ.՝ 26) ընդունվել է վարույթ, որոնցից 6-ը (2020թ.՝ 15) բավարարվել է, 2-ը (2020թ.՝ 1) մասնակի է բավարարվել, 17-ի (2020թ.՝ 7) քննությունն ընթացքի մեջ է, իսկ 1-ը մերժվել է (2020թ.՝ 3):

ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների բողոքների հիման վրա Վճռաբեկ դատարանն ընդունել է ուղենիշային նշանակություն ունեցող մի շարք որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումները միասնական, կանխատեսելի և որոշակի իրավակիրառ պրակտիկայի կայացման տեսանկյունից ունեն կենսական նշանակություն: Այսպես,

1. ՀՀ վճռաբեկ դատարանն իր ԵԱՔԴ/0137/01/15 որոշմամբ անդրադարձել է իրավակիրառ պրակտիկայի և անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող հարցադրումների և արտահայտել է ողողրդող նշանակություն ունեցող դիրքորոշումներ:

Առաջին՝ անդրադառնալով ՀՀ վերաքննիչ դատարանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը բեկանելու ու գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու, ինչպես նաև նոր դատական ակտ կայացնելու լիազորություններին, Վճռաբեկ դատարանը նշել է, որ « … յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, բողոքարկված դատական ակտը բեկանելուց հետո նոր դատական ակտ կայացնելու կամ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշում կայացնելիս, վերաքննիչ դատարանը պետք է գնահատի, թե որքանով է վերաքննիչ վերանայման

գործիքակազմը բավարար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությունն ապահովելու և արձանագրված դատական սխալները վերացնելու համար: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ վերաքննության գործառութային առանձնահատկությունները թույլ են տալիս լուծել նշված խնդիրները, վերաքննիչ դատարանի որոշումը, որպես կանոն, պետք է լինի նոր դատական ակտի կայացում»: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը, հավաստելով ՀՀ դատախազության դիրքորոշումներն ու պատճառաբանությունները, նման դիրքորոշում է արտահայտել՝ ելնելով դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից:

Երկրորդ՝ անդրադառնալով քրեական գործերը միացնելու դատավարական ինստիտուտի հարցին և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ « … քրեական գործերի միացման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը, բացի նրանից, որ ունի հայեցողական բնույթ, պետք է նաև բավարարի քրեական գործերի միացման օբյեկտիվ հնարավորության չափանիշին: Այլ կերպ՝ հանցակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի միացման կամ անջատման օրինականությունն ու հիմնավորվածությունը կախված է ոչ միայն հանցակցության կոնկրետ ձևից, հանցակիցների մեղադրանքների փոխկապակցվածության բնույթից և դրանցով պայմանավորված՝ հանցակիցների վերաբերյալ քրեական գործերով մեղադրանքների փաստական հանգամանքների միջև կապի աստիճանից, այլ նաև քրեական գործերի հետագա համատեղ քննության օբյեկտիվ հնարավորությունից: Մասնավորապես, այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցակիցներից մեկի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ մյուս հանցակիցների վերաբերյալ քրեական գործերն անջատվում և մեղադրական եզրակացությամբ ուղարկվում են դատարան, ապա նման անջատումն ինքնին կրում է օբյեկտիվ բնույթ»:

2. Թիվ ԵԷԴ/0054/01/15 գործով Վճռաբեկ դատարանի առջև ՀՀ դատախազության բարձրացրած իրավական հարցը վերաբերել է փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքին առնչվող՝ գործնականում առկա բազմաթիվ խնդրահարույց հարցերը միջազգային իրավական մեխանիզմների զարգացման համատեքստում դիտարկելուն:

Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «… անդրազգային կազմակերպված հանցավոր գործունեության դեմ պայքարին նվիրված միջազգային չափանիշները զարգանում են այն ուղղությամբ, ըստ որի փողերի լվացումն անհրաժեշտ է դիտարկել որպես ինքնավար բնույթ ունեցող հանցավոր արարք, որի համար պատասխանատվությունը որևէ կերպ չի կարող պայմանավորված լինել նախորդող հանցագործության համար նախկին կամ միաժամանակյա դատապարտմամբ, նախորդող հանցագործությունն ապացուցված և դրա

քրեաիրավական հատկանիշներն ամբողջությամբ բացահայտված լինելու հանգամանքով: Ավելին՝ փողերի լվացման հանցակազմի ինքնավար բնույթը ենթադրում է, որ նախորդող հանցագործության քննությունը, որպես այդպիսին, փողերի լվացման ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների քննության նպատակը չէ, իսկ այն մոտեցումը, ըստ որի՝ փողերի լվացումը քննվում է միայն որպես նախորդող հանցագործության գործերով իրականացվող քննության մաս, այլևս կենսունակ չէ՝ հաշվի առնելով այս ոլորտում տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև խնդրո առարկա հանցագործության բացահայտման գործընթացում առաջացող լուրջ խոչընդոտները: Միևնույն ժամանակ, սույն դեպքում չի կարող վտանգվել նաև անմեղության կանխավարկածը, քանի որ անձը պատասխանատվության է ենթարկվում ոչ թե նախորդող հանցավոր գործունեության, այլ հենց փողերի լվացման հանցագործության համար»:

Ընդհանրացնելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ « ... փողերի լվացման համար անձին պատասխանատվության ենթարկելու և մեղադրական դատավճիռ կայացնելու համար անհրաժեշտ է ընդամենը փաստել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, ինչը ամենևին չի ենթադրում այդ հանցագործության քրեաիրավական հատկանիշների ճշգրիտ նկարագրություն. տվյալ դեպքում բավարար է որոշակի ապացուցողական զանգվածով, այդ թվում՝ նաև անուղղակի ապացույցների համակցությամբ, հաստատված համարել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում: Ավելին, միջազգային հանրությունն այս ուղղությամբ որդեգրել է հենց անուղղակի ապացուցման մեթոդը, մասնավորապես, եթե բացակայում են նախորդող հանցագործության վերաբերյալ ուղղակի ապացույցներ, ապա գույքի հանցավոր ծագումը կարելի է հաստատված համարել անուղղակի ապացույցների համակցության համադրման և վերլուծության արդյունքում»:

Այս իրավական դիրքորոշումները փողերի լվացման դեմ պայքարի շրջանակներում ունեն կենսական նշանակություն և կարող են էականորեն նպաստել հանցավորության դեմ պայքարին՝ ժամանակակից միջազգային պրակտիկային համահունչ: Ի հավաստումն նշենք, որ 2021թ. ընթացքում այդ հանցանքի կատարման համար ավելի մեծ թվով քրեական գործեր են հարուցվել (2021թ.՝ 21 գործ, իսկ 2020թ.՝ 14) և ավելի շատ անձինք են ներգրավվել որպես մեղադրյալ (2021թ.՝ 19 անձ, իսկ 2020թ.՝ 5):

3. Գործնականում անորոշություն ունեցող և ՀՀ դատախազության կողմից բարձրացված հաջորդ հարցը վերաբերել է վարույթը բացառող հիմքերի առկայության պայմաններում, երբ սահմանված է առերևույթ հանցանք կատարած անձի դիրքորոշման անհրաժեշտությունը, իրականացվող վարույթի դատավարական սահմաններին: Մասնավորապես, թիվ ԵԴ/3085/07/19 գործով մեղադրանք էր առաջադրվել անձի, որը չէր համաձայնել ոչ արդարացնող՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով գործի վարույթը կարճելուն, քրեական

հետապնդումը դադարեցնելուն և չէր ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը: Ընդհանուր կարգով շարունակված քննության ընթացքում նախաքննական մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ գործով մեղադրյալի տանը, կից շինություններում, ինչպես նաև աշխատասենյակում խուզարկություններ կատարելու թույլտվություն ստանալու մասին, սակայն դատարանը մերժել էր դրանք: Այդ որոշումների դեմ դատախազության կողմից բերվել էր վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ դատարանի 2020թ. հունվարի 10-ի որոշմամբ մերժվել է:

Դատարաններն իրենց որոշումը հիմնականում պատճառաբանել էին նրանով, որ ենթադրյալ հանցագործության դեպքի կապակցությամբ առկա է քրեական գործով վարույթը բացառող առերևույթ հանգամանք՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը: Իսկ նման պայմաններում բնակարանում/աշխատասենյակում խուզարկություն կատարելը կդիտվի անհամաչափ միջամտություն անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների, մասնավորապես, բնակարանի և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը գտել էր, որ այն դեպքում, երբ առկա է վարույթը բացառող հանգամանք, սակայն առերևույթ հանցանք կատարած անձը համաձայն չէ այդ հիմքով վարույթը կարճելուն և քրեական հետապնդումը դադարեցնելուն, քննությունը պետք է իրականացվի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որոնց կիրառումը չի ենթադրում անձի իրավունքների և օրինական շահերի անհամաչափ միջամտություն:

Չհամաձայնելով ստորադաս դատարանների վերոնշյալ իրավական մոտեցումների հետ՝ ՀՀ գլխավոր դատախազությունը կայացված որոշումների դեմ ներկայացել էր վճռաբեկ բողոք, որն ընդունվել էր վարույթ:

Դատախազությունը ելել է այն դիրքորոշումից, որ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Այն պայմաններում, երբ մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչել առաջադրված մեղադրանքում և համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վարույթը կարճելուն, վերջինիս վերագրվող արարքն ապացուցված համարելու, նրա մեղավորությունը կամ անմեղությունը հաստատելու համար պահանջվում է կատարել լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ, այդ թվում՝ խուզարկություն վերջինիս բնակավայրում կամ աշխատավայրում: Մինչդեռ, ստորադաս դատարանների կայացրած նման որոշումների արդյունքում վարույթն իրականացնող մարմինը զրկվում է այդ հնարավորությունից: Դատարանների վերոնշյալ հիմնավորումների ընդունման

դեպքում, նմանատիպ իրավիճակներում վարույթն իրականացնող մարմինը պետք է զրկվի մի շարք քննչական ու դատավարական գործողություններ կատարելու հնարավորությունից, օրինակ՝ դատարան ներկայացնել նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունները լսելու վերաբերյալ միջնորդություններ կամ առգրավել բանկային կամ ստանալ նոտարական գաղտնիք պարունակող տեղեկություններ, քանի որ դրանք ևս այս կամ այն կերպ միջամտում են անձի անձնական կյանքի գաղտնիությանը:

Քննության առնելով դատախազության բողոքները՝ Վճռաբեկ դատարանը լիովին համաձայնել է վերջինիս իրավական դիրքորոշումների հետ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործության դեպքի կապակցությամբ առկա է քրեական գործով վարույթը բացառող՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, սակայն մեղադրյալը համաձայնություն չի տվել այդ հիմքով վարույթը կարճելուն, վարույթը պետք է շարունակվի ընդհանուր կարգով, քրեադատավարական հնարավոր բոլոր միջոցներով պետք է կատարվի օբյեկտիվ, լրիվ և բազակողմանի քննություն՝ վերջնական դատավարական որոշում կայացնելու համար: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ այս պայմաններում մեղադրյալի համար կանխատեսելի է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված բոլոր քննչական և դատավարական գործողությունները, որոնք ուղղված են անձի մեղքի ապացուցմանը, կարող են կատարվել: Այսինքն՝ վաղեմությունն անցնելու հիմքով վարույթի դադարեցման դեմ առարկելով՝ մեղադրյալն ընդունում է իր որոշ իրավունքների հնարավոր սահմանափակման, իսկ արդյունքում նաև՝ իր մեղավորության հաստատման ռիսկը:

Համաձայնելով նաև մյուս պատճառաբանությունների վերաբերյալ դատախազության դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանի հետևությունները իրավաչափ չեն:

Ելնելով դրանից՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ գլխավոր դատախազության բողոքները բավարարել է մասնակիորեն, բեկանել է ստորադաս դատարանների վերոնշյալ որոշումները և գործն ուղարկել է ՀՀ վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

4. Հաջորդ կարևոր խնդիրը, որը միասնական կիրառություն չուներ գործնականում, վերաբերում էր հիմնական և լրացուցիչ պատիժների համակցված կիրառմանը: Մասնավորապես, 2019թ. մարտի 14-ին հարուցված քրեական գործով առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2020թ. հունվարի 31-ի դատավճռով անձին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 314-րդ հոդվածի 1-ին մասով: Դատարանը հիմնավորված է համարել, որ անձը ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախկին ղեկավարի դրդմամբ և երկու անձի օժանդակությամբ, վատնման միջոցով ՀՀ պետական

բյուջեի միջոցներից հափշտակել է խոշոր չափերի գումար, իսկ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու և կեղծ փաստաթուղթ կազմելու միջոցով կատարել է պաշտոնեական կեղծիք: Դատավճռով անձի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ ընդհանուր 700.000 ՀՀ դրամի չափով, կիրառվել է համաներում, և նա ազատվել է նշանակված պատժից:

Դատավճռի դեմ ՀՀ դատախազությունը բերել է բողոք՝ կապված անձի նկատմամբ հիմնական պատժի՝ տուգանքի հետ միաժամանակ լրացուցիչ պատիժ, այն է՝ որոշակի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, չկիրառելու հետ (թիվ ԵԴ/1090/01/19 գործ):

Դատախազության իրավական դիրքորոշումը վերոնշյալի կապակցությամբ այն էր, որ ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանությունից և պատիժ նշանակելու սկզբունքներից բխում է, որ այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով որպես հիմնական պատիժ նախատեսված է տուգանք և ազատազրկում, իսկ որպես պարտադիր լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, այդ լրացուցիչ պատժատեսակը վերաբերելի է ինչպես տուգանքին, այնպես էլ ազատազրկմանը: Ելնելով դրանից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված «տուգանք» պատժատեսակի հետ պարտադիր պետք է կիրառվի նաև լրացուցիչ պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը:

ՀՀ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ մերժել էր դատախազության բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով առաջին ատյանի դատարանի որոշումը: Վերաքննիչ դատարանն իր այս որոշումը հիմնավորել է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի սանկցիայի ձևակերպմամբ՝ «...պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»: Հետևաբար, ըստ վերաքննիչ դատարանի՝ նման լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ հիմնական պատիժ է նշանակվում ազատազրկումը:

Այս որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազը վճռաբեկ բողոք է բերել, որն ընդունվել է վարույթ և քննության առնվել: Արդյունքում, ըստ էության, համաձայնվելով ՀՀ դատախազության իրավական դիրքորոշումների հետ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը կայացրել է նախադեպային և կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի տեսանկյունից կարևոր որոշում:

Մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու

լրացուցիչ պատժատեսակի նշանակման կարգի առումով առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Հետևաբար, բոլոր դեպքերում անհրաժեշտ է առաջնորդվել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ օրինականություն, արդարություն, պատժի անհատականացում, մարդասիրություն, և պատժի նպատակներին հասնելու օրենսդրական կարգադրանքով:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ եթե հանցավոր արարքն իր բնույթով կապված է անձի զբաղեցրած պաշտոնի կամ նրա կողմից իրականացվող մասնագիտական կամ այլ գործունեության հետ, ապա վերոնշյալ լրացուցիչ պատժատեսակի նշանակմամբ էականորեն նվազում է հետագայում վերջինիս կողմից նույնաբնույթ հանցանք կատարելու հավանականությունը: Այսինքն՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ունի կանխարգելիչ նշանակություն: Իսկ այդ լրացուցիչ պատժատեսակի իրավական կարգավորումներից ակնհայտ է, որ այն կարող է նշանակվել ինչպես ազատությունից զրկելու հետ կապված, այնպես էլ զրկելու հետ չկապված պատիժների հետ զուգակցված:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ բավարարել է ՀՀ գլխավոր դատախազի բողոքը, լրացուցիչ պատժի մասով բեկանել է ամբաստանյալի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ հաշվի առնելով իր կողմից արտահայտված վերոնշյալ նախադեպային իրավական մեկնաբանությունները:

5. Գործնականում, հատկապես վերջին տարիներին որդեգրված՝ ընտանեկան բռնությունների դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված դատավարական միջոցների գործադրման համատեքստում հակասական և անորոշ մոտեցումներ էին ձևավորվել այդ հանցատեսակների քրեաիրավական որոշ դիսպոզիտիվ հատկանիշների առումով: Ընտանեկան բռնության դեպքի առթիվ Լոռու մարզի դատախազությունում հարուցված քրեական գործով անձին մեղադրանք էր առաջադրվել, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 6-րդ կետերով, այն բանի համար, որ նա փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելով մեկ այլ անձի հետ, վերջինիս նկատմամբ դրսևորել է առանձին դաժանություն, դիտավորությամբ պատճառել հոգեկան և մարմնական տառապանքներ:

Քրեական գործի քննության արդյունքում Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավճռով ամբաստանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 6-րդ կետերով առաջադրված մեղադրանքը վերաորակվել էր, իսկ դատավճռի դեմ մեղադրողի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ մերժվել (թիվ ԼԴ1/0030/01/16 գործ):

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է վճռաբեկ բողոք, որի քննության արդյունքում կայացված

որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, սկզբունքորեն համաձայնելով դատախազության փաստարկների հետ, նախադեպային արժեք ունեցող իրավական դիրքորոշումներ է արտահայտել տուժողի՝ հանցավորից նյութական կախվածության մեջ գտնվելու, ինչպես նաև հանցավորի գործողություններն առանձին դաժանությամբ կատարված լինելու քրեաիրավական հատկանիշների վերաբերյալ, որոնք էական նշանակություն ունեն ընտանեկան բռնությունների վերաբերյալ գործերով:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վատ վերաբերմունքի վերաբերյալ ՄԻԵԴ-ի մոտեցումները, քննարկման առարկա է դարձրել ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի ուժգնության աստիճանի խնդիրը և փաստել, որ թեև ինքնին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու յուրաքանչյուր դեպք կրում է դաժանության հատկանիշներ, սակայն առանձին դաժանությունն անգթության, անողոքության, վայրագության և անխղճության դրսևորման բարձր աստիճանն է, որը զուգակցվում է հանրության համար վտանգավոր արարքի կատարման հետ և ուղղված է տուժողին առանձնակի տանջալից ապրումներ պատճառելուն:

Այս համատեքստում գնահատելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ առանձին դաժանությամբ հոգեկան ուժեղ տառապանքներ պատճառելու հատկանիշների բացակայությունն արձանագրելիս, ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում ձևակերպված և գործով հաստատված փաստական տվյալներն այն մասին, որ նա տուժողին հոգեկան տառապանք է պատճառել հատկապես այնպիսի գործողություններով, որոնք նրա մոտ սաստիկ վախ են առաջացրել՝ շարունակելով դրանք մինչև վերջինիս ուշագնացության հասցնելը, տևականորեն զրկել է կնոջը սնվելու հնարավորությունից՝ անտեսելով նրա խիստ քաղցած լինելն ու սնունդ աղերսելը, այդ պայմաններում ցուցադրաբար սնվել է տուժողի ներկայությամբ՝ այն դեպքում, երբ տուժողը քաղցած լինելու հետևանքով ուշագնացությունից խուսափելու նպատակով փորձել է քաղցը հագեցնել ջուր խմելով, պարբերաբար հոգեճնշող վիճակում և վախի մթնոլորտում է պահել կնոջը, մշտապես վերահսկել վերջինիս վարքագիծը, ինչը բարձրացրել է տուժողի տառապանքի, անլիարժեքության զգացումը, կոտրել վերջինիս՝ ֆիզիկական և հոգեբանական դիմադրություն ցույց տալու կարողությունը, սպառնացել է տուժողին, որ իրավապահ մարմիններին բողոքելու դեպքում ծեծի կենթարկվի, մշտապես ֆիզիկական ուժ է գործադրել նրա նկատմամբ: Նման արարքների համակցությունը, ըստ Վճռաբեկ դատարանի, իր բնույթով կարող է բնորոշվել որպես անմարդկային վերաբերմունք և ենթակա լինել որակման որպես առանձին դաժանության դրսևորում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև այն մասին, որ հանցավորից տուժողի նյութական կախվածություն առկա է ոչ

միայն այն դեպքում, երբ տուժողը ֆինանսական տեսանկյունից ուղղակիորեն կախված է հանցավորից, այլև, երբ տուժողի համար նախատեսված նյութական օգնությունը կամ եկամուտն ամբողջությամբ կամ դրա էական մասը տնօրինվում է հանցավորի կողմից, վերջինս զրկում է տուժողին դրանից ինքնակամ օգտվելու հնարավորությունից, ինչպես եղել է տվյալ դեպքում:

6. Երկար տարիներ առկա էր տարակարծիք մեկնաբանություն կաշառք ստանալու և խարդախության հանցակազմերի տարանջատման չափանիշների հարցում: Քիչ չեն եղել դատարանների կողմից կաշառք ստանալու համար մեղադրվող անձանց արարքների, մեր գնահատմամբ, անհիմն վերաորակումները խարդախության: Այս առնչությամբ թիվ ԵԱԴԴ/0079/01/16 գործով Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք ուղղորդող նշանակություն ունեն ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հանցագործության որակման համար: Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները, մասնավորապես, հանգում են հետևյալին.

- Պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար կաշառքը տրվում է պաշտոնատար անձի այնպիսի կոնկրետ գործողության կամ անգործության համար, որը մտնում է վերջինիս լիազորությունների մեջ և օրինական է: Այսպես՝ պաշտոնատար անձի լիազորություններն օրենքներով, ենթաօրենսդրական կամ այլ իրավական ակտերով սահմանված վերջինիս իրավազորությունների շրջանակն է, նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունը: Ուստի, վերոնշյալ հոդվածով մեղադրանք առաջադրելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հստակեցնել պաշտոնատար անձի ծառայողական լիազորությունների բնույթն ու շրջանակը, դրանք ամրագրող համապատասխան իրավական ակտերը՝ հստակ սահմանելով, թե կոնկրետ ինչպիսի լիազորություն է գործադրել պաշտոնատար անձը շահագրգիռ անձանց օգտին համապատասխան գործողության կամ անգործության համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արարքի որակման հարցում որևէ նշանակություն չունի, թե համապատասխան շահագրգիռ անձը՝ կաշառք տվողը, արդյոք մանրամասնորեն տեղեկացված է եղել պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակի, իր օգտին գործադրվող կոնկրետ լիազորության, դրա իրավական և ընթացակարգային կարգավորումների առանձնահատկությունների, ինչպես նաև համապատասխան պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրի կողմից իրականացվելիք գործողությունների մանրամասների մասին: Տվյալ դեպքում էականն այն է, որ պաշտոնատար անձն իր ծառայողական լիազորությունների շրջանակներում շահագրգիռ անձի օգտին կատարի կամ, համենայնդեպս, մտադրություն ունենա կատարելու որոշակի գործողություններ կամ դրսևորելու անգործություն: Ընդ որում, էական չէ նաև այն, թե կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հնարավոր եղե՞լ է հասնել

ցանկալի արդյունքին, թե՞ ոչ, քանի որ կաշառք ստանալու հանցակազմը ձևական է, և համապատասխան հետևանքները հանցակազմի շրջանակից դուրս են գտնվում:

Միևնույն ժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ անձը նյութական օգուտ է ստանում այնպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու համար, որը վերջինս իրականում չի կարող կատարել՝ համապատասխան լիազորությունների բացակայության կամ պաշտոնեական դիրքն օգտագործելու անհնարինության պատճառով, ապա այդպիսի արարքը, նյութական արժեքները հափշտակելու դիտավորության առկայության դեպքում, պետք է որակվի որպես խարդախություն՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ:

- Խարդախության հանցակազմի առկայությունը և, միևնույն ժամանակ, կաշառք ստանալու հանցակազմի բացակայությունը չի կարող պայմանավորվել զուտ այն հանգամանքով, որ կաշառք տվող անձն ամենայն մանրամասնությամբ չի տեղեկացվել և չի պատկերացրել պաշտոնատար անձի լիազորությունների բնույթի ու շրջանակի, իր օգտին համապատասխան գործողության կամ անգործության իրականացման իրավական և ընթացակարգային առանձնահատկությունների, պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրի կոնկրետ լիազորությունների և դրա շրջանակներում կատարվելիք կոնկրետ գործողությունների բնույթի վերաբերյալ: Տվյալ դեպքում էականն այն է, որ կաշառք տվողն ընդհանուր առմամբ տեղեկացված լինի, որ համապատասխան պաշտոնատար անձն իր ծառայողական լիազորությունների գործադրման արդյունքում իր կամ իր ներկայացրած անձի օգտին կատարելու է որոշակի գործողություն կամ ձեռնպահ է մնալու դրա կատարումից, իսկ պաշտոնատար անձն էլ, իր հերթին, կատարի կամ իրական մտադրություն ունենա իր լիազորությունների շրջանակներում կատարելու խոստացված գործողությունը (անգործությունը):

7. Բավական հետաքրքիր ընթացք է ստացել թիվ ԱՐԱԴ1/0025/01/15 գործը, որով նոր երևան եկած հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքում, մասնավորապես, նշվել է, որ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութերից երևում է, որ ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած հանգամանքներ, որոնք, ինքնին, ինչպես նաև՝ մինչև այդ պարզված հանգամանքների հետ, ապացուցում են դատապարտյալի կատարած հանցանքի ավելի ծանր լինելը: Նշվել է նաև, որ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի ընթացքում նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունից երևում է, որ անձի մահը գտնվում է պատճառահետևանքային կապի մեջ ստացած մարմնական վնասվածքների և դրանց արդյունքում զարգացած հետվնասվածքային բարդությունների հետ: Բողոքաբերը գտել է, որ հիշյալ հանգամանքն առերևույթ ապացուցում է, որ անձը կատարել է ավելի ծանր հանցանք, քան այն, որը նախկինում վերջինիս մեղսագրվել է: Այսինքն՝ ըստ բողոքաբերի՝ անձը կատարել է հանցանք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի

242-րդ հոդվածի 2-րդ մասով, այլ ոչ թե նույն հոդվածի 1-ին մասով, հետևաբար քրեական գործը նոր քննության նպատակով պետք է ուղարկվի առաջին ատյանի դատարան՝ անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդման առումով համապատասխան գործընթաց իրականացնելու համար:

Բողոքում ընդգծվել է նաև, որ տուժողը մահացել է քրեական գործով կայացված դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ինչը նշանակում է, որ դրանք կայացրած դատարանները, ինչպես նաև քրեական հետապնդման մարմինները չեն իմացել և չէին կարող իմանալ նշված հանգամանքի մասին: Վերոգրյալի հիման վրա, խնդրվել է բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը և վերաքննիչ դատարանի որոշումը ու գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Քննարկելով ներկայացված բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր՝ հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը որպես նոր հանգամանք դիտարկելու իրավական հնարավորության բացակայությունն առաջացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության խնդիր: Ուստի առկա օրենսդրական բացի համատեքստում Վճռաբեկ դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 68-րդ հոդվածի 2-րդ մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ առկա օրենսդրական բացը ստեղծում է տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքի, սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման:

Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 14-ի ՍԴԱՈ-10 աշխատակարգային որոշմամբ գործի քննությունը մերժվել է: Սահմանադրական դատարանի գնահատմամբ որևէ սահմանադրաիրավական խոչընդոտ առկա չէ և չի առաջանա Վճռաբեկ դատարանի կողմից բարձրացվող հարցն իր՝ իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներում լուծելու դեպքում:

Սահմանադրական դատարանի այս որոշումից հետո թիվ ԱՐԱԴ1/0025/01/15 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում ՀՀ դատախազությունում դեռևս չի ստացվել:

Պետք է նշել, որ, կարևորելով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների իրացումն իրավակիրառ պրակտիկայում, ՀՀ գլխավոր դատախազի կողմից դրանցից մի քանիսն ուղարկվել են պետական իրավասու մարմինների ղեկավարներին՝ գործնական աշխատանքում կիրառելու նպատակով:

Միաժամանակ, հարկ է նշել, որ մեղադրանքի պաշտպանության ոլորտում աշխատանքների ընթացքում շարունակում են արդիական մնալ մի շարք խնդիրներ, որոնք համարժեք լուծումների կարիք ունեն:

1. Մասնավորապես, **չափազանց կենսական խնդիր է քրեական գործերով դատական քննության ձգձգումները**, ինչը, բացի նրանից, որ հանգեցնում է դատավարության մասնակիցների իրավունքների խախտման, արդարադատության գործընթացի անարդյունավետության, նաև առաջացնում է հանրային արդարացի դժգոհություն:

ՀՀ դատախազության կողմից պարբերաբար իրականացվում է դատական քննության փուլում գտնվող քրեական գործերի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով, ի թիվս այլնի, ապահովելու նաև գործերի ողջամիտ ժամկետում քննությունը:

Ըստ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով: ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ դեպքերում դատավորների վարույթում գտնվող գործերի քննությունը չի համապատասխանում ողջամիտ ժամկետներում դատաքննության այն չափանիշներին, որոնք սահմանվել են Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում (*տե՛ս, մասնավորապես, ԵԱՔԴ/0016/01/14 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2019թ. սեպտեմբերի 18-ի որոշումը*):

Ավելին, ուսումնասիրությունը վկայում է նաև, որ առկա են բազմաթիվ գործեր, որոնք գրեթե մինչև հինգ տարի է, ինչ գտնվում են դատական քննության փուլում: Մասնավորապես,

1) Թիվ 68156417/1 (ՇԴ/0026/01/17) քրեական գործը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 316-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ էության քննության առնելու համար 24.08.2017 թվականին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարան: 14.09.2017 թվականին քրեական գործով դատավորի կողմից նշանակվել է դատաքննություն: 2018 թվականի նոյեմբերին, դատավորի տեղափոխվելու պատճառով, գործով հետագա դատաքննությունը հանձնարարվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ այլ դատավորի, որը որոշում է կայացրել դատաքննությունը սկզբից սկսելու մասին: 09.01.2019 թվականին այդ դատավորի կողմից նշանակվել է դատաքննության, իսկ 2019 թվականի դեկտեմբերին, վերջինիս տեղափոխվելու պատճառով, գործով հետագա դատաքննությունը հանձնարարվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ այլ դատավորի, որը որոշում է կայացրել դատաքննությունը սկզբից սկսելու մասին:

2) Թիվ 18105116 (ՇԴ/0043/01/17) քրեական գործը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ էության քննության առնելու համար 27.04.2017 թվականին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Դատավորի կողմից նշանակվել է դատաքննություն, կայացվել է դատավճիռ, որով արարքը վերաորակվել է: Դատական ակտը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը բավարարվել է, գործը վերադարձվել է Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: 22.08.2019 թվականին գործը մակագրվել է մեկ այլ դատավորի, որի՝ 2021 թվականի օգոստոսին տեղափոխվելու պատճառով, գործով հետագա դատաքննությունը հանձնարարվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ այլ դատավորի:

3) Թիվ 18100116 /ՇԴ3/0066/01/16/ քրեական գործը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով և 139-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ էության քննության առնելու համար 26.12.2016 թվականին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2017 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճռով անձին ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացրել է: 2018 թվականի մարտի 12-ի որոշմամբ վերաքննիչ դատարանը բավարարել է մեղադրողի բողոքը: Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ պաշտպանի բողոքի քննության արդյունքում բեկանել է ստորադաս դատարանների ակտերը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: 28.11.2019թ. քրեական գործն իր վարույթ է ընդունել մեկ այլ դատավոր, որի տեղափոխվելու պատճառով 13.08.2021թ. քրեական գործն իր վարույթ է ընդունել մեկ այլ դատավոր:

Ընդ որում, նշյալ դեպքերը եզակի չեն, երբ գործերի քննության նման ձգձգումը պայմանավորված է դատավորների հաճախակի տեղափոխություններով, ինչի հետևանքով խախտվում է յուրաքանչյուր անձի՝ անկախ և անաչառ դատարանի

կողմից իր գործի արդարացի, ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքը, ինչպես նաև հնարավորություն չի ստեղծվում անձանց մեղավորության հաստատման դեպքում իրականացնելու պատժի նպատակները, վտանգվում է սոցիալական արդարության վերականգնման սկզբունքի իրագործումը:

Հաշվի առնելով նշված խնդիրը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդի նախագահին, որում բարձրացվել է նշյալ հարցը և, նկատի ունենալով ողջամիտ ժամկետում գործերի քննության կարևորությունը, Բարձրագույն դատական խորհրդից ակնկալվում է վերջինիս լիազորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել դատավորների հաճախակի տեղափոխության հարցը կարգավորելու, դատարանի վարույթում տարիներով քննվող քրեական գործերով քննության ժամկետների ողջամտությունն ապահովելու ուղղությամբ և ձեռնարկված միջոցների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն:

Ընդ որում, քիչ չեն դեպքերը, երբ դատարանում քրեական գործերով վարույթները կարճվել կամ իրականացվող քրեական հետապնդումները դադարեցվել են անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ դատախազությունը շարունակում է հետևողականորեն միջոցներ ձեռնարկել՝ բացառելու աշխատանքի արդյունավետ կազմակերպման կամ որևէ այլ պատճառով դատական նիստերից դատախազների անհարգելի բացակայությունները: Նման յուրաքանչյուր կոնկրետ դեպք քննարկման առարկա է դառնում, որի շրջանակներում վեր են հանվում բացակայության պատճառները և դատախազի (այդ թվում՝ վերադաս դատախազի) վարքագիծը: Արդյունքում՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում բարձրացվում է նաև դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նման փաստերով իրականացվել է 7 ծառայողական ուսումնասիրություն, որոնցից մեկ դեպքով հարուցվել է կարգապահական վարույթ և ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովին՝ դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

2. Հարկ է նշել, որ գործնական աշխատանքում առկա է դատարանների հետ կապված մեկ խնդիր ևս: **Դատարանները շատ դեպքերում խախտում են դատական ակտն օրենսդրությամբ նախատեսված սուբյեկտներին ուղարկելու օրենսդրական ժամկետային պահանջը**:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի համաձայն՝ դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: Չնայած օրենսդրական նման հստակ պահանջին՝ արձանագրվել են դեպքեր, երբ դատարանները տևական ժամանակ չեն ուղարկել դատավճիռը դատախազություն: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանի կայացրած բազմաթիվ դատավճիռներ դատախազությունը ստացել է մոտ երկու ամիս անց: Ավելին, արձանագրվել է նաև այնպիսի դեպք, երբ դատավճիռը հրապարակվել է 2021 թվականի օգոստոսի 2-ին, մինչդեռ Գեղարքունիքի մարզի դատախազությունում ստացվել է 2021 թվականի դեկտեմբերի 17-ին:

Ընդ որում, բարձրացված խնդիրը վերաբերում է ոչ միայն գործն ըստ էության լուծող, այլ նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերին: Մասնավորապես, եղել է դեպք, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020 թվականի հուլիսի 21-ի որոշումը ՀՀ գլխավոր դատախազություն է ուղարկվել 2021 թվականի փետրվարի 17-ի թվագրմամբ գրությամբ, որը ստացվել է 2021 թվականի փետրվարի 23-ին: Նույն դատավորի կողմից մեկ այլ գործով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելու դեմ ներկայացված վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին՝ 2020 թվականի հունիսի 26-ի որոշումը բողոք բերած դատախազին է ուղարկվել 2021 թվականի փետրվարի 17-ին, որը դատախազությունում մուտք է եղել 2021 թվականի փետրվարի 23-ին՝ շուրջ 8 ամիս անց:

Այսինքն, անձի նկատմամբ առավելագույն խիստ խափանման միջոց ընտրելու մասին որոշման բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտը ՀՀ դատախազությանը հասանելի է դարձել ակտի հրապարակման օրվանից շուրջ 7 ամիս անց:

Դատական ակտերն օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտմամբ ՀՀ դատախազություն ուղարկելը ոչ իրավաչափ ձևով հետաձգում է այդ ակտերի բովանդակությանը ծանոթանալու և համարժեք եզրահանգումներ անելու, այդ թվում՝ հնարավորինս արագ բողոքարկելու հնարավորությունը, ինչպես նաև կարող է խաթարել տվյալ դատական ակտի արդյունավետ իրացումը՝ կիրառման կամ բողոքարկման տեսանկյունից առարկայազուրկ դարձնելով այն:

Նման դեպքերով ՀՀ գլխավոր դատախազի կողմից հրավիրվել է ԲԴԽ-ի ուշադրությունը, իսկ 2 դեպքով հաղորդում է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարին՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նպատակով:

3. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելուց հետո դրա վերաբերյալ առաջին ատյանի դատարանների կողմից համապատասխան նշումներ կատարելու կարգը սահմանող իրավական ակտերը, որի արդյունքում պարզվել է, որ առկա չէ որևէ իրավական ակտ, որով կարգավորվում են գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո առաջին ատյանի դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ համապատասխան նշում կատարելու կարգն ու ժամկետները, իսկ դատարանների նախագահների խորհրդի՝ 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 08-Լ որոշմամբ առկա

իրավակարգավորումները բացառապես վերաբերելի են վերադաս դատական ատյանի գործունեությանը:

Նշվածի հաշվառմամբ՝ 2021 թվականի մարտի 30-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահին՝ առաջարկելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածով Բարձրագույն դատական խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակներում քննարկել նշված ոլորտը կարգավորող համապատասխան որոշում ընդունելու հարցը՝ հաշվի առնելով նման կարգի և ժամկետների սահմանման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

ՀՀ դատախազությունը, կարևորելով անկախ և անաչառ դատարան ունենալու հրամայականը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել քրեական օրենսդրությամբ ամրագրված խնդիրների կենսագործումը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքով և կարգով դիմում է իրավասու մարմիններին՝ կոնկրետ գործերով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումներով:

2021 թվականի ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից ՀՀ արդարադատության նախարարին է **ներկայացվել 60 հաղորդում** (2020թ.՝ 8), որոնցից 47-ի դեպքում մերժվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, 6-ը դեռևս քննարկման փուլում է, իսկ 7 հաղորդման դեպքում ՀՀ արդարադատության նախարարությունը հարուցել է կարգապահական վարույթ, որից երեքի դեպքում հարուցված կարգապահական վարույթը կարճվել է, մեկն ընթացքի մեջ է, իսկ երեքի դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ:

Նշյալ երեք միջնորդությունների քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարգապահական պատասխանատվության է ենթարկել երկու դատավորի՝ նշանակելով «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, իսկ մեկի դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժել է:

Միաժամանակ, ՀՀ դատախազության կողմից նախորդ տարիներին ներկայացված՝ դատավորին կարգապահական պատասխանավության ենթարկելու վերաբերյալ հաղորդումների հիման վրա, 2021 թվականի ընթացքում, Բարձրագույն դատական խորհրդի կողմից մեկ դատավորի լիազորություն դադարեցվել է, երկու դատավոր ենթարկվել է «խիստ նկատողություն» կարգապահական պատասխանատվության, իսկ երկու

դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժվել է:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել դրանց հիմնական բովանդակությունը: Այսպես.

1. Թիվ ՏԴ/0124/01/19 քրեական գործով դատավորը, համապատասխան լիազորության բացակայության պայմաններում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կատարման հանձնելու կարգադրության գործողությունը կասեցնելու և կից փաստաթղթերի հետ այն դատարան ուղարկելու վերաբերյալ գրություններ է ուղարկել ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժին և ՀՀ Տավուշի մարզի դատախազություն, որը հանգեցրել է նաև դատավորի կողմից դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու վերաբերյալ վարքագծի կանոնի խախտման:

Այս առնչությամբ Բարձրագույն դատական խորհուրդը նշել է, որ տվյալ դեպքում դատավորը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն ի կատար ածելու մասին կարգադրությունը 20.07.2020 թվականին փոստով ուղարկել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժին, որից հետո 23.07.2020 թվականին ստացված՝ դատապարտյալի ազատազրկման ձևով նշանակված պատիժն այլընտրանքային պատժատեսակ հանրային աշխատանքներով փոխարինելու մասին միջնորդության հիմքով, նույն օրը ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժին է ուղարկել գրություն՝ նշված միջնորդությունը ստացած լինելու մասին և խնդրել է կարգադրության կատարումը կասեցնել մինչև դիմումի քննարկումը: Մինչդեռ, Բարձրագույն դատական խորհուրդը, հիմք ընդունելով վերոգրյալները, արձանագրում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին որևէ նորմատիվ իրավական ակտով վերապահված չէ դատական ակտը կատարման հանձնելուց հետո դրա գործողության կասեցման լիազորություն: Տվյալ գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն ի կատար ածելու մասին կարգադրությունը կասեցնելու իրավասության բացակայության, դրա կատարումը կասեցնելու վերաբերյալ գրություն ուղարկելու, ինչպես նաև տվյալ դեպքում իր լիազորություններից չբխող գործողություններ, այն է՝ առանց համապատասխան ընթացակարգը պահպանելու անձի նկատմամբ նշանակված պատժատեսակը փոփոխելու պայմաններում, խախտվել է Սահմանադրությամբ ամրագրված՝ օրինականության սկզբունքը:

Դատավորի կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կատարման հանձնելու կարգադրության գործողությունը կասեցնելու և դրան կից փաստաթղթերի հետ միասին այն դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ

ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժին և Տավուշի մարզի դատախազություն գրություններ ուղարկելը, ինչպես նաև՝ համապատասխան ընթացակարգերի խախտմամբ դատապարտյալ հանդիսացող անձի նկատմամբ նշանակված պատժատեսակը փոփոխելը վարկաբեկում է դատական իշխանությունը՝ նկատի ունենալով, որ որևէ նորմատիվ իրավական ակտով, այդ թվում՝ դատավարական և նյութական օրենսդրությամբ, դատարանն օժտված չէ դատական ակտի կատարումը կասեցնելու, ինչպես նաև՝ առանց պատժի կրման ընթացքը փաստացի սկսելու դատապարտյալի՝ իր նկատմամբ նշանակված պատժատեսակը փոփոխելու մասին դիմումը քննարկելու լիազորությամբ: Դատարանի նման վարքագծի դրսևորումը կասկած է հարուցում նաև դատարանի անկախության ու անաչառության նկատմամբ, դրանով իսկ նվազեցնում հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

Այսպիսով՝ Բարձրագույն դատական խորհուրդը բավարարել է ՀՀ արդարադատության նախարարի՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զոյա Զաքինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը և վերջինիս հայտարարվել է խիստ նկատողություն (2021 թվականի հունվարի 25-ի ԲԴԽ-81-Ո-Կ-18 որոշում):

2. Ինչ վերաբերում է դատավորի լիազորությունները դադարեցնելու դեպքին, ապա այդ մասով հարկ է նշել հետևյալը.

Դատավորի կատարած խախտման և կարգապահական վարույթ հարուցելու հաղորդման հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ դատական նիստերի ընթացքում դատավորն իր խոսքով, արված հայտարարություններով և ցուցաբերած վարքագծով դրսևորել է անհարգալից վերաբերմունք օրենքի, դատավարության մասնակիցների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվել է ի պաշտոնե, վարկաբեկել է դատական իշխանությունը, նվազեցրել է հանրության վստահությունը դատական իշխանության անկախության և անաչառության նկատմամբ, վտանգել և կասկածի տակ է առել դատարանի անկախությունն ու անաչառությունը, չի եղել անաչառ, դրսևորել է խտրականություն և կողմնակալություն, ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն է ստեղծել, զերծ չի մնացել այլ դատարանի գործողությունները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, չի եղել ինքնուրույն դատական ակտը կայացնելիս:

Հաշվի առնելով վերոգրյալը և քննարկելով դատավորի կողմից թույլ տրված արտահայտություններն ու վարքագիծը՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրել է, որ Միջնորդության հիմքում վկայակոչված բոլոր փաստական հանգամանքներն ապացուցում են, որ դատավորի կողմից թույլ են տրվել արտահայտություններ և դրսևորվել է վարքագիծ, որոնք անհամատեղելի են դատավորի կարգավիճակի հետ: Իր արտահայտություններով դատավորն ուղղակիորեն արհամարհել է դատավարության բոլոր մասնակիցներին,

անհարգալից է եղել աշխատակազմի նկատմամբ, դուրս է եկել քաղաքավարության նորմերի շրջանակից, խախտել է բարեկրթության կանոնները, ժարգոնային բառապաշարի օգտագործմամբ ցածրացրել է դատավորի բարձր պաշտոնը:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրել է նաև, որ բարեկրթության ու մասնագիտական բարձր հատկանիշների հետ որևէ աղերս չունեցող այդպիսի վարքագիծն այն ուղղակի օրինակն է, երբ դատավորն իր գործունեությունն իրականացնելիս խախտել է դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու օրենսդրական իր պարտականությունը:

Բարձրագույն դատական խորհուրդը նշել է, որ դատավորը խախտել է նաև իր պարտականությունը՝ զերծ մնալ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունն ու անաչառությունը:

Ինչ վերաբերում է արարքը դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարված լինելու հարցին, ապա այս առնչությամբ Բարձրագույն դատական խորհուրդը կարևորել է այն հանգամանքը, որ 2020 թվականի հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած դատական նիստի ձայնային արձանագրության ուսումնասիրությամբ հաստատվել է, որ դատական նիստի ընթացքում դատավորը հայտարարել է, որ նիստի ձայնային արձանագրության հիման վրա իրեն կարող են աշխատանքից հեռացնել, սակայն այդ հանգամանքը դատավորին ընդհանրապես չի անհանգստացրել, ինչպես նաև դատական նիստերի քարտուղարին նիստի ընթացքում դատավորի կողմից կատարվելիք հետագա քայլերի մասին հարցնելիս հանձնարարել է վստահ խոսել և անտեսել դատական նիստի արձանագրվելու հանգամանքը:

Բարձրագույն դատական խորհուրդը եկել է այն եզրահանգման, որ դատավորի կողմից թույլ տրված վարքագծի կանոնների խախտումներն էական կարգապահական խախտումներ են, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ:

Գործի քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացրել ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ բավարարել, և վերջինիս լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել են (2021 թվականի հոկտեմբերի 11-ի ԲԴԽ-29-Ո-Կ-09 որոշում):

ՀՀ գլխավոր դատախազության կողմից ՀՀ արդարադատության նախարարին ուղարկված նշյալ հաղորդումների հետագա ընթացքի,

արդյունքների վերաբերյալ մշտադիտարկումը ցույց է տվել, որ դրանց մեծամասնության դեպքում կարգապահական վարույթներ չեն հարուցվում:

Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել հատկապես այն դեպքերի վրա, երբ հաղորդումներում ներկայացվում են թե՛ քանակապես, թե՛ որակապես բավականաչափ հիմնավորումներ առ այն, որ կոնկրետ դեպքում դատավորը կատարել է այնպիսի խախտում, որի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության, մինչդեռ, ոչ միայն կարգապահական վարույթ չի հարուցվում, այլև հաճախ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված գրությունների բովանդակությունը նույնական են, կրկնվող, ինչը հաղորդումներում ներկայացված փաստերի ու փաստարկների ոչ բավարար ուսումնասիրության, կարգապահական խախտման բնույթի և խախտման արդյունքում հնարավոր, իսկ բազմաթիվ դեպքերում՝ առաջացած բացասական հետևանքների, ինչպես նաև դրանց միջև պատճառահետևանքային կապերի ոչ ամբողջական պարզման ու գնահատման մասին կարող է վկայել:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի հարուցումն ինքնին չի ենթադրում դատավորի կողմից խախտման առկայության մասին ՀՀ արդարադատության նախարարության վերջնական եզրահանգում և ուղղակիորեն չի հանգեցնում դատավորի կարգապահական պատասխանատվության: Այլ կերպ ասած, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի քննարկման տեսանկյունից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ առկայությունն ինքնին պետք է բավարար դիտվի կարգապահական վարույթ հարուցելու համար, որի շրջանակներում, իրացնելով նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված առավել լայն հնարավորությունները, կկայացվի վերջնական որոշում՝ կարգապահական վարույթը կարճելու կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված՝ տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին կասկածի տակ դնելու կամ խախտմամբ դատական իշխանությունը հեղինակազրկված համարելու համար անհրաժեշտ պայման է խախտման արդյունքում առաջացող բացասական հետևանքը, ապա այդպիսի դեպքերում ևս ՀՀ արդադարատության նախարարությունը մեծամասամբ մերժել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը:

Այսպես, ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացված՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու բազմաթիվ հաղորդումների (այդ թվում՝ կալանավորման վերաբերյալ հարցերով) հիմքում ընկած զեկուցագրերում առկա փաստական տվյալներն ակնառու կերպով վկայում են դատավորների կողմից կատարված այնպիսի խախտումների մասին, որոնք վերջիններիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու բավարար հիմքեր են պարունակել, այդ թվում՝ պատճառահետևանքային առումով հստակ է եղել դատավորի ոչ իրավաչափ որոշման և առաջացած բացասական հետևանքի միջև առկա կապը:

ՀՀ դատախազության մոտեցումն այն է, որ, հատկապես, բոլոր այն դեպքերում, երբ դատավորի ընդունած ոչ իրավաչափ ակտն առաջացնում է կոնկրետ բացասական փաստական հետևանքներ և այդ հետևանքների առաջացման ողջամիտ հնարավորության մասին նախապես հստակ փաստական տվյալներ են ներկայացված եղել դատարանին, ապա դատավորը, մեղքի առկայության դեպքում, ենթակա է կարգապահական պատասխանատվության, քանի որ նման դեպքերում ակնհայտ է, որ դատավորը դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարել է այնպիսի խախտում, որն իր էությամբ հանգեցրել է դատական իշխանության հեղինակազրկման և (կամ) կասկածի տակ է դրել դատավորի համապատասխանությունն իր կարգավիճակին:

ՀՀ դատախազությունը շարունակելու է իր որդեգրած իրավաչափ քաղաքականությունը և օրենսդրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում հետևողականորեն դիմելու է իրավասու մարմիններին, որպեսզի խախտում թույլ տված դատավորների նկատմամբ հարուցվի կարգապահական վարույթ, իսկ վերջնարդյունքում՝ տվյալ դատավորը ենթարկվի կարգապահական պատասխանատվության: Ընդ որում, ՀՀ դատախազության նման հետևողականության հիմքում ընկած է ոչ միայն համապատասխան խախտում թույլ տված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավաչափ անհրաժեշտությունը, այլև նման դեպքերը կանխելու և առավել իրավաչափ ու կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու տրամաբանությունը:

Հետևաբար, անկախ վերոնշյալ խնդիրների առկայությունից՝ **ՀՀ դատախազությունը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերի առկայության յուրաքանչյուր դեպքում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին հաղորդումներ ներկայացնելու առումով դրսևորելու է հետևողականություն՝ ակնկալելով արդար և անաչառ դատարան ունենալու տեսլականով առաջնորդվելուն և արդյունքում իրավունքի գերակայությունն ապրող իրողություն դարձնելուն ուղղված առարկայական քայլերի ձեռնարկում՝ ինչպես դատավորի նկատմամբ**

կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններից, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդից:

4. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ

2021թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ–ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 6195 դեպք, նախորդ տարվա 5601-ի դիմաց: Աճ է արձանագրվել 594 դեպքով կամ 10.6%-ով: Արձանագրված դեպքերից 4060-ը կամ 65,4%-ը եղել են պատահարներ-զանցանքներ, 2072-ը կամ 33,4%-ը՝ հանցագործություններ, այդ թվում՝ 1478-ը կամ 71%-ը՝ զինվորական, 594-ը կամ 28,7%-ը՝ այլ ընդհանուր բնույթի: 63 դեպքի կամ դեպքերի 1%-ի հանգամանքներն ամփոփումների պահին դեռևս պարզված չեն եղել:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 1503 դեպքով կամ 58.7%-ով, հանցագործությունները նվազել են 944-ով կամ 31.2%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 951-ով կամ 39.1%-ով, իսկ այլ՝ ընդհանուր բնույթի հանցագործություններն աճել են՝ 7-ով կամ 1.2%-ով:

Եթե 2020թ. ընթացքում արձանագրված 3016 հանցագործությունից 1659-ը կամ 55% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 1019-ը՝ ծանր, իսկ 640-ը՝ առանձնապես ծանր, ապա 2021թ. արձանագրված 2072 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 678-ը կամ 32,7%-ը, որոնցից 261-ը՝ ծանր, 417-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն, նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործությունները նվազել են 758 դեպքով կամ 74,39%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 223 դեպքով կամ 34.8%-ով:

ՀՀ ԶՈՒ-ում արձանագրված առանձնապես ծանր հանցագործության 417 դեպքից 10-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 1-ը՝ սպայի կողմից կատարված սպանության, 3-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության, 40-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 11-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, 10-ը՝ ռազմական դրության ժամանակ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, 280-ը՝ ռազմական դրության ժամանակ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 34-ը՝ ռազմական դրության ժամանակ դասալքության, 16-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի կողմից իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության, իշխանության անգործության, 11-ը՝ պետության տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունների, 1-ը՝ զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումների դեպքեր են: Թեև նախորդ տարվա համեմատ գրանցվել է էական նվազում, այնուամենայնիվ, 2021 թվականին, ՀՀ սահմաններին հետպատերազմական լարված իրավիճակով և ռազմական դրությամբ պայմանավորված, եղել է դեպքերի մեծ քանակ:

Անդրադառնալով ՀՀ ԶՈՒ-ում արձանագրված զինծառայողների մահվան դեպքերին՝ հարկ է փաստել, որ հաշվետու ժամանակաշրջանում ծառայության հետ կապված մահացել է 42 զինծառայող՝ նախորդ տարվա 46-ի դիմաց: Թեև նվազում է արձանագրվել 4-ով կամ 8,7 %-ով, ինչը, թեև, որպես վիճակագրական տվյալ, թեկուզ փոքր, բայց դրական միտում է արձանագրում, սակայն մահվան դեպքերի առկայությունը մտահոգիչ է, և, ինչպես այդ

դեպքերով հարուցված քրեական գործերը, այնպես էլ դրանք ծնող պատճառները, կանխարգելման եղանակները մշտապես գտնվում են զինվորական դատախազության դատախազների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը: Գործողությունների ծրագրի 4-րդ կետով նախատեսվում էր սահմանել զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ:

Ի կատարումն նշյալ կետի պահանջի՝ ՀՀ գլխավոր դատախազությունում կատարվել է լայնածավալ ուսումնասիրություն և արդյունքում ՀՀ գլխավոր դատախազը 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արդյունավետ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» N 38 հրամանը:

Կարևոր է ընդգծել, որ նշյալ հրամանը հիմնված է կյանքի իրավունքին առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դեմ բերված գանգատներով), ինչպես նաև հնարավոր ոչ իրավաչափ մահվան դեպքերի քննության վերաբերյալ Մինեսոտայի 2016 թվականի արձանագրության (The Minessota Protocol on the Investigation of Potentially Unlawful Deaths), կասկած հարուցող մահվան հանգամանքների կապակցությամբ պաշտոնապես արդյունավետ քննություն իրականացնելու՝ պետության պոզիտիվ պարտականությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վրա:

Նշյալ հրամանով սահմանվել են զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության մի շարք չափանիշներ: Մասնավորապես, ի թիվս այլնի, սահմանվել են.

1) Զինծառայողների մահվան դեպքերով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում ապահովել քրեադատավարական անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը՝ մահվան պատճառի վերաբերյալ հնարավոր բոլոր վարկածներն առաջ քաշելու, արագ և զուգահեռ ստուգելու ուղղությամբ:

2) Քննությունը սկսելուց անմիջապես հետո ձեռնարկել միջոցներ դեպքին ականատես կամ դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկաների շփումը միմյանց հետ բացառելու կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ և այդ ընթացքում հնարավորինս արագ կազմակերպել վկաների հարցաքննությունը՝ նրանց առաջադրելով առաջ քաշված բոլոր վարկածների ստուգմանն ուղղված հարցեր:

3) Առարկայական քննություն կատարել մահացած զինծառայողների՝ փորձաքննությամբ հայտնաբերված բոլոր վնասվածքների՝ անկախ մահվան հետ ունեցած պատճառական կապից, առաջացման վաղեմությունն ու հանգամանքները

պարզելու ուղղությամբ, մանրամասնորեն ստուգել այդ կապակցությամբ ստացված բոլոր, այդ թվում՝ տուժողի իրավահաջորդի կողմից ներկայացված տեղեկությունները:

4) Դեպքի վայրի զննությունը կատարել դատական բժշկի, իսկ անհնարինության դեպքում՝ բժիշկ-մասնագետի մասնակցությամբ, կախված հետազոտման ենթակա իրադրության ու օբյեկտների բնույթից՝ դրան մասնակից դարձնել նաև այլ մասնագետների՝ գործի համար նշանակություն ունեցող բոլոր հետքերն ու օբյեկտները պատշաճ կարգով արձանագրելու և վերցնելու համար:

5) Այն դեպքերում, երբ մինչդատական վարույթում քրեական գործերի քննության ընթացքում ստացվի տվյալ գործին առնչվող, վատ վերաբերմունքի կամ խոշտանգման փաստով քննվող քրեական գործով կայացված վերջնական որոշումը կամ դատավճիռը, որով կհաստատվի այս կամ այն ապացույցի՝ այդպիսի վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը, ապահովել, որպեսզի ապացույցն անթույլատրելի համարելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշումը հստակ կերպով արձանագրվի համապատասխան դատավարական փաստաթղթերում, իսկ դատարանում գործերի քննության ժամանակ արտահայտել նույնպիսի դիրքորոշում:

6) Միջոցներ ձեռնարկել հնարավորինս սեղմ ժամկետում անձին տուժողի իրավահաջորդ ճանաչելու և այդ կարգավիճակով նրան գործով վարույթին մասնակից դարձնելու համապատասխան դատավարական որոշում կայացնելու ուղղությամբ: Հնարավորինս բացառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասում առկա «քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս» ձևակերպման խիստ ֆորմալ մեկնաբանումը:

7) Տուժողի իրավահաջորդների կողմից ցանկություն արտահայտելու յուրաքանչյուր դեպքում, հնարավորության սահմաններում, կազմակերպել տուժողի իրավահաջորդների ընդունելություն հսկող դատախազի մոտ, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ՝ հնարավորինս սպառիչ պարզաբանումներ տրամադրել վերջիններիս մտահոգող հարցերի վերաբերյալ:

8) Ցուցաբերել հետևողականություն, որպեսզի նախաքննության ժամկետները երկարացնելու միջնորդություններում հստակ ներկայացվեն բոլոր այն գործողությունները, որոնք նախատեսվում են կատարել տվյալ ժամանակահատվածում: Քննիչի կողմից պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու և նշված գործողությունները չկատարելու դեպքում քննարկել վերջինիս վարույթից հեռացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

9) Պարտադիր քննության առարկա դարձնել հրամանատարական կազմի կողմից իրենց պաշտոնեական լիազորությունները պատշաճ կատարելու հարցը:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափանիշներին, ապա նշյալ հրամանով սահմանվել է 12 չափանիշ, մասնավորապես.

1) Ազատությունից զրկման վայրերում արձանագրված մահվան յուրաքանչյուր դեպքի հանգամանքները քննության առարկա դարձնել հարուցված քրեական գործի շրջանակներում:

2) Քննությունը սկսելուց անմիջապես հետո ձեռնարկել միջոցներ դեպքին ականատես կամ դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկաների շփումը միմյանց հետ բացառելու կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ և այդ ընթացքում հնարավորինս արագ կազմակերպել վկաների հարցաքննությունը՝ նրանց առաջադրելով առաջ քաշված բոլոր վարկածների ստուգմանն ուղղված հարցեր: Այդ նպատակով՝ ազատությունից զրկման վայրի վարչակազմի ղեկավարին առաջարկել քննարկել նման անձանց տարբեր խցերում տեղաբաշխելու հարցը:

3) Բռնի մահվան յուրաքանչյուր դեպքով պարտադիր քննության առարկա դարձնել դեպքին քրեական ենթամշակույթ կրող անձանց հնարավոր ներգրավվածության հարցը, այդ նպատակով իրականացնել բազմակողմանի քննություն:

4) Ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց մահվան յուրաքանչյուր դեպքում անհապաղ՝ առանց ավելորդ ձգձգումների, տեղյակ պահել վերջինիս հարազատներին, հնարավորինս սեղմ ժամկետում որոշում կայացնել տուժողի իրավահաջորդ ճանաչելու և այդ կարգավիճակով գործով վարույթին մասնակից դարձնելու վերաբերյալ: Հնարավորինս բացառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասում առկա «քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս» ձևակերպման խիստ ֆորմալ մեկնաբանումը:

5) Բռնի մահվան յուրաքանչյուր դեպքով՝ դեպքի վայրի զննությունը կատարել դատական բժշկի, իսկ անհնարինության դեպքում՝ բժիշկ-մասնագետի մասնակցությամբ, կախված հետազոտման ենթակա իրադրության ու օբյեկտների բնույթից՝ դրան մասնակից դարձնել նաև այլ մասնագետների՝ գործի համար նշանակություն ունեցող բոլոր հետքերն ու օբյեկտները պատշաճ կարգով արձանագրելու և վերցնելու համար: Ապահովել դեպքի վայրի զննության արձանագրությանը կից՝ գունավոր լուսանկարչական հավելվածի առկայությունը:

6) Ազատությունից զրկված անձի սպանության կամ ինքնասպանության յուրաքանչյուր դեպքով՝ պարտադիր մանրամասն քննության առարկա դարձնել ազատությունից զրկման վայրի վարչակազմի գործողությունները՝ մահացածի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայությունը պարզելու և այն կանխելու նպատակով վերջինիս գործողությունների շրջանակը պարզելու ուղղությամբ:

7) Տուժողի իրավահաջորդների կողմից ցանկություն արտահայտելու յուրաքանչյուր դեպքում, հնարավորության սահմաններում, կազմակերպել տուժողի իրավահաջորդների ընդունելություն հսկող դատախազի մոտ, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ՝ հնարավորինս սպառիչ պարզաբանումներ տրամադրել վերջիններիս մտահոգող հարցերի վերաբերյալ:

8) Ցուցաբերել հետևողականություն, որպեսզի նախաքննության ժամկետները երկարացնելու միջնորդություններում հստակ ներկայացվեն բոլոր այն գործողությունները, որոնք նախատեսվում են կատարել տվյալ ժամանակահատվածում, քննիչի կողմից պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու և նշված գործողությունները չկատարելու դեպքում քննարկել վերջինիս վարույթից հեռացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ընդ որում, գիտակցելով զինված ուժերում և ազատությունից զրկման վայրերում գործերի վերաբերյալ հանրությանը որոշակի տեղեկություն տրամադրելու կարևորությունը, նշյալ հրամանով սահմանվել է, որ անհրաժեշտ է, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ, ապահովել գրանցված և հանրային մեծ հնչեղություն ունեցող մահվան դեպքերով իրականացվող քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հրապարակումը ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջում:

Նախորդ տարվա համեմատ որոշակի աճ է արձանագրվել մարմնական վնասվածքներ ստացած զինծառայողների թվաքանակում:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 1088 զինծառայող՝ նախորդ տարվա 1024-ի դիմաց, այսինքն՝ աճ է արձանագրվել 64-ով կամ 6,25%-ով: Այդ թվում՝ 47 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածքներ /2020թ՝ 46/, 799-ը՝ միջին ծանրության և թեթև մարմնական վնասվածքներ /2020թ.՝ 908/, 60-ի՝ մարմնական վնասվածքների ծանրության աստիճանը ամփոփումների պահին դեռևս պարզված չի եղել /2020թ՝. 74/:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված 1088 մարմնական վնասվածքներից 292-ը կամ 26,8%-ը պատճառվել են հանցագործությունների հետևանքով /2020թ.՝ 294-ը կամ 28,7%-ը/:

Հանցավորության վիճակի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ է կատարել նաև 2019 և 2021 թվականների՝ առավել բնութագրական ցուցանիշների համեմատական վերլուծություն, նկատի ունենալով, որ 2020 թվականի պատկերն էականորեն պայմանավորված է եղել պատերազմական գործողությունների ազդեցությամբ:

Այսպես՝ 2019թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ–ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3495 դեպք՝ 2021թ. 6195-ի համեմատ: Արձանագրված դեպքերից 2548-ը կամ 72,8%-ը եղել են պատահարներ /2021թ՝ 4060-ը կամ 65,5%-ը/, 929-ը կամ 26,4%-ը՝ հանցագործություններ /2021թ.՝ 2072-ը կամ 33,4%-ը/, այդ թվում՝ 556-ը կամ 59,8%-ը՝ զինվորական /2021թ՝ 1478-ը կամ 71%-ը/, 373-ը կամ 40,2%-ը՝ այլ ընդհանուր բնույթի /2021թ.՝ 594-ը կամ 28,7%-ը/, իսկ 28 դեպքի կամ դեպքերի 0,8%-ի հանգամանքները 2019թ. ամփոփումների պահին դեռևս պարզված չեն եղել /2021թ.՝ 63 կամ 1%-ը/:

Եթե 2019թ. ընթացքում արձանագրված 929 հանցագործությունից 141-ը, կամ 15,2%-ն են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 110-ը՝ ծանր, իսկ 31-ը՝ առանձնապես ծանր, ապա 2021թ. արձանագրված 2072 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր

հանցագործություններ են եղել 678-ը կամ 32,7%-ը, որոնցից 261-ը՝ ծանր, 417-ը՝ առանձնապես ծանր: 2021 թվականին 2019թ. համեմատ հանցագործություններն աճել են 1143-ով կամ 100 %-ով, ընդ որում՝ ծանր հանցագործությունները աճել են 151 դեպքով կամ 100 %-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 386 դեպքով կամ 100%-ով: Տեղի ունեցած աճը, ինչպես նշվեց, պայմանավորված է հետպատերազմական իրադրությամբ, սահմանին ստեղծված իրավիճակով, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների թվի աճը՝ տարեսկզբին պահպանված ռազմական դրության ռեժիմով:

Պետք է նշել, որ ՀՀ ԶՈՒ-ում և այլ զորքերում հանցավորության վիճակը մշտապես գտնվել է ինչպես ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության, այնպես էլ կայազորների զինվորական դատախազությունների ուշադրության կենտրոնում: Պարբերաբար կատարվել են քննարկումներ, վերլուծություններ, պարզվել հանցագործությունների կատարման պատճառներն ու պայմանները, վերհանվել աճի միտում արձանագրած հանցատեսակների աճի պատճառները և նախանշվել անհրաժեշտ միջոցառումներ՝ դրանք վերացնելու ուղղությամբ:

Այսպես, տարեկան արդյունքներով վերլուծվել է նաև հանցավորության վիճակը ինչպես ըստ առանձին հանցատեսակների, այնպես էլ ըստ զինծառայողների կարգավիճակի ու խմբերի (սպա, ենթասպա, պայմանագրային, պարտադիր ժամկետային):

Պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում հանցագործություն է կատարել 1504 զինծառայող: Դրանցից՝ 274՝ սպա /2020թ.՝ 338/, 51՝ ենթասպա /2020թ.՝ 29/, 205՝ պայմանագրային /2020թ.՝ 734/, 974՝ ժամկետային զինծառայող /2020թ.՝ 864/: Բացի այդ, հանցագործություններ են կատարվել նաև քաղաքացիական անձանց կողմից՝ 174 /2020թ.՝ 96/, դեռևս չպարզված անձանց կողմից՝ 383 /2020թ.՝ 54/, ինչպես նաև՝ 21 զորահավաքային զորակոչով զորակոչված անձանց և 19 կամավորականի կողմից:

Հարկ է փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում հանցավորության մակարդակը սպաների շրջանում էական նվազում չի գրանցել: Եթե 2020թ. ընթացքում արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործությունների 277 դեպք, ապա 2021թ. դրանց թիվը կազմել է 274, այսինքն՝ նվազել է 3-ով կամ 1 %-ով: Արձանագրված ցուցանիշի չնչին նվազումը մտահոգիչ է, եթե հաշվի առնենք, որ սպայական անձնակազմը իր օրինակելի վարքագծով պարտավոր էր ազդել ստորադաս զինծառայողների բարոյահոգեբանական վարքագծի վրա և օրինակ հանդիսանար նրանց համար: Եվ որքան էլ, որ սպաների կողմից կատարված հանցագործությունները մշտապես գտնվել են իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, նրանց հետ բազմիցս, առանձնակի տարվել են բացատրական աշխատանքներ, ցավոք՝ արդյունքը գոհացուցիչ չէ:

Բացի այդ, պահանջվել է յուրաքանչյուր գործով մանրակրկիտ ստուգման ենթարկել մեղադրյալ սպաների կողմից բերվող պատճառաբանությունները՝ հանցավոր արարքների պատճառների վերաբերյալ, հասնել հանցագործությունների կատարման խորքային

պատճառների վերհանմանը և դատախազական հակազդման միջոցներով հասնել դրանց կանխարգելմանը և չեզոքացմանը:

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները, ըստ առանձին հանցատեսակների, վկայում են այն մասին, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված /ՀՀ քրեական օրենսգրքի 356-360-րդ հոդվածներ/, ինչպես նաև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված /ՀՀ քրեական օրենսգրքի 361-364-րդ հոդվածներ/ հանցագործությունները:

Այսպես՝ եթե 2020թ. ընթացքում արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 356-360-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 306 դեպք, ՀՀ քրեական օրենսգրքի 361-364-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 1918 դեպք, ապա 2021թ. դրանց թիվը համապատասխանաբար կազմել է 270 և 965, այսինքն, թեև երկու դեպքում էլ նվազում է տեղի ունեցել, մասնավորապես, առաջինի դեպքում 36-ով կամ 11,7%-ով, իսկ երկրորդի դեպքում՝ 953-ով կամ 49.6%-ով, սակայն, միևնույն է, նշված բնույթի հանցագործությունների թիվը եղել և մնում է անհանգստացնող:

Դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնությամբ զուգորդված հանցագործությունների պատճառների ու պայմանների թվում շարունակում է էական տեղ զբաղեցնել զինծառայողների վարքագիծն ու փոխհարաբերությունները կանոնակարգող նորմերի նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը, որն անձանց մոտ ձևավորված լինելով դեռևս նախքան զորակոչվելը, զորակոչվելուց հետո նման վարքագծի նկատմամբ անհանդուրժողական մոտեցում չցուցաբերելու պայմաններում շարունակում է ամրապնդվել ու զարգանալ: Ցավալի է, որ թեև քիչ, այնուամենայնիվ, այդպիսի վարքագծի դրսևորումներ կան նաև սպաների շրջանում, որն առավել մտահոգիչ է, ուստի այդ պատճառները վերացնելու ուղղությամբ գործադրված ջանքերն անհրաժեշտ է ավելացնել՝ պատասխանատու բոլոր մարմինների և հաստատությունների ակտիվ ներգրավմամբ ու համագործակցության ապահովմամբ:

Այս առումով հանձնարարվել է ապահովել, որ ցանկացած նման դեպք, դրան նպաստող պայմանների ու պատճառների վերհանման տեսանկյունից, դառնա մանրակրկիտ ուսումնասիրության առարկա, արդյունքներից ելնելով՝ միջնորդագրեր ներկայացվեն իրավասու մարմնին:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 361-364-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններին, պետք է փաստել, որ դրանց՝ 2020 թվականին գրանցված բարձր ցուցանիշի պատճառ են հանդիսացել պատերազմական գործողությունները, որոնց ավարտից հետո նշված հանցատեսակների զգալի նվազում է արձանագրվել:

Ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստելու, որ առանձին հանցատեսակների աճն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է պատերազմական գործողությունների հետևանքների ու հետպատերազմական իրավիճակի հետ: Դրանց թվում, մասնավորապես, պետք է նշել հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված

հանցագործությունների աճը, որը պայմանավորված է նոր զբաղեցվող մարտական դիրքերում հերթապահություն կրող զինծառայողների կողմից ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների գործողությունների կապակցությամբ իրավիճակից բխող միջոցներ չձեռնարկելու դեպքերի ավելացմամբ: Զինվորական պաշտոնեական հանցագործությունների թվի աճը պայմանավորված է վերադաս զինծառայողների կողմից ստորադաս զինծառայողների կատարած հանցագործության հատկանիշներ պարունակող արարքների, այդ թվում՝ զորամասն ինքնակամ լքելու դեպքերի մասին իրավապահ մարմիններին չհաղորդելու դեպքերի ավելացմամբ, իսկ դրանց հիմնական պատճառ է հանդիսացել հետպատերազմական իրավիճակը, դրա հետևանքով առաջացած զինվորական կարգապահության որոշակի անկումը, ինչպես նաև զինված ուժերի նոր ստորաբաժանումների ձևավորումն ու զինծառայողների վերաբաշխումը:

Հետպատերազմական իրավիճակով և դրանով առաջացած բարդություններով է պայմանավորված նաև պատահարների թվի ավելացումը, որի հիմնական պատճառը կապված է զինված ուժերի տեղաշարժի ավելացման, տեղակայման նոր վայրերի ձևավորման, այդ թվում՝ մարտական դիրքերի կառուցման ու զբաղեցման հետ:

2020թ. պատերազմից հետո Արցախում իրավակարգի ապահովման, արցախցիների հումանիտար, առաջնային իրավունքների պաշտպանության, հակառակորդի կողմից հրադադարի պարբերաբար խախտման հետևանքով շփման գծին հարակից շրջանների հայ ազգաբնակչության կյանքի, բնական կենսագործունեության համար առաջացած ռիսկերի չեզոքացման, այս նպատակով ռուսական խաղաղապահ ուժերի հետ համագործակցության իրավական ասպեկտներին վերաբերող հարցերը քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի՝ 2021թ. փետրվարին և նոյեմբերին Արցախի Հանրապետություն կատարած աշխատանքային այցերի ընթացքում: Անդրադարձ է կատարվել նոր մարտահրավերների համատեքստում ՀՀ և ԱՀ դատախազությունների, իրավապահ մարմինների միջև գործակցության հիմնական առաջնահերթություններին, ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած, Ադրբեջանում ապօրինի պահվող հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց հայրենիք վերադարձնելու ուղղությամբ ՌԴ դատախազության միջնորդությամբ տարվող աշխատանքներին:

Ընդհանուր գծերով վերլուծվել են հետպատերազմյան շրջանում զինված ուժերի ստորաբաժանումներում հանցավորության միտումներին, հանցագործությունների կանխման, զինծառայողների առաջնային իրավունքների պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքները, կայազորների դատախազությունների ընթացիկ գործունեությունը, դատախազական գործառույթների իրականացման որակը և նախկինում առաջադրված խնդիրների լուծման ընթացքն ու արդյունքները: Քննարկվել է հետպատերազմյան շրջանում հրադադարի ռեժիմի խախտման դեպքերով որակյալ քննությունների, դրանց նկատմամբ դատախազական հսկողության ապահովումը:

Նշված այցերի արդյունքներով, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, ՀՀ զինվորական դատախազության կողմից 2021 թվականի ընթացքում կատարվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամիավորումների պահպանության տեղամասերում կազմավորված

մարտական դիրքերի կահավորման վիճակի ու զինծառայողների սոցիալ-կենցաղային պայմանների ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա արձանագրվել են մի շարք թերություններ:

Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ՀՀ զինվորական դատախազի կողմից 13.05.2021թ. և 01.06.2021թ. գրություններ են ուղարկվել ՀՀ պաշտպանության նախարարին (պաշտոնակատարին)՝ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանգամանքը պարզելու և խախտումներ թույլ տված անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու նպատակով ծառայողական քննություն անցկացնելու, արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Ի պատասխան նշված գրությունների՝ ստացվել են ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատարի 22.06.2021թ. և 13.07.2021թ. գրությունները, որոնցով տրամադրվել է տեղեկություն առկա վիճակի, ձեռնարկված միջոցների ու կատարվող աշխատանքների վերաբերյալ: Տրված պարզաբանումներում նշվել է, որ լուծման ենթակա հարցերի և պահանջվող աշխատանքների ծավալը մեծ է, և զինված ուժերի ղեկավարության կողմից տարվում է ամենօրյա աշխատանք մարտական դիրքերում ծառայության պայմանները բարելավելու ուղղությամբ: Միաժամանակ հայտնվել է, որ ծառայության որակի բարձրացմանն ու զինծառայողների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված, այդ թվում՝ գետնատնակների կառուցման և կացարաններով ապահովման, դիրքերի լրակահավորման, գույքի ձեռքբերման և տեղադրման, աշխատանքներն ընթացքի մեջ են:

10.03.2022թ. ՀՀ զինվորական դատախազի կողմից կրկին գրություն է հասցեագրվել ՀՀ պաշտպանության նախարարին՝ ուսումնասիրված մարտական դիրքերի առկա վիճակի և բարձրացված խնդիրների լուծման կապակցությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու կապակցությամբ:

ՀՀ զինվորական դատախազության կողմից կատարվել են ծավալուն ուսումնասիրություններ նաև զորահավաքային զորակոչի և կցագրման աշխատանքների կազմակերպման գործընթացի բնագավառում, որի արդյունքներով պարզվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից թույլ են տրվել բազմաթիվ խախտումներ: Արդյունքում, ծառայողական պարտականությունները չկատարելու, իշխանության անգործություն, ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու և դրա արդյունքում ծանր հետևանքներ առաջացնելու դեպքի առթիվ 23.04.2021թ. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 376-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 315-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցագործությունների հատկանիշներով հարուցված և ՀՀ ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում քննվող քրեական գործով քննության առարկա են՝

1. 2017-2020թթ. պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների՝ վարժական հավաքների, զինվորական վարժանքների (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) կամ զորավարժությունների (զորախաղեր), պատերազմական ժամանակի հաստիքներին կցագրված քաղաքացիներին, պայմանագրային հիմունքներով, հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավման ընթացքում առաջացած թերություններն ու բացթողումները, համապատասխան պաշտոնատար անձանց կողմից առերևույթ թույլ տված հանցավոր դրսևորումները:

2. ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակ ՀՀ-ում հայտարարված ընդհանուր զորահավաքի անցկացման արդյունքում առաջացած թերություններն ու բացթողումները, համապատասխան պաշտոնատար անձանց կողմից առերևույթ թույլ տված հանցավոր դրսևորումները:

Քրեական գործի շրջանակներում հարցաքննվել է ավելի քան 80 անձ, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից տրվել է 16 ցուցում՝ տարանջատված ըստ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային ծառայության տարածքային ստորաբաժանումներում արձանագրված խնդիրների:

Այս առումով հարկ է նշել, որ առաջիկայում ՀՀ ՊՆ-ի հետ նախաձեռնվելու է խորհրդակցությունների շարք՝ ինչպես քրեական վարույթների շրջանակներում կայազորների դատախազությունների դատախազների կողմից կատարված ուսումնասիրություններով վեր հանված՝ առաջնագծում զինծառայողների ծառայության և կեցության պայմանների, կահավորման, անհրաժեշտ ինժեներատեխնիկական աշխատանքների բավարարության, այնպես էլ քրեական գործերով ի հայտ բերված՝ զորահավաքային զորակոչի ոլորտում առկա համակարգային խնդիրների շուրջ:

Հանցավորության դեմ պայքարի և օրինականության ապահովման շրջանակներում առանձնակի կարևորվել են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների և զորամասերի միջին ու բարձր հրամանատարական կազմի հետևողականության դրսևորումները:

Սպանության, ինքնասպանության, սպանության փորձի, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ստորադասի նկատմամբ բռնի գործողության կամ դրա սպառնալիքի ցանկացած դեպքով քննության առարկա է դարձել նաև համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք կանխելու հնարավորության և, առհասարակ, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հանգամանքը:

Նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պահանջով հնարավորինս վերհանվել են նշված բնույթի հանցագործություններ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը

նպաստող պայմանները, ձեռնարկվել և ձեռնարկվում են դատախազական ներգործության միջոցներ (գրվում են միջնորդագրեր, հաղորդումներ, դատախազները մասնակցում են դրանց քննարկումներին, անում են գործնական առաջարկություններ դրանց կանխարգելման ուղղությամբ և այլն):

Բացի այդ, որպես հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, զինվորական դատախազության դատախազների կողմից հաճախակի՝ զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների շրջանում, անցկացվում են զրույց-զեկուցումներ, դասախոսություններ, տրվում են պարզաբանումներ, կատարվում են օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրահանգների մեկնաբանություններ և վերլուծություններ:

Կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տվել, որ 2021 թվականի ընթացքում էական դժվարություններ է ստեղծել պատերազմական գործողությունների ու հետպատերազմական իրավիճակի հետևանքով քրեադատավարական վարույթների էական աճը, որի պայմաններում, հաշվի առնելով նաև ռազմական դրություն հայտարարված լինելու և զինված ուժերի ստորաբաժանումների տարբեր խնդիրների կատարմանը ներգրավված լինելու հանգամանքը, մի շարք դեպքերում հնարավոր չի եղել ապահովել գործերի ընթացքի լուծումը սեղմ ժամկետներում:

Անդրադառնալով 2021թ. ընթացքում արձանագրված հանցագործությունների վիճակագրական վերլուծությանն ըստ ՀՀ ԶՈւ և այլ զորքերի, պարզվել է, որ 2072 հանցագործություններից 2060-ն արձանագրվել է ՀՀ ԶՈւ, իսկ 12-ը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ, ՈԶ զորամասերում /2020թ.՝ 3016-ից՝ 3003-ը ՀՀ ԶՈւ, իսկ 13-ը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ, ՈԶ /:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2021թ. ընթացքում արձանագրված 2072 հանցագործությունից 64-ով կամ 3%-ով հնարավոր չի եղել պարզել քրեական պատասխանատվության ենթակա անձանց ով լինելը: Այլ կերպ ասած՝ հանցագործությունների բացահայտումը կազմել է 96,9% /2020թ.՝ 99,3%/: Այս հանգամանքը ևս ՀՀ զինվորական դատախազության մտահոգության կենտրոնում է և ձեռնարկվում են դատախազական ներգործության բոլոր միջոցները, որպեսզի բացահայտվեն զինված ուժերում արձանագրված բոլոր հանցագործությունները:

2021թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 213 դեպք /2020թ.՝ 151/: Բոլոր դեպքերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների դատավարական ղեկավարմամբ և դատախազական հսկողությամբ նախապատրաստվել են նյութեր: Նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել 62 դեպքով կամ 41,05%-ով:

Նախապատրաստված նյութերից 21-ով՝ նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը /2020թ.՝ 5/: Ընդ որում, 16-ը՝ արդարացման, 5-ը՝ ոչ արդարացման հիմքերով /2020թ.՝ 5-ը, բոլորն էլ արդարացման հիմքով/: 192-ով հարուցվել են քրեական գործեր /2020թ.՝ 146/: Դրանցից 3-ը հարուցվել է ՀՀ քրեական օր.-ի 178-րդ հոդվածով, 33-ը՝ 179-րդ հոդվածով, 4-ը՝ 308-րդ հոդվածով, 12-ը՝ 311-րդ հոդվածով, 2-ը՝ 312-րդ հոդվածով, 16-ը՝ 314-րդ հոդվածով, 122-ը՝ 375-րդ հոդվածով /2020թ. ՝ 3-ը հարուցվել է ՀՀ քրեական օր.-ի

178-րդ հոդվածով, 29-ը՝ 179-րդ հոդվածով, 7-ը՝ 308-րդ հոդվածով, 4-ը՝ 309-րդ հոդվածով, 11-ը՝ 311-րդ հոդվածով, 1-ը՝ 312-րդ հոդվածով, 1-ը՝ 313-րդ հոդվածով, 24-ը՝ 314-րդ հոդվածով, 66-ը՝ 375-րդ հոդվածով/:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2021թ. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթ է ընդունվել նաև նախորդ՝ 2020թ. -ից փոխանցված՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված, անավարտ մնացած 136 քրեական գործ /2020թ.՝ 81/, վարույթը վերսկսված՝ 3 քրեական գործեր /2020թ.՝ 2/, այլ մարմիններից ստացված՝ 21 քրեական գործ /2020թ. ՝ 25/, 4 քրեական գործից անջատված մասեր՝ /2020թ.՝ 5/: Ընդհանուր առմամբ, 2021թ. ընթացքում վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի 356 քրեական գործ /2020թ.՝ 261/:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ հաշվետու ժամանակաշրջանում 49 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է /2020թ. ՝ 87/: Դրանցից 43-ով վարույթները կարճվել են /2020թ.՝ 62/: Այդ թվում, 31-ով վարույթները կարճվել են արդարացման /2020թ.՝ 51/, 12-ով՝ ոչ արդարացման /2020թ.՝ 11/ հիմքերով:

6 քրեական գործ 14 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարաններ /2020թ. ՝ 25 գործ՝ 58 անձ/:

5 քրեական գործով վարույթները կասեցվել են /2020թ.՝ 4/: Ընդ որում, 5-ով էլ վարույթները կասեցվել են ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 31-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի հիմքով /2020թ. ՝ 4-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի/:

61 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության /2020թ.՝ 14/, 43-ը միացվել են մեկ վարույթում /2020թ.՝ 20/, 216 քրեական գործերի նախաքննությունն ընթացքի մեջ է և դրանք փոխանցվել են 2022թ. /2020թ.՝ 136/:

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են այն մասին, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունները աճել են 62-ով կամ 41,06%-ով: Աճը պայմանավորված է ինչպես կոռուպցիոն դրսևորումների դեմ ձևավորվող անհանդուրժողականության շրջանակներում հասարակության և իրավապահ մարմինների միջև փոխվստահության մթնոլորտի բարձրացմամբ, այնպես էլ նմանօրինակ դեպքերի բացահայտմանն ուղղված տարաբնույթ միջոցառումների իրականացմամբ:

Բացի այդ, կոռուպցիոն հանցագործությունների աճը որոշակիորեն պայմանավորող գործոն է շարունակում մնալ համապատասխան ոլորտներում /այդ թվում՝ ապրանքանյութական արժեքների շրջանառության հետ կապված լիազորություններ ունեցող անձանց նկատմամբ/ թույլ կամ ձևական հսկողությունը, որ, իր հերթին, ունի տարբեր պատճառներ: Որպես այդպիսին կարող են նշվել ՀՈՒ ստորաբաժանումների հրամանատարական կազմի հաճախակի փոփոխությունները, թափուր հաստիքներին ոչ իրավասու զինծառայողների նշանակումը և այդ պայմաններում օպերատիվ աշխատակիցների հետ համագործակցված աշխատանքի բացակայությունը:

Պետք է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների թվում գերակշռում են ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունները /122

դեպք/, որոնց հիմնական պատճառը զինծառայողների կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու դեպքերի վերաբերյալ զորամասերի հրամանատարական կազմի կողմից սահմանված ժամկետներում և կարգով իրավապահ մարմիններին հաղորդումներ չներկայացնելն է:

Շարունակվում է համագործակցությունը շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, բաց հասարակության խնդրով մտահոգ անհատների հետ:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ 2021թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված, ավարտված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են 37.978.895 դրամի նյութական վնասի պատճառման փաստեր /2020թ.՝ 81.694.950 դրամ/, որոնցից մինչդատական վարույթում վերականգնվել է 9.394.896 դրամը /2020թ.՝ 40.502.695 դրամ/:

2021թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության դատախազների հսկողությամբ նախապատրաստվել և ավարտվել է 7549 նյութ /2020թ.՝ 5914/, որոնցից 1855-ը՝ քննչական /2020թ.՝ 2339/, 5694-ը՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից /2020թ.՝ 3575/:

Նախաքննության և հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված 4175 մերժման որոշումից 80-ը վերացվել է և հարուցվել են քրեական գործեր /2020թ.՝ 21/: Հետագայում, դրանցից 9-ով վարույթները կարճվել են /2020թ.՝ 6/, 1-ով վարույթը կասեցվել է /2020թ.՝ 0/, 69-ով նախաքննությունն ընթացքի մեջ է /2020թ.՝ 14/, 1-ն ուղարկվել է այլ մարմին /2020թ.՝ 0/:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ բաժինների վարույթում քննվող 8364 քրեական գործի նկատմամբ՝ նախորդ տարվա 5351-ի դիմաց:

Քննված քրեական գործերից 3369-ի նախաքննությունն ավարտվել է՝ նախորդ տարվա 1708-ի դիմաց:

Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 294-ը՝ 359 անձի նկատմամբ՝ նախորդ տարվա 350 քրեական գործ՝ 543 անձի համեմատ, ինչպես նաև, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ՝ 1 գործ 1 անձի նկատմամբ՝ նախորդ տարվա 1 գործ 1 անձի համեմատ:

3073 քրեական գործով վարույթները կարճվել են՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1358 գործի դիմաց:

Վարույթը կարճված 3073 քրեական գործից 1014-ի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 1809-ի վարույթը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 3-13-րդ կետերի և 250-ի վարույթը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով:

2021թ. 805 քրեական գործով վարույթները կասեցվել են /2020թ.՝ 759/, որոնցից 134-ը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 31-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետով, 624-ը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 31-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետով, 47-ը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 31-րդ հոդ. 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով:

2021թ. ընթացքում քրեական գործերով վարույթները կարճելու 26 /2020թ.՝ 44/ որոշում է վերացվել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից: Կարճումը վերացված գործերից 13-ով վարույթները կրկին կարճվել են, 13-ով նախաքննությունն ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակաշրջանում քրեական գործերով վարույթները կասեցնելու 9 որոշում է վերացվել հսկողություն իրականացնող դատախազների կողմից /2020թ.՝ 8/: Կասեցումը վերացված քրեական գործերից 3-ով վարույթները կրկին կասեցվել են, 6-ի նախաքննությունն ընթացքի մեջ է:

2021թ. ընթացքում վերացվել է քրեական հետապնդում չիրականացնելու 1 որոշում /2020թ.՝ 4/: Քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումներ չեն վերացվել:

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2021թ. ընթացքում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդ. հատկանիշներով հարուցված 3179 քրեական գործ՝ նախորդ տարվա 2011-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերից 1988-ի նախաքննությունն ավարտվել է /2020թ.՝ 882/: Դրանցից 18-ը մեղադրական եզրակացություններով ուղարկվել է դատարաններ /2020թ.՝ 21/, 1970-ով՝ վարույթները կարճվել են /2020թ.՝ 861/: Ընդ որում՝ 308-ով վարույթները կարճվել են ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի /2020թ.՝ 301/, 1470-ը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 3-13-րդ կետերի /2020թ.՝ 122/, իսկ 192-ով՝ ՀՀ քր դատ. օրենսգրքի 37-րդ հոդ. /2020թ.՝ 418/ հիմքերով: Գործերից 1323-ը կարճվել Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին>> ՀՀ օրենքի կիրառմամբ: 615 քրեական գործերով վարույթները կասեցվել են /2020թ.՝ 1104/:

Համեմատական վերլուծություն կատարելով 2020 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված, ավարտված քրեական գործերի և 2021 թվականի ընթացքում ավարտված քրեական գործերի միջև, պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում 1130-ով, կամ ավելի քան 100%-ով ավել քրեական գործեր են ավարտվել, ինչը պայմանավորված է եղել «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ:

Կատարված վերլուծությամբ պարզվել է նաև, որ 2021թ. ընթացքում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու վերաբերյալ նախապատրաստվել է 40 նյութ /2020թ.՝ 127/, որոնցով մերժվել է քրեական գործի

հարուցումը: Դրանցից 34-ը՝ ՀՀ քրեական դատ. օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի /2020թ.՝ 122/, 6-ն՝ այլ հիմքերով /2020թ.՝ 5/:

2021թ. ընթացքում դատախազների կողմից հարուցվել է 448 քրեական գործ /2020թ.՝ 862/:

Բողոքի քննարկման արդյունքում դատախազների կողմից քրեական գործեր չեն հարուցվել /2020թ.՝ 0/:

Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանում դատախազների կողմից 62 քրեական գործով կայացվել են վարույթները կարճելու մասին որոշումներ /2020թ.՝ 51/, 3 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու /2020թ՝ 7/, քրեական գործերով վարույթները կասեցնելու մասին 1 որոշում /2020թ՝ 2/, իսկ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ դատախազների կողմից չեն կայացվել /2020թ. ՝4/:

2021թ. ընթացքում կալանքի ժամկետը երկարացնելու 43 միջնորդություն է ներկայացվել դատարաններ /2020թ.՝ 43/, որոնցից 30-ը լրիվ բավարարվել է /2020թ.՝ 35/, 3-ը բավարարվել է մասնակի, իսկ 10-ը մերժվել է: Դատարանները որպես մերժման հիմք մատնանշել են կալանավորման հիմքերի բացակայությունը: Մերժման որոշումներից 5-ի դեմ բերվել են վերաքննիչ բողոքներ: Դրանցից 2-ը բավարարվել է վերաքննիչ դատարանի կողմից, 2-ը մերժվել է, 1-ն ընթացքի մեջ է:

2021թ. ընթացքում 2 քրեական գործով 2 անձի նկատմամբ կիրառվել է գրավ՝ որպես խափանման միջոց /2020թ.՝ 1/, որոնցից 1-ը դատարանի, 1-ը՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից:

2021թ. ընթացքում քրեական գործերով 1687 մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել կամ վերացվել է /2020թ.՝ 670/: Դրանցից 1678-ը /2020թ.՝ 1180/ մեղադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների համար:

2021թ. ընթացքում դատախազների /այդ թվում՝ դատավարական ղեկավարում իրականացնողների և վերադասների/ կողմից 913 քրեական գործով տրվել է 973 գրավոր ցուցում /2020թ.՝ 448 քրեական գործով՝ 456 ցուցում/: Դրանցից 37-ի դեմ ներկայացվել են առարկություններ /2020թ.՝ 92/, որոնցից 35-ը մերժվել է /2020թ՝ 92/, 2-ը՝ բավարարվել /2020թ՝ 0/:

Բացի այդ, 2021թ. ընթացքում 8 ցուցում է տրվել հետաքննության մարմնին:

Հաշվետու ժամանակաշրջանում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից 12 քրեական գործով մեղադրական եզրակացություններ չեն հաստատվել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ցուցումներով վերադարձվել են քննիչներին՝ լրացուցիչ քննություն կատարելու /2020թ.՝ 38/: Հետագայում, լրացուցիչ քննության վերադարձված գործերից 9-ը ավարտվել է, որոնցից 8-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ, 1-ով վարույթը կարճվել է: 3 քրեական գործի նախաքննությունն ընթացքի մեջ է:

2021թ. ընթացքում մինչդատական վարույթում ընդունված, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու 5 որոշում է բողոքարկվել դատական կարգով /2020թ.՝ 3/: 4-ը

մերժվել է, 1-ը բավարարվել՝ կայացված որոշման անհիմն լինելու պատճառաբանությամբ: Նշված որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է: Այնուհետև, բերվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելու հարցը դեռևս չի որոշվել:

Քրեական գործերով վարույթները կարճելու մասին 3 որոշում է բողոքարկվել դատական կարգով /2020թ.՝ 4/: Դրանցից 2-ը մերժվել է, 1-ն ընթացքի մեջ են:

Հաշվետու ժամանակաշրջանում, դատախազների կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով, 113 միջնորդագիր /2020թ.՝ 163/ և 31 հաղորդում /2020թ.՝ 32/ են ուղարկվել պատկան մարմիններին ու կազմակերպություններին: Միջնորդագրերից 108-ը, հաղորդումներից՝ 24-ը՝ քննարկվել, պատասխաններն ստացվել, կցվել են համապատասխան վարույթներին, իսկ մնացածները դեռևս չեն քննարկվել՝ տարեվերջին ուղարկված լինելու պատճառով: Միջնորդագրերի քննարկման արդյունքներով, խախտումներ թույլ տված 16 զինծառայողի նկատմամբ կիրառվել են ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնակարգով սահմանված տույժեր:

2021թ. ընթացքում դատախազների կողմից հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող 130 անձի վերաբերյալ վարույթից հեռացնելու մասին որոշումներ են կայացվել /2020թ. ՝ 33/:

Բացի այդ, նախաքննություն և հետաքննություն իրականացնող 106 քննիչի և հետաքննիչի /2020թ.՝ 32/ նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել համապատասխան մարմիններին: Ծառայողական քննության արդյունքներով՝ 15 քննիչ և հետաքննության աշխատակից ենթարկվել են կարգապահական տույժերի:

Հաշվետու ժամանակաշրջանում հետաքննության և նախաքննության բնագավառի աշխատանքների հետ կապված կատարվել են 231 ուսումնասիրություն, ստուգում և ամփոփում /2020թ.՝ 106/:

2021թ. ընթացքում քննչական մարմինների վարույթներում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 9.122.719.612 դրամի նյութական վնասի պատճառման փաստեր /2020թ.՝ 139.866.000/, որոնցից մինչդատական վարույթում վերականգնվել է 26.639.366 դրամը /2020թ.՝ 20.812.000/:

Հաշվետու ժամանակաշրջանում զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ, ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից, մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 295 քրեական գործ՝ 360 անձի վերաբերյալ /2020թ.՝ 346 գործ, 540 անձ/, այդ թվում՝ 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ /2020թ.՝ 0/: Դատարան ուղարկված բոլոր գործերն ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, 284 քրեական գործ 409 անձիանց վերաբերյալ քննվել, ավարտվել է

դատարանում, որոնցից 201 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 270 անձ /2020թ.՝ 307 գործ, 437 անձ/:

Դատարանների որոշումներով 83 քրեական գործ 125 անձի վերաբերյալ կարճվել է /2020թ.՝ 35 գործ 47 անձ/:

11 անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ /2020թ.՝ 18 անձ/:

10 քրեական գործով 13 անձի վերաբերյալ և 1 առանձին քրեական գործով 1 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ /2020թ.՝ 6 գործով 10 անձի և 1 առանձին քրեական գործով՝ 1 անձի մասով/:

Դատապարտված 284 անձից 216-ը եղել է զինծառայող /2020թ.՝ 396/, այդ թվում՝ 25-ը՝ սպա /2020թ.՝ 87/: Նախորդ տարվա համեմատությամբ 180-ով, կամ 45,4%-ով նվազել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել են նաև 54 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 1 անչափահաս: /2020թ.՝ 41, որոնցից 21-ը՝ անչափահաս/:

Դատապարտված 270 անձից 24-ը դատապարտվել է ազատազրկման, իսկ 2 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը /2020թ.՝ 40-ը/, 2-ը՝ կալանքի /2020թ.՝ 7/, 43-ը՝ տուգանքի /2020թ. ՝ 70/, 5-ը՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակման /2020թ.՝ 26/, պատիժը պայմանականորեն չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդ. կիրառմամբ 196 անձի նկատմամբ /2020թ.՝ 294/: Դատապարտվածներից 1 անձ նախնական կալանքից ազատվել է այլ պատժի նշանակմամբ /2020թ.՝ 8/, իսկ ազատազրկման է դատապարտվել նախնական կալանքի տակ չգտնվող 16 անձ /2020թ.՝ 33/:

Դատարանում ավարտված՝ 409 անձի վերաբերյալ 284 քրեական գործից 158-ով կամ 44,3%-ով 238 անձի նկատմամբ կիրառվել է դատաքննության արագացված կարգ կամ համաձայնեցման վարույթ /2020թ.՝ 271 գործով 383 անձ/: Բոլոր գործերով դատաքննությունն ընթացել է ՀՀ քրեական դատ. օրենսգրքի պահանջներին համապատասխան: 14 անձի վերաբերյալ 14 քրեական գործով մեղադրողներն առարկել են դատաքննության արագացված կարգի դեմ /2020թ.՝ 11 գործ, 9 անձ/, որը պայմանավորված է եղել ամբաստանյալների կողմից մեղադրանքը չընդունելու և պաշտպանից հրաժարվելու հանգամանքով: Դատաքննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալների միջնորդությունների դեմ դատախազները չեն առարկել, ինչպես նաև դատախազների առարկության բացակայության պայմաններում՝ դատարանների կողմից մերժման որոշումներ չեն կայացվել /2020թ.՝ 0/:

2021թ. 10 քրեական գործով 13 անձի վերաբերյալ կայացվել են արդարացման դատավճիռներ՝ նախորդ տարվա 6 քրեական գործ 10 անձի համեմատ, մեկ անձի վերաբերյալ կայացվել է մասնակի արդարացման դատավճիռ, իսկ 1 գործով 1 անձ արդարացվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ:

10 անձի վերաբերյալ 8 քրեական գործով դատավճիռները բողոքարկվել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, իսկ 2-ով դատական ակտերը ստացվել են 2022

թվականին և բողոքարկման փուլում են: Ներկայացված 8 բողոքից 1-ը բավարարվել է և կայացվել մեղադրական դատական ակտ, 2-ը մերժվել է, որոնցից 1-ով բողոք է բերվել ՀՀ վճռաբեկ դատարան, սակայն վարույթ չի ընդունվել, իսկ 5 վերաքննիչ բողոքի քննությունն ընթացքի մեջ է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2 արդարացման որոշման դեմ բողոք է բերվել ՀՀ վճռաբեկ դատարան, որոնցից 1-ը վարույթ չի ընդունվել, իսկ 1-ը ընթացքի մեջ է:

Մեղադրողների միջնորդությամբ 110 քրեական գործով 140 անձի նկատմամբ դատարանի կողմից կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել: /2020թ.՝ 135 գործ, 198 անձ/:

Դատարանների նախաձեռնությամբ 61 քրեական գործով 66 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանականորեն չի կիրառվել /2020թ.՝ 73 գործ, 96 անձ/: Դրանցից 10 քրեական գործով զինվորական դատախազությունների դատախազների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ /2020թ.՝ 28 գործ/, որոնցից 2-ը 2 անձի վերաբերյալ՝ բավարարվել է, 7-ը 7 անձի վերաբերյալ՝ մերժվել է, 1-ը 1 անձի վերաբերյալ՝ ընթացքի մեջ է:

Նշված դատավճիռները մեղադրողների կողմից բողոքարկվել են, հաշվի առնելով հանցագործության վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, ինչպես նաև պատժի նշանակմամբ սոցիալական արդարության վերականգնման, պատժի ենթարկված անձին ուղղելու հնարավորությունը:

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդ. կիրառմամբ՝ սահմանված նվազագույն պատժից ավելի մեղմ պատիժներ կիրառվել են 2 քրեական գործով 2 անձի վերաբերյալ, դատարանի նախաձեռնությամբ /2020թ.՝ 0/:

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրողների կողմից օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերվել է 30 վերաքննիչ բողոք 33 անձի վերաբերյալ /2020թ.՝ 54 գործ, 57 անձ/:

Մասնավորապես. նախորդ տարվանից փոխանցված և հաշվետու ժամանակաշրջանի սկզբին վերաքննիչ դատարանի վարույթում մնացած 24 քրեական գործի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, 54 քրեական գործ 57 անձի վերաբերյալ գտնվել է վերաքննիչ դատարանի վարույթում /2020թ.՝ 72 գործ, 75 անձ/: Դրանցից 2-ը հետ է վերցվել դատախազի կողմից /վարույթ չի ընդունվել/, 8-ը բավարարվել է ամբողջությամբ, 4-ը բավարարվել է մասնակի, 27-ը մերժվել է, 2-ով կայացվել է այլ որոշում, 11-ի քննությունն ընթացքի մեջ է: Վարույթ ընդունված բողոքներից 18-ը բերվել է պատժի մեղմության դեմ, 11-ը՝ արդարացման, 6-ը՝ կարճման, 1-ը՝ պատժի խստության դեմ, 16-ը՝ այլ հիմքերով:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից բողոքարկվել են 29 դատավճիռներ /2020թ.՝ 42/: Նախորդ տարվանից փոխանցված և հաշվետու ժամանակաշրջանի սկզբին վերաքննիչ դատարանի վարույթում մնացած 20 քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, 49 քրեական գործ քննվել է վերաքննիչ դատարանում, որոնցից 7-ը բավարարվել է, 3-ը բավարարվել է մասնակի, 23-ը մերժվել է, 15-ն ընթացքի մեջ է, 1-ի

վարույթ ընդունելու հարցը ընթացքի մեջ է: Վարույթ ընդունված բողոքներից 2-ը բերվել է պատժի մեղմության դեմ, 1-ը՝ կարճման, 25-ը՝ պատժի խստության դեմ, 20-ը՝ այլ հիմքերով:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազի կողմից բերվել է 5 վճռաբեկ բողոք, որոնցից 1-ը մերժվել է, 2-ը՝ բավարարվել, իսկ 2-ը ընթացքի մեջ է /2020թ.՝ 3 բողոք/:

ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից, 2021թ. ընթացքում, կայազորային կարգապահական մեկուսարաններում (ՀՀ ՊՆ ՌՈ, Ստեփանակերտի ՌՈ), քրեակատարողական հիմնարկներում կատարվել է 3 ստուգում և ուսումնասիրություն՝ անձանց պահելու պայմանների ու կարգի, զբոսանքի կազմակերպման գործընթացի, բուժօգնության կազմակերպման, տեսակցությունների տրամադրման հիմքերի ու կարգի, նյութակենցաղային ապահովման վիճակի վերաբերյալ, որոնց արդյունքում խախտում չի արձանագրվել /2020թ.՝ 15 ստուգում և ուսումնասիրություն/:

Բացի կայազորային կարգապահական մեկուսարաններում կատարված ուսումնասիրություններից, կայազորների զինվորական դատախազությունները ուսումնասիրություններ են կատարել նաև կարգապահական վաշտերում: Ուսումնասիրությունների ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

2021թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում (այդ թվում՝ ՀՀ կառավարության 18.10.2007թ. «Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 1221-Ն որոշման պահանջների կատարման, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ սահմանափակում պատժատեսակի կիրառման վիճակի վերաբերյալ զորամասերում իրականացված ուսումնասիրություններ) կատարվել է 84 ուսումնասիրություն /2020թ.՝ 92/:

Արձանագրված խախտումների հիմնական մասը շտկվել է տեղում, 1-ով նախապատրաստված նյութերով հարուցվել է 1 քրեական գործ, զորամասի հրամանատարին ուղարկվել է 1 հաղորդում:

2021թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատական ակտերի հարկադիր կատարման ստորաբաժանումներում իրականացվել է 4 ուսումնասիրություն /2020թ.՝ 4/: Խախտումներ չեն արձանագրվել:

2021թ. ընթացքում պատիժը պայմանականորեն չկիրառված 1 անձ, գտնվելով փորձաշրջանի մեջ, զինվորական ծառայության ընթացքում կատարել է նոր հանցագործություն /2020թ.՝ 0/: Այդ կապակցությամբ հարուցված քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2020թ. պատերազմական գործողություններին առնչվող հանցագործությունների քննություն

2020թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմական գործողությունների ընթացքում, ՀՀ և ԱՀ պաշտպանունակության, զինվորական ծառայության դեմ ուղղված առերևույթ հանցագործությունների փաստերի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ, 238-րդ, 307.4-րդ, 308-րդ, 327-րդ, 356-րդ, 358-րդ, 359-րդ, 361-րդ, 362-րդ, 363-րդ, 364-րդ, 365-րդ, 372-րդ, 373-րդ, 375-րդ, 376-րդ, 299-րդ և 302-րդ, 311-րդ, 312-րդ և 313-րդ, 177-րդ, 178-րդ հոդվածների տարբեր մասերի և կետերի համակցությունների հատկանիշներով հարուցվել և ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում, ՀՀ ՔԿ տարածքային ստորաբաժանումներում, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում և ՀՀ ՀՔԾ-ում քննվել է ավելի քան 2000 քրեական գործ: Քննության արդյունավետությունն ու միասնականությունն ապահովելու նպատակով դրանք միավորվել են մի քանի վարույթների շրջանակում, որոնցով քննություններն իրականացվում են ձևավորված քննչական խմբերի կողմից: Այդ քրեական գործերով քննության առարկա են՝

- զորահավաքային զորակոչի, զորահամալրման գործընթացներում թույլ տրված հնարավոր խախտումները, դրանց բնույթը, ընդգրկումը, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից զորահավաքային զորակոչով զորակոչված զինծառայողների՝ զորամասից կամ ծառայության վայրից փախուստը, հեռացումը, այլ, առավել ապահով վայրեր տեղափոխումը կազմակերպելու դեպքերը՝ այդ թվում նաև կաշառքի միջոցով,
- պատերազմի ողջ ընթացքում մարտական գործողությունների համար նախատեսված զենք-զինամթերքը, պայթուցիկ նյութերը կամ պայթուցիկ սարքերն Արցախի Հանրապետությունում ապօրինի ձեռք բերելու, ՀՀ ապօրինի փոխադրելու, հափշտակելու կամ շորթելու դեպքերը, ռազմական դրության ժամանակ զինծառայողի կողմից անձնական օգտագործման համար իրեն տրամադրված զգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկաները, ինչպես նաև ծառայողական օգտագործման համար իրեն վստահված զենքը, ռազմամթերքը կամ ռազմական այլ գույքը դրանց պահպանության կանոնների խախտմամբ կորցնելու կամ փչացնելու դեպքերը,
- պատերազմի ընթացքում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների՝ զորահավաքային զորակոչից խուսափելու, հրաման չկատարելու, դասալքության, անդամախեղման եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու, զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու, ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու, հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու բազմաթիվ դեպքերով,
- Արցախի Հանրապետության հարավային՝ Մեխակավանի, Հորադիզի, Հադրութի ուղղություններով զորքերի և ստորաբաժանումների գործողությունների

ղեկավարման, հակառակորդի կողմից հարավային ուղղությամբ դեպի ՀՀ սահմաններ և դեպի ԱՀ-ի կենտրոն՝ Շուշի քաղաք առաջխաղացման, բնակավայրերի գրավման հանգամանքները: Քննության առարկա են «Նժդեհ» կոչվող բարձունքի («Լելե-Թեփե»), Մեխակավանի, Հադրութի, Մեծ Թաղերի, Թաղավարդի, Սղնախի, Քարին Տակի և Շուշիի ուղղություններով իրականացված ռազմական գործողություններին առնչվող՝ հրապարակայնորեն տարբեր հարթակներով ներկայացված և իրավապահ մարմինների տեսադաշտում հայտնված, ինչպես նաև զոհված, անհետ կորած զինծառայողների ծնողներից, հարազատներից ստացված՝ հանցագործության հատկանիշների առկայության մասին վկայող բոլոր տվյալները՝ պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման, պաշտոնեական անփութության և հրաման չկատարելու հանգամանքները պարզելու նպատակով,

- ռազմական գործողությունների ընթացքում հրամանատարի կամ պաշտոնատար անձի կողմից՝ ծանր կորուստների հանգեցրած՝ առերևույթ իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու, իշխանազանցության կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու, անգործության տարբեր դրվագներ, առանձին զորամիավորումների տեղաշարժերի և գործողությունների, դրանց շրջանակներում հրամանատարների կողմից տրված հրամանների, վարքագծի դրսևորումների իրավաչափության հանգամանքները, ռազմավարական ու մարտավարական մակարդակներում ռազմական գործողությունների ղեկավարման և իրականացման ընթացքում հնարավոր հանցավոր թերացումները, սխալները,
- անհետ կորած, գերության մեջ հայտնված զինծառայողների ծնողներից, հարազատներից խարդախությամբ գումարներ, այդ թվում՝ խոշոր չափերի, հափշտակելու, ինչպես նաև պետական դավաճանություն կատարելու առանձին դեպքեր,
- պատերազմի ընթացքում բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ՝ ՀՀ ՊՆ փաստաթղթերում առկա կարգավորումներին հնարավոր հակասող՝ զինված ուժերի մարտունակության վրա բացասական հետևանքներ առաջացրած, պատերազմի աղետալի ելքին հանգեցրած հնարավոր արարքների, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև եղած կապի արդյունքում միլիարդավոր դոլարների դիմաց Արցախի տարածքների հանձնման շուրջ սակարկությունների վերաբերյալ ստացված տվյալներն ու հաղորդումները,
- պատերազմի և պաշտպանության կարիքների համար պատերազմից առաջ և դրա ընթացքում կատարված սպառազինության, ռազմական հանդերձանքի և պարագաների, սննդամթերքի ձեռքբերումների նպատակայնության, արդյունավետության, ՀՀ և ԱՀ անվտանգության կարիքներին համապատասխանության, իրավաչափության, դրանց իրականացման ընթացքում պաշտոնատար անձանց կողմից հնարավոր առերևույթ չարաշահումների հանգամանքները:

Նշված քրեական գործերի քննություններն իրականացվում են աննախադեպ ծավալով: Դրանց լրիվությունը, օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունն

ապահովելու, ինչպես նաև իրենց ընդհանրության մեջ պատերազմի ողբերգական հետևանքների հանգեցման հարցում դրանց ունեցած ազդեցության իրավական գնահատման նպատակով շարունակում են իրականացվել հսկայածավալ քննչական, դատավարական, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, բազմաթիվ դրվագներով նշանակված են տարաբնույթ փորձաքննություններ, նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների, դատախազական խմբերի կողմից վարույթն իրականացնող, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարող մարմիններին տրվել են տասնյակ ցուցումներ և հանձնարարություններ:

Միայն ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում Արցախի հարավային ուղղությամբ և դեպի Շուշի, Շուշիում տեղի ունեցած իրադարձությունների ու գործողությունների վերաբերյալ քննվող քրեական գործով հարցաքննվել է շուրջ 150 անձ (այդ թվում՝ ԱՀ նախագահ, ՊԲ հրամանատարներ, ԱՀ նախագահի խորհրդական, ՊԲ հրամանատարի տեղակալ, ԱրՀ անվտանգության խորհրդի նախկին քարտուղար) և այլոք: Կատարվել են շուրջ երկու տասնյակ առգրավումներ, զննություններ, որոնց արդյունքում ի հայտ եկած բազմաթիվ հանգամանքների վերաբերյալ իրականացվել և իրականացվում են անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողություններ:

Պատերազմի ընթացքում ՀՀ և ԱՀ պաշտպանունակության, զինվորական ծառայության դեմ ուղղված առերևույթ հանցագործությունների դեպքերի առթիվ քննվող վերոնշյալ քրեական գործերի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա որոշումներ են կայացվել ավելի քան 800 անձի որպես մեղադրյալ ներգրավելու մասին, այդ թվում՝ ՀՀ ԶՈՒ բաձրաստիճան սպաների:

Ըստ էության քննելու համար դատարան է ուղարկվել ընդհանուր 48 քրեական գործ՝ 55 անձի վերաբերյալ: Որոնցից՝

- 25-ը՝ 28 անձի վերաբերյալ, զենք, զինամթերք, պայթուցիկ սարքեր, նյութեր ապօրինի ձեռք բերելու, շրջանառելու, իրացնելու համար,
- 8-ը՝ 8 անձի վերաբերյալ, Ադրբեջանում գտնվող ՀՀ քաղաքացիների, անհետ կորած անձանց հարազատներից վստահությունը չարաշահելով հափշտակություններ կատարելու կամ դրա փորձի համար,
- 7-ը՝ 8 անձի վերաբերյալ, ռազմական դրության ընթացքում զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար,
- 1-ը՝ 3 անձի վերաբերյալ, անդամախեղման, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու նախապատրաստության, փաստաթղթերի կեղծումը կազմակերպելու և փաստաթղթերի կեղծման համար,
- 1-ը՝ 1 անձի վերաբերյալ, ռազմական դրության ժամանակ, ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար,

- 2-ը՝ 2 անձի վերաբերյալ, ռազմական դրության ժամանակ դասալքության համար,
- 1-ը՝ 1 անձի վերաբերյալ, ռազմական դրության ժամանակ զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու համար,
- 1-ը՝ 1 անձի վերաբերյալ, ռազմական դրության ժամանակ անդամախեղման, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու համար,
- 1-ը՝ 1 անձի վերաբերյալ, ռազմական դրության ընթացքում իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար:

Դատարան ուղարկված գործերով 8 անձի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ:

Քրեական գործերի մեծ մասով նախաքննությունը շարունակվում է:

2020թ. աղետաբեր պատերազմից հետո Ադրբեջանի զինծառայողների կողմից ՀՀ տարածքային ամբողջականությունը խախտելու արդյունքում շփման գծում տեղի ունեցած բախումների, դրանց հետևանքով ՀՀ ԶՈՒ զինծառայողների գերեվարումներին առնչվող քրեական գործերի քննության կապակցությամբ հարկ է նշել է, որ կոնկրետ մարտական իրավիճակում գերեվարված և քրեական հետապնդման ենթարկվող ցանկացած զինծառայողի քեական պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի բացառապես տվյալ մարտական առաջադրանքի կատարմանն առնչություն ունեցող բոլոր զինծառայողների, այդ թվում նաև հրամանատարական կազմի գործողություններին քրեաիրավական գնահատականներ տալու արդյունքում՝ ելնելով արդարության և արդարադատության շահերից:

Նշված քրեական գործերի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է առաջնորդվել ոչ այնքան յուրաքանչյուր դրվագում յուրաքանչյուր զինծառայողի գործողություններին գնահատական տալու մոտեցմամբ, այլ դատախազական ցուցումներով, հանձնարարություններով քննությունն ուղղորդել մարտական գործողությունների ղեկավարման, կառավարման, պաշտպանության կազմակերպման խնդիրների, այդ մակարդակում կատարված հանցավոր արարքների և դրանց հետևանքների բացահայտմանը: Նշվածը հատկապես կարևոր է հետագայում այդպիսիք թույլ տալու հնարավորությունը բացառելու համար:

Արձանագրվել են նաև պատերազմի ընթացքում անհետ կորած, զոհված, ինչպես նաև գերության մեջ հայտնված զինծառայողների ծնողներից, հարազատներից խարդախությամբ խոշոր չափերի գումարներ հափշտակելու բազմաթիվ դեպքեր:

Մասնավորապես, անձինք, տարբեր եղանակներով կապեր են հաստատել ՀՀ ԶՈՒ զոհված, անհայտ կորած համարվող կամ Ադրբեջանում գերության մեջ գտնվող զինծառայողների ծնողների, հարազատների հետ՝ ներկայանալով որպես բարձրաստիճան զինվորականներ կամ ՀՀ ԱԱԾ-ի, այլ երկրի անվտանգության ծառայությունների ներկայացուցիչների հետ սերտ կապեր ունեցողներ: Շահելով

ծնողների, հարազատների վստահությունը՝ այդ անձինք վերջիններիս հավաստիացրել են, որ հստակ տեղեկություններ ունեն իրենց որդու ողջ լինելու, Ադրբեջանի կոնկրետ բնակավայրում կամ կոնկրետ քրեակատարողական հիմնարկում գտնվելու վերաբերյալ, ունեն հնարավորություններ միջնորդավորված, այլ երկրներում իրենց անձնական կապերն օգտագործելով, համապատասխան գումարի, կաշառքների դիմաց ապահովել գերության մեջ գտնվող իրենց հարազատի բուժումը, ինչպես նաև գերությունից ազատումը և երրորդ երկրի տարածքով ՀՀ տեղափոխումը:

Առանձին դեպքերում նրանց հաջողվել է նշված պատրվակներով ստանալ առաջարկված խոշոր չափերի գումարների մի մասը, սակայն խարդախությամբ նրանցից հափշտակություն կատարելու իրենց հանցավոր մտադրությունները տվյալ անձինք, մեծամասամբ, մինչև վերջ իրականացնել չեն կարողացել, քանի որ իրացված օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումների արդյունքում բռնվել են ՀՀ իրավապահ մարմինների կողմից:

Գերության մեջ գտնվող, անհետ կորած կամ զոհված անձանց հարազատներից վերոնշյալ սխեմայով հափշտակություններ կատարելու փաստերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, կամ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերի, 34-178-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 12 քրեական գործ: Կատարված նախաքննության արդյունքում 9 քրեական գործով 9 անձի նկատմամբ նույն հոդվածներով առաջադրվել են մեղադրանքներ, որոնցից 8-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ 1-ի նկատմամբ՝ ստորագրություն չհեռանալու մասին:

8 քրեական գործ՝ 8 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացություններով ուղարկվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որոնցով ներկայում դատաքննությունը շարունակվում է:

Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության և զինված ուժերի կողմից կատարված հանցագործությունների փաստերով իրականացվող քննության վերաբերյալ.

ՀՀ դատախազության հսկողության և դատավարական ղեկավարման ներքո ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում, ՀՀ ՔԿ տարածքային ստորաբաժանումներում, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում և ՀՀ ՀՔԾ-ում քննվել կամ քննվում է Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ ՀՀ իրավասու մարմինների կողմից հարուցված ավելի քան 2150 քրեական գործ:

Մասնավորապես, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության, զինված ուժերի կողմից կատարված ռազմական հանցագործությունների փաստերով ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ, 217.1-րդ, 226-րդ, 384-րդ, 387-րդ, 389-րդ, 390-րդ, 391-րդ, 394-րդ, 395-րդ, 397.1-րդ հոդվածների տարբեր մասերի հատկանիշներով հարուցվել են բազմաթիվ քրեական գործեր, որոնցով լայնածավալ նախաքննությունն իրականացվում է Արցախի Հանրապետության և

Հայաստանի Հանրապետության դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և վարելու դեպքի առթիվ քննվող 2 վարույթի շրջանակում: Դրանցով քննության առարկա են, մասնավորապես՝

- ԱՀ ռազմաքաղաքական ղեկավարության կողմից ՀՀ-ի և ԱրՀ-ի նկատմամբ 2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը միջազգային բազմաթիվ պայմանագրերի և միջազգային սովորութային մարդասիրական իրավունքի նորմերի, պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառման արգելքի անտեսմամբ, ազգային ատելության շարժառիթով ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և իրականացնելու, դրա ընթացքում գրեթե բոլոր զինատեսակներով Արցախի և Հայաստանի զինված ուժերի մարդուժին և ռազմական նշանակության ենթակառուցվածքներին, տեխնիկական միջոցներին, խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությանը կանխամտածված և նպատակաուղղված կերպով թիրախավորված կամ ոչ ընտրովի հարվածներ հասցնելու, զինծառայողներին, քաղաքացիական անձանց դիտավորությամբ մահ պատճառելու, գույքային հսկայական վնասներ հասցնելու բազմաթիվ դեպքերը,
- ԱՀ զինված ուժերի կողմից զինված ընդհարման ժամանակ, ինչպես նաև հրադադարի վերաբերյալ եռակողմ հայտարարության ստորագրումից հետո ԱՀ ՊԲ զինծառայողների, քաղաքացիական անձանց գերեվարումները, միջազգային կոնվենցիաների, միջազգային մարդասիրական իրավունքի մի շարք նորմերի կոպտագույն խախտումներով՝ ընդհուպ կոնվենցիոնալ պաշտպանության ներքո գտնվող ռազմագերիների և քաղաքացիական անձանց դաժանաբար սպանության, խոշտանգման, նրանց նկատմամբ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու բազմաթիվ դեպքերը:
- Ադրբեջանի զինված ուժերի ներկայացուցիչների կողմից, միջազգային սովորութային մարդասիրական իրավունքի համապատասխան նորմերի խախտմամբ, ազգային ատելության շարժառիթով, ինչպես մարտական գործողությունների ընթացքում, այնպես էլ հրադադարի հաստատման մասին եռակողմ հայտարարության ստորագրումից հետո, հայկական պատմական հուշարձանները, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները, ծագումով հայերի գերեզմանները ոչնչացնելու, վնասելու կամ պղծելու բազմաթիվ դեպքերը,
- ռազմական գործողությունների ընթացքում ԱրՀ ՊԲ զինծառայողների, քաղաքացիական բնակավայրերի նկատմամբ միջազգայնորեն արգելված, այդ թվում նաև քիմիական բաղադրությամբ զինատեսակների կիրառման դեպքերը,
- ադրբեջանցիների կողմից, ազգային պատկանելության հիման վրա, հայերի դեմ ցեղասպանությունն արդարացնելու, թշնամանք հարուցելու, ատելություն և բռնություն հրահրելուն ուղղված հրապարակային կոչերի դեպքերը,
- ԱրՀ-ի և ՀՀ-ի դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում միջազգային ահաբեկչական խմբավորումների վարձկանների ներգրավման, մերձավորարևելյան տարածաշրջանից հազարավոր վարձկան-

ահաբեկիչներին Թուրքիայի տարածքով Ադրբեջան տեղափոխման և ռազմական գործողություններում օգտագործելու, այդ նպատակով ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատու պաշտոնատար անձանց նախնական համաձայնության շրջանակներում միջազգային ահաբեկչության ֆինանսավորման դեպքերը,

- ՀՀ տարածքում, Երասխ գյուղի հատվածում, ՌԴ զինված ուժերի «ՄԻ 24» տեսակի ռազմական ուղղաթիռը ԱՀ զինված ուժերի կողմից հրթիռահրետանային սարքերի կիրառմամբ խոցելու և դրա արդյունքում երկու անձի սպանվելու և մեկ անձի մարմնական վնասվածք ստանալու դեպքը:

Վերոնշյալ քրեական գործերով իրականացվող նախաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ, 384-րդ, 387-րդ, 390-րդ, 391-րդ, 393.1-րդ, 397.1-րդ և 395-րդ, 217-րդ, 34-390-րդ, 389-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարելու համար որպես մեղադրյալ է ներգրավվել ընդհանուր՝ շուրջ 40 անձ, այդ թվում՝ ինչպես Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության և զինված ուժերի բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այնպես էլ վարձկան գրոհայիններ, ահաբեկչական խմբավորումների ղեկավարներ:

Քրեական գործով, մասնավորապես, պարզվել է, որ Մուհհռաբ Մուհամմադ Ալ Շխերին, Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալով, մշտապես չբնակվելով դրա տարածքում, ընդգրկված չլինելով Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի անձնակազմում, այլ հանդիսանալով հիմնականում Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի, Սիրիայի Արաբական Հանրապետության կամ այլ պետության կողմից ուղարկված չլինելով Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կազմում պաշտոնեական պարտականություններ կատարելու համար, նյութական հատուցում ստանալու դիմաց, կազմակերպված խմբի կազմում վարձկանները մասնակցել են Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սանձազերծված ագրեսիվ պատերազմին, որի ընթացքում նրա գործողություններն ուղղված են եղել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում քաղաքացիական անձանց և զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձանց մահ կամ ծանր մարմնական վնաս պատճառելուն, իսկ այդ գործողությունների նպատակն իր բնույթով և էությամբ հանդիսացել է բնակչությանն ահաբեկելը՝ ապակայունացնելով Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ներքին վիճակը:

Մասնավորապես, Սիրիայի Արաբական Հանրապետությունում բնակվող և «Սուլթան Սուլեյման շահ», ինչպես նաև ահաբեկչական այլ կազմակերպությունների ղեկավար հանդիսացող անձինք, նախապես հավաքագրված լինելով Թուրքիայի Հանրապետության հատուկ ծառայությունների կողմից, նրանցից ակնհայտ ապօրինի հրահանգ են ստացել Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ նախապատրաստվող պատերազմին որպես վարձկաններ

մասնակցելու նպատակով հավաքագրել Սիրիայի Արաբական Հանրապետությունում բնակվող անձանց:

Իրենց հանցավոր մտադրությունը և հովանավորյալ երկրի հատուկ ծառայությունների, ինչպես նաև ռազմաքաղաքական ղեկավարության ակնհայտ ապօրինի հրահանգն իրականացնելու նպատակով, վերջիններս Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքում տարբեր անձանց միջոցով սկսել են հավաքագրել նյութապես ծանր վիճակի մեջ գտնվող անձանց:

2020 թվականի հունիսից վերջիններս դիմել են Սիրիայի Արաբական Հանրապետությունում բնակվող բազմաթիվ անձանց և առաջարկել համապատասխան զորավարժություններ անցնելուց հետո մեկնել Ադրբեջան՝ ամսական 2000 ԱՄՆ դոլարի դիմաց Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ պլանավորված ռազմական գործողություններին մասնակցելու համար:

2020 թվականի հունիսից մինչև սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում հավաքագրված վարձկանները տեղափոխվել են Սիրիայի Արաբական Հանրապետության Շեյհ Հադիդ գյուղ, որտեղ երեք ամիս տևողությամբ մասնակցել են ֆիզիկական, մարտական և ռազմական պատրաստվածության դասընթացներին:

Ֆիզիկական, մարտական և ռազմական պատրաստվածության դասընթացների ավարտից հետո, վարձկանները տեղափոխվել են Ալ Ղուս անցակետ, որից հետո ավտոմեքենաներով տեղափոխվել են Քիլիս քաղաքի հարակից տարածք: Հիշյալ վայրում գտնվել են «Սուկուր», «Համզաթ» և այլ խմբավորումների հրամանատարական կազմերը, որոնք գործել են «Սուլթան Սուլեյման շահ» խմբավորման ղեկավար Աբու Համշա մականվամբ Մուհամմադ ալ-Ջասիմիի ենթակայությամբ: Ղեկավար կազմից գնդապետ Մահմուդ անունով անձի կողմից ընտրվել են իրենց պահանջներին բավարարող վարձկաններ, որոնք բաժանվել են խմբերի:

Այնուհետև անարգել հատել են Սիրիայի Արաբական Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանը, որի ընթացքում Թուրքիայի Հանրապետության սահմանը հսկող պաշտոնատար անձանց կողմից չեն պահանջվել և չեն ստուգվել նրանց անձնագրերը կամ անձը հաստատող որևէ փաստաթուղթ, նրանց տեղափոխման նպատակի վերաբերյալ ստուգողական հարցեր չեն տրվել, ավելին՝ սահմանահատումն իրականացվել է վերջիններիս ակնհայտ ապօրինի թույլտվությամբ:

Նույն եղանակով, վարձկանները, անարգել, Թուրքիայի Հանրապետության դրոշը կրող քաղաքացիական ինքնաթիռներով տեղափոխվել են Թուրքիայի Հանրապետության քաղաքացիական մեկ օդանավակայանից մյուսը, որտեղ նրանց դիմավորել են թուրք զինվորականները: Վերջիններիս ուղեկցությամբ, Ադրբեջանի Հանրապետության դրոշը կրող ինքնաթիռով նրանք տեղափոխվել են Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիական օդանավակայան, որտեղ նրանց դիմավորել են Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի համազգեստով զինվորականներ, որոնք, հաստատապես տեղյակ լինելով վարձկանների կողմից գումարի դիմաց Արցախի

Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմին մասնակցելու նպատակի մասին, առանց որևէ հարց ուղղելու, անձնագրերը պահանջելու կամ ստուգելու, նստեցրել են ավտոմեքենաները և տեղափոխել Ադրբեջանի ռազմական տարբեր օբյեկտներ, որտեղ թուրք և ադրբեջանցի զինվորականների կողմից պարբերաբար իրականացվել են նախապատրաստվող ռազմական գործողությունների վերաբերյալ քննարկումներ, որոնց ընթացքում վերջիններիս կողմից ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչեր են հնչել, այն է՝ չխնայել որևէ անձի կյանք, բոլոր հայերին գլխատել և սպանել: Բացի այդ, վարձկանները ստացել են Ադրբեջանի զինված ուժերի տարբերանշանով համազգեստ և զենք, մասնավորապես՝ 50 անձից բաղկացած յուրաքանչյուր խմբին հատկացվել են «ՌՊԳ» ձեռքի հակատանկային նռնականետ, ռուսական արտադրության «ՊԿՍ» և «Կալանշնիկով» մոդելի ավտոմատներ, ավտոմեքենաներ:

Հետագայում արդեն վերջիններիս հրաման է տրվել պատրաստվել ռազմական գործողության, այն է՝ հարձակվել հայկական գյուղերի վրա, գրավել, իսկ տեղի քաղաքացիական բնակչությանը և զինվորականներին սպանել, գլխատել, ինչպես նաև Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ներքին վիճակն ապակայունացնելու նպատակով իրականացնել հրկիզումներ և պայթյուններ, որպիսիք վերջիններս իրականացրել են:

Բացի այդ, կատարված լայնածավալ քննության արդյունքներով պարզվել է, որ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ակտիվ մասնակություն ունենալով 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի Հանրապետության դեմ, իսկ 2020թ. սեպտեմբերի 28-ից՝ Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծված և վարած ագրեսիվ պատերազմին, հրամաններ են տվել իրենց ենթակա զինծառայողներին՝ իրագործելու Արցախի Հանրապետության բնակավայրերի, այդ թվում՝ գերեվարված բնակիչների հրապարակային սպանությունը:

Վերջիններս, մասնակցելով Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված և վարած ագրեսիվ պատերազմին, թույլ են տվել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ, մասնավորապես՝ խախտել են «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիայի 32-րդ հոդվածի (*արգելվում է կիրառել որևէ միջոց, որը կարող է ֆիզիկական տառապանքի ենթարկել իրենց իշխանության տակ գտնվող հովանավորվող անձանց կամ հանգեցնել նրանց ոչնչացմանը: Այդ արգելքը տարածվում է ոչ միայն սպանության, տանջահարության, մարմնական պատիժների, խեղումների և բժշկական ու գիտական փորձեր կատարելու վրա, որոնք հովանավորվող անձի բուժման անհրաժեշտությունից չեն բխում, այլև հավասարապես և քաղաքացիական կամ զինվորական իշխանությունների ներկայացուցիչների կողմից որևէ այլ բիրտ բռնության վրա*), 147-րդ հոդվածի (*լուրջ խախտումներ են համարվում կանխամտածված*

սպանությունը, փանջահարությունը և անմարդկային վերաբերմունքը և այլն), «Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին» 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնևի կոնվենցիաներին կից 1-ին լրացուցիչ արձանագրության 75-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի 1-ին ենթակետի (*ըստ որի՝ ի թիվս այլոց, արգելված են և՝ ցանկացած ժամանակ, և՝ ցանկացած տեղում արգելված կմնան բռնությունն անձանց կյանքի, առողջության և ֆիզիկական կամ հոգեկան վիճակի նկատմամբ, մասնավորապես՝ սպանությունը*) պահանջները, միջազգային մարդասիրական իրավունքի 46-րդ նորմը (*արգելվում է ոչ ոքին կենդանի չթողնելու հրամանը*), 89-րդ նորմը (*սպանությունների արգելք*) և 90-րդ նորմը (*խոշտանգումների սահմանումը*), (*պետությունների պրակտիկան սահմանում է պատասխանատվություն՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ պետությունն արդյոք հանդիսանում է 1-ին Լրացուցիչ արձանագրության կամ ՄՔԴ ստատուտի մասնակից:*

Նախաքննության շրջանակներում լայնածավալ քննչական, օպերատիվ-հետախուզական գործողությունները շարունակվում են: Բազմաթիվ դրվագներով, նաև դատախազների կողմից տրված համապատասխան ցուցումների և հանձնարարությունների հիման վրա, ձեռնարկվում են հնարավոր բոլոր իրավաչափ միջոցները՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված և իրականացված ագրեսիվ պատերազմի, դրա ընթացքում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի այլ ներկայացուցիչների, ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից կատարված ռազմական հանցագործությունների ապացույցների լիարժեքությունն ապահովելու, Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիների իրական քանակը հստակեցնելու, նրանց նկատմամբ խոշտանգման, ապօրինի գործողությունների փաստերն ամբողջացնելու, միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով հայ ռազմագերիներին, քաղաքացիական անձանց դաժանաբար սպանած, նրանց արժանապատվությունը նսեմացնող, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելուն ուղղված գործողություններ կատարած անձանց ինքնության բացահայտման, դրանց վերաբերյալ հավելյալ, հատկապես անձանց նույնականացման հնարավորություն տվող ապացույցների ձեռքբերման ուղղությամբ:

Ընդ որում, ՀՀ գլխավոր դատախազի կողմից վարույթն իրականացնող մարմինների առջև խնդիր է դրվել Ադրբեջանի պաշտոնատար անձանց արարքներին տրվող քրեաիրավական գնահատականներն ամրապնդել անհերքելի, ամուր և միջազգային իրավական հարթակներում օրինականության և թույլատրելիության առումով որևէ կասկած չհարուցող ապացույցներով: Չնայած դրանց հիման վրա արդեն իսկ Ադրբեջանի կոնկրետ բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցվել են քրեական հետապնդումներ, սակայն առկա փաստական տվյալները վկայում են, որ դրանց շրջանակը ենթակա է ընդլայնման: ՀՀ գլխավոր դատախազի կողից հանձնարարվել է նշված գործընթացն իրականացնել առանց չարդարացված ձգձգումների:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ զինվորական դատախազության դատավարական հսկողության ներքո քննվող գործերով հանցագործություն ծնող պատճառների և պայմանների վերհանման, պետական շահերի պաշտպանության ոլորտում զինվորական կենտրոնական դատախազության իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում, ՀՀ զինվորական դատախազի կողմից 9-ը միջնորդագիր է հասցեագրվել ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից, կայազորների զինվորական դատախազությունների և ՀՀ ՊՆ ՌՈ ԶՈՒՊ բաժնի հետ համատեղ, ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 21.02.2019թ. «Փորձնական ծրագիր իրականացնելու և գնման գործընթաց կազմակերպելու մասին» թիվ 152-Ա որոշման հիմքով ՀՀ զինված ուժերի պարենավորումը մասնավոր գործընկերոջը պատվիրակելու նպատակով ՀՀ ՊՆ և մասնավոր գործընկերների միջև կնքված՝ պետության կարիքների համար պարենավորման գործընթացի կազմակերպման պատվիրակման պետական գնման պայմանագրերի կատարման գործընթացում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության վիճակը: Ուսումնասիրության արդյունքներով հանձնարարվել է հայտնաբերված՝ պայմանագրերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող, կասկածելի որակական հատկանիշներ ունեցող սննդամթերքը սեղմ ժամկետներում փոխարինել պատշաճ որակի սննդամթերքով, բացառել ծառայությունների մատուցման ընթացքում նմանատիպ ապրանքատեսակների հետագա մատակարարումը և օգտագործումը, ինչպես նաև պայմանագրով սահմանված ծառայությունների՝ որակին վերաբերող պահանջները չկատարելու և Պայմանագրի պահանջների խախտման վերը թվարկված դեպքերով հաշվարկել և կիրառել Պայմանագրով նախատեսված տույժեր ու տուգանքներ և սեղմ ժամկետներում վերացնել ծառայությունների մատուցման ընթացքում արձանագրված սանիտարահիգիենիկ վիճակի խախտումները՝ հետագայում բացառելով դրանք:

Ուսումնասիրվել է նաև ՊՆ պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնումների գործընթացում օրենսդրության պահանջների պահպանման վիճակը: Ուսումնասիրության արդյունքներով հանձնարարվել է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ հետագայում հայտնաբերված խախտումները բացառելու ուղղությամբ, մասնավորապես՝ պատշաճ հսկողություն սահմանել պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնման ձևի ընտրության և դրա հիմնավորումների նկատմամբ՝ խստորեն պահպանելով գնումների մասին օրենսդրության պահանջները:

Բացի այդ, զորամասերի ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրությունների արդյունքներով հանձնարարվել է զորամասերում փաստաթղթային ստուգումների արդյունքներով հայտնաբերված իրավախախտումների դեպքում պատասխանատու պաշտոնատար անձանց դրսևորած անգործության կամ գործողությունները ձգձգելու հետևանքով առաջացած հնարավոր ռիսկերը գնահատելու և

դրանք չեզոքացնելու նպատակով իրականացնել համակողմանի և դետալային քննարկումներ, ինչպես նաև հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով քննարկման առարկա դարձնել նաև զորամասերի հրամանատարների կողմից ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության հավելյալ մեխանիզմների ներդրման կամ արդիականացման հարցը:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ակտիվ շփումները տարբեր քրեական գործերով տուժող ճանաչված զինծառայողների ծնողների և հարազատների, մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսված 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված, գերեվարված, ինչպես նաև գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հարազատների հետ: 2021 թվականի ընթացքում զինդատախազությունում կազմակերպվել է 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված, գերեվարված, ինչպես նաև գտնվելու վայրն անհայտ զինծառայողների՝ շուրջ վեց տասնյակից ավելի հարազատների 24 ընդունելություն:

Ընդունելությունների գերակշիռ մասի դեպքում հարազատները հայտնել են իրենց հայտնի դարձած տեղեկությունները պատերազմի ընթացքում զինծառայողների զոհվելու, գերեվարման, ինչպես նաև անհայտ կորելու, մեղավոր պատասխանատու պաշտոնատար անձանց գործողությունների/անգործության հանգամանքների, վերաբերելի տեղեկություններին տիրապետող անձանց հնարավոր շրջանակի վերաբերյալ, որի կապակցությամբ տեղում ներկայացրել են դիմումներ: Ստուգելու և քննության առարկա դարձնելու նպատակով բոլոր դիմումներն ուղարկվել են պատերազմին առնչվող քրեական գործերով վարույթ իրականացնող նախաքննական մարմիններ:

Վերոնշյալ ընդունելությունների հիման վրա դատախազների կողմից տրվել է նաև 3 ցուցում՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ, ներկայացվել է հանցագործության մասին 4 հաղորդում, որոնք քննարկման և լուծման նպատակով ուղարկվել են նախաքննական մարմիններին: Դեպքերի առթիվ հարուցվել են քրեական գործեր:

1 ընդունելության ժամանակ, հիմնվելով դատախազների հետ պարբերաբար տեղի ունեցած անմիջական կապի արդյունքում ձևավորված փոխադարձ վստահության վրա, անհայտ կորած զինծառայողի հարազատը դիմումին կից ներկայացրել է կոնկրետ փաստական տվյալներ, որոնք անմիջապես ուղարկվել են նախաքննական մարմնին՝ քրեական գործով քննության առարկա դարձնելու, դրանցից բխող անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար: Արդյունքում՝ ՀՀ ԶՈՒ համապատասխան պաշտոնատար անձին առաջադրվել է մեղադրանք և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննության համար, որի դատական քննությունն ընթացքի մեջ է:

5. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ

2021թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 1409 նյութ (2020թ.՝ 1810 նյութ), որոնցից 798-ով (2020թ.՝ 1232) հարուցվել են քրեական գործեր, 566-ով (2020թ.՝ 561) քրեական գործ հարուցելը մերժվել է, որոնցից 519-ը (2020թ.՝ 516) մերժվել է արդարացման, իսկ 47-ը (2020թ.՝ 45)՝ ոչ արդարացման հիմքերով:

Այսպիսով, 2020թ. համեմատ 2021թ. 401-ով կամ 22.2%-ով նվազել է կոռուպցիոն բնույթի դեպքերով ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստված նյութերի քանակը, իսկ հարուցված քրեական գործերի քանակը նվազել է 35.2%-ով կամ 434-ով՝ կազմելով 798:

2020 և 2021 թվականների վիճակագրական տվյալների համադրված վերլուծությունը վկայում է հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների նվազման մասին: Այս համատեքստում պետք է նշել, որ 2018 թվականից մինչև 2020 թվականը կտրուկ աճել է կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի քանակը: Եթե 2017 թվականին նախապատրաստվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 767 նյութ (հարուցվել է 591), ապա հաջորդող տարիներին դրանց թիվը կտրուկ աճել է՝ նախ կազմելով՝ 2018 թվականին՝ 1988 նյութ (հարուցվել է 1469 քրեական գործ), 2019 թվականին՝ 2083 նյութ (հարուցվել է 1399 քրեական գործ): 2020 թվականին որոշ չափով նվազել է՝ կազմելով 1810 նյութ (հարուցվել է 1232 քրեական գործ), իսկ 2021 թվականին՝ 1409 նյութ (հարուցվել է 798 քրեական գործ): 2018-2021 թվականների՝ վերը նշված ցուցանիշների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում, ինչպես տվյալ, այնպես էլ 2019 թվականին գրանցվել է կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի կտրուկ աճ, ինչը պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ մինչև 2018 թվականը կատարված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ առավելապես ստացվել են հենց 2018 և 2019 թվականների ընթացքում: Հետագայում թեև ստացվել են մինչ այդ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ տվյալներ, սակայն բնական է՝ այդպիսիք տարեցտարի նվազել են: Նշվածի մասին են վկայում նաև վերը նշված ցուցանիշները, որոնց համաձայն՝ 2020 թվականին արձանագրվել է կոռուպցիոն հանցագործությունների առավել ցածր ցուցանիշ, քան 2019 թվականին, իսկ 2021 թվականին՝ առավել ցածր ցուցանիշ, քան 2020 թվականին:

Բացի այդ, ինչպես նախորդող ժամանակաշրջանում, այնպես էլ 2020 և 2021 թվականի ընթացքում իրավապահ մարմինների կողմից տարված առավել ակտիվ աշխատանքներն արդեն իսկ տվել են դրական արդյունք նշված հանցատեսակների նվազման առումով: Թեև կոռուպցիոն բնույթի հանցագործությունները կրում են լատենտային՝ քողարկված բնույթ, սակայն դրանց նվազումը ներկայումս մեծապես

պայմանավորված է ոչ թե վերջին հանգամանքով, այլ իրավապահ մարմինների ակտիվ և համատեղ աշխատանքով: Հարկ է արձանագրել նաև, որ թե՛ 2020, թե՛ 2021 թվականին ՀՀ դատախազության կողմից ձեռնարկվել են բազմաթիվ միջոցներ, որոնք ևս դրական առումով էականորեն ազդել են հիշյալ ցուցանիշների վրա:

Հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով ներկայացված բազմաթիվ միջնորդագրերի քննարկման արդյունքում շարունակվել են արձանագրվել դրական հետևանքներ (ընդհուպ մինչև՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձանց պաշտոնից ազատում), որոնք ինքնին նպաստել են հետագայում կոնկրետ ոլորտում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերի նվազմանը:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականի հիման վրա կոնկրետ հոդվածներով քննվող քրեական գործերով պարտադիր քննության առարկա են դարձել նաև համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում ոլորտային, կոռուպցիոն համասեռ այլ չարաշահումների առկայության հնարավոր հանգամանքները:

Միաժամանակ, ձեռնարկված միջոցառումները կրել են պարբերական բնույթ և չեն սահմանափակվել միայն վերը նշված գործողությունների կատարմամբ:

Բացի հարուցված 798 (2020թ.՝ 1232) քրեական գործից՝ հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել նաև նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված 150 քրեական գործ (2020թ.՝ 76), 16-ը (2020թ.՝ 10)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 76-ը (2020թ.՝ 67)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում է գտնվել նախորդ տարվանից փոխանցված 877 (2020թ.՝ 788) քրեական գործ:

2021թ. ավարտվել է կոռուպցիոն բնույթի 730 քրեական գործի վարույթ, որը նախորդ տարվա արդյունքից ավելի է շուրջ 2%-ով:

Ավարտված քրեական գործերից 414-ի (2020թ.՝ 419) վարույթը կարճվել է արդարացման, իսկ 129-ը (2020թ.՝ 114)՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթն ավարտված 187 քրեական գործ՝ 433 անձի վերաբերյալ (2020թ.՝ 183-ը՝ 410 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, ընդ որում՝ 433 անձից 25-ը (2020թ.՝ 16) գտնվել է կալանքի տակ:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 2312 (2020թ.՝ 2535) քրեական գործից 255-ի (2020թ.՝ 156) վարույթը կասեցվել է, որոնցից 224-ինը (2020թ.՝ 136)՝ անձը հայտնի չլինելու, 27-ինը (2020թ.՝ 17)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 4-ինը (2020թ.՝ 3)՝ այլ հիմքերով: 353 (2020թ.՝ 308) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 215 (2020թ.՝ 321) գործ միացվել է, 765 (2019թ.՝

1034) գործի նախաքննություն (նշված գործերով 27 (2020թ.՝ 27) անձ գտնվել է կալանքի տակ) փոխանցվել է հաջորդ տարի:

2021 թվականի ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի 2312 (2020թ.՝ 2535) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 1698 (2020թ՝. 1356) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 1698 (2020թ՝. 1356) անձից 215-ը (2020թ.՝ 107) ձերբակալվել է, որոնցից 114-ը (2020թ.՝ 28) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 1354-ի (2020թ.՝ 1144) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 1336 (2020թ.՝ 1137) անձի մեղադրանք է առաջադրվել: 166 (2020թ.՝ 113) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 34-ը (2020թ.՝ 24) մերժվել է, 132-ը (2020թ.՝ 89)՝ բավարարվել, 28 (2020թ.՝ 53) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 39 (2020թ.՝ 9) մեղադրյալ ազատվել է կալանքից, որոնցից 8-ը՝ դատախազի (2020թ.՝ 4), 31-ը՝ դատարանի կողմից (2020թ.՝ 5):

324 (2020թ.՝ 204) անձի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 95-ինը (2020թ.՝ 79)՝ արդարացման, 229-ինը (2020թ.՝ 125)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 665 (2020թ.՝ 712) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Միաժամանակ, 2020 թվականի համեմատ 2021 թվականի ընթացքում նույն տրամաբանությամբ նվազել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասի վերականգնման վերաբերյալ ցուցանիշները: Մասնավորապես, 2020թ. համեմատ 2021թ. ընթացքում ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասը նվազել է 1.782.922.409 ՀՀ դրամով կամ շուրջ 28%-ով: Միևնույն ժամանակ, 2021թ. ընթացքում շուրջ 91%-ով կամ 4.118.244.667 ՀՀ դրամով պակաս գումար է վերականգնվել, քան 2020թ. ընթացքում (2020թ.՝ 4.518.295.697 ՀՀ դրամ, 2021թ.՝ 400.051.030 ՀՀ դրամ): Այլ կերպ՝ 2021 թվականին ավարտված քրեական գործերով պատճառված վնասից վերականգնվել է 9%-ը, 2020 թվականին՝ պատճառված վնասի 71.4%-ը:

Հարկ է արձանագրել, սակայն, որ մի շարք քրեական գործերով պատճառված գույքային վնասները վերականգվել են 2021 թվականի ընթացքում, սակայն քրեական գործերն ավարտվել են 2022 թվականի հունվարին: Օրինակ՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում 2021 թվականի ընթացքում քննված քրեական գործերից մեկով նույն թվականի ընթացքում վերականգնվել է համայնքին պատճառված 1.668.490 ԱՄՆ դոլարին համարժեք 805.396.807 ՀՀ դրամ, սակայն քրեական գործով վարույթը կարճվել է 2022 թվականի հունվար ամսին: Նման դեպքերը չեն կրում եզակի բնույթ, ինչով

պայմանավորված՝ կարելի է գալ եզրահանգման, որ վերականգնման առումով էական նվազումներ տեղի չեն ունեցել:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 2020 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում (ներկայումս՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն) նախապատրաստված և ավարտված նյութերից մեկով վերականգնվել է շուրջ 3.4 միլիարդ ՀՀ դրամ:

Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների՝ հաշվետու տարում նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի շարժը ունեցել է հետևյալ պատկերը.

Ընտրողներին կաշառք տալու, կաշառք ստանալու, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտման կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր.-ի 154.2-րդ հոդված) վերաբերյալ 2021թ. ընթացքում նախապատրաստվել է 81 նյութ (2020թ.՝ 9 նյութ), որոնցից 51-ով հարուցվել է քրեական գործ, 29-ով քրեական գործ հարուցելը մերժվել է, 1-ն ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 79 քրեական գործ (2020թ.՝ 13), որոնցից ավարտվել է 35 քրեական գործի վարույթ (2020թ.՝ 4), այդ թվում՝ 14 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով (2020թ.՝ 3), իսկ 21 քրեական գործ 46 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2020թ.՝ 1 քրեական գործ՝ 1 անձի վերաբերյալ): Դատարան ուղարկված քրեական գործերով կալանքի տակ է գտնվել 12 անձ (2020թ.՝ 0):

8 գործի վարույթ կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով (2020թ.՝ 1): 26 քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության (2020թ.՝ 2), 3 քրեական գործ միացվել է (2020թ.՝ 4), իսկ 7 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ (2020թ.՝ 2), ընդ որում՝ այդ գործերով կալանքի տակ որևէ անձ չկա, 3 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը դատախազի կողմից փոփոխվել է:

2021թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 100 անձ (2020թ.՝ 24):

Քրեական հետապնդման ենթարկված 21 անձ ձերբակալվել է (2020թ.՝ 2): Նշված 21 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջիններին առաջադրվել է մեղադրանք: 21 անձի (2020թ.՝ 2) կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 20-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել, 1 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: Դատի է

տրվել 43 անձ (2020թ.՝ 1): Քրեական հետապնդման ենթարկված 39 անձի (2020թ.՝ 23) վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Ընտրակաշառքի միջնորդության (ՀՀ քր. օր.-ի 154.9-րդ հոդված) վերաբերյալ ինչպես 2020թ., այնպես էլ 2021թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել, վարույթում գործ չի քննվել:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների (ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 կետ և 3-րդ մաս) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստվել է 45 (2020թ.՝ 98) նյութ, բոլորով (2020թ.՝ 93) հարուցվել է քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 133 (2020թ.՝ 179) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 28 (2020թ.՝ 35) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 18 գործի վարույթ (2020թ.՝ 20) կարճվել է, 11-ը (2020թ.՝ 13)՝ արդարացման, 7-ը (2020թ.՝ 7)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 10 (2020թ.՝ 15) քրեական գործ՝ 14 (2020թ.՝ 18) անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված քրեական գործերով 1 (2020թ.՝ 1) անձ գտնվել է կալանքի տակ:

14 (2020թ.՝ 9) գործի վարույթ կասեցվել է, որոնցից 13-ը (2020թ.՝ 7)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 1-ը (2020թ.՝ 2)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով: 25 (2020թ.՝ 20) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 18 (2020թ.՝ 54) քրեական գործ միացվել է, իսկ 48 (2020թ.՝ 61) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում՝ այդ գործերով 1 անձ շարունակել է մնալ կալանքի տակ:

2021թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 133 (2020թ. ՝ 179) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 78 (2020թ. ՝ 38) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 78 (2020թ. ՝ 38) անձից 9-ը (2020թ. ՝ 5) ձերբակալվել է, որոնցից 2-ը (2020թ. ՝ 3) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 67-ի (2020թ. ՝ 19) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 66 (2020թ. ՝ 18) անձի մեղադրանք է առաջադրվել: 16 (2020թ. ՝ 4) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 5-ը (2020թ. ՝ 2) մերժվել է, 11-ը (2020թ. ՝ 2)՝ բավարարվել, 6 (2020թ. ՝ 2) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 9 (2020թ. ՝ 1) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 (2020թ. ՝ 1) մեղադրյալ ազատվել է կալանքից՝ 2-ը՝ դատարանի կողմից, 1-ը՝ դատախազի: 24 (2020թ. ՝ 10) անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 9-ինը (2020թ. ՝ 2)՝ արդարացման, 15-ինը (2020թ. ՝ 8)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 34 (2020թ. ՝ 13) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ և 3-րդ մաս) վերաբերյալ նախապատրաստվել է 246 (2020թ.՝ 366) նյութ, որոնցից 156-ով (2020թ.՝ 287) հարուցվել է քրեական գործ, 84-ով (2020թ.՝ 77)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 81-ը (2020թ.՝ 61)՝ արդարացման, իսկ 3-ը (2020թ.՝ 16)՝ ոչ արդարացման հիմքերով: 6 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 635 (2020թ.՝ 671) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 222 (2020թ.՝ 184) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 160 գործով վարույթ (2020թ.՝ 125) կարճվել է, որոնցից 106-ը (2019թ.՝ 76)՝ արդարացման, 54-ը (2019թ.՝ 49)՝ ոչ արդարացման հիմքերով, 62 քրեական գործ՝ 119 անձի վերաբերյալ, որոնցից 1-ը՝ կալանքի տակ (2020թ.՝ 59 գործ՝ 107 անձի վերաբերյալ, որոնցից 3-ը կալանքի տակ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

55 (2020թ.՝ 32) քրեական գործի վարույթ կասեցվել է, որոնցից 44-ը (2020թ.՝ 29)՝ անձը հայտնի չլինելու, 10-ը (2020թ.՝ 3)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով, 1-ը՝ այլ հիմքով: 70 (2020թ.՝ 51) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 37 (2020թ.՝ 66) գործ միացվել է, իսկ 251 (2020թ.՝ 338) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում, նշված գործերով 1 անձ գտնվել է կալանքի տակ, իսկ 1-ի խափանման միջոցը փոփոխվել է դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 635 (2020թ. ՝ 671) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 309 (2020թ. ՝296) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 309 (2020թ. ՝ 296) անձից 11-ը (2020թ. ՝ 1) ձերբակալվել է: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 255-ի (2020թ. ՝ 266) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 254 (2020թ.՝ 264) անձի մեղադրանք է առաջադրվել: 9 (2020թ. ՝ 9) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 7-ը բավարարվել է (2020թ. ՝ 7), 2-ը՝ մերժվել (2020թ.՝ 1), 5 (2020թ. ՝ 12) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 4 (2020թ. ՝ 9) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 (2020թ. ՝ 0) մեղադրյալ ազատվել է կալանքից, 1-ը՝ դատախազի, 2-ը՝ դատարանի կողմից: 95 (2020թ. ՝ 66) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 8-ինը (2020թ. ՝ 20)՝ արդարացման, 87-ինը (2020թ.՝ 46)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 112 (2020թ. ՝ 135) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու (ՀՀ քր. օր.-ի 189.1-րդ հոդված) վերաբերյալ

հաշվետու ժամանակաշրջանում նյութ չի նախապատրաստվել (2020թ.՝ 0), քրեական գործ չի հարուցվել (2020թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթ է ընդունվել 1 քրեական գործ (2020թ.՝ 1):

Փողերի լվացման (ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդված) վերաբերյալ 2021թ. ընթացքում նախապատրաստվել է 22 (2020թ.՝ 14) նյութ, որոնցից 21-ով (2020թ.՝ 14) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 40 (2020թ.՝ 23) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 1 (2020թ.՝ 1) քրեական գործի վարույթ, այն է՝ 1 քրեական գործ 2 անձի վերաբերյալ (2020թ.՝ 1 գործ՝ 1 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 12-ի (2020թ.՝ 2) վարույթը կասեցվել է՝ 7-ը՝ անձը հայտնի չլինելու, 5-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով, 2 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2020թ.՝ 3), 9 քրեական գործ միացվել է (2020թ.՝ 10), 16 (2020թ.՝ 7) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ: Ընդ որում, անավարտ քրեական գործերով կալանքի տակ է գտնվել 2 անձ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 41 (2020թ. ՝ 23) անձ:

2021թ. քրեական հետապնդման ենթարկված 41 (2020թ. ՝ 23) անձից 6-ը (2020թ. ՝ 5) ձերբակալվել է: 41 (2020թ. ՝ 23) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 36 (2020թ. ՝ 20) անձի մեղադրանք է առաջադրվել: 8 (2020թ. ՝ 9) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 1-ը մերժվել է, 7-ը՝ բավարարվել (2020թ.՝ 8), որևէ անձի նկատմամբ չի կիրառվել գրավ (2020թ.՝ 4): Քրեական հետապնդման ենթարկված 17 (2020թ. ՝ 9) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման (ՀՀ քր. օր.-ի 190.1-րդ հոդված) վերաբերյալ 2021թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել (2020թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ որևէ քրեական գործ չի հարուցվել, վարույթում որևէ գործ չի քննվել (2020թ.՝ 0):

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ գնային չարաշահման (ՀՀ քր. օր.-ի 190.2-րդ հոդված) վերաբերյալ 2021թ. ընթացքում ոչ մի նյութ չի նախապատրաստվել, ոչ մի քրեական գործ չի հարուցվել (2020թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քրեական գործ չի քննվել (2020թ.՝ 0):

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հակամրցակցային գործունեության (ՀՀ քր. օր.-ի 195-րդ հոդված) վերաբերյալ 2021թ. ընթացքում նախապատրաստվել է 2 նյութ (2020թ.՝ 0), որոնցով հարուցվել են քրեական գործեր: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 3 քրեական գործ (2020թ.՝ 0), որոնցից ավարտվել է 1-ը՝ 1 քրեական գործ կարճվել է արդարացման հիմքով: Մնացած քրեական գործերից 1-ն ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ անավարտ մնացել է 1 քրեական գործ:

Առևտրային կաշառքի (ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 5 (2020թ.՝ 8) նյութ, որոնցից 3-ով (2020թ.՝ 8) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացնող հիմքով, 1 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 16 (2020թ.՝ 26) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 8 (2020թ.՝ 8) քրեական գործի վարույթ, այն է՝ 8 (2020թ.՝ 8) գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով:

Մնացած քրեական գործերից 3-ը (2020թ.՝ 3) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 2 քրեական գործ միացվել է (2020թ.՝ 0), իսկ 3 (2020թ.՝ 11) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2021թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 8 (2020թ. ՝ 23) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 8 (2020թ. ՝ 23) անձից 2-ի (2020թ.՝ 19) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 2 (2020թ. ՝ 19) անձի մեղադրանք է առաջադրվել, 1 (2020թ. ՝ 1) անձի քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, իսկ 6 (2020թ. ՝ 22) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու (ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդված) վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել (2020թ.՝ 2 նյութ, որոնցով հարուցվել է քրեական գործ):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում գործ չի քննվել (2020թ.՝ 1):

Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 38 (2020թ.՝ 70) նյութ, որոնցից 25-ով (2020թ.՝ 47) հարուցվել է քրեական գործ, 12-ով (2020թ.՝ 23)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ 11-ը՝

արդարացման, 1-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 1 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 96 (2020թ.՝ 136) քրեական գործ, որոնցից ավարտվել է 24 (2020թ.՝ 41) քրեական գործի վարույթ: Բոլորով վարույթը կարճվել է (2020թ.՝ 38), որոնցից 21-ը (2020թ.՝ 32)՝ արդարացման, 3-ը (2020թ.՝ 6)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատարան քրեական գործ չի ուղարկվել (2020թ.՝ 3 գործ՝ 3 անձի վերաբերյալ):

Մնացած գործերից 16-ը (2020թ.՝ 15) կասեցվել է, որոնցից 15-ը (2020թ.՝ 13)՝ անձը հայտնի չլինելու, 1-ը (2020թ.՝ 2)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով, 13 քրեական գործ (2020թ.՝ 16) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 10 գործ (2020թ.՝ 17) միացվել է, իսկ 33 (2020թ.՝ 47) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 25 (2020թ. ՝ 29) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 25 (2020թ՝ 29) անձից որևէ անձ չի ձերբակալվել (2020թ.՝ 6 անձ): 7-ի (2020թ. ՝ 23) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 6 (2020թ. ՝ 22) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 (2020թ.՝ 12) անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով, 15-ի նկատմամբ՝ արդարացման: Քրեական հետապնդման ենթարկված 3 (2020թ.՝ 9) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 484 (2020թ.՝ 640) նյութ, որոնցից 185-ով (2020թ.՝ 370) հարուցվել է քրեական գործ, 269-ով (2020թ.՝ 264)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, 30 (2020թ.՝ 6) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության: Քրեական գործի հարուցումը մերժված 267 նյութեց 240-ը մերժվել է (2020թ.՝ 253) արդարացման, իսկ 27-ը (2020թ.՝ 11)՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 664 (2020թ.՝ 696) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 209 (2020թ.՝ 165) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 163 (2020թ.՝ 131) գործի վարույթ կարճվել է, որոնցից 119-ը (2020թ.՝ 107)՝ արդարացման, 44-ը (2020թ.- 24)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 46 քրեական գործ՝ 84 անձի վերաբերյալ (2020թ.՝ 34 գործ՝ 95 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 77-ը (2020թ.՝ 28) կասեցվել է, այդ թվում՝ 72-ը (2020թ.՝ 24)՝ անձը հայտնի չլինելու, 5-ը (2020թ.՝ 3)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով: 89 քրեական գործ (2020թ.՝ 100) ուղարկվել է ըստ քննչական

ենթակայության, 77-ը (2020թ.՝ 97) միացվել է, իսկ 211 (2020թ.՝ 306) քրեական գործով նախաքննություն 2021թ. ընթացքում չի ավարտվել: Ընդ որում, նշված գործերով 4 անձ (2020թ.՝ 1) շարունակել է մնալ կալանքի տակ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 336 (2020թ. ՝ 291) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 336 (2020թ. ՝ 291) անձից 15-ը (2020թ. ՝ 24) ձերբակալվել է, որոնցից 7-ը (2020թ. ՝10) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 271-ի (2020թ. ՝ 268) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 270 (2020թ. ՝ 267) անձի մեղադրանք է առաջադրվել: 23 (2020թ. ՝ 20) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 3-ը (2020թ. ՝10) մերժվել է, 20-ը (2020թ. ՝10)՝ բավարարվել, 4 (2020թ. ՝ 5) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 7 (2020թ. ՝ 25) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 (2020թ. ՝1) մեղադրյալ կալանքից ազատվել է դատախազի, 7 մեղադրյալ (2020թ. ՝1)՝ դատարանի կողմից: 77 (2020թ. ՝ 37) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 24-ինը (2020թ. ՝12)՝ արդարացման, 53-ինը (2020թ. ՝25)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 113 (2020թ. ՝ 160) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնական լիազորություններն անցնելու (ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 162 (2020թ.՝ 195) նյութ, որոնցից 98-ով (2020թ.՝ 107) հարուցվել է քրեական գործ, 62-ով (2020թ.՝ 85)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, ընդ որում, 60-ը (2020թ.՝ 82)՝ արդարացման, 2-ը (2020թ.՝ 3)՝ ոչ արդարացման հիմքերով, 2 նյութ (2020թ.՝ 3) ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 153 (2020թ.՝ 163) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 54 (2020թ.՝ 75) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 52 քրեական գործով վարույթ (2020թ.՝ 70) կարճվել է, որոնցից 51-ը (2020թ.՝ 68)՝ արդարացման, 1-ը (2020թ.՝ 2)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 2 քրեական գործ՝ 2 անձի վերաբերյալ (2020թ.՝ 5 գործ՝ 8 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 27-ը (2020թ.՝ 21) կասեցվել է՝ բոլորը (2020թ.՝ 21) անձի հայտնի չլինելու հիմքով, 32 քրեական գործ (2020թ.՝ 27) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 12 գործ (2020թ.՝ 19) միացվել է, իսկ 28 գործի նախաքննություն (2020թ.՝ 21) մնացել է անավարտ: Քրեական գործերից 1-ով խափանման միջոց կալանքը փոփոխվել է դատարանի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 15 (2020թ.՝ 31) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 4 անձ ձերբակալվել է (2020թ.՝ 12), որոնցից 1-ն ազատվել է ձերբակալումից: 14 (2020թ. ՝ 28) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 14 (2020թ՝ 28) անձի մեղադրանք է առաջադրվել: 4 (2020թ. ՝ 11) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 2-ը մերժվել է, 2-ը՝ բավարարվել, 1 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 3 (2020թ. ՝ 4) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: 1 մեղադրյալ կալանքից ազատվել է դատարանի կողմից: 7 (2020թ. ՝ 10) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու (ՀՀ քր. օր.-ի 310-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 3 նյութ, որոնցով հարուցվել են քրեական գործեր (2020թ.՝ 0): Վարույթում քննվել է 7 քրեական գործ (2020թ.՝ 1), որոնցով նախաքննությունը չի ավարտվել: 1 քրեական գործով վարույթը կասեցվել է՝ անձի հայտնի չլինելու հիմքով, 3 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 2 քրեական գործ միացվել է, 1 քրեական գործ հաշվետու ժամանակահատվածում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 2 անձ:

1 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով: 1 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Ապօրինի հարստանալու (ՀՀ քր. օր.-ի 310.1-րդ հոդված) վերաբերյալ 2021թ. ընթացքում նյութ չի նախապատրաստվել (2020թ.՝ 5 նյութ, որոնցից 3-ով հարուցվել է քրեական գործ, 2-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արդարացման հիմքով):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 4 քրեական գործ (2020թ.՝ 6), որոնք չեն ավարտվել (2020թ.՝ 1): Քրեական գործերից 1-ը կասեցվել է անձի հայտնի չլինելու հիմքով, 1-ն ուղարկվել է ըստ ենթակայության, 2 քրեական գործ հաշվետու ժամանակահատվածում մնացել է անավարտ, որոնցից 1-ով կալանքի տակ է գտնվել 1 անձ:

Քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 10 անձ (2020թ.՝ 6), որոնց մեղադրանք է առաջադրվել (2020թ.՝ 6): Նրանցից 2-ի պաշտոնավարումը դադարեցվել է (2020թ.՝ 1): 2-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով (2020թ.՝ 2), իսկ 4-ի (2020թ.՝ 4) վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Կաշառք ստանալու (ՀՀ քր. Օր.-ի 311-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 108 (2020թ.՝ 94) նյութ, որոնցից 79-ով (2020թ.՝ 80) հարուցվել է քրեական գործ, 25-ով (2020թ.՝ 14)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 24-ը (2020թ.՝ 13)՝ արդարացման, 1-ը (2020թ.՝ 1)՝ ոչ արդարացման հիմքերով, 4 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 201 (2020թ.՝ 224) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 40 (2020թ.՝ 49) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 14 քրեական գործ (2020թ.՝ 23) կարճվել է արդարացման հիմքով, իսկ 26 քրեական գործ՝ 102 անձի վերաբերյալ, որոնցից 9-ը գտնվել է կալանքի տակ (2020թ.՝ 26 քրեական գործ՝ 82 անձի վերաբերյալ, որոնցից 10-ը գտնվել է կալանքի տակ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 15-ը (2020թ.՝ 18) կասեցվել է, այդ թվում՝ 14-ը (2020թ.՝ 13)՝ անձը հայտնի չլինելու, 1-ը (2020թ.՝ 4)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով: 63 գործ (2020թ.՝ 48) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 15 գործ (2020թ.՝ 24) միացվել է, իսկ 68 գործի նախաքննությունը 2021թ. ընթացքում չի ավարտվել (2020թ.՝ 85): Անավարտ մնացած քրեական գործերով 16 (2020թ.՝ 12) անձ գտնվել է կալանքի տակ: Ընդ որում, նշված գործերով 6 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը դատարանի կողմից (2020թ.՝ 12) փոփոխվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 230 (2020թ. ՝ 132) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 230 (2020թ. ՝ 32) անձից 76-ը (2020թ. ՝ 25) ձերբակալվել է, որոնցից 31-ը (2020թ. ՝ 4) ազատվել է ձերբակալումից: 183-ի (2020թ. ՝ 111) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 183 (2020թ. ՝ 111) անձի մեղադրանք է առաջադրվել: 53 (2020թ. ՝ 38) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 9-ը (2020թ. ՝ 3) մերժվել է, 44-ը (2020թ. ՝ 35) բավարարվել է, 8 (2020թ.՝ -15) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 22 (2020թ. ՝ 10) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 մեղադրյալ (2020թ. ՝ 1) ազատվել է կալանքից դատախազի կողմից, 11 մեղադրյալ (2020թ՝ 2)՝ դատարանի կողմից: 11 (2020թ. ՝ 5) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, 3-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 95 (2020թ. ՝ 75) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քր. Օր.-

ի 311[1]-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 10 (2020թ.՝ 17) նյութ, բոլորով (2020թ.՝ 12) հարուցվել է քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 21 (2020թ.՝ 28) քրեական գործ, որոնցից ավարտվել է 6 (2020թ.՝ 17) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 5 (2020թ.՝ 14) գործի վարույթ կարճվել է, որոնցից 4-ը (2020թ.՝ 14)՝ արդարացման, 1-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 1 քրեական գործ՝ 5 անձի վերաբերյալ (2020թ.՝ 1 քրեական գործ՝ 6 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 1-ը (2020թ.՝ 2) կասեցվել է (2020թ.՝ 2) անձը հայտնի չլինելու հիմքով, 3 քրեական գործ (2020թ.՝ 4) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 2 գործ միացվել է, 9 գործի (2020թ.՝ 4) նախաքննությունը 2021թ. ընթացքում չի ավարտվել:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 21 (2020թ. ՝ 30) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 21 (2020թ. ՝ 30) անձից 14-ը (2020թ. ՝ 12) ձերբակալվել է, 9-ը (2020թ. ՝ 2) ազատվել է ձերբակալումից: 20-ի (2020թ՝ 30) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 20 (2020թ. ՝ 30) անձի մեղադրանք է առաջադրվել: 8 (2020թ. ՝ 4) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 7-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել: 1 մեղադրյալ ազատվել է կալանքից դատախազի, 2-ը՝ դատարանի կողմից: Քրեական հետապնդման ենթարկված 13 (2020թ. ՝ 4) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու (ՀՀ քր. Օր.-ի 311[2]-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ (2020թ.՝ 0): Հաշվետու ժամանակահատվածում քննվել է 1 քրեական գործ (2020թ.՝ 0), որն ուղարկվել է ըստ ենթակայության:

Կաշառք տալու (ՀՀ քր. Օր.-ի 312-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 20 (2020թ.՝ 25) նյութ, որոնցից 16-ով (2020թ.՝ 16) հարուցվել են քրեական գործեր, 4-ով (2020թ.՝ 8) քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 40 (2020թ.՝ 39) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 15 (2020թ.՝ 13) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 5 (2020թ.՝ 3) քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 3-ը (2020թ.՝ 1)՝ արդարացման, 2-ը (2020թ.՝ 2)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 10 քրեական գործ՝ 23 անձի վերաբերյալ (2020թ.՝ 10 քրեական գործ՝ 25 անձի վերաբերյալ, որոնցից 3-ը՝ կալանքի տակ), որոնցից 2-ը կալանքի տակ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 2-ը (2020թ.՝ 4) կասեցվել է՝ հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 6 քրեական գործ (2020թ.՝ 8) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 5 քրեական գործ (2020թ.՝ 5) միացվել է, իսկ 12 գործով նախաքննությունը 2021թ. ընթացքում չի ավարտվել (2020թ.՝ 9):

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 303 (2020թ. ՝183) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 303 (2020թ. ՝ 183) անձից 43-ը (2020թ. ՝ 9) ձերբակալվել է, որոնցից 37-ը (2020թ. ՝ 6) ազատվել է ձերբակալումից: 227 անձի (2020թ. ՝ 119) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 217 (2020թ. ՝ 118) անձի մեղադրանք է առաջադրվել: 11 (2020թ.՝ 7) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 7-ը (2020թ. ՝ 1) մերժվել է, 4-ը (2020թ.՝ 6)՝ բավարարվել, 2 (2020թ. ՝ 6) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 4 մեղադրյալ ազատվել է կալանքից դատարանի կողմից: 31 (2020թ. ՝ 9) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 8-ինը (2020թ՝ 5)՝ արդարացման, 23-ինը (2020թ. ՝ 4)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 124 (2020թ.՝ 88) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու (ՀՀ քր. Օր.-ի 312[1]-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն հարուցվել (2020թ.՝ 0):

2021թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 (2020թ.՝ 1) քրեական գործ, որով նախաքննությունը հաշվետու ժամանակահատվածում չի ավարտվել:

Հաշվետու ժամանակաշրջանում քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 35 (2020թ. ՝ 39) անձ: 25 (2020թ. ՝ 39) անձի մեղադրանք է առաջադրվել: 23 (2020թ. ՝ 2) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով: Քրեական հետապնդման ենթարկված 13 (2020թ. ՝ 10) անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2022թ. :

Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու (ՀՀ քր. Օր.-ի 312.2-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նյութ չի նախապատրաստվել (2020թ.՝ 4 նյութ, որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է, 3 նյութով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման, 1-ով՝ ոչ արդարացման հիմքերով):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ քրեական գործեր չեն քննվել (2020թ.՝ 0):

Կաշառքի միջնորդության (ՀՀ քր. Օր.-ի 313-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 2 (2020թ.՝ 2) նյութ, որոնցից 1-ով (2020թ.՝ 2) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 (2020թ.-5) քրեական գործ, որն ավարտվել է (2020թ.՝ 1), այն է՝ 1 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2020թ.՝ 2 անձի վերաբերյալ 1 քրեական գործ):

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 35 (2020թ՝ 30) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 35 (2020թ. ՝ 30) անձից 4-ը ձերբակալվել (2020թ. ՝ 1) է, որոնցից 2-ն ազատվել է ձերբակալումից: 13-ի (2020թ. ՝ 20) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 13 (2020թ. ՝ 20) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 1-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել: 3 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման (2020թ. ՝ 1) հիմքով: Քրեական հետապնդման ենթարկված 15 (2020թ. ՝ 15) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնեական կեղծիքի (ՀՀ քր. Օր.-ի 314-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 154 (2020թ.՝ 183) նյութ, որոնցից 80-ով (2020թ.՝ 109) հարուցվել է քրեական գործ, 72-ով (2020թ.՝ 71)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 60-ով (2020թ.՝ 59)՝ արդարացման, իսկ 12-ով (2020թ.՝ 12) ոչ արդարացման հիմքերով, ևս 2 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության (2020թ.՝ 3):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 180 (2020թ.՝ 196) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 80 (2020թ.՝ 77) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 74 (2020թ.՝ 57) գործի վարույթ կարճվել է, որոնցից 57-ը (2020թ.՝ 37)՝ արդարացման, 17-ը (2020թ.՝ 20)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 6 քրեական գործ՝ 32 անձի վերաբերյալ (2020թ.՝ 20 քրեական գործ՝ 52 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 19-ի (2020թ.՝ 14) վարույթ կասեցվել է, որոնցից 18-ը՝ անձը հայտնի չլինելու (2019թ.՝ 5), 1-ը՝ այլ հիմքերով, 9 (2019թ.՝ 14) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 18 (2020թ.՝ 17) քրեական գործ միացվել է, իսկ 54 (2021թ.՝ 74) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում 1 անձ այդ գործերով գտնվել է կալանքի տակ (2020թ.՝ 1):

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 85 (2020թ. ՝120) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 84 (2020թ. ՝ 120) անձից 1-ը (2020թ. ՝ 2) ձերբակալվել է, որն ազատ է արձակվել: 69 անձի (2020թ. ՝ 94) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 69 (2020թ. ՝ 94) անձի մեղադրանք է առաջադրվել: 3 մեղադրյալի (2020թ. ՝ 8) պաշտոնավարումը դադարեցվել է: 10 (2020թ. ՝ 37) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 5-ինը (2020թ. ՝ 11)՝ արդարացման, 5-ինը (2020թ. ՝ 26)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 32 (2020թ. ՝ 37) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր.-ի 332-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2020թ.՝ 1) նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով (2020թ.՝ 1 գործ հարուցվել է):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 3 քրեական գործ (2020թ.՝ 1), որոնցից 2-ը կասեցվել է՝ 1-ը անձը հայտնի չլինելու, մյուսը՝ այլ հիմքերով, 1 գործով նախաքննությունը մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ (2020թ.՝ 0), որին մեղադրանք է առաջադրվել:

Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու (ՀՀ քր. օր.-ի 352-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 1 նյութ (2020թ.՝ 1), որով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում գործ չի քննվել (2020թ.՝ 0):

Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության (ՀՀ քր. օր.-ի 375-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 13 (2020թ.՝ 74) նյութ, որոնցից 12-ով (2020թ.՝ 73) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է (2020թ.-՝ 1) արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 20 (2020թ.՝ 121) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 2 գործ (2020թ՝ 45), որոնք արդարացման հիմքով (2020թ.՝ 40) կարճվել են: Քրեական գործ դատարան չի ուղարկվել (2020թ.՝ 5 գործ՝ 10 անձի վերաբերյալ): Քրեական գործերից 4-ն ուղարկվել է ըստ ենթակայության, 4-ը միացվել է, 10-ը 2021թ. մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 50 (2020թ. ՝ 209) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 50 (2020թ. ՝ 209) անձից 9-ը ձերբակալվել է (2020թ՝ 24), որոնցից 1-ն ազատվել է ձերբակալումից: 38-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 38 (2020թ. ՝ 209) անձի մեղադրանք է առաջադրվել: 10 մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան (2020թ. ՝ 25), որոնցից 2-ը մերժվել է (2020թ.՝ 9), 8-ը՝ բավարարվել (2020թ.՝ 16): 1 (2020թ. ՝ 24) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 մեղադրյալ ազատվել է կալանքից դատարանի որոշմամբ (2020թ. ՝ 1): 9 (2020թ. ՝ 35) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 5-ինը (2020թ. ՝ 14)՝ արդարացման, 5-ինը (2020թ. ՝ 21)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 29 (2020թ.՝ 58) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2022թ.:

Այսպիսով, վերլուծելով վերը արձանագրված թվային ցուցանիշները՝ պետք է փաստել, որ 2020թ. համեմատ 2021թ. 401-ով կամ շուրջ 22.2 %-ով նվազել է կոռուպցիոն բնույթի դեպքերով նախապատրաստված նյութերի թվաքանակը, 434-ով կամ շուրջ 35.2 %-ով նվազել է կոռուպցիոն բնույթի դեպքերով հարուցված քրեական գործերի քանակը:

2021թ. ավելացել է վարույթ ընդունված կոռուպցիոն հանցագործությունների թվաքանակը՝ կազմելով 643, այսինքն՝ 128-ով կամ 24.9 %-ով ավելի, քան 2020թ., երբ վարույթ է ընդունվել կոռուպցիոն հանցագործության 515 քրեական գործ:

2021թ. վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործության 2318 քրեական գործ, ինչը 217-ով կամ շուրջ 8.6 %-ով պակաս է 2020թ. վարույթում քննված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թվաքանակից՝ 2535 քրեական գործ:

2021թ. ընթացքում դրական ցուցանիշ է արձանագրվել ավարտված կոռուպցիոն բնույթի քրեական գործերի ցուցանիշում, քանի որ հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 730 քրեական գործ, այսինքն՝ 14-ով կամ 2 %-ով ավելի 2020թ. համեմատ (716 գործ):

2021թ. ընթացքում ավարտված վերոհիշյալ 730 գործից 543-ը կամ 74,4%-ը (2020թ.՝ 74,4%-ը) նույն ժամանակահատվածում կարճվել է: 2021թ. ընթացքում կարճված քրեական գործերը 10-ով ավելի են 2020թ. կարճված քրեական գործերի քանակից (2020թ. ՝ 533):

2021թ. ընթացքում ավարտված վերոհիշյալ 730 գործից 187-ը կամ 25.6%-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որպիսի ցուցանիշն ավելի բարձր է 2020թ. արձանագրվածից (2020թ.՝ 25.5%): 2021թ. ընթացքում

մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 5-ով կամ 0.6 %-ով ավելի քրեական գործ, քան 2020թ՝ 183 գործ:

2021թ. մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերով դատի է տրվել 433 անձ, ինչը 23-ով կամ 5.6%-ով ավելի է, քան 2020թ. արձանագրված ցուցանիշից, երբ դատի է տրվել 410 անձ:

2021թ. անավարտ է մնացել կոռուպցիոն բնույթի 765 քրեական գործով նախաքննություն, ինչը 269-ով կամ 26 %-ով պակաս է, քան 2020թ. արձանագրված ցուցանիշը, երբ չի ավարտվել 1034 կոռուպցիոն բնույթի քրեական գործով նախաքննություն:

Ամփոփելով վերը նշված հանցագործությունների վերաբերյալ արձանագրված ցուցանիշները՝ հարկ է փաստել, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շարժընթացում արձանագրվել է հիմնականում նվազման միտում, թեև որոշ հանցատեսակներով դիտվել է որոշակի աճ: Հարկ է նշել նաև, որ իրավապահ համակարգի կողմից շարունակվել է իրագործվել նախորդ տարիներից որդեգրած այն քաղաքականությունը, որ ոչ մեծ կամ միջին ծանրության կոռուպցիոն գործերով պետությանը պատճառված վնասը վերականգնելու, ինչպես նաև օրենքի պահանջների լիարժեք առկայության դեպքում կիրառվում է լայն խրախուսական գործիքակազմ և գործուն զղջալու ու այլ ոչ արդարացման հիմքերով կայացվում են բազմաթիվ որոշումներ քրեական գործով վարույթը կարճելու մասին:

2021թ. ընթացքում քննված քրեական գործերով, որոնց ճնշող մեծամասնությունը կոռուպցիոն բնույթի գործերն են, հանցագործությամբ պետությանը կամ համայնքներին պատճառված վնասը նախնական հաշվարկով (նկատի ունենալով, որ քննության ընթացքում գտնվող գործերով կարող է փոփոխվել) կազմել է շուրջ 443 մլրդ ՀՀ դրամ՝ 2020թ. արձանագրված շուրջ 227 մլրդ ՀՀ դրամի դիմաց (հարկ է նշել, որ շուրջ 443 մլրդ ՀՀ դրամ վնասը ներկայացվել է աճողական կարգով՝ հաշվետու ժամանակահատվածում քրեական գործերի քննության ընթացքում նշանակված փորձաքննությունների կամ այլ քննչական ու դատավարական գործողությունների արդյունքում հաստատված ցուցանիշից ելնելով): 2021 թվականի ընթացքում քրեական գործերով նախաքննության ընթացքում վերականգնվել է շուրջ 7 մլրդ ՀՀ դրամի վնաս՝ 2020թ. ՝ 14.2 մլրդ ՀՀ դրամի դիմաց: Արդարացման հիմքով կայացված որոշումների արդյունքում 2021 թվականի ընթացքում պատճառված ընդհանուր վնասից նվազեցված վնասի չափը կազմում է շուրջ 900.100.000 ՀՀ դրամ:

Հիշյալ քրեական գործերի նախաքննության ընթացքում պետությանը, համայնքներին պատճառված նյութական վնասների վերականգնման նպատակով արգելանք է դրվել շուրջ 8.1 մլրդ ՀՀ դրամի և հաշիվների, 116 անուն շարժական և 233 անշարժ գույքերի ու 44 հողատարածքների վրա, որից գնահատվել է 26.404.774.927 ՀՀ դրամ արժողությամբ շարժական և անշարժ գույքը (2020 թվականի ընթացքում մեղադրյալների կամ ամբաստանյալների հաշիվների,

շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք է դրվել շուրջ 26 մլրդ դրամի չափով):

2021թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանցից 590-ը (2020թ.՝ 671) պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ են:

Նշված պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներն ըստ գործունեության ոլորտների և պաշտոնների դասակարգվում են.

1. ՀՀ պաշտոնաթող նախագահ՝ 1 անձ (2020թ.՝ 1) :
2. ՀՀ Ազգային ժողով՝ 2 (2020թ՝ 3) անձ,

այդ թվում՝

ա) ԱԺ նախկին պատգամավոր՝ 1 անձ,

բ) ԱԺ պատգամավոր՝ 1 անձ,

3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարար՝ 1 անձ:
4. ՀՀ գյուղատնտեսության նախարար՝ 1 անձ:
5. ՀՀ ՖՆ փոխնախարար՝ 2 անձ:
6. Մշակույթի նախարար-1:
7. Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ 1 (2020թ. ՝1) անձ:
8. Սնանկության դատարանի դատավոր՝ 2 (2020թ. ՝2) անձ:
9. ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ՝ 6 (2020թ՝ 4) անձ,

այդ թվում՝

ա) բաժնի խմբի զինծառայող – 3 անձ,

բ) բաժնի պետի տեղակալ – 1 անձ,

գ) ՄՎ պետ – 1 անձ,

դ)բաժնի պետ – 1 անձ:

10. ՀՀ քննչական կոմիտեի քննիչ՝ 2 (2020թ. ՝1) անձ:
11. Ոստիկանության աշխատակիցներ՝ 21 (2020թ. ՝50) անձ,

այդ թվում՝

ա) բաժնի պետի տեղակալ՝ 1 անձ,

բ) բաժնի հետաքննիչ՝ 1 անձ,

գ) բաժանմունքի պետ՝ 1 անձ,

դ) ավագ օպերլիազոր՝ 1 անձ,

ե) օպերլիազոր՝ 1 անձ,

զ) ՊՊԳՎ բաժնի նախկին պետ՝ 1 անձ,

է) ՊՊԳՎ բաժնի աշխատակից՝ 1 անձ,

ը) ՃՈ տեսուչ՝ 5 անձ,

թ) ՃՈ բաժնի պետ՝ 1 անձ,

ժ) ոստիկան՝ 6 անձ,

ժա)ԱՎՎ պետի տեղակալ՝ 1 անձ,

ժբ) բաժնի ավագ տեսուչ՝ 1 անձ:

12. ՀՀ ԱՆ ՔԿՀ աշխատակիցներ՝ 2 (2020թ. ՝ 9) անձ,
այդ թվում՝
ա) ՔԿՀ ծառայող՝ 1 անձ,
բ) առաջատար մասնագետ՝ 1 անձ:
13. ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք՝ 37 (2020թ. ՝ 10) անձ,
այդ թվում՝
ա) հարկային ծառայության բաժնի պետ՝ 1 անձ,
բ) մաքսային ծառայության հերթափոխի պետ՝ 1 անձ,
գ) մաքսային տեսուչ ՝ 5 անձ,
դ) օպերլիազոր՝ 5 անձ,
ե) մաքսային ծառայության բաժանմունքի պետ՝ 3 անձ,
զ) հարկային տեսուչ՝ 5 անձ,
է) գլխավոր օպերլիազոր՝ 4 անձ,
ը) ավագ օպերլիազոր՝ 4 անձ,
թ) հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության բաժնի պետ՝ 2 անձ,
ժ) բաժանմունքի պետ՝ 1 անձ,
ժա) բաժանմունքի մաքսային ավագ տեսուչ՝ 4 անձ,
ժբ) այլ աշխատակիցներ՝ 2:
14. Հարկադիր ծառայության աշխատակից՝ 3 (2020թ. ՝ 1) անձ:
15. Մարզպետ՝ 2 անձ:

Առողջապահության ոլորտ՝ 62 (2020թ. ՝ 48) անձ

Պոլիկլինիկայի տնօրեն՝ 2,
Բժիշկ՝ 26,
Բժշկասոցիալական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահ՝ 1,
Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի տնօրեն՝ 1,
Արյունաբանական կենտրոնի տնօրեն՝ 1,
ԲԿ-ի տնօրեն՝ 6,
Բուժամբուլատորիայի վարիչ՝ 1,
Բաժնի վարիչ՝ 3,
Հանձնաժողովի նախագահ՝ 1,
Բաժանմունքի վարիչ՝ 1:

ՀՀ առողջապահության փոխնախարար, ՓԲԸ-ի տնօրեն, ՊՈԱԿ-ի տնօրեն, համակարգող խմբի ղեկավար, պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի սրտաբան, ՓԲԸ զորակոչի բաժանմունքի վարիչ, ՓԲԸ բաժանմունքի վարիչ՝ 19 անձ:

Կրթության ոլորտ՝ 70 (2020թ.՝ 89) անձ

Դպրոցի տնօրեն՝ 30,
ՀՈԱԿ-ի տնօրեն՝ 1,
դասախոս՝ 1,
ամբիոնի վարիչ՝ 1,
ուսումնական հաստատության տնօրեն՝ 7,
ուսումնական հաստատության փոխտնօրեն՝ 1,
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 3,
ուսումնարանի տնօրեն՝ 1,
ինստիտուտի տնօրեն՝ 2,
ՊՈԱԿ-ի տեսուչ՝ 1,
մշակույթի տան տնօրեն՝ 1,
հիմնադրամի տնօրեն՝ 1,
կրթահամալիրի տնօրեն՝ 1,
մշակութային կենտրոնի տնօրեն՝ 2,
հաշվապահ՝ 2,
մարզպետարանի կրթության վարչության պետ՝ 1,
մարզադպրոցի տնօրեն՝ 2,
համալսարանի տնօրեն՝ 1,
ուսմասվար՝ 1,
մանկապարտեզի տնօրեն՝ 7,
ԵՊՀ ռեկտոր՝ 1,
ՊՈԱԿ-ի ռեկտոր՝ 1,
ՊՈԱԿ-ի պրոռեկտոր՝ 1:

Սոցիալական ապահովության ոլորտ՝ 40 (2020թ. ՝ 39) անձ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փորձաքննության բաժնի ղեկավար՝ 1,
նախարարության Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն՝ 1,
նույն կենտրոնի տնօրենի տեղակալ՝ 1,
նույն կենտրոնում ծրագրերի իրականացման բաժնի պետ՝ 1,
նույն կենտրոնի գլխավոր մասնագետ՝ 2,
նույն կենտրոնի առաջատար մասնագետ՝ 1,
նույն կենտրոնի գործավար օպերատոր՝ 2,
նախարարության ԲՓԳ թիվ 9 ԲՍՓ բաժնի ղեկավար՝ 1,
սոցիալական ծառայության պետի տեղակալ՝ 1,

ՀՀ ՊՆ ԶՍՊՎ սոցիալական օգնությունների կազմակերպման և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բաժանմունքի պետ՝ 1,

սոց. ծառայության տարածքային բաժնի պետ՝ 1,

նույն բաժնի մասնագետ՝ 1,

սոց. ծառայության նախկին պետ՝ 1,

սոց. աջակցության տարածքային բաժնի պետ՝ 1,

զբաղվածության տարածքային կենտրոնի պետ՝ 1,

սոցիալական աջակցության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ՝ 1,

տուն-ինտերնատի տնօրեն՝ 1,

տուն-ինտերնատի հաշվապահ՝ 1,

տուն-ինտերնատի փոխտնօրեն՝ 1,

հաշվապահ՝ 1,

գլխավոր մասնագետ՝ 8,

առաջին կարգի մասնագետ՝ 1,

սոց. ծառայության նախկին պետ՝ 1,

սոց. ծառայության բաժնի պետ՝ 2,

նշված բաժնի մասնագետներ՝ 3,

առողջապահության և սոցիալական հարցերի նախարարի նախկին խորհրդական՝ 1,

գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ 1,

գնումների բաժնի նախկին պետ՝ 1:

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտ՝ 5 (2020թ.՝ 40) անձ

Պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ և բաժնի պետ՝ 2,

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ 1,

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդական՝ 1,

«ՀԱԷԿ» ՓԲԸ վերանորոգումների նախապատրաստման և կատարման բաժնի պետ՝ 1:

Տեղական ինքնակառավարման ոլորտ՝ 172 (2020թ. ՝ 134) անձ

Համայնքի ղեկավար՝ 130 (ներկա և նախկին),

Քաղաքապետ՝ 1,

Գյումրու համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ՝ 1,

Գյումրու համայնքապետարանի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի տեղակալ՝ 1,

Քաջարանի համայնքապետի տեղակալ՝ 1,

Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ 1,

Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Գեղի գյուղի վարչական ղեկավար՝ 1,

Կոտայքի մարզի Հացավան համայնքում՝ որպես առաջատար մասնագետ ՝ 1,

Երևանի քաղաքապետարանի «Բնակչության հատուկ սպասրկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն «Սիլիկյան» գերեզմանատան վարիչ՝ 1,

Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության բաժնի պետ՝ 1,

գյուղապետ՝ 1,

Երևանի քաղաքապետարանի ՃՔ վարչության պետի տեղակալ- 1,

վարչական շրջանի աշխատակազմի ֆին. բաժնի պետ՝ 1,

վարչական շրջանի ղեկավար՝ 1,

համայնքապետարանի հաշվապահ՝ 2,

քաղաքապետ՝ 1,

գրադարանի տնօրեն՝ 1,

համայնքի ղեկավարի տեղակալ՝ 6,

Երևանի նախկին քաղաքապետ՝ 1,

Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության վարչության նախկին պետ՝ 1,

համայնքապետարանի գանձումների բաժնի պետ՝ 1,

համայնքի գլխավոր մասնագետ՝

համայնքապետարանի այլ աշխատակիցներ՝ 12,

քաղաքապետարանի աշխատակիցներ՝ 3:

Զինված ուժեր՝ 107 (2020թ.՝ 132) անձ

ՀՀ ՊՆ-ում որպես բարձրագույն սպայական խորհրդատվական խորհրդի անդամ՝ 1,

ՀՀ ՊՆ նախկին նախարար՝ 1,

ՀՀ ՊՆ 14018 զորամասի հրամանատարի տեղակալի ինժիներա-ավիացիոն ծառայության գծով գլխավոր ինժեներ՝ 1,

ՀՀ ՊՆ ռազմական վերահսկողության ծառայության տեսուչ-սպա՝ 1,

ՀՀ ՊՆ Շիրակի ստորաբաժանման զորահավաքային բաժանմունքի սպա՝ 1 անձ,

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Արագածոտնի մարզի տարածքային ստորաբաժանման Ապարանի բաժանմունքի պետ՝ 1,

ՀՀ ՊՆ 60925 զորամասում որպես առաջին գումարտակի բարոյահոգեբանական

ապահովման գծով տեղակալ՝ 1,

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 տարածքային ստորաբաժանման Դիլիջանի բաժանմունքի պետ՝ 1,

ՀՀ ՊՆ ԳՇ ՌԵՊ վարչության պետ՝ 1,

ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ՝ 1,

ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի տեղակալ՝ 1,

ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության ավիացիոն տեխնիկական ունեցվածքի ծառայության պետ՝ 1,

ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերի և հրետանու պետ-վարչության պետ՝ 1,

Արթիկի զին. կոմի տեղակա՝ 1,

ՀՀ ՊՆ 68617 զորամասի շտաբի պետ՝ 1,

ՀՀ ՊՆ 21127 զորամասի 2-րդ գումարտակի հրամանատար՝ 1,

ՀՀ ՊՆ ՌՈ աշխատակիցներ՝ 2,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության արտադրատեխնիկական բաժնի պետ՝ 1,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ՝ 1,

հանձնաժողովի նախագահ՝ 1,

հանձնաժողովի անդամներ՝ 4,

զորամասի ֆինանսական ծառայության ավագ հաշվապահ՝ 1,

զորամասի թիկունքի պլանավորման բաժանմունքի պետ՝ 1,

զորամասի մարտական պատրաստության բաժնի ավագ սպա՝ 1,

զորամասի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ՝ 1,

զորամասի սպառազինության գծով տեղակալ՝ 2,

ուսումնական կենտրոնի պետ՝ 1,

մարտական պատրաստության գծով տեղակալ՝ 1,

զորամասի ավտոմոբիլային ծառայության պետ՝ 1,

գումարտակի հրամանատար՝ 3,

զորամասի հրամանատարի տեղակալ՝ 1,

զորամասի օդանավակայանի շահագործման վաշտի պետ-տեխնիկ՝ 1,

զորամասի օդանավակայանի շահագործման վաշտի հրամանատար՝ 1,

զորամասի պահեստների ՎՔՆ պահեստի պետ՝ 1,

զորամասի իրային ծառայության պետ՝ 1,

գումարտակի հրամանատար՝ 1,
դիվիզիոնի հրամանատար՝ 1,
զորամասի ֆինանսական ծառայության նախկին պետ՝ 1,
զորահավաքային բաժանմունքի խմբի պետ՝ 1,
ՊԲ ֆին. բաժնի հաշվապահ-գանձապահ՝ 1,
զորամասի ֆինանսական ծառայության պետ՝ 1,
զորամասի համալրման բաժնի պետ՝ 1,
զորամասի զրահատանկային ծառայության պետ՝ 1,
վիրաբուժական կլինիկայի ղեկավար՝ 1,
ՀՀ ՊՆ տեղակալ՝ ՆՏԱԴ-ի պետ՝ 1,
ՌՈ պետի պաշտոնակատար՝ 1,
ՌՈԲ ընդունիչ-բաշխիչ պետի օպերատիվ գծով տեղակալ՝ 1,
ԶՈՒ և ԳՇ օպերատիվ ԳՎ ռազմավարական պլանավորման վարչության պետի տեղակալ՝ 1,
զորամասի ֆինանսական ծառայության պետ՝ 1,
նախկին զինվորական կոմիսար՝ 2,
վիրաբուժության բաժնի վիրաբույժ՝ 1,
զորամասի գործավարության պետ՝ 1,
զորամասի ԷՀՄ տեխնիկ՝ 1,
զորամասի ֆինանսական ծառայության նախկին պետ՝ 1,
զորամասի հրամանատար՝ 5,
ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ տարածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ՝ 1,
զինկոմիսարիատի 2-րդ բաժանմունքի պետ՝ 1,
համալրման բաժանմունքի սպա՝ 1,
դասակի հրամանատար՝ 1,
կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ 1,
սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտի բժիշկ՝ 1,
բժիշկ-ֆտիզիատոր՝ 1,
սրտաբանական բաժնի վարիչ՝ 1,
զորակոչային բաժանմունքի պետ՝ 1,
զորամասի հոգեբուժական բաժնի բժիշկ-օրդինատոր՝ 1,
նյարդաբանական բաժանմունքի ավագ նյարդաբան՝ 1,
«Հոգեկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ բաժնի վարիչ՝ 1,
ԲՀ նախագահ, 2-ը՝ ԲՀ անդամ՝ 1,
զորամասի հրամանատարի թիկունքի և կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ՝ 1,
գումարտակի թիկունքի պետ՝ 1,

գումարտակի հրամանատար՝ 1,
ՊԲ կադրերի բաժնի պետ՝ 1,
զորամասի ֆինանսական ծառայության պետ՝ 1,
զորամասի ԱՏ և ՀՀՍ պետ՝ 1,
զորամասի տանկային աշտանակների գումարտակի հրամանատար՝ 1,
զորամասի համալրման բաժանմունքի պետ՝ 1,
զորամասի բուժկետի պետ՝ 1,
բուժծառայության պետ՝ 1,
զորամասի կոմունալ շահագործման ծառայության պետ՝ 1,
զորամասի ֆինանսական ծառայության նախկին պետ՝ 1,
զորամասի շտաբի պետի տեղակալ-համալրման բաժանմունքի պետ՝ 1,
զորամասի դասակի հրամանատար՝ 1,
զորամասի հրամանատարի նյութատեխնիկական ապահովման գծով տեղակալ՝ 1,
զորամասի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ՝ 1,
զորամասի հրամանատարի մարտական պատրաստության գծով տեղակալ՝ 1,
զորամասի հրամանատարի մարտական հերթապահության գծով տեղակալ՝ 1,
ՌՈ բաժնի քրեական հետախուզության սպա՝ 2,
զորամասի հրամանատարի բարոյահոգեբանական գծով տեղակալ՝ 1,
զորամասի շտաբի պետ՝ 1,
զորամասի ծառայության պետ՝ 1,
ՀՕՊ զորքերի վարչության նախկին պետ՝ 1,
ՊԲ ԿՇ և ԶԲ գծով տեղակալ՝ 1,
զորամասի ՀՏԿ պետ՝ 1,
ԶՈՒ ռազմաբժշկական վարչության նախկին պետ՝ 1,
ՀԴ հրամանատար՝ 1:

Այլ ոլորտ՝ 45 (2020թ.՝ 67) անձ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ՝ 1,
«Հայաստան Համահայկական Հիմնադրամ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն՝ 1,
Անշարժ գույքի կադաստրի ՊԿ ստորաբաժանման ղեկավար՝ 1,
Սևան-Հրազդան-Ջրառ ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար՝ 1,
ՀՀ ԱՆ ՔՎԱՊԿ բաժնի առաջատար մասնագետ՝ 1,
ՔԿԱԳ նախկին պետ՝ 1,

Անտառապետ՝ 7,
մասնաճյուղի ղեկավար՝ 1,
պարկում տեսուչ՝ 1,
կոմունալ ծառայության ՀՈԱԿ-ի տնօրեն՝ 1,
մշակույթի տան տնօրեն՝ 1,
Իսրայելի նախկին դեսպան՝ 1,
Ջրառ ՓԲԸ տեղամասի պետ՝ 1,
ՀՀ տարածքային կառավարման նախարարության «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ 1,
ՀՀ տարածքային կառավարման նախարարության «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ 1,
մետրոպոլիտենի նախկին տնօրեն՝ 1,
Երևանի քաղաքապետի նախկին օգնական՝ 1,
թատրոնի տնօրեն՝ 1,
բանկի մասնաճյուղի կառավարիչ՝ 1,
մարզպետարանի վարչության պետ՝ 1,
անտառտնտեսության տնօրեն՝ 2,
ՓԲԸ-ի տնօրեն՝ 1,
ՋՕԸ-ի նախկին գործադիր տնօրեն՝ 1,
պատկերասրահի տնօրեն՝ 1,
Արփի լիճ Ազգային պարկի տնօրենի տեղակալ՝ 1,
«ՀՀ Ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղի տնօրեն՝ 1,
անտառապահ՝ 6,
աջակցություն դատապարտյալի հիմնադրամի մասնաճյուղի տնօրեն՝ 1,
մարզպետարանի վարչության պետ՝ 2,
մարզպետարանի հողաշինության բաժնի պետ՝ 1,
կադաստրի կոմիտեի ստորաբաժանման ղեկավար՝ 2:

2021թ. ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվել են տարբեր ոլորտներում կատարված հանցագործությունների շարժընթացի, արձանագրված ցուցանիշների համեմատական վերլուծության և քրեական հետապնդման մարմինների համագործակցության հետագա ուղիները նախանշելուն ուղղված աշխատանքները: Բացի այդ, շարունակվել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների նոր դրսևորումների, դրանց կատարման նոր՝ կատարելագործված եղանակների հայտնաբերման վերաբերյալ համապատասխան ուսումնասիրությունները և ստացված տեղեկության հիման վրա հետագա՝ առավել արդյունավետ քննության պլանավորման և իրականցման վերաբերյալ հիմնական չափորոշիչների սահմանումը:

Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից իրականացվել

են ինչպես ոլորտային, այնպես էլ կոռուպցիոն առանձին հանցատեսակների վերաբերյալ ամփոփումներ և ուսումնասիրություններ:

Մասնավորապես.

Համայնքային գույքի կառավարման ոլորտ

ՀՀ գլխավոր դատախազի 04.03.2020թ. հանձնարարականի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում յուրաքանչյուր ամիս ամփոփվել է ՀՀ նախաքննական մարմիններում 2021թ. ընթացքում քննվող կամ նույն թվականի ընթացքում քննված քրեական գործերով պետությանը և համայնքին պատճառված, ինչպես նաև վերականգնված վնասի չափը:

Ամփոփումների արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների (այդ թվում՝ բջջային կապի ծածկույթ ապահովող ալեհավաք կայանների տեղադրման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի (հողամասերի) վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված չարաշահումների) դեպքերով քննված քրեական գործերով առկա է ոչ միասնական մոտեցում՝ ենթադրյալ հանցագործությունների արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններին պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տեղական ինքնակառավարման մարմիններին պատճառված վնասների վերականգնումն իրականացվում է ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի կամ տուժող համայնքների հաշվեհամարներին գումարները փոխանցելու եղանակով, իսկ քրեական գործերի ընթացքը լուծելու հետ միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության կամ ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշիվներին փոխանցված գումարները չեն փոխանցվում համայնքներին: Որոշ դեպքերում ոչ արդարացման հիմքով վարույթը կարճված քրեական գործերով տեղական ինքնակառավարման մարմիններին պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ օպերատիվ միջոցներ չեն ձեռնարկվում, ինչպես նաև չեն ձեռնարկվում միջոցներ՝ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի (հողամասերի) վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված չարաշահումների դեպքերով քննված քրեական գործերով կնքված ենթավարձակալության պայմանագրերը լուծելու և համայնքների հետ իրավաչափ վարձակալության պայմանագրեր կնքելու ուղղությամբ:

Կոռուպցիոն հիշյալ բնույթի հանցագործությունների վերաբերյալ հարուցված քրեական գործերի քննության արդյունավետությունն ապահովելու, քրեական գործերի քննության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության միատեսակ պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ գլխավոր

դատախազի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 12-ին տրվել է թիվ 01/8008-21 հանձնարարականը, որով հանձնարարվել է.

ա) գույքագրել նախորդ տարիներին համապատասխան գործերով դեպոզիտ հաշիվներին առկա՝ հանցագործությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին պատճառված վնասի վերականգնման նպատակով մուտքագրված միջոցները, որոնցով կայացվել են վերջնական որոշումներ, գրություններ ուղարկել տվյալ դեպոզիտ հաշիվը տնօրինող պատկան մարմիններին (ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվի դեպքում՝ ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին)՝ դրանք համապատասխան համայնքի բյուջե փոխանցելու վերաբերյալ: Հետայսու հետևողականորեն նույն միջոցները ձեռնարկել վերջնական որոշում կայացված յուրաքանչյուր նման դեպքով.

բ) բջջային կապի ծածկույթ ապահովող ալեհավաք կայանների տեղադրման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի (հողամասերի) վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված չարաշահումների դեպքերով քննվող քրեական գործերով համապատասխան գրություններ ուղարկել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ ենթավարձակալության պայմանագրերը լուծելու և համայնքների հետ վարձակալության պայմանագրեր կնքելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պահանջով և հետևել կատարման ընթացքին.

գ) համայնքներին վնաս պատճառած հանցագործությունների դեպքերով քննվող քրեական գործերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, համայնքներին ճանաչել տուժող և քաղաքացիական հայցվոր, իսկ վերջիններիս կողմից լիազորված անձանց՝ տուժողի և քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչներ.

դ) տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից առերևույթ չարաշահումներ թույլ տալու դեպքերի առթիվ քննվող քրեական գործերով նրանց մեղսագրել միայն արարքների հետևանքով պաշտոնավարման ժամանակահատվածում առաջացած հանրորեն վտանգավոր հետևանքները: Նույն անձանց պաշտոնավարման դադարեցումից հետո առաջացած վնասը վերականգնելու նպատակով քրեական գործերով վարույթը կարճելու հետ միաժամանակ, համապատասխան միջնորդություն ուղարկել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դատարան քաղաքացիական հայց ներկայացնելու պահանջով և հետևել կատարման ընթացքին.

ե) ոչ արդարացման հիմքով քրեական գործերի վարույթները կարճելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված չարաշահումների արդյունքում համայնքին պատճառված, չհատուցված վնասը վերականգնելու նպատակով դատարան քաղաքացիական հայց ներկայացնելու պահանջով համապատասխան

միջնորդություն ուղարկել տեղական ինքնակառավարման մարմնին և հետևել կատարման ընթացքին.

զ) տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել և հաշվառել ներկայացված միջնորդությունների հիման վրա դատարան ներկայացված քաղաքացիական հայցերի օրինակներն ու արդյունքների վերաբերյալ տեղեկությունները (նաև՝ դատական ակտերը).

է) դատարանի կողմից համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու դեպքում համաձայնության գալու նպատակով ամբաստանյալի և նրա պաշտպանի հետ սկսված բանակցությունների ընթացքում միջոցներ ձեռնարկել պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելու ուղղությամբ, իսկ պատճառված վնասն ամբողջությամբ չհատուցելու դեպքում, որպես կանոն, չգալ համաձայնության.

ը) համայնքներին գույքային վնաս պատճառած հանցագործությունների դեպքերով դատաքննության փուլում գտնվող քրեական գործերով համայնքին պատճառված վնասը վերականգնելու նպատակով քաղաքացիական հայց ներկայացնելու պահանջով համապատասխան միջնորդություն ուղարկել տեղական ինքնակառավարման մարմնին և հետևել կատարման ընթացքին.

թ) դատարաններում քննվող քրեական գործերով դատական վիճաբանությունների փուլում ճառով անդրադառնալ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի հիմնավորվածությանն ու այն դատավճռով բավարարելու անհրաժեշտությանը.

ժ) տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացրած քաղաքացիական հայցը դատական ակտով բավարարվելու դեպքում՝ այն ստանալուց հետո համայնքին պատճառված վնասի վերականգնումը փաստացի ապահովելու համար օրենքով նախատեսված բոլոր միջոցները ձեռնարկելու պահանջով համապատասխան միջնորդություն ուղարկել տեղական ինքնակառավարման մարմիններին և հետևել կատարման ընթացքին:

ժա) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված քաղաքացիական հայցը դատավճռով անհիմն առանց քննության թողնելու, մասնակի բավարարելու կամ մերժելու դեպքում դատական ակտը՝ այդ մասով, վերադաս դատարաններում բողոքարկելու վերաբերյալ համապատասխան միջնորդություն ուղարկել տեղական ինքնակառավարման մարմիններին և հետևել կատարման ընթացքին.

ժբ) հետայսու հետևողականորեն նույն միջոցները ձեռնարկել դատավճիռ կամ դատարանի՝ այլ վերջնական որոշում կայացված յուրաքանչյուր նման դեպքով:

Հանձնարարականի արդյունքում պարզվել է, որ հիշյալ դեպքերով քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով, որոնցով կայացվել են վերջնական որոշումներ (այդ թվում՝ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերով), համայնքներին պատճառված վնասի վերականգնման

նպատակով ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվին փոխանցվել է ընդհանուր 62.868.163 ՀՀ դրամ, ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշվին՝ 90.301.425 ՀՀ դրամ, իսկ համայնքների բյուջե՝ 23.086.650 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 176.256.238 ՀՀ դրամ):

ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվին փոխանցված 62.868.163 ՀՀ դրամը համապատասխան համայնքի բյուջե փոխանցելու վերաբերյալ ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին ուղարկվել են համապատասխան գրություններ:

Համայնքներին պատճառած հանցագործությունների դեպքերով քննված քրեական գործերով ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշվում առկա 90.301.425 ՀՀ դրամը համայնքների բյուջե փոխանցելու համար գրություններ են ուղարկվել նաև ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Ներկայումս քննվող քրեական գործերով ՀՀ դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշիվներին, որպես համայնքներին պատճառված վնասի վերականգնում, փոխանցվել է ընդհանուր 5.850.000 ՀՀ դրամ:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարների կողմից դատախազներին հանձնարարվել է հետայսու հետևողականորեն ձեռնարկել նույն միջոցները՝ վերջնական որոշում կայացված վերոհիշյալ յուրաքանչյուր դեպքով:

Բջջային կապի ծածկույթ ապահովող ալեհավաք կայանների տեղադրման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի (հողամասերի) վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված չարաշահումների դեպքերով քննված 79 քրեական գործով համապատասխան գրություններ են ուղարկվել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ ենթավարձակալության պայմանագրերը լուծելու և համայնքների հետ վարձակալության պայմանագրեր կնքելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Արդյունքում լուծվել է վարձակալության (ենթավարձակալության) 41 պայմանագիր: Համայնքների և բջջային օպերատորների միջև կնքվել են 18 նոր վարձակալության պայմանագրեր: 1 գործով վարձակալության գումարների փոխանցման գործընթացը կասեցվել է՝ մինչ քրեական գործով վերջնական որոշում կայացնելը:

Դեռևս չլուծված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրերը լուծելու և արդեն իսկ լուծված պայմանագրերի արդյունքում համայնքների հետ վարձակալության նոր պայմանագրեր կնքելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պահանջով գրություններ են ուղարկվել նաև մարզպետարաններ:

Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից առերևույթ չարաշահումներ թույլ տալու դեպքերի առթիվ քննվող քրեական գործերով անձանց մեղսագրվել են միայն արարքների հետևանքով

պաշտոնավարման ժամանակահատվածում առաջացած հանրորեն վտանգավոր հետևանքները:

Ոչ արդարացման հիմքով քրեական գործերի վարույթները կարճելու հետ միաժամանակ, երբ նախաքննության ընթացքում չի վերականգնվել պատճառված վնասը, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված չարաշահումների արդյունքում համայնքին պատճառված, չհատուցված վնասը վերականգնելու նպատակով դատարան քաղաքացիական հայց ներկայացնելու պահանջով տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկվել է 25 միջնորդություն:

Հայտարարագրման ոլորտ

ՀՀ գլխավոր դատախազությունում ամփոփվել են գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերը դիտավորությամբ չներկայացնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդված) և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդված) հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի 2021թ. արդյունքները:

Մասնավորապես, 2021թ. ընթացքում միայն հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու հատկանիշներով հարուցվել է 14 քրեական գործ, այսինքն՝ գրեթե նույնքան, որքան ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներով հարուցվել է նախորդ 3 տարիներին՝ 2018-ից 2020թթ. ընթացքում միասին վերցրած (15 քրեական գործ):

Ներկայումս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաքննություն է իրականացվում վերոհիշյալ հոդվածների հատկանիշներով հարուցված 11, իսկ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում՝ 1 քրեական գործով (այլ հոդվածների համակցությամբ):

2021 թվականի ընթացքում վարույթում քննվող 6 քրեական գործով քրեական հետապնդում է հարուցվել հայտարարագրման պարտականություն ունեցող 9 անձի նկատմամբ, այդ թվում՝ ինչպես պաշտոնատար, այնպես էլ նրանց փոխկապակցված անձանց նկատմամբ: Մասնավորապես, 1 անձի մեղադրանք է առաջադրվել հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար, իսկ 8 անձի նկատմամբ՝ առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրման համար:

Ընդ որում, 6 մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը, 3-ի նկատմամբ՝ կալանքը, որոնցից 2 մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Վերոհիշյալ քրեական գործերից մեկը, որով առանձնապես խոշոր չափերով գույքը կամ եկամուտները չհայտարարագրելու համար մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ Ազգային ժողովի վեցերորդ գումարման նստաշրջանի պատգամավորին և վերջինիս որդուն, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: 2021թ. նոյեմբերի 10-ին դատարանը որոշում է կայացրել իրադրության փոփոխման հիմքով ամբաստանյալների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին: Վերոհիշյալ դատական ակտի դեմ ՀՀ գլխավոր դատախազությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը դեռևս չի քննվել:

Մյուս քրեական գործերը նախաքննության փուլում են:

Նշված գործերով հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնելուց բացի, ՀՀ դատախազությունը նաև միջոցներ է ձեռնարկել իբրև հակակոռուպցիոն առանցքային գործիք՝ նշված երևույթի դեմ իրավական պայքարի արդյունավետությունը բարձրացնելու, գործնականում դրսևորվող խնդիրները հընթացս վերացնելու ուղղությամբ:

Մասնավորապես.

ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, դիտավորությամբ չներկայացնելու համար: Այսինքն, անձի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու համար առնվազն անհրաժեշտ է, որ վերջինս հիշյալ արարքի համար նախկինում ենթարկված լինի վարչական պատասխանատվության:

Մինչդեռ, գլխավոր դատախազությունում առանձին գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ դեպքերում, անձինք, իրազեկված լինելու պայմաններում, հայտարարագիր չեն ներկայացրել, ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն այդ կապակցությամբ վարչական վարույթ չի իրականացրել, ինչի արդյունքում անցել են վարչական տույժ նշանակելու ժամկետները: Նկատի ունենալով վերոգրյալը՝ նշված հանգամանքին առավել մեծ ուշադրություն դարձնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունից գրություն է հասցեագրվել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Բացի այդ, ելնելով նրանից, որ ապօրինի հարստանալու հանգամանքն ապացուցելու համար վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հիմնավորել, որ անձի ունեցած փաստացի և օրինական եկամուտների, գույքի միջև առկա է էական անհամապատասխանություն, ինչը կարող է արվել հայտարարագրերը դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու միջոցով, 2021թ. ՀՀ գլխավոր դատախազը դատախազության համապատասխան բոլոր ստորաբաժանումներին

տվել է ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական պայքարն ուժեղացնելուն ուղղված կոնկրետ հանձնարարություններ: Մասնավորապես՝ հանձնարարվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց առնչվող հանցագործության յուրաքանչյուր դեպքով ապահովել, որպեսզի պատշաճ քննության առարկա դարձվեն նրանց կողմից ներկայացված հայտարարագրերը, միջոցներ ձեռնարկվեն նշված սուբյեկտների փաստացի ունեցած գույքի, եկամտի իրական չափը պարզելու ուղղությամբ: Իսկ հայտարարագրերում թերի կամ կեղծ տվյալների ներկայացման մեջ դիտավորության առկայության հանգամանքը պարզելու նպատակով հանձնարարվել է ապահովել, որպեսզի պարտադիր քննության առարկա դարձվեն չհայտարարագրված անշարժ գույքերի կադաստրային գործերը, որի արդյունքում հնարավոր կլինի պարզել գույքի համար հարկերի վճարման հաճախականությունը, վճարումներ կատարած անձանց, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել թանկարժեք կամ հայտարարագրման ենթակա այլ շարժական գույքի ձեռքբերման և օտարման փաստաթղթերը հայտնաբերելու և քննության առարկա դարձնելու ուղղությամբ:

ՀՀ գլխավոր դատախազությունում 2021 թվականի ընթացքում ուսումնասիրվել և ամփոփվել են մի շարք հանցատեսակներով դեպքերի վերաբերյալ քննված քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակն ու դեպքերի շարժընթացը:

Նշված ուսումնասիրությունների արդյունքում վերհանվել են նշված հանցագործությունների քննության ընթացքում առավել հաճախ հանդիպող խնդիրները և իրավիճակները, որոնց լուծմանն ուղղված ամենօրյա աշխատանքներ են իրականացվել ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից:

Վերոգրյալը հաշվի առնելով և այդ հարցում միատեսակ մոտեցում ապահովելու անհրաժշտությունից ելնելով՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2021 թվականի մարտի 15-ին տրվել է հանձնարարական:

Ուսումնասիրությունները վկայել են նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ և 308-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների որակման առումով առաջացող խնդիրները հիմնականում կապված են «էական վնաս» և «ծանր հետևանք» գնահատողական եզրույթների մեկնաբանման հետ:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման վերաբերյալ քրեական գործեր քննելիս, որոշ դեպքերում թեև որպես էական վնաս է դիտարկվել պետական իշխանության հեղինակազրկումը՝ որպես պետական մարմինների գործունեության սկզբունքների խախտման արդյունք, սակայն դատավարական փաստաթղթերում տրվել են ընդհանրական ձևակերպումներ, որոնք չեն բացահայտում խախտման բնույթի էական լինելը:

Բացի այդ, անձանց, կազմակերպությունների, հասարակության կամ պետության համար անզգուշությամբ ծանր գույքային հետևանքներ առաջացնելով զուգորդված պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ քննվող քրեական գործերով առանձին դեպքերում անձանց արարքներին տրվում են տարբեր քրեաիրավական գնահատականներ՝ առերևույթ նույնանման փաստական հանգամանքների առկայության պայմաններում: Պետք է նշել, որ այս խնդիրը հիմնականում կապված է այն հանգամանքի հետ, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «ծանր հետևանք» եզրույթի բովանդակությունը չի սահմանել, ուստի գնահատումը թողնվել է իրավակիրառ պրակտիկային:

Խնդիրներ են առկա նաև պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը պաշտոնեական դիրքն օգտագործելով հափշտակություն կատարելու հանցակազմերից սահմանազատելու հարցում:

Կատարված ամփոփումները վկայել են նաև առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդված) և պաշտոնեական լիազորություններն անցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված) հանցակազմերը սահմանազատելու հարցերում առկա տարբեր մոտեցումների մասին:

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստումը և հարուցված քրեական գործերի քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը, լրիվությունը և արդյունավետությունն ապահովելու, ինչպես նաև անձանց արարքներին քրեաիրավական գնահատական տալու միատեսակ պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ 2021 թվականի հունիսի 3-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրվել է թիվ 36/36.3/4358-21 հանձնարարականը:

Շարունակելով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության տակտիկական առանձնահատկությունների վերաբերյալ դիտարկումները, անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից իրականացված այլ ուսումնասիրություններին: Մասնավորապես, որոշ դեպքերում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ հարուցված քրեական գործերով առկա է եղել ոչ միասնական կամ առնվազն չկանոնակարգված մոտեցում՝ ենթադրյալ հանցագործության արդյունքում պետությանը կամ համայնքին պատճառված վնասի, ենթադրյալ հանցագործություն կատարած անձի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված, սակայն թաքցված գույքի և դրա ձեռքբերման աղբյուրի պարզման նկատմամբ:

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստումը և հարուցված քրեական գործերի քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը, լրիվությունը և արդյունավետությունն

ապահովելու, կոռուպցիայի հակազդման ոլորտում միասնական քաղաքականություն իրականացնելու, ինչպես նաև քրեական գործերի քննության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության միատեսակ պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ 2021 թվականի ապրիլի 8-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրվել է թիվ 36.3/4355-21 հանձնարարականը, որով հանձնարարվել է.

ա) Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործեր քննելիս անձանց կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելուց անմիջապես հետո ստանալ վերջիններիս, ինչպես նաև նրանց մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները,

բ) ողջամիտ ժամկետներում ստանալ քրեական գործով կասկածյալ/մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները,

գ) ստացված՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների զննությամբ օտարերկրյա պետությունից գումարների մուտքերի կամ ելքերի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում, նշված գործարքների հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց, դրա մասնակիցներին կամ բաժնետերերին պարզելու նպատակով, համապատասխան հարցմամբ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից ստանալ քննության համար նշանակություն ունեցող տեղեկություն, որից հետո, ըստ անհրաժեշտության, տվյալ օտարերկրյա պետություն իրավական օգնության հարցում կատարելու միջոցով պարզել նշված հաշվեհամարի մուտքային և ելքային փոխանցումների վերաբերյալ քրեական գործի քննության համար նշանակություն ունեցող փաստական տվյալները,

դ) գործում փաստական տվյալների առկայության դեպքում՝ իրավական օգնության հարցում կատարելու միջոցով պարզել տվյալ օտարերկրյա պետությունում ենթադրյալ հանցագործություն կատարած կամ նրա հետ փոխկապակցված անձանց սեփականության իրավունքով կամ փաստացի պատկանող, սակայն այլ անձանց անվամբ հաշվառված շարժական և անշարժ գույքի առկայությունը,

ե) հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն ապահովելու նպատակով կասկածյալի/մեղադրյալի կամ նրա հետ փոխկապակցված անձանց գույքերի վրա կալանք դնելու նպատակով իրավական օգնության հարցում կատարել համապատասխան օտարերկրյա պետություն,

զ) ստանալ և քննության առարկա դարձնել գործով անցնող ենթադրյալ հանցանք կատարած անձանց, կասկածյալների/մեղադրյալների (եթե վերջիններս

հայտարարատու պաշտոնատար անձ են հանդիսացել) և նրանց հետ փոխկապակցված անձի/անձանց կողմից ներկայացված գույքի, եկամուտների հայտարարագրերը,

է) պարզել հանցագործություն կատարած կամ նրանց հանցակցած անձանց, նրանց մերձավոր ազգականների (ծնող, զավակ, որդեգրող, որդեգրված, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայր և քույր, պապը, տատը, թոռ, ինչպես նաև ամուսնու և ամուսնու ծնողներ, վերջիններիս փեսաներ և հարսներ), ինչպես նաև մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձանց շրջանակը,

ը) նախորդ կետում նշված անձանց անունով վերջին 10 տարվա ընթացքում ձեռք բերված, օտարված շարժական և անշարժ գույքերի (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված գույք, այդ թվում՝ կրիպտոակտիվներ) առկայության վերաբերյալ ՀՀ պետական իրավասու մարմիններից կատարել համապատասխան հարցումներ,

թ) գույքերի առկայության դեպքում պարզել.

- վերջին 10 տարվա ընթացքում դրա փաստացի սեփականատերերի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, հնարավոր եկամտի աղբյուրները, դրանց չափը,
- գույքերի արժեքը, ձեռքբերման աղբյուրը, գտնվելու վայրը, օտարման եղանակը, գինը, փաստացի տիրապետման եղանակը,
- գույքը դրա սեփականատիրոջ եկամուտներին համարժեք լինելու հանգամանքը,
- գույքի փոխակերպման կամ փոխանցման (գույքի անօրինական ծագումը թաքցնելու կամ քողարկելու) հանգամանքը,

ժ) ըստ անհրաժեշտության՝ ոստիկանության կամ ազգային անվտանգության մարմինների կողմից գործով անցնող ենթադրյալ հանցանք կատարած և/կամ նրանց հանցակցած, փոխկապակցված անձանց նկատմամբ անցկացնել «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում», «հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում», «արտաքին և ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

է) և թ) կետերում նշված հանգամանքների պարզման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմիններին կարող են տրվել նաև այլ հանձնարարություններ:

ժա) Բացի նշվածից, քրեական գործերի քննության ընթացքում ենթադրյալ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման, առանձին դեպքերում նաև պետության կամ համայնքի համար մեծածավալ գույքային վնաս (այդ թվում՝ եկամուտներ) առաջացնող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հետ կապված հիմնավոր կասկածների վերաբերյալ փաստական տվյալների առկայության դեպքում, փողերի լվացման հանցակազմը քննարկելու, զուգահեռ

քննություն իրականացնելու, փոխադարձ իրավական օգնության շրջանակներում համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմիններից որպես ապացույց տեղեկություններ ձեռքբերելու նպատակով (օրինակ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով խարդախություն, յուրացում, վատնում կատարելու, առևտրային կաշառք ստանալու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, անցնելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, կեղծ փաստաթղթեր իրացնելու կամ ՀՀ քրեական օրենքով արգելված գործունեությամբ զբաղվելու, շրջանառությունն արգելված իրեր, առարկաներ, միջոցներ ձեռք բերելու, պահելու, օգտագործելու, փոխանցելու, իրացնելու և դրանց արդյունքում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները բանկային փոխանցումներով այլ անձանց փոխանցումների արդյունքում դրանց հանցավոր ծագումը խեղաթյուրվել է, այլ կերպ ասած՝ բարդ սխեմաների կիրառմամբ բանկային համակարգում առկա հաշվեհամարների օգտագործմամբ, քողարկման, մասնատման արդյունքում օրինականացվել են հանցավոր ճանապարհով ստացված գումարներ), ապահովել, որպեսզի ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից համապատասխան հարցմամբ ստացվեն տեղեկություններ (օրինակ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի անվամբ ՀՀ բանկերում հաշվարկային հաշիվների առկայության վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ դրանց շարժն ու հաշվեհամարների մնացորդը, ենթադրյալ հանցանք կատարած անձին գումարներ փոխանցած, ինչպես նաև նրանից գումարներ ստացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշվետերերի, գումարի հետագա տնօրինման մանրամասների վերաբերյալ տվյալներ, ՀՀ բանկերում նրա անվամբ պահախցերի առկայության վերաբերյալ տվյալներ, կամ նրա հետ փոխկապակցված անձանց և ընկերությունների անուններով՝ ՀՀ բանկերում հաշվարկային հաշիվների առկայության, դրանց շարժի ու հաշվեհամարների մնացորդի վերաբերյալ տվյալներ և այլ):

ժբ) քննության ընթացքում ապահովել համագործակցությունը օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ, գործի համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով, ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին», «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին», «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ», «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիաներով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով տեղեկության տրամադրման հարցում ուղարկել համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմիններին:

ժգ) Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործեր քննելիս պաշտոնատար անձանց մեղադրանք առաջադրելիս քննարկել նրանց պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելու հարցը:

Հաշվետու ժամանակահատվածում զգալի աշխատանքներ են կատարվել նաև կոռուպցիոն տարբեր սխեմաների կիրառմամբ, կատարման բարդեցված եղանակով աչքի ընկնող տարբեր հանցագործությունների բացահայտման և իրականացվող քննության լրիվությունն, օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու ուղղությամբ:

Այս առումով թեև հիշատակման են արժանի 2021թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում քննված, հասարակական հնչեղություն ստացած բազմաթիվ քրեական գործեր, սակայն դրանցից կարելի է առանձնացնել քննության առարկայի առանձնահատկություններով, կատարման եղանակով պայմանավորված կամ կոռուպցիոն հստակ մշակված սխեմաների գործադրմամբ իրականացված որոշ հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործեր:

Այսպես, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորվել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահն իր մտերիմ անձի անվամբ հիմնադրել է ճարտարապետական և նախագծային աշխատանքների կատարման ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող առևտրային կազմակերպություն, մասնակցել դրա կառավարմանը, կազմակերպությանը արտոնություններ և առավելություններ տրամադրել: Այնուհետև, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, հանձնարարել է նշված անձին աշխատանքի ընդունել ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեում, փաստացի ազատել նրան ծառայողական պարտականությունների կատարումից՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով նրա կողմից իր ապօրինի մասնակցությամբ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար և, վերջինիս կողմից փաստացի չաշխատելու պայմաններում, պետության միջոցների հաշվին վերջինիս վճարել 1.478.483 ՀՀ դրամ աշխատավարձ:

Դրանից հետո, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, ուղղորդել է շինարարական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներին գործարքներ կնքել իր անմիջական մասնակցությամբ գործող առևտրային կազմակերպության հետ, անձամբ վերահսկել է նախագծերի կազմման գործընթացը, հանձնարարել իրեն ենթակա պաշտոնատար անձանց մասնագիտական և այլ օգնություն ցուցաբերել փաստաթղթերի ապահովման գործընթացում, ինչի արդյունքում իր անմիջական մասնակցությամբ գործող առևտրային կազմակերպության հետ կնքվել են ավելի քան 27 մլն ՀՀ դրամի գործարքներ, որոնց կատարման արդյունքում ստացված ֆինանսական միջոցներն իր մտերիմ անձի հետ տնօրինել են համատեղ:

Բացի այդ, շինարարության ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների տնօրեններից՝ ՀՀ պատվավոր կոչում շնորհելուն, նշված անձանց պատկանող շինարարական կազմակերպություններին պետական և մասնավոր պատվերներով ապահովելուն նպաստելու համար, 2019թ. հոկտեբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում որպես կաշառք ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.379.950 ՀՀ դրամին համարժեք 5000 ԱՄՆ դոլար և շուրջ 1.290.000 ՀՀ դրամ արժողությամբ շինարարական նյութեր ու ապրանքներ:

2019թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահը, փաստացի, իր մտերիմ անձի կողմից կառուցվելիք բազմաբնակարան շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքները Երևանի քաղաքապետարանի իրավասու պաշտոնատար անձանց կողմից առանց խոչընդոտների և սեղմ ժամկետներում տրամադրելու գործընթացը կազմակերպելու նպատակով, իր ղեկավարած պետական մարմնի աշխատակցին հանձնարարել է կազմել անհրաժեշտ էսքիզային նախագծերը՝ թաքցնելով տրված հանձնարարականի մասնավոր՝ անձնական շահեր հետապնդելու և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի գործառույթներից չբխելու հանգամանքը: Ապա Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց համոզելու եղանակով փորձել է ձեռնպահ պահել կազմված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարելուց՝ նպաստելով թույլտվությունը հնարավորինս սեղմ ժամկետներում տրամադրելուն՝ դրա դիմաց ստանալով խոշոր չափի՝ 952.000 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլար կաշառք:

Դրանից բացի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահը Երևան քաղաքում բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքներ նախաձեռնած անձից խաբեությամբ հափշտակել է 1.193.575 ՀՀ դրամին համարժեք 2500 ԱՄՆ դոլար:

Պարզվել է նաև, որ 2019թ. դեկտեմբերի 26-ին վերջինս ընդունել է ինքնակամ կառույցն օրինականացնելուն, դրանով ծանրաբեռնված հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն, պաշտոնեական դիրքն օգտագործելով, նպաստելու համար իրեն խոշոր չափերով կաշառք տալու առաջարկը:

Վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախկին նախագահին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 311-րդ հոդվածի 3-րդ մաս 3-րդ կետով (2 դրվագ), 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 և 2-րդ կետերով՝ պաշտոնեական լիազորությունների չարաշահման, ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, խոշոր և առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, պաշտոնեական դիրքն օգտագործելով խոշոր չափերով խարդախություն կատարելու համար:

Կաշառք տալու, փաստաթուղթ կեղծելու և օգտագործելու, ինչպես նաև դրան օժանդակելու համար քրեական գործով մեղադրանքներ են առաջադրվել նաև այլ անձանց:

Նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի որոշմամբ հաստատվել է քրեական գործից անջատված մասով կազմված մեղադրական եզրակացությունը, և քրեական գործը, ըստ մեղադրանքի՝ 8 անձի, ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու:

ՀՀ գլխավոր դատախազության հանձնարարությամբ, «Hetq.am»-ում հրապարակված «Մեծահարուստ հայերի ու պաշտոնյաների տները Դուբայի շքեղ համալիրներում» վերտառությամբ հոդվածի հիման վրա, ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում նախապատրաստված նյութերով, 2020թ. փետրվարի 12-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից օրենքով նախատեսված հայտարարագրերում հայտարարագրման ենթակա՝ առանձնապես խոշոր չափերով գույքեր թաքցնելու ենթադրյալ հանցագործության դեպքի առթիվ:

Քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ ՀՔԾ, որտեղ կատարված նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցներով հիմնավորվել է, որ 2018թ. հունիսի 20-ից մինչև 2019թ. հունվարի 14-ը ՀՀ ԱԺ վեցերորդ գումարման նստաշրջանի պատգամավոր հանդիսացած անձը, կրելով գույքի և շահերի հայտարարագրման պարտականություն՝ 2018թ. հոկտեմբերի 1-ին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին ներկայացված, պաշտոնական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ, ինչպես նաև 2019թ. հունիսի 11-ին պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում չի հիշատակել և այդ կերպ թաքցրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող մի քանի անշարժ գույքերի մասին տվյալները:

Մասնավորապես՝ հայտարարագրում չեն արտացոլվել Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում գտնվող 107,134,8 քմ մակերեսով և 7.1 մլն ՀՀ դրամ կադաստրային արժեքով համատեղ սեփականության իրավունքով բնակարանը, Արարատի մարզի Այնթափ համայնքում գտնվող՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, 600.000 ՀՀ դրամով ձեռք բերված, 190.560 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 1,92 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը, Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում գտնվող 741,4 քմ մակերեսով կիսակառույց տնից, 0,051 հա տնամերձ հողամասից բաղկացած, ավելի քան 38 մլն ՀՀ դրամ կադաստրային արժեքով, 700.000 ՀՀ դրամով ձեռք բերված, իրեն և կնոջը համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը,

Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում գտնվող 299.815 ՀՀ դրամ կադաստրային արժեքով, 200.000 ՀՀ դրամով ձեռք բերված՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և կնոջը պատկանող 0,048 հա տնամերձ հողամասը, Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղական համայնքում գտնվող, 1.7 մլն ՀՀ դրամով ձեռք բերված և սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,1262 հա հողամասը, նույն համայնքում գտնվող, 500.000 ՀՀ դրամով ձեռք բերված և սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,0676 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը:

Նույն անձը չի հայտարարագրել նաև պաշտոնը դադարեցնելու օրվա դրությամբ երկու բանկում իր անվամբ բացված դրամային հաշիվներին ունեցած շուրջ 1.9 մլն ՀՀ դրամը:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է նաև, որ նրա որդին ևս, նույն ժամանակահատվածում հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձ և ունենալով հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրում իր գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականություն, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին ներկայացված, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և եկամուտների մասին 2018թ. հայտարարագրում չի հիշատակել և այդ կերպ թաքցրել է տվյալ հարկային տարում՝ 2018թ. նոյեմբերի 6-ին, 4.9 մլն ՀՀ դրամով Վաղարշապատ քաղաքի Մաշտոցի փողոցում գտնվող 0. 0214 հա հողամասը ձեռք բերելու և դրա նկատմամբ իր ու մեկ այլ անձի համատեղ սեփականության իրավունքը գրանցելու մասին տվյալը:

Նույն հայտարարագրում պատգամավորի որդին չի հիշատակել և այդ կերպ թաքցրել է նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող BMW X6 5.0 IX մակնիշի, 2009թ. թողարկման ավտոմեքենան 2018թ. նոյեմբերի 11-ին 4մլն ՀՀ դրամով վաճառելու մասին տվյալը, բանկում ունեցած վարկային գծով բանկի առջև հոր պաշտոնավարման դադարեցման օրվա դրությամբ ունեցած 2493 ԱՄՆ դոլարի չափով պարտավորությունը, նույն բանկում ունեցած «Ապառիկ տեղում վճարված ֆակտորինգ» տեսակով պարտավորությունները, որոնք հոր պաշտոնավարման դադարեցման օրվա դրությամբ կազմել են ընդհանուր շուրջ 1 մլն ՀՀ դրամ:

Հայտարարագրման ենթակա նշված անշարժ գույքերի և դրամական միջոցների վերաբերյալ տվյալները թաքցնելը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով, այն է՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքով գույքերի չհայտարարագրմանը:

Նշված հանցավոր արարքները կատարելու համար նախկին պատգամավորին և նրա որդուն մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ

հոդվածի 2-րդ մասով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2021թ. ապրիլի 16-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել քրեական գործից նրանց վերաբերյալ գործի մասն անջատելու մասին, որով հայտարարվել է նախաքննության ավարտ:

2021թ. ապրիլի 28-ին քրեական գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և քրեական գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու:

2021 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել նշված անձանց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ոչ արդարացնող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված՝ իրադրության փոփոխման հիմքով: Դատախազի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը քննության փուլում է:

Անհրաժեշտ է նաև կոնկրետ օրինակով անդրադառնալ դատախազական ակտերի կայացման արդյունքում դրական ցուցանիշ արձանագրած դեպքերից մեկին:

Մասնավորապես, ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործերից մեկով «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության հիմնադրին, նրա մերձավոր ազգականին և նույն ընկերության տնօրենին առաջադրվել են մեղադրանքներ՝ նախնական համաձայնությամբ, Երևանի քաղաքապետարանից, խաբեությամբ, առանձնապես խոշոր չափերով՝ 805.396.807 ՀՀ դրամին համարժեք 1.668.490 ԱՄՆ դոլար հափշտակելու համար (ընկերության հիմնադրին և տնօրենին՝ նաև նախնական համաձայնությամբ իրավունք վերապահող պաշտոնական այլ փաստաթուղթ հանդիսացող փոխառության պայմանագրեր կեղծելու համար):

Դեռևս 2021 թվականի հունիսի 11-ին վարույթն իրականացնող մարմինը, գալով եզրահանգման, որ նշված անձանց արարքներում բացակայում է համապատասխան հանցագործությունների հանցակազմերը, որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազությունում քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կայացված հիշյալ որոշումն անօրինական է, չհիմնավորված, քանի որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված անհրաժեշտ և հնարավոր բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների

բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, չեն պարզվել գործի համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ 2021 թվականի հուլիսի 15-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ:

Կայացված որոշումը վերացնելու արդյունքում նույն քրեական գործի շրջանակներում վերականգնվել է համայնքին պատճառված 1.668.490 ԱՄՆ դոլարին համարժեք 805.396.807 ՀՀ դրամ:

Արդյունքում՝ 2022 թվականի հունվարի 26-ին որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ տվյալ դեպքում արդեն՝ ոչ արդարացման հիմքով:

Այսինքն, միայն մեկ քրեական գործով դատախազական ակտերից մեկի կայացման արդյունքում վերականգնվել է համայնքին պատճառված 1.668.490 ԱՄՆ դոլարին համարժեք 805.396.807 ՀՀ դրամ:

Բացի այդ, ՀՀ ԱԱԾ-ի կողմից իրականացված հետևողական աշխատանքի արդյունքում 7 քրեական գործ է հարուցվել ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայողների կողմից պաշտոնեական տարաբնույթ հանցագործություններ կատարելու դեպքերի առթիվ, որոնցով նախաքննությունը, դատախազական պատշաճ հսկողության ներքո, կատարվել է ՀՀ ՀՔԾ-ում:

Վերոնշյալ քրեական գործերից 3-ով մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ ՊԵԿ-ի արևելյան մաքսատան վարչության «Բագրատաշեն» մաքսային կետի 4 ծառայողի, հարավային մաքսատուն-վարչության Մեղրու մաքսային կետի մաքսային 3 ծառայողի:

Քրեական գործերով հիմնավորվել է, որ նշված մաքսակետերի տեսուչները, միմյանց, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների հետ գալով հանցավոր համաձայնության, պաշտոնեական դիրքի չարաշահման արդյունքում կամ տարբեր չափերի կաշառք ստանալու դիմաց թույլ են տվել, որպեսզի տնտեսվարողներն առանց պատշաճ մաքսային հսկողության ՀՀ ներմուծեն տարբեր տեսակի ապրանքներ, ինչի հետևանքով պետությանը պատճառվել են ընդհուպ առանձնապես խոշոր չափերի վնաս:

Հարուցված մյուս 4 քրեական գործով բազմաթիվ դրվագներով որպես մեղադրյալ են ներգրավվել ՀՀ ՊԵԿ-ի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության Լոռու մարզի տարածքը սպասարկող բաժնի 4, թիվ 1 բաժնի 4, ՊԵԿ-ի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության տարածքային /Արարատի/ թիվ 9 բաժնի 2, թիվ 2 /Էրեբունու/ բաժնի հարկային 2 տեսուչներ, օպերլիազորներ:

ՀՀ ՀՔԾ-ում իրականացված քննությամբ հիմնավորվել է, որ հարկային ծառայողները, նախնական համաձայնության գալով իրենց սպասարկման ոլորտում գտնվող համայնքներում ու բնակտարածքներում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների հետ, վերջիններիս կողմից հարկային օրենսդրության ոլորտում թույլ տրված տարատեսակ խախտումները չարձանագրելու և վարչական պատասխանատվության չենթարկելու, ստուգումներ չիրականացնելու, ստուգումների ընթացքում ի հայտ եկած խախտումներն ամբողջությամբ կամ մասամբ չարձանագրելու համար նրանցից պահանջել են տարբեր չափերի առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր շուրջ 6.000.000 ՀՀ դրամ կաշառք, որի մեծ մասը փաստացի ստացել են, առանձին դեպքերում բաժանել միմյանց միջև, իսկ մնացած փոքր մասը ստանալ չեն հասցրել՝ բռնվելու պատճառով:

Այսինքն, պաշտոնեական դիրքի չարաշահում կատարելու, առանձնապես խոշոր չափերով կաշառք վերցնելու, առանձին դեպքերում՝ նաև պաշտոնեական անփութության կամ պաշտոնեական կեղծիք կատարելու համար 7 քրեական գործով մեղադրանք է առաջադրվել ՊԵԿ-ի աշխատակից՝ հարկային կամ մաքսային ծառայող հանդիսացող ընդհանուր 19 անձի, որոնցից 14-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Բավարար համարելով ձեռք բերված ապացույցները՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից նշված քրեական գործերից 6-ը՝ ընդհանուր 25 անձի, այդ թվում նաև ՊԵԿ-ի աշխատակիցների հետ հանցավոր համաձայնությունների և գործարքների մեջ մտած տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչների վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու:

Վերոնշյալ բացահայտումները վկայում են, որ մի կողմից առավել արդյունավետ է դարձել մաքսային և հարկային ծառայողների կողմից պաշտոնեական հանցագործությունների, կոռուպցիոն դրսևորումների դեմ իրավապահ մարմինների պայքարը, սակայն մյուս կողմից՝ այս ոլորտում ներքին վերահսկողական մեխանիզմների գործադրման թերացումներ կան:

Նախաքննությամբ ստացված տվյալները փաստում են, որ մաքսային կետ-բաժիններում աշխատակիցների կողմից ՀՀ տարածք ներմուծված բեռների մաքսային ձևակերպումների, մաքսազերծումների ընթացքի, ինչպես նաև տնտեսվարողների կողմից հարկային օրենսդրության ոլորտում թույլ տրված տարատեսակ խախտումները հարկային տեսուչների կողմից պատշաճ արձանագրելու, հարկերի հավաքագրման գործընթացների նկատմամբ արդյունավետ հսկողություն չի իրականացվել: Ձեռնարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները և ստուգումները մի շարք դեպքերում կրել են ձևական բնույթ, վերադաս իրավասու պաշտոնատար անձանց կողմից միջոցներ չեն

ձեռնարկվել աշխատակիցների վրա դրված պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ քրեական գործերով պարզված՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու, տնտեսվարողների հետ անմիջական աշխատանքային հարաբերությունների մեջ մտնող հարկային և մաքսային ծառայողների գործունեության նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմներ ներդնելու, հնարավոր չարաշահումները և ոչ իրավաչափ վարքագիծը ժամանակին հայտնաբերելու և կանխելու հարցում համապատասխան ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց պատասխանատվության մակարդակը բարձրացնելու խնդրով ՀՀ գլխավոր դատախազը միջնորդագիր է հասցեագրել ՀՀ ՊԵԿ-ի նախագահին:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազության 2021թ. աշխատանքի ծրագրով նախատեսված աշխատանքների շրջանակներում պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ուսումնասիրվել է 2016-2020թթ. ընթացքում պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի օտարման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքում և ՀՀ տարբեր մարզերում գտնվող բազմաթիվ գույքային միավորների (անշարժ գույք) դեպքերում պետական գույքի օտարման գործընթացներն իրականացվել են կոռուպցիոն չարաշահումներով, որոնք կրել են, ըստ էության, սխեմատիկ բնույթ:

Մասնավորապես, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության (նախկին անվանումը) պատասխանատու պաշտոնատար անձինք, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ խախտելով «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, առանց իրավական հիմքի և պայմանագիր կնքելու, միևնույն ՍՊ ընկերությանն առաջարկել են իրականացնել անշարժ գույքերի գնահատման աշխատանքներ:

Ընկերության մասնագետները նշված ժամանակահատվածում կազմել են գույքերի՝ իրական արժեքից էականորեն ցածր արժեք ունենալու վերաբերյալ գնահատման կեղծ եզրակացություններ, որոնք վավերացվել են ընկերության տնօրենի կողմից:

Հետագայում համապատասխան պաշտոնատար անձանց կողմից այդ եզրակացությունները հիմք են դարձել նշված անշարժ գույքերի օտարման մրցույթների անցկացման ժամանակ, և դրանք օտարվել են իրական արժեքից ընդհուպ բազմակի անգամներով պակաս գնով:

Նման եղանակով իրականացված պետական սեփականություն հանդիսացող գույքերի օտարման հետևանքով, ուսումնասիրությամբ վեր հանված գույքերի

պարագայում, պետությանը պատճառված նախնական վնասը կազմում է ընդհանուր շուրջ 790 մլն ՀՀ դրամ:

Այսինքն, բազմաթիվ դեպքերում, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունք դրսևորելով իրենց պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հետևանքով, պետության համար առաջացել են ծանր հետևանքներ:

Արձանագրված փաստերի առթիվ 2021թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կամ 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է ընդհանուր 20 քրեական գործ, իսկ 5 դեպքում ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են մինչդատական քրեական վարույթ իրականացնող մարմիններին՝ հարուցված այլ գործերի հետ քննության առարկա դարձնելու, ընթացքը լուծելու նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում Երևան քաղաքի դատախազությունում ուսումնասիրության են ենթարկվել Երևան քաղաքի տարբեր գերեզմանատներում հուղարկավորությունների ծառայությունների, հուղարկավորությունների նպատակով կատարվող հողահատկացումների ոլորտում «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ում կատարված առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով մի շարք քրեական գործերի նյութեր: Դրա արդյունքում պարզվել է, որ Երևանի քաղաքապետի կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2020թ. կատարված ստուգումներից հետո, անգամ հարուցված քրեական գործերի պայմաններում, տարբեր գերեզմանատներում շարունակվում են արձանագրվել աղաղակող խախտումներ:

Մասնավորապես, պարզվել է, որ մի շարք գերեզմանատան վարիչներ, չնայած ստուգմամբ արձանագրված խախտումներին, տեղափոխվել են այլ գերեզմանատներ՝ որպես վարիչ, կամ չեն ազատվել աշխատանքից և հետագայում շարունակել են հանցավոր գործունեությունը:

Օրինակ, քրեական գործի շրջանակում պարզվել է, որ «Սիլիկյան» բաց գերեզմանատան կողմից տրամադրված գերեզմանատեղերը եղել են օրենքով սահմանված չափերից ավելի: Գերեզմանատան վարիչը նախաքննության ընթացքում վերականգնել է պետությանը պատճառված՝ 1.530.000 ՀՀ դրամի վնասը, սակայն քրեական գործի նախաքննությանը զուգահեռ շարունակել է դրսևորել հանցավոր վարքագիծ և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նույնիսկ այն գերեզմանատներում, որտեղ նախկին վարիչներն ազատվել են աշխատանքից, հետագայում նույնաբնույթ խախտումները շարունակվել են, ավելին,

գերեզմանատներում գործել է հանցանքների կատարման նույն մեխանիզմը: Մասնավորապես՝ գերեզմանատների վարիչները, չունենալով փակ գերեզմանատներում նոր գերեզմանատեղեր հատկացնելու իրավունք, օրենսդրական արգելքի պայմաններում լրացրել են ակնհայտ կեղծ գերեզմանաքարտեր՝ ներառելով նախկինում՝ նոր հատկացվող վայրում իբրև թե մահացողի հարազատի հուղարկավորված լինելու փաստը և այդ հիմքով նոր գերեզմանատեղի հատկացրել գերեզմանատների սահմաններից դուրս գտնվող՝ համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող հողատարածքներում: Դա հիմնականում պատճառաբանվել է նրանով, որ գերեզմանատների և հարակից ամայի տարածքների միջև արգելապատնեշներ չկան, դրանք առանձնացված չեն, սահմանազատում ևս չկա և այդ պատճառով առաջանում են թյուրիմացություններ:

Բացի այդ, պարզվել է, որ և՛ բաց, և՛ փակ գերեզմանատեղիներում առկա են բազմաթիվ գերեզմաններ, որոնք զբաղեցնում են օրենքով սահմանված առավելագույն չափերից ավելի տարածքներ, ինչի պատճառով գերեզմանատեղիներում տարածքների սղություն է առաջանում, և ազատ տեղեր չլինելու պատճառով դրանք դառնում են փակ գերեզմանատեղեր:

Հուղարկավորություն իրականացրած անձինք ավել տարածքների զավթումը պատճառաբանում են բետոնապատման աշխատանքներով կամ իրենց կողմից ուղղակի, առանց որևէ մեկի հետ համաձայնեցնելու ավել տարածք զբաղեցնելու որոշմամբ: Այսինքն, բաց և փակ գերեզմանատների վարիչները պատշաճ հսկողություն չեն իրականացրել իրենց ղեկավարած գերեզմանատներում՝ նոր գերեզմանատեղերի՝ օրենքով նախատեսված չափերով տրամադրման և այդ գերեզմանատեղերի չափերի պահպանման նկատմամբ:

Իսկ կաշառք ստանալու վերաբերյալ քննվող քրեական գործերի շրջանակներում պարզվել է, որ գերեզմանատան վարիչները կամ հսկիչները գերեզմանատեղի շինարարություն իրականացնելու պատրվակով իրականում քաղաքացիներից տարբեր չափի գումարներ են պահանջել ինչպես գերեզմանատեղի տրամադրման, այնպես էլ նշված աշխատանքների համար:

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի կանոնադրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության որոշակի տեսակներ, որոնց մեջ ներառված են գերեզմանահորի փորումը, գերեզմանի բարեկարգումը, այսինքն՝ սալիկապատումը կամ բետոնապատումը և այլն: ՀՈԱԿ-ում առկա է հստակ սահմանված գնացուցակ վերոհիշյալ ծառայությունների համար, որի վճարումները ևս քաղաքացիների կողմից պետք է իրականացվեն ՀՈԱԿ-ի հաշվապահության միջոցով:

Այսինքն, գերեզմանատների վարիչները և հսկիչները նման ծառայություններ մատուցելու իրավասություն չունեն, այն ՀՈԱԿ-ի կողմից բացված

ձեռնարկատիրական կազմակերպության բացառիկ լիազորությունն է: Մինչդեռ, գերեզմանատների վարիչները և հսկիչները, շրջանցելով օրինական ճանապարհը, տեղերում առաջարկում են իրենց կողմից վերոհիշյալ ծառայությունների մատուցումը՝ դրա մեջ նաև առանձին դեպքերում ներառելով գերեզմանատեղի հատկացման համար վճար:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ միայն օրենսդրական կարգավորումն ի զորու չէ ապահովելու օրենքով սահմանված գերեզմանատեղերի առավելագույն չափերի պահպանումը և անհրաժեշտ է մեխանիզմներ մշակել քաղաքացիների կողմից նման հողազավթումները հայտնաբերելու և վերացնելու համար:

Ելնելով ուսումնասիրությամբ պարզված վերոնշյալ իրողություններից՝ Երևան քաղաքի դատախազը շարունակվող հանցավոր խախտումները, կոռուպցիոն տարածված սխեմաները վերացնելուն, հանցագործություններին նպաստող պատճառներն ու պայմանները չեզոքացնելուն ուղղված կոնկրետ առաջարկություններով միջնորդագրով դիմել է Երևանի քաղաքապետին:

Դատախազության կողմից, մասնավորապես, առաջարկվել է գերեզմանատեղերի առավելագույն չափերի պահպանման և վերահսկողության բացակայության պայմաններում, քաղաքացիների կողմից հողազավթումների պրակտիկան վերացնելու նպատակով, գերեզմանատների տարածքը չափագրել լիցենզավորված չափագրողների կողմից, առանձնացնել դեռևս չտրամադրված տարածքներն առանձին-առանձին այն չափերով, որն օրենքով սահմանված չափով կարող է տրամադրվել հուղարկավորության համար, համարակալել տարածքները և հուղարկավորության համար տրամադրել հերթական համարներով: Այս կառուցակարգը կբացառի ավելի «լավ» կամ նախընտրելի տարածքը կոռուպցիոն մեխանիզմների արդյունքում որոշակի անձանց տրամադրելու, սահմանված չափից ավելի մեծ տարածք տրամադրելու կամ գերեզմանատան տարածքից դուրս համայնքներին, այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող տարածքները որպես գերեզմանատեղի տրամադրելու ռիսկը:

Բացի այդ, ըստ ուսումնասիրության, «Բնակչության հատուկ սպասարկման» ՀՈԱԿ-ը վերահսկողական մեխանիզմներ չունի, կամ դրանք պատշաճ չի իրականացնում՝ պարզելու՝ արդյոք գերեզմանատեղից վերցված և ՀՈԱԿ ներկայացված փաստաթղթերն իրականությանը համապատասխանում են, թե՝ ոչ: Ելնելով դրանից՝ առաջարկվել է մշակել գերեզմանատներում հուղարկավորության թույլտվություն տալուց առաջ ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգելու մեխանիզմ, ինչը կվերացնի գերեզմանատների վարիչների կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու եղանակով գերեզմանատեղի տրամադրելու հնարավորությունը:

Հաշվի առնելով, որ գերեզմանատան վարիչի կողմից գերեզմանատանը բիզնես ծառայություններ մատուցելը նպաստավոր պայմաններ է ստեղծում անօրինական վարձատրություն կամ կաշառք ստանալու համար, Երևանի

քաղաքապետարանին առաջարկվել է վերացնել կանոնադրությամբ արձանագրված նման լիազորությունը՝ միաժամանակ հսկողություն սահմանելով քաղաքացիների կողմից բետոնապատման ընթացքում տրամադրված գերեզմանի սահմանների պահպանման նկատմամբ: Բացի այդ, առաջարկվել է ստեղծել նման ծառայությունների մատուցման համար նախատեսված էլեկտրոնային հարթակ, և ծառայությունների գումարները գանձել բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ՀՈԱԿ-ի հաշվեհամարին:

Նկատի ունենալով, որ իրավիճակը գերեզմանոցային ծառայությունների մատուցման ոլորտում գործնականում չի փոխվում անգամ հարուցված բազմաթիվ քրեական գործերի, պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ իրականացված քրեական հետապնդումների պայմաններում, Երևան քաղաքի դատախազը բարձրացրել է ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ ոլորտում աշխատող անբարեխիղճ աշխատակիցների հետագա պաշտոնավարման նպատակահարմարությունը քննարկելու հարցը՝ սկսած ոլորտը համակարգող կամ ոլորտի նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնող՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների աշխատակիցներից մինչև «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի ղեկավար կազմը, աշխատակիցները, գերեզմանատան վարիչները և հսկիչները:

Միջնորդագրով դրվել է նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայություններ-«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ–գերեզմանատան վարիչ-գերեզմանատան հսկիչ քառաստիճան համակարգում կարգավորող իրավանորմերի և հարաբերությունների կատարման նկատմամբ վերահսկողական մեխանիզմների խստացման և կատարելագործման անհետաձգելի միջոցառումներ սկսելու հարցը:

Պատրաստակամություն է հայտնվել դատախազության կողմից, իր իրավասության շրջանակներում, ներգրավվելու համապատասխան աշխատանքներում:

Միջնորդագիրը ներկայացվելուց հետո Երևանի քաղաքապետն արձագանքել է: Բարձրացված հարցերի շուրջ արդեն իսկ նախնական քննարկում է տեղի ունեցել Երևանի քաղաքապետի և Երևանի դատախազի տեղակալի միջև:

Մեկ այլ՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեսուչը 2021թ. հունվարի 26-ին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ծառայություն իրականացնելիս թույլ է տվել նույնաբնույթ մի քանի հանցավոր իրավախախտում:

Մասնավորապես, նշված տարածքում ծառայություն իրականացնելիս նա հայտնաբերել է մի քանի ավտոմեքենաների վարորդների կողմից տրանսպորտային երթևեկության կանոնների տարաբնույթ խախտումներ:

Տեսուչը թույլ տրված վարչական իրավախախտման տուգանքի չափի վերաբերյալ վարորդներին հայտնել է ուռճացված տեղեկություն, այնուհետև, համաձայնության եկել տուգանքը վերջիններիս կողմից կանխիկ վճարելու դեպքում այլ՝ ավելի ցածր չափով տուգանք նախատեսող վարչական իրավախախտում արձանագրելու շուրջ: Ելնելով դրանից՝ տեսուչը իրավախախտման արձանագրության և որոշման թերի լրացված ձևաթղթերում նշել է որոշակի գումար, ինչից հետո, տուգանքը տեղում գանձելու մտացածին պատրվակով, ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու փաստն օրենքով նախատեսված կարգով արձանագրելու պատրանք ստեղծելու նպատակով, վարորդներից ստացել է տարբեր չափերի գումարներ՝ 5000-ից մինչև 20000 ՀՀ դրամ:

Առաջադրված մեղադրանքում վերջինս իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել խոստովանական ցուցմունք, վերականգնել վնասը:

Քանի որ քրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է նաև, որ տեսուչի՝ 2020-2021թթ. ընթացքում ստացած վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունները տևական ժամանակ չեն հանձնվել համապատասխան աշխատակցին, այս ուղղությամբ իրականացված քննությամբ պարզվել է, որ ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության համապատասխան ստորաբաժանումներում խիստ հաշվառման փաստաթղթեր հանդիսացող վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունների և վարչական տուգանքների վճարման անդորրագրերի պատշաճ հաշվառում իրականացնելու, արձանագրությունների ձևաթղթերը տեսուչին հանձնելու և լրացված արձանագրությունները նրանից ստանալու գործընթացը պատշաճ կարգավորված չէ: Բացի այդ, բացակայում են նաև դրանց նկատմամբ վերահսկողության բավարար մեխանիզմները:

Նմանատիպ հանցագործությունների կատարմանը նպաստող նշված պատճառներն ու պայմանները վերացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել ՀՀ ոստիկանապետին՝ մշակելու նշված գործընթացի իրականացման և դրա նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմներ, ինչպես նաև քրեական գործով հաստատված խախտումները և դրանց պատճառները առավել հանգամանորեն պարզելու համար անցկացնել ուսումնասիրություններ, լուծել խախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության հարցը:

Արդյունքում՝ ոստիկանությունում ձեռնարկվել են խնդրի կարգավորմանն ուղղված գործնական քայլեր:

Մասնավորապես, ՀՀ ոստիկանության պետի պատասխան գրությամբ տեղեկացվել է, որ քրեական գործով հաստատված խախտումները և դրանց պատճառները պարզելու, ինչպես նաև դրանցում մեղավոր անձանց կարգապահական ներգործության ենթարկելու և խախտումներ թույլ տված

պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը լուծելու համար ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվել է ծառայողական քննություն: Դրա արդյունքում վերոնշյալ հանցավոր խախտումները թույլ տված տեսուչը ոստիկանապետի հրամանով ազատվել է ծառայությունից:

Բացի այդ, խիստ հաշվառման փաստաթղթեր հանդիսացող վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների և վարչական տուգանքների վճարման անդորրագրերի հաշվառում և դրանց նկատմամբ պատշաճ և ամբողջական վերահսկողություն իրականացնելու, այդ կերպ ոլորտում հնարավոր հանցավոր դրսևորումները բացառելու նպատակով, ճանապարհային ոստիկանության ուղեկցող սպայական վաշտի ծառայողների գործառութային պարտականություններում կատարվել է փոփոխություն: Արդյունքում՝ խիստ հաշվառման ձևաթղթերի հանձնման և ընդունման հսկողության պարտականությունը դրվել է դասակների հրամանատարների վրա:

Գրությամբ տեղեկացվել է նաև, որ խիստ հաշվառման վերոնշյալ փաստաթղթերի պատշաճ հաշվառում անցկացնելու նպատակով Պարեկային ոստիկանությունը ձեռք է բերել համապատասխան սարքավորումներ՝ փաստաթղթաշրջանառության նկատմամբ հսկողությունը դյուրացնելու և կոռուպցիոն ռիսկերը հնարավորինս բացառելու նպատակով:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե) ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով քննված քրեական գործով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության վարչական պրակտիկայի գծով ավագ տեսուչին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ նա, պաշտոնեական դիրքն օգտագործելով, յուրացրել է իրեն վստահված ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքը: Մասնավորապես, վերջինս ի պաշտոնե պարտավոր է եղել ապահովելու իր կողմից սպասարկվող դասակի հրամանատարի կամ փոխարինողի կազմած արձանագրությունների և տեղում տուգանք գանձելու համար տրվող վճարման անդորրագրերի ընդունումը տեսչական անձնակազմից, կատարելու դրանց ձևակերպումը համապատասխան մատյաններում և ձևաթղթերում, ընդունելու քաղաքացիների կողմից տեսուչներին վճարված տուգանքի գումարի վճարումը հաստատող փաստաթուղթը, գումարի ընդունման դեպքում՝ ապահովելու դրա վճարումը ՃՈ համապատասխան արտաբյուջետային հաշվին ոչ ուշ, քան մինչև հաջորդ օրվա ավարտը:

Պարզվել է, որ 2019-2020թթ. քաղաքացիների կողմից ՃԵԿ-ը խախտելու համար Լոռու մարզի Թումանյանի վարչական տարածքը սպասարկող ՀՀ ոստիկանության ՃՈ ճանապարհապարեկային տեսուչների կողմից կազմված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունները, որոշումները, ՃԵԿ-ի խախտման տեղում տուգանք գանձելու համար տրվող

վճարման անդորրագրերը և քաղաքացիների կողմից վճարված գումարները՝ ընդհանուր 7.128.500 ՀՀ դրամ, սահմանված կարգով հանձնվել են տեսուչին: Վերջինս, սակայն, վարչական իրավախախտման արձանագրությունները, որոշումները և տեղում վճարման անդորրագրերը ՃՈ-ի էլեկտրոնային ռեգիստր չի մուտքագրել, գումարները մեկօրյա ժամկետում ոստիկանության արտաբյուջետային հաշվին չի վճարել: Փոխարենը, նա առանձնապես խոշոր չափերով գումարը յուրացրել է՝ օգտագործելով իր անձնական կարիքների համար:

Առաջադրված մեղադրանքում ավագ տեսուչն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել խոստովանական ցուցմունք և ամբողջությամբ վերականգնել պատճառված վնասը:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: 2021թ. դեկտեմբերի 10-ի դատավճռով ավագ տեսուչը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել 5 տարի ժամկետով ազատազրկման: Վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Միաժամանակ, քրեական գործով նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության համապատասխան ստորաբաժանումներում խիստ հաշվառման փաստաթղթեր հանդիսացող վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունների և վարչական տուգանքների վճարման անդորրագրերի պատշաճ հաշվառում չի իրականացվել, այդ փաստաթղթերի և գանձված գումարների՝ համապատասխան անձանց կողմից միմյանց հանձնում-ընդունումը պատշաճ կերպով չի կատարվել, որևէ պաշտոնատար անձի կողմից, ըստ էության, այդ գործընթացի նկատմամբ հսկողություն չի իրականացվել, որոնք էլ հափշտակություններ կատարելու համար նպաստավոր պայմաններ են ստեղծել:

Այսինքն, աշխատանքների կազմակերպման ընթացքում չի ապահովվել այնպիսի գործիքակազմ, որը կբացառեր վերը նշված բնույթի խախտումներն ու չարաշահումները, անհնար կդարձներ ենթադրյալ հանցագործությունը տևական ժամանակ չխափանելը և չհայտնաբերելը:

Նկատի ունենալով, որ ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության աշխատանքներում տեղ գտած՝ վերը նշված բնույթի խախտումներն ու թերությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում հանցավոր արարքների կատարման համար, նման պայմաններում առաջանում է տուգանք վճարող քաղաքացիների իրավունքների խախտման ռիսկ և նմանատիպ երևույթներ ենթադրաբար կարող են տեղի ունենալ նաև ՃՈ ծառայության այլ ստորաբաժանումներում, ՀՀ գլխավոր դատախազությունից միջնորդագիր է ներկայացվել ՀՀ ոստիկանության ղեկավարությանը, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն արձանագրությունների, վարչական տուգանքների վճարման անդորրագրերի խիստ հաշվառում իրականացնելու, ՃՈ էլեկտրոնային ռեգիստր մուտքագրելու, գումարները սահմանված մեկօրյա ժամկետում պարտադիր բանկ

վճարելու և այդ ամբողջ գործընթացի նկատմամբ գործուն վերահսկողության մեխանիզմներ մշակելու և գործադրելու նպատակով:

Արդյունքում, դատախազության միջնորդագիրը, համաձայն ստացված գրության, քննարկվել է ՀՀ ոստիկանությունում և որոշում է կայացվել համապատասխան ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց գործառութային պարտականություններում կատարել փոփոխություններ՝ հասցեականացնել ու կոնկրետացնել նշված գործընթացների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց շրջանակը:

Ինչպես պարզ է դառնում վերը բերված օրինակներից, ՀՀ դատախազությունում հատկապես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության ընթացքում առանձնահատուկ տեղ է հատկացվում հանցագործություններին նպաստող պատճառների և պայմանների վերհանմանը: Ուսումնասիրությունները վկայում են, որ հանցավոր դեպքերը, հաճախ, որոշակի ոլորտներում պատշաճ կարգավորումներից բացի, անորոշության կամ անհետևողականության արդյունք են: Հետևաբար, յուրաքանչյուր նման դեպքի քննությամբ ՀՀ դատախազության կողմից առաջնահերթ խնդիր է դրվում՝ քննությամբ պարզել նշված պատճառներն ու պայմանները և պատկան մարմիններին ներկայացված միջնորդագրերով հետևողականորեն ապահովել դրանց վերացումը:

Միայն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատախազների կողմից ներկայացվել է 95 միջնորդագիր (2020թ.՝ 72):

Վարույթ իրականացնող մարմիններին տրվել է 481 ցուցում (2020թ.՝ 406): Բացի այդ, մինչդատական քրեական վարույթ իրականացնող համապատասխան մարմիններին ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ 19 միջնորդություն (2020թ.՝ 21), որի արդյունքում 7 աշխատակից (2020թ.՝ 7) ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Գործերի քննության ընթացքում օրենքի խախտում թույլ տալու կապակցությամբ 30 որոշում է կայացվել՝ հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին (2020թ.՝ 44):

2021թ. ընթացքում թեև արձանագրվել է ազդարարման համակարգով ստացված ազդարարումների թվի նվազում, սակայն զգալիորեն աճել է ազդարարումների հիման վրա քրեական գործերի հարուցման տեսակարար կշիռը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է 75 ազդարարում (2020թ.՝ 140), որոնցից 68-ը վերաբերել են առերևույթ կոռուպցիոն բնույթի դեպքերին: Նշված 75 ազդարարումներից 70-ը (2020թ.՝ 119) եղել են անանուն: 59-ով (2020թ.՝ 91) հարուցվել է ազդարարման վարույթ, 16-ով (2020թ.՝ 33) մերժվել է վարույթի հարուցումը: Հարուցված ազդարարման վարույթներից 32-ով (2020թ.՝ 24) վարույթը

կարճվել է, 47-ը (2020թ.՝ 86) ուղարկվել է օպերատիվ-հետախուզական մարմին՝ ազդարարումը ստուգելու համար: 10 ազդարարման դեպքով (2020թ.՝ 1) հարուցվել է քրեական գործ:

6. Պետական շահերի պաշտպանության ոլորտ

Պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում 2021թ. ընթացքում ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները լայնածավալ աշխատանքներ են իրականացրել: Ընդ որում, իրականացված աշխատանքներն ուղղված են եղել պետությանը և համայնքներին պատճառված **ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային վնասների** բացահայտմանն ու հատուցմանը:

Մասնավորապես, ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային ընդգրկման բազմաթիվ ոլորտներում կատարվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ընդհանուր առմամբ 1308 ուսումնասիրություն /2020թ՝ 819/, որոնց արդյունքներով հայտնաբերվել է 687 իրավախախտում (2020 թ.՝ 763):

Ուսումնասիրությունները ոլորտային առումով ընդգրկել են պետական և հանրային գույքի պահպանության, մասնավորեցման, սոցիալական ապահովության և կրթության, հողօգտագործման, էներգետիկայի, բնապահպանության, ընդերքօգտագործման, առողջապահության ոլորտները:

Բացի այդ, ուսումնասիրություններն ընդգրկել են նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կառավարման ոլորտում գործող պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից հարուցված կամ նրա դեմ ներկայացված հայցերի, դրանց հիման վրա ընդունված դատական ակտերի հիմնավորվածության, բողոքարկման ու կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրությունների արդյունքներով պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու, ինչպես նաև պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով պետական մարմիններին ներկայացվել է ընդհանուր 55 հաղորդում և միջնորդագիր (2020 թ.՝ 77):

Հաշվետու ժամանակահատվածում դատախազների կողմից դատարաններ է ներկայացվել ընդհանուր **626 մլն 467 հազ. դրամի բռնագանձման պահանջով** պետական շահերի պաշտպանության **77 հայց** (2020 թ.՝ 618 մլն 284 հազար դրամի բռնագանձման պահանջով պետական շահերի պաշտպանության 56 հայց)**:** Ներկայացված հայցապահանջներով (այդ թվում՝ նախորդ տարիներին հարուցված) բավարարվել է **ավելի քան 264 մլն 855 հազ. դրամ հայցապահանջով 39 հայց,** (2020 թ.՝ 4 մլրդ 690 մլն դրամ հայցապահանջով 36 հայց): Մոտ 7 մլրդ 171 մլն 862 հազ. դրամ պահանջով շուրջ 118 հայցի քննություն ընթացքի մեջ է:

Դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստերի առթիվ **հարուցվել է 123 քրեական գործ** (2020 թ.՝ 249), իսկ 283 դեպքով ուսումնասիրությունների

արդյունքներն ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար (2020 թ.՝ 574):

Պետության շահերին հասցված վնասը վերականգնելու համար նախազգուշացվել է 63 անձ /2020թ.՝ 153/: Արդյունքում՝ տարվա ընթացքում միայն դատախազական այս ներգործության միջոցի կիրառմամբ կամովին պետական բյուջե է վերականգնվել **1 մլրդ 049 մլն ՀՀ դրամ** /2020թ.՝ 512 մլն 131 հազ. ՀՀ դրամ/:

Դատախազության բոլոր ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով հայտնաբերված՝ պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է **32 մլրդ 776 մլն ՀՀ դրամ** /2020թ.՝ 21 մլրդ 431 մլն ՀՀ դրամ/: Հարուցված քրեական գործերի, ինչպես նաև դատարաններ ներկայացված հայցերի շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում բացահայտված վնասի վերականգնման ուղղությամբ:

Միաժամանակ՝ ուսումնասիրությունների հիման վրա կատարված նախազգուշացումների, բավարարված հայցերի, ներկայացված հաղորդումների հիման վրա դատախազության կողմից կատարված աշխատանքի արդյունքում 2021թ. ընթացքում փաստացի վերականգնվել է **1 մլրդ 204 մլն ՀՀ դրամի վնաս** /2020թ.՝ 1 մլրդ 600 մլն դրամ/: Դատախազությունը, ինչպես քրեական գործերի, այնպես էլ հայցերի հարուցման շրջանակներում, հետամուտ է հայտնաբերված վնասի վերականգնմանը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված ներգործության ողջ գործիքակազմի կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ, արձանագրված և վերականգնված վնասի ցուցանիշների էական տարբերությունը պայմանավորված է ուսումնասիրությունների արդյունքներով դատախազների կողմից հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, իրենց իրավասության սահմաններում, քրեական գործ հարուցելու, հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված պարտականության հանգամանքով, որի պարագայում գործում են արդեն վնասների վերականգնման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգերը:

2021թ. ընթացքում պետական կառավարման տարբեր ոլորտներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով բազմաթիվ դեպքերում արձանագրվել են պետական շահերի խախտումների հետևանքով պետությանը և համայնքներին պատճառված **առանձնապես խոշոր չափերի** գույքային վնասներ:

Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության իրականացրած ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), որի

բաժնետոմսերի 80 տոկոսը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, 2017թ. մայիսի 12-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Դատարան) և խնդրել է անվավեր ճանաչել «Երևանի ոսկերչական գործարան-1 Գնոմոն» ԲԲ ընկերության հետ 2016թ. դեկտեմբերի 5-ին կնքած «փոխադարձ հաշվարկների ստուգման ակտերը», ինչպես նաև վերջինից բռնագանձել 1.092.593.543 ՀՀ դրամ (քաղաքացիական գործ ԵԿԴ/1940/02/17):

Դատարանը 2018թ. հուլիսի 27-ի վճռով մերժել է Ընկերության պահանջը, պատճառաբանելով, որ «փոխադարձ հաշվարկների ստուգման ակտերի» հիմք են հանդիսացել կողմերի միջև կնքված պայմանագրերը, սակայն հայցվորը դատարան չի ներկայացրել վկայակոչած պայմանագրերը և չի ապացուցել պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2018թ. հոկտեմբերի 25-ի որոշմամբ վճիռը թողել է անփոփոխ, իսկ Վճռաբեկ դատարանը տնօրենի պաշտոնակատարի բերած վճռաբեկ բողոքը 2018թ. դեկտեմբերի 12-ի որոշմամբ թողել է առանց քննության:

Մինչդեռ, Պետական գույքի կառավարման կոմիտեի 2021թ. փետրվարի 17-ի թիվ 02/10.3/989-2021 գրության և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թեև Ընկերության և «Երևանի ոսկերչական գործարան-1 Գնոմոն» ԲԲ ընկերության միջև 2007թ. հունվարի 15-ին կնքվել են թիվ 001/07 համագործակցության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) և հետագայում նաև պայմանագրի ժամկետները երկարաձգելու վերաբերյալ համաձայնագրեր, դրանք առկա են եղել Ընկերությունում, սակայն չեն ներկայացվել դատարանի գնահատմանը, ինչն էլ հայցը մերժելու հիմք է հանդիսացել:

Փաստորեն, Ընկերության պատասխանատու պաշտոնատար անձինք, ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով, վկայակոչած քաղաքացիական գործի շրջանակներում օժտված լինելով դատարանի կողմից բաշխված բեռի ապացուցման պարտականությամբ, 2017-2018թթ. դատարան չեն ներկայացրել «փոխադարձ հաշվարկների ստուգման ակտերի» հիմք հանդիսացող Պայմանագիրը, ինչպես նաև չեն շտկել Վճռաբեկ դատարանի կողմից արձանագրված թերությունները, ինչի հետևանքով պետական բաժնեմասով ընկերությունը ոչ միայն զրկվել է 1.092.593.543 ՀՀ դրամ դեբիտորական պարտքը ստանալու հնարավորությունից, այլև ծանրաբեռնվել է շուրջ 56.000.000 ՀՀ դրամ պետական տուրք վճարելու պարտավորությամբ:

Փաստի առթիվ պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե: Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Պետական շահերի խախտումների հետևանքով պետությանը և համայնքներին պատճառված գույքային և ոչ գույքային վնասների

բացահայտման և հատուցման ուղղությամբ ՀՀ դատախազության մարզային ստորաբաժանումները նույնպես արձանագրել են տեսանելի արդյունքներ:

Մասնավորապես, ՀՀ Լոռու մարզի դատախազությունում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձել «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» պետական ծրագրով գյուղական տնտեսություններին տրամադրվող վարկերի նպատակային օգտագործման խնդիրը: Ծրագրի հիմնական նպատակն է հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքները պետության կողմից մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով տնտեսա-վարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը նպաստելը:

Ուսումնասիրության շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից պահանջվել են տեղեկություններ՝ 2019-2020թթ. ընթացքում հիշյալ ծրագրով տրամադրված վարկերի շահառուների և վարկերի օգտագործման վերաբերյալ: Նախարարությունից ստացվել են 2019թ. ամբողջ տարվա և 2020թ. երեք եռամսյակում իրականացված 125 ուսումնասիրության վերաբերյալ փաստաթղթերի փաթեթները, որոնցից 33-ը Լոռու մարզի դատախազության կողմից ուղարկվել են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության համապատասխան ստորաբաժանումներ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարությամբ: Նշյալ դեպքերից 4-ի առթիվ նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ կառավարության 2019թ. մարտի 7-ի թիվ 184-Լ որոշմամբ սահմանված՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում, գյուղատնտեսության զարգացման նպատակով, ՀՀ–ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով կնքված պայմանագրով ՀՀ Լոռու մարզի բնակիչներին 2019թ. տարբեր ժամանակահատվածներում տրամադրվել են 3.000.000-ից մինչև 6.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկեր, որոնք վարկառուների կողմից օգտագործվել են ոչ նպատակային. դրանք չեն ուղղվել պայմանագրի՝ պարտադիր պայման հանդիսացող անասնապահության զարգացմանը, ինչի հետևանքով պետությանը պատճառվել է խոշոր վնաս: Արդյունքում՝ նշված դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 4 քրեական գործ, որոնց նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզի քննչական վարչությանը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է արդյունավետ համագործակցությունը ՀՀ պետական վերահսկողական ծառայության և հաշվեքննիչ պալատի հետ: Ընդ որում, այդ համագործակցության արդյունքները

վկայում են, որ որոշ դեպքերում արձանագրվել են նաև պետական շահերի խախտումների հետևանքով պետությանը և համայնքներին պատճառված **առանձնապես խոշոր չափերի գույքային վնասներ: Այսպես.**

1. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից **ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացված տեղեկության հիման վրա** իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՊՈԱԿ) կարիքների համար 30.10.2012թ., 24.10.2013թ., 24.10.2014թ., և 28.10.2015թ. ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից նախապատրաստվել և ներկայացվել են Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների ձեռքբերման համար գնման հայտերը՝ ծառայությունների ձեռքբերման նախահաշվային գինը յուրաքանչյուր տարվա համար սահմանելով 700.344.000 ՀՀ դրամ:

Հայտարարված գնումների ընթացակարգերում յուրաքանչյուր տարի հաղթող է ճանաչվել միակ մասնակից «Յուքոմ» ՍՊԸ-ն, որի հետ էլ 2012-2015թթ. կնքվել են հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների գնման պայմանագրեր՝ համապատասխանաբար՝ 715.815.000 ՀՀ դրամ, 699.800.000 ՀՀ դրամ, 700.200.000 ՀՀ դրամ և 703.200.000 ՀՀ դրամ արժեքներով:

Նշված ծառայությունների ձեռքբերման ժամանակահատվածում գործող «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 35.1 կետի համաձայն՝ «Մինչև գնումների հրավերների հաստատումը, բացառությամբ շինարարական ծրագրերի, գնահատող հանձնաժողովի անդամները պարտավոր են ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության համապատասխան շուկաները և կազմել գրավոր երաշխավորություն տվյալ հրավերի շրջանակում իրականացվելիք գնումների շուկայական գների մասին՝ կցելով մանրամասն բացատրագիր նախահաշվային գնի ու շուկայական գնի համեմատության վերաբերյալ և ուսումնասիրությունը հիմնավորող փաստաթղթերը»:

Նույն որոշման 35.4 կետի համաձայն՝ «Եթե կարգի 35.1-ին կետով նախատեսված փաստաթղթերի համաձայն շուկայական գնի և սկզբնական նախահաշվային գնի միջև առկա է 15 և ավելի տոկոս դրական կամ բացասական տարբերություն, ապա հանձնաժողովը դիմում է պատվիրատուին՝ սահմանված կարգով գնումների պլանում փոփոխություն կատարելու համար: Համապատասխան փոփոխությունից հետո գնումների պլանում նախատեսված գինը համարվում է վերանայված նախահաշվային գին: Մասնակիցների գնային առաջարկները համեմատվում են վերանայված նախահաշվային գնի (գների) և ոչ թե սկզբնական նախահաշվային գնի (գների) հետ և, եթե գնային առաջարկները բարձր են վերանայված նախահաշվային գնից (գներից), ապա մրցույթը հայտարարվում է չկայացած»:

ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված տեղեկության համաձայն՝ Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների գնման գործընթացի շրջանակներում ծառայությունների նախահաշվային գինը սահմանելու համար շուկայի ուսումնասիրություն չի կատարվել:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը պարզել է նաև, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից, նույն Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների նպատակով, 2017-2019թթ. կնքված պայմանագրերի արժեքը յուրաքանչյուր տարվա համար կազմել է շուրջ 400.000.000 ՀՀ դրամ կամ 300.000.000 ՀՀ դրամով ավելի պակաս 2012-2015թթ. կնքված պայմանագրերից:

Փաստորեն, ՊՈԱԿ-ի պատասխանատու պաշտոնատար անձինք, խախտելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 35.1 և 35.4 կետերով նախատեսված պահանջները, Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների գնումների ընթացակարգերում չեն իրականացրել շուկայի ուսումնասիրություն, ինչի արդյունքում սահմանվել են չհիմնավորված նախահաշվային գներ, որոնք էլ հիմք են հանդիսացել 2012-2015թթ. «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ յուրաքանչյուր տարի շուրջ 700.000.000 ՀՀ դրամ արժեքով պայմանագրերի կնքման համար՝ պետությանը պատճառելով ընդհանուր շուրջ 1.200.000.000 ՀՀ դրամի վնաս՝ առաջացնելով ծանր հետևանքներ:

Փաստի առթիվ պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

2. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից **ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացված տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա** իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի թիվ 8495-AM վարկային էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում, Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ում (այսուհետ' նաև Ընկերություն) (Պատվիրատու) և «ABB AB Substation and Cobra Instalaciones y Servicios, S.A» կոնսորցիումի (Կապալառու) միջև 14.07.2016թ. կնքվել է Ընկերության 220/110/35կվ ենթակայանի վերակառուցման թիվ /ENTIP_YTPC_ICB_1/2015 համաձայնագիրը:

Համաձայնագրով ենթակայանի վերակառուցման արժեքը կազմել է 16,662,617.07 ԱՄՆ դոլար (ծրագրի 80%-ը վարկային ֆինանսավորմամբ և 2,003,005,775.2 ՀՀ դրամ' ծրագրի 20%-ը, ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ): Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է

սահմանվել 16.09.2018թ., իսկ հետերաշխիքային սպասարկման ժամկետ է սահմանվել 2 տարի:

«Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագրի իրականացման աջակցություն և տեխնիկական վերահսկողություն» № ETNIP_YTPC_ICB_1/2015 պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման և սարքավորումների մատակարարման ճշտության ուսումնասիրությամբ արձանագրվել են 1.454.353,12 ԱՄՆ դոլարին համարժեք շուրջ 702.452.600 ՀՀ դրամի և 8.540 եվրոյին համարժեք շուրջ 4.867.800 ՀՀ դրամի տարաբնույթ խախտումներ, այդ թվում՝ 1.250.000 ԱՄՆ դոլարի անորակ կատարված շինարարական աշխատանքներ, շուրջ 28,457.31 ԱՄՆ դոլարի պայմանագրերով նախատեսված, կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ, 92.172,78 ԱՄՆ դոլարի անհամաչափ հաշվարկի արդյունքում մատակարարված գծային պորտալների ավել հաշվարկված և վճարված գումարներ, 11.266,4 ԱՄՆ դոլարի կատարողական ակտերով չհիմնավորված և ոչ նպատակային կատարված աշխատանքների համար վճարված գումարներ, 58.516,63 ԱՄՆ դոլարի և 8.540 եվրոյի մատակարարված, սակայն չտեղադրված սարքավորումների ու մալուխների գումարներ և 13.940.0 ԱՄՆ դոլարի պակասորդ ապրանքանյութական արժեքներ:

2016-2019թթ. ընթացքում Կապալառուի կողմից կազմվել և տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվել են կատարված աշխատանքների դիմաց վճարման իրավունք վերապահող բովանդակությամբ կեղծ կատարողական ակտեր, որոնք ներկայացվել են վճարման, ինչպես նաև կազմվել են բովանդակությամբ կեղծ ծածկված աշխատանքների ակտեր: Ընկերության կողմից, առանց պատշաճ վերահսկողություն իրականացնելու, հիշյալ կատարողական ակտերն ընդունվել են ու օբյեկտը հանձնվել է շահագործման:

Արդյունքում՝ ուսումնասիրությունն իրականացնող խումբը միայն ակնադիտական ուսումնասիրությամբ հայտնաբերել է 707.320.400 ՀՀ դրամի տարաբնույթ խախտումներ:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Շահարտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 05.12.2018թ.-ին կնքված՝ «Խմելու ջրի 500 մմ տրամագծով ստորգետնյա մետաղական խողովակաշարի վերգետնյա վերակառուցման աշխատանքներ»-ի պայմանագրի շրջանակներում ուսումնասիրությունն իրականացնող խումբը ընտրանքային կարգով կատարված կատարողական ակտերի կազմման ճշտության փաստաթղթային ուսումնասիրությամբ պարզել է, որ կատարողական ակտերով ավել հաշվարկված գումարն ԱԱՀ-ի հետ կազմում է 327.000 ՀՀ դրամ:

Պատվիրատուի ներկայացուցիչների մասնակցությամբ «Խմելու ջրի 500 մմ տրամագծով ստորգետնյա մետաղական խողովակաշարի վերգետնյա

վերակառուցման աշխատանքներ»-ի պայմանագրով կատարված աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրմամբ հայտնաբերվել են ընդունման-հանձնման արձանագրություններով և կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ՝ 1,212.08 հազ. դրամ արժեքով:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (այսուհետ՝ ՎԶՄԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված՝ «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM վարկային համաձայնագրի և ՎԶՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի Բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների պահանջներին ԵրՋԷԿ-ի համապատասխանության/իրագործելիության ապահովման» աութսորսինգի ծառայությունների ձեռքբերման նպատակով, 2017-2018 թվականներին չհիմնավորված բարձր գնով (2016-2017թթ.-ի, ինչպես նաև 2018-2019թթ.-ի և 2019-2020թթ.-ի համեմատ) կնքելով պայմանագիր՝ Ընկերությունն իրականացրել է առնվազն 35,820.00 հազ. դրամի ավել ծախս:

2011 թ.-ի հոկտեմբերի 24-ին «Հասա Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ մատակարար) և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ գնորդ) միջև կնքվել է արտադրության կազմակերպման և ապրանքի մատակարարման պայմանագիր: Պայմանագրով նախատեսվել է, որ մատակարարը, իր միջոցներով կատարելով անհրաժեշտ ներդրումներ, կազմակերպում է ջուր-ածխային վառելիքի արտադրություն (տեխնոլոգիական շղթան և սարքավորումների ցանկը համաձայնեցնելով գնորդի հետ) և արտադրված ապրանքը վաճառում գնորդին, իսկ գնորդը ընդունում է ապրանքը և վճարում դրա դիմաց պայմանագրով սահմանված կարգով: Նույն պայմանագրի 2.1.1 կետով մատակարարը պարտավորվել է գնորդի կողմից տրամադրված տարածքում կազմակերպել ապրանքի արտադրություն, ապրանքի արտադրության համար կատարել 6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրումներ իր միջոցների հաշվին: Պայմանագրի 2.1.4 կետով նախատեսվել է նաև ապրանքի արտադրության կազմակերպման գործընթացն ավարտել պայմանագրի կնքման օրվանից վեց ամսվա ընթացքում:

«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից նշված ծրագրի շրջանակներում 2012-2013թթ.-ին ձեռքբերված 118,804.9 հազ. դրամի 37 անվանում ապրանքներ 16.09.2015թ.-ին օտարվել են «Էներգա Պլյուս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 90031179, գրանցման հասցեն՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Թումանյան 74/1) 50,007.6 հազ. դրամով: Տվյալ գործարքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ օտարված 37 ապրանքից 14-ը օտարվել է ձեռքբերման և/կամ հաշվեկշռային արժեքից էականորեն՝ 68,419.8 հազ. դրամով ցածր արժեքով:

Ջրածխային վառելիքի հենքի վրա էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով ջրածխային վառելիքի օգտագործմամբ էլեկտրաէներգիայի արտադրության ծրագրին ուղղված 2,182,564.0 հազ. դրամի (2,093,264.0+89,300.0)

ծախսերը կատարվել են առանց տեխնիկատնտեսական հիմնավորումների, առանց նախահաշիվների, առանց ռեսուրսների՝ ածուխի պիտանելիության գնահատման:

Պարզվել է, որ «Հասա Գրուպ» ՍՊԸ-ն չի կատարել պայմանագրով նախատեսված ներդրումը, ավելին՝ 2012թ.-ի մարտի 14-ին «Հասա Գրուպ» ՍՊԸ-ի և «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է հանձնարարության պայմանագիր, որով «Հասա Գրուպ» ՍՊԸ-ն հանձնարարել է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ին կատարել աշխատանքների կատարման կապալի պայմանագրերով շինարարական, մոնտաժային, սարքավորումների և նյութերի ձեռքբերման, տեղադրման և փորձարկման աշխատանքներ, իսկ «Հասա Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է ընդունել այդ աշխատանքների արդյունքները: Այսինքն՝ առանց որևէ ներդրումների և ռիսկի «Հասա Գրուպ» ՍՊԸ-ն «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի միջոցների հաշվին մասնակցել է ջուր-ածխային վառելիքի արտադրության կազմակերպմանը և, եթե տվյալ ծրագիրը հաջողությամբ պսակվեր, «Հասա Գրուպ» ՍՊԸ-ն կունենար երաշխավորված եկամուտ, իսկ տվյալ ծրագիրը չիրականացնելու պարագայում «Հասա Գրուպ» ՍՊԸ-ն չի կատարել պայմանագրային պարտավորությունները և չի հատուցել «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից կատարված 2,093,264.0 հազ. դրամի ծախսերը: Միաժամանակ, 01.08.2020թ, դրությամբ «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել կրած վնասները «Հասա Գրուպ» ՍՊԸ-ից ստանալու ուղղությամբ, ավելին՝ տվյալ պարտավորությունները չեն արձանագրվել նաև 2014-2017թթ. իրականացված թե՝ ներքին, թե՝ արտաքին աուդիտների արդյունքներով:

Վերոգրյալ փաստական հանգամանքները հիմք են տալիս արձանագրելու, որ 2011 թ.-ի հոկտեմբերի 24-ին «Հասա Գրուպ» ՍՊԸ-ի և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքված արտադրության կազմակերպման և ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն՝ «Հասա Գրուպ» ՍՊ ընկերությունը պարտավորվել է կատարել անհրաժեշտ ներդրումներ, սակայն վերջինիս փոխարեն այդ ներդրումների մի մասը՝ 2,093,264.0 ՀՀ դրամը, անհիմն փաստացի կատարել է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲ ընկերությանը պատճառելով նույնքան վնաս:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի, որը հետագայում վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի միջև 16.12.2011թ.-ին կնքվել է բնական գազի և էլեկտրաէներգիայի փոխանակության (առուվաճառքի) պայմանագիր, որի շրջանակներում Կողմերը հաշվետու ժամանակահատվածում իրականացնում են գազ-էլեկտրաէներգիա փոխանակություն՝ 1:3.05 հարաբերությամբ (1 ՍԽՄ բնական գազի դիմաց 3.05 կՎտ.ժ էլեկտրաէներգիա): Բացի այդ, հաշվարկային ժամանակահատվածում Կողմերը փոխանակում են ոչ միայն պայմանագրով սահմանված հարաբերակցությամբ գազ-էլեկտրաէներգիա, այլև Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է հանդիպակաց առաքումների դիմաց կատարել պայմանագրով սահմանված կարգով վճարում:

Պայմանագրի 4.2 կետով սահմանվել է, որ պայմանագրի 4.1 կետում տրված գազի քանակի հաշվարկի բանաձևը չի կարող վերանայվել և ուղղվել, եթե գազի բարձրագույն ջերմատվությունը համապատասխանում է պայմանագրի հավելված 2-ի 2.2 կետում նշված ցուցանիշին՝ այն է «Գազի բարձրագույն ջերմատվությունը չպետք է լինի պակաս, քան 8200 ԿԿԱԱ/ՍԽՄ: Այն դեպքում, երբ գազի փաստացի ջերմատվությունը ավելի ցածր կլինի, քան 8200 ԿԿԱԱ/ՍԽՄ-ը, ապա Կողմերը պետք է հանդիպեն բանակցելու ուղղումների վերաբերյալ կամ դադարեցնեն պայմանագրի գործողությունը:

Հատկանշական է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրված բնական գազի կալորիականությունը՝ ջերմատվությունը գտնվել է 8971.6-9093.7 սահմաններում, կամ պայմանագրով սահմանված նվազագույն 8200 ԿԿԱԱ/ՍԽՄ ջերմատվությունից էականորեն բարձր:

Սույն պայմանագրով նախատեսվել է ջերմատվության միայն նվազագույն շեմ, իսկ առավելագույն շեմի մասով շեշտված է, որ պայմանագրի 4.1 կետում տրված գազի քանակի հաշվարկի բանաձևը չի կարող վերանայվել և ուղղվել, եթե գազի բարձրագույն ջերմատվությունը համապատասխանում է պայմանագրի հավելված 2-ի 2.2 կետում նշված ցուցանիշին՝ եթե պակաս չէ 8200 ԿԿԱԱ/ՍԽՄ ջերմատվությունից:

Ստացվում է, որ 8200 ԿԿԱԱ/ՍԽՄ-ից բարձր ջերմատվությունն անհատույց տրվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին, այն պայմաններում, երբ բնական գազի քանակը կարող էր վերահաշվարկվել նվազագույն 8200 ԿԿԱԱ/ՍԽՄ ջերմատվությունով, որի շնորհիվ 2011-2019թթ. ընթացքում կավելանար «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվող բնական գազի քանակը 127,339.1 հազ. խմ-ով, որին համարժեք կավելանար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (Հրազդան 5)-ի կողմից արտադրված և արտահանվող հոսանքի քանակը՝ 388,384.3 հազ. կվտ/ժ-ով (127,339.1 հազ. խմ X 3.05):

Արդյունքում՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից արտահանման ենթակա էլեկտրաէներգիայի քանակը կնվազեր 388,384.3 հազ. կվտ/ժ-ով և այն կիրացվեր ներքին շուկայում, որի արդյունքում շահույթը 2011-2019թթ. համար կկազմեր 10,209,463.8 հազ. դրամով ավելի:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Առաքող) և «Տրանսգազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Փոխադրող) միջև 26.05.2010թ. կնքված բնական գազի փոխադրում իրականացնելու մասին N ԱՏԲ 10/5 պայմանագրի շրջանակներում Առաքողի՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից ԻԻՀ-ից ներկրած բնական գազի ծավալն ու կալորիականությունը վերահաշվարկվում են 15.6°0-ից 20° ցելսիուսի և այդ պայմաններում բնական գազն առաքվում է Փոխադրողին՝ «Տրանսգազ» ԱՊԸ-ին, որն էլ կիրառում է բնական գազի անխուսափելի տեխնոլոգիական կորուստները հաշվի առնող գործակիցը, որից հետո փոխադրում է համապատասխան ծավալի բնական գազ, որի դիմաց Առաքողը Փոխադրողին վճարում է ՀՀ հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած սակագնով հաշվարկված գումարը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Բնական գազի փոխադրման սակագնի սահմանման մասին» 2010-2020թթ. որոշումներով սահմանված «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից փոխադրվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի փոխադրման սակագնի վերաբերյալ տեղեկությունները վկայում են, որ 2010- 2020թթ. սակագնի կառուցվածքում ներառված են բնական գազի փոխադրման համակարգում անխուսափելի տեխնոլոգիական կորուստները, այն դեպքում, երբ բնական գազի փոխադրման համակարգում անխուսափելի տեխնոլոգիական կորուստներ նախատեսվել և հաշվարկվել են նաև 26.05.2010թ. կնքված բնական գազի փոխադրման պայմանագրով:

Պարզվել է, որ «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի միջև 26.05.2010թ.-ին կնքված բնական գազի փոխադրում իրականացնելու մասին N USB 10/5 պայմանագրի կնքման և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ «Բնական գազի փոխադրման սակագնի սահմանման մասին» 2010-2020թթ.-ի որոշումներով սահմանված «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից փոխադրվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի փոխադրման սակագնի սահմանման արդյունքում, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվառմամբ բնական գազի փոխադրման համակարգում անխուսափելի տեխնոլոգիական կորստի մասով որպես ծախս կրկնակի է հաշվարկվել ընդամենը 66,169.3 հազ. խմ բնական գազին համարժեք 5,061,486.6 հազ. դրամ, կամ սակագնում նախատեսված բնական գազի փոխադրման համակարգում անխուսափելի տեխնոլոգիական կորստի տոկոսին համարժեք 641,776.0 հազ. դրամ:

Արդյունքում, նկատի ունենալով, որ 66,169.3 հազ. խմ գազը «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի արտադրությունում սպառելու պարագայում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հասույթը կկազմեր 7.960.142.400 ՀՀ դրամով ավելի, Ընկերությանը պատճառվել է նույնքան վնաս:

Փաստի առթիվ պետական շահերի պաշտպանության վարչությունում 1 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 1 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, և 4 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

3. Պետական շահերի պաշտպանության վարչության նախաձեռնությամբ, **ՀՀ հաշվեքննիչ պալատից ստացված տեղեկության հիման վրա** իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 26/2 որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության զարգացման հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) իրականացված ստուգմամբ արձանագրվել է, որ 2017թ. հոկտեմբերի 25-ին Հիմնադրամի և «Միկշին» ՍՊ ընկերության միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որով Հիմնադրամը որպես գրասենյակ վարձակալել է Ադոնց 6/1 54 հասցեում գտնվող 573,32 քմ. մակերեսով տարածքը (18 աշխատասենյակ)՝ 2017թ. հոկտեմբերի 15-ից 2022թ. հոկտեմբերի 15-ն ընկած ժամկետով, ամսական 2.475.000 դրամ վարձավճարով:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ անշարժ գույքի վարձակալություն հնարավոր է պայմանով, եթե կարիքը հնարավոր չէ բավարարել պետական կամ համայնքային սեփականություն համարվող տարածքների անհատույց օգտագործման միջոցով:

Մինչդեռ, Հիմնադրամի պատասխանատու պաշտոնատար անձինք հաշվի չեն առել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ սահմանված՝ վերը վկայակոչած պահանջը և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պատկանող շենքի 640քմ, 24 աշխատասենյակով տարածքի առկայության պայմաններում, կնքել են անշարժ գույքի վարձակալության պայմանագիր և միայն 19 ամսվա ընթացքում հիմնադրամի բյուջեից 573,32 քմ մակերեսով, 18 աշխատասենյակով վարձակալած տարածքի համար վճարել են շուրջ 47.000.000 ՀՀ դրամ՝ առաջացնելով ծանր հետևանքներ:

Պարզվել է նաև, որ Հիմնադրամը ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ. մարտի 9-ի թիվ 243-Ա որոշմամբ, իսկ 2019թ. փետրվարի 26-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/1351/02/19 վճռով լուծարվել է, և միայն 2019թ. մայիսի 19-ին է լուծվել Հիմնադրամի և «Միկշին» ՍՊ ընկերության միջև կնքված՝ վերը նշված վարձակալության պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հիմնադրամի լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

Փաստորեն, պետական սեփականություն հանդիսացող տարածքի առկայության և այն օգտագործելու հնարավորության պայմաններում, Հիմնադրամի կողմից կնքվել է վարձակալության պայմանագիր և վճարվել 47.000.000 ՀՀ դրամ, ինչը բացառել է Հիմնադրամի լուծարումից հետո նշված գումարը պետական բյուջե վերադարձնելու հնարավորությունը:

Փաստի առթիվ պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է

քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

4. ՀՀ հաշվեքննիչ պալատից ստացված տեղեկության հիման վրա իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ և պետության համաֆինանսավորմամբ, Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական» ԾԻԳ-ի (2017թ. գործունեությունը դադարեցվել է և ստեղծվել է գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ (այսուհետ՝ ԾԻԳ), որը ձեռք է բերել գյուղատնտեսական տեխնիկա և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հանձնել թվով 8 մարզում ստեղծված 113 կոոպերատիվի:

Հաշվեքննիչ պալատը 2018թ. մարտի 22-ի թիվ 8/4 որոշման հիմքով ԾԻԳ-ի վկայակոչած ձեռքբերումներից իրականացրել է ընտրանքային 9 պայմանագրի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է, որ ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի գները էականորեն գերազանցել են շուկայական գներին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ԾԻԳ-ի կազմակերպված մրցույթներին հիմնականում մասնակցել են 3-5 միևնույն կամ իրար հետ փոխկապակցված ընկերությունները:

Այսպես, CARMAC2CP-J-15-16 ծածկագրով սակարկությանը գնառաջարկ ներկայացնելու հրավերներ է ուղարկվել 9 ընկերության, որոնցից առնվազն 4-ի՝ «Վեկար», «Կարկոմավտո», «Մեգնա», «Գալոպեր» ՍՊ ընկերությունների հիմնադիրները միևնույն անձինք են, իսկ CARMAC2CPP-J-103 ծածկագրով սակարկությանը գնառաջարկ ներկայացնելու հրավերներ է ուղարկվել 8 ընկերության, որոնցից առնվազն 3-ի՝ «Կարկոմավտո», «Մեգնա», «Մուրան» ՍՊ ընկերությունների հիմնադիրը միևնույն անձն է: Ընդ որում, նշված ընկերությունները սակարկությանը գնառաջարկ ներկայացրած միակ հայտատուներ: Մնացած ընկերությունների հրավերին որևէ արձագանք տալու վերաբերյալ տվյալներ առկա չեն, թեև ընկերություններին խնդրվել է փոստով կամ ֆաքսով հաստատել հրավերի ստացումը, ինչպես նաև մասնակցությունը կամ հրաժարվելը:

Պարզվել է նաև, որ ԾԻԳ-ի պատասխանատու պաշտոնատար անձինք 2016թ. դեկտեմբերի 25-ին ընդունել են CARMAC2CP-J-15-16 ծածկագրով «Կարկոմավտո» ՍՊ ընկերության 27.960.000 ՀՀ դրամով 4 բեռնատար ավտոմեքենաների, 2016թ. մայիսի 13-ին CARMAC2CPP-J-103 ծածկագրով 40.050.000 ՀՀ դրամով 6 բեռնատար մեքենաների մատակարարման գնառաջարկը, և անտեսելով այն հանգամանքը, որ գնառաջարկ ներկայացրած ընկերությունները հիմնադրվել են միևնույն անձի կողմից, կնքել են մատակարարման պայմանագրեր:

Բացի այդ, ՀՀ հաշվեքննիչ պալատի տվյալների՝ արտադրող և դիստրիբյուտոր ընկերությունների պաշտոնական տեղեկատվության միջոցների,

գյուղտեխնիկա վաճառող ընկերություններից ստացված գնացուցակների և ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված ներմուծման վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ վերոհիշյալ 68.000.000 ՀՀ դրամով ձեռք բերված բեռնատար մեքենաների շուկայական արժեքը կազմում է 44.391.200 ՀՀ դրամ:

Փաստորեն, ԾԻԳ-ի պատասխանատու պաշտոնատար անձինք 2015-2016թթ. պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, անտեսելով փոխկապակցված անձանց գնման գործընթացին միաժամանակյա մասնակցության հանգամանքը, գնառաջարկ ներկայացնելու հրավեր են ուղարկել միևնույն անձի կողմից հիմնադրած ընկերություններին, ինչպես նաև չունենալով հրավերը ստանալու, գնման գործընթացին մասնակցության կամ հրաժարվելու վերաբերյալ մնացած ընկերությունների վերաբերյալ տեղեկություն, իբրև ամենացածր գնառաջակ ներկայացրած հայտատու են ճանաչել «Կարկոմավտո» ՍՊ ընկերությանը, որի արդյունքում իրականում ավտոմեքենաները ձեռք են բերել գնառաջարկ ներկայացրած՝ միևնույն անձի կողմից հիմնադրած ընկերությունից՝ շուկայական գներից անհամեմատ բարձր գներով, խախտելով գնումների գործընթացի բուն նպատակը՝ տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը՝ բյուջեին միայն վկայակոչած պայմանագրերով պատճառելով շուրջ 24.000.000 ՀՀ դրամի վնաս և պետության համար առաջացնելով ծանր հետևանքներ:

Փաստի առթիվ պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազությունում շարունակվել են տեսչական մարմիններից, ինչպես նաև պետական գերատեսչություններից ստացված՝ իրենց ներքին վերահսկողական գործիքակազմով իրականացվող ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրությունները և, բավարար հիմքերի դեպքում, դրանց հիման վրա քրեական վարույթների հարուցման գործընթացները:

Մասնավորապես, ի կատարումն ՀՀ վարչապետի 2021 թվականի փետրվար 4-ի հանձնարարականի՝ **ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից** ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում, Արաքս գետի ավազանում իրականացվել են չափագրման աշխատանքներ, որոնց արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչություն:

Դատախազության գործիքակազմով ձեռնարկված միջոցառումների արդյունքում, համագործակցելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության հետ, արձանագրվել է ՀՀ Արարատի և

Արմավիրի մարզերում, Արաքս գետի ավազանում ընդերքօգտագործում իրականացնող 8 տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության տեղամասերից դուրս ընդերքի ապօրինի շահագործման՝ տասնյակ հազարավոր խորանարդ մետր ավազի ու ավազակոպիճի ապօրինի արդյունահանման, հողը հանելու, տեղափոխելու, պահպանելու և օգտագործելու կանոնները խախտելու բազմաթիվ դեպքեր:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հողը փչացնելու, շրջակա միջավայրին դիտավորությամբ կամ անզգուշությամբ էական վնաս պատճառելու, 291-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ընդերքի օգտագործման կանոնները խախտելու, ընդերքին, դրանում պարփակված օգտակար հանածոներին էական վնաս պատճառելու հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 9 քրեական գործ:

Հարուցված քրեական գործերով, ընդհանուր առմամբ, արձանագրվել են շուրջ 312 հազար խորհանարդ մետր ավազի և ավազակոպիճի ապօրինի արդյունահանման դեպքեր, որոնցով, նախնական հաշվարկներով, պետությանը պատճառվել է շուրջ 143 մլն դրամի վնաս, իսկ շուրջ 113 հազար քառակուսի մետր տարածքներում արձանագրվել են հողը հանելու, տեղափոխելու, պահպանելու և օգտագործելու կանոնները խախտելու, դրանցով բնությանը, ընդհանուր առմամբ, շուրջ 10 մլն դրամի վնաս պատճառելու դեպքեր:

Հարուցված քրեական գործերի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

Հաշվետու ժամանակահատվածում, ՀՀ պետական գույքի կոմիտեից ստացված տեղեկության հիման վրա, պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ուսումնասիրվել է նաև 2016-2020թթ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքում և ՀՀ տարբեր մարզերում գտնվող գույքային միավորների (անշարժ գույք) դեպքերում պետական գույքի օտարման գործընթացն իրականացնելիս, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պատասխանատու պաշտոնատար անձինք, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, խախտելով «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, առանց իրավական հիմքի և պայմանագիր կնքելու, 2016-2017թթ. «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերությանն առաջարկել են իրականացնել անշարժ գույքերի գնահատման աշխատանքներ:

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության մասնագետները նշված ժամանակահատվածում կազմել են կեղծ եզրակացություններ՝ վավերացված նշված ՍՊԸ-ի տնօրենի կողմից, որով գույքերը գնահատվել են բազմակի անգամ պակաս իրական արժեքից, որն էլ մրցութային հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել նշված անշարժ գույքի օտարման մրցույթի համար:

Մի շարք դեպքերում ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պարտականությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով, պետության համար առաջացրել են ծանր հետևանքներ:

Արդյունքում, պետական սեփականություն հանդիսացող գույքերն օտարվել են բազմակի անգամ պակաս իրական արժեքից՝ պետությանը պատճառելով ընդհանուր առմամբ շուրջ 789 մլն 943 հազ դրամի վնաս:

Արձանագրված փաստերի առթիվ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 315-րդ հոդվածի 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է 20 քրեական գործ, իսկ 5 դեպքերում ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են մինչդատական քրեական վարույթ իրականացնող մարմիններին՝ նյութեր նախապատրաստելու համար:

Հարուցված քրեական գործերի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հանձնարարականի կատարման արդյունքում, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության համակարգմամբ, ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվել է 2021թ. դրությամբ ՀՀ օրենսդրությամբ և ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված պետական տուրքի, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարների, ինչպես նաև համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընդերքօգտագործողների պարտավորությունների կատարման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Նախ արձանագրվել է, որ ավելի վաղ՝ 2018թ., ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ դատախազության մարմինների կողմից իրականացված նմանատիպ առաջին ուսումնասիրության արդյունքում ի հայտ բերված բազմաթիվ խնդիրներ ոլորտային պետական գերատեսչությունների հետ համագործակցությամբ լուծվել են, իսկ ընդերքօգտագործող սուբյեկտներն սկսել են ավելի բարեխիղճ վարքագիծ դրսևորել պետության և համայնքների առջև իրենց պարտավորությունների կատարման հարցում:

Այդուհանդերձ, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարների գծով 26 սուբյեկտ ունեն ընդհանուր 39.751.045 ՀՀ դրամի պարտավորություններ, որից 2.400.000 ՀՀ դրամը վերականգնվել է ուսումնասիրության ընթացքում:

Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում 8 ընդերքօգտագործողի պարտավորությունների չափը կազմում է 23.000.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի գծով 4 սուբյեկտ ունեն ընդհանուր 8.000.000 ՀՀ դրամի պարտավորություններ:

ՀՀ դատախազության ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կողմից ապառքներ ունեցող տնտեսվարողներին տրվել են նախազգուշացումներ, նրանց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ և միջոցներ են ձեռնարկվել դատական կարգով ապառքները բռնագանձելու ուղղությամբ:

Նախանշված ուղղություններով արդյունքների ապահովման միջոցով ՀՀ դատախազությունը շարունակելու է արմատացած և համատարած բնույթ ստացած արատավոր պրակտիկան վերացնելու հարցում դրսևորած հետևողականությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում համապատասխան միջոցներ են ձեռնարկվել նաև «Դատախազության մասին» օրենքով սահմանված՝ պետության ոչ գույքային շահերի պաշտպանության լիազորության շրջանակներում, մասնավորապես.

1. ՀՀ ուսումնական հաստատություններում (այդ թվում՝ նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական) կրթություն ստացող և հաճախող անձանց, այդ թվում՝ երեխաների անվտանգության ապահովման համար, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից **հաղորդում է ներկայացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝** առաջարկելով քննարկել ՀՀ ուսումնական հաստատություններում կրթություն ստացող և հաճախող անձանց, այդ թվում՝ երեխաների անվտանգության ապահովման գործուն և ապահով միջոցներ կիրառելու, ուսումնական հաստատությունները համապատասխան անվտանգության համակարգերով (շտապ իրազեկման, տեսահսկման, իրավապահ մարմինների շրջագայության կամ հերթապահության կամ այլ միջոցներով) ապահովելու հարցերը, անհրաժեշտության դեպքում նախաձեռնել օրենսդրական կարգավորման գործընթաց՝ համագործակցելով այլ պետական մարմինների՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, մարզպետարանների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Ի պատասխան նշյալ հաղորդման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ պահանջվող տեղեկատվությունը հանգամանալից ներկայացնելու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շրջաբերականներ են ուղարկվել նախարարության ենթակայությամբ գործող ուսումնական հաստատություններին, ինչպես նաև ՀՀ մարզեր և Երևանի քաղաքապետարան:

2. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ձեռնարկվող միջոցառումներով պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրվել են հոսանքահարվելու հետ կապված տարբեր բնույթի միջադեպեր, որոնց հետևանքով արձանագրվել են մարդկանց մահվան դեպքեր, իսկ առավել մտահոգիչ՝ երեխաների հետ կապված դեպքեր:

Պետական շահերի պաշտպանության վարչության կողմից **հաղորդում է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝** առաջարկելով քննարկել ՀՀ տարածքում, բնակավայրերում, հանրային մարդաշատ վայրերում, հատկապես երեխաների մեծ թիվ կազմող՝ ուսումնական, մարզական, խաղային և այլ վայրերում, էլեկտրական էներգիայի արտադրության կամ կերպափոխման, հաղորդման, բաշխման կամ սպառման համար նախատեսված սարքավորումների և կառույցների շահագործման ընթացքում անվտանգության ապահովման գործուն և ապահով միջոցներ կիրառելու, համապատասխան անվտանգության համակարգերով (հսկման, իրազեկման, հասանելիության սահմանափակման, հատուկ նշագրման կամ այլ միջոցներով) ապահովման հարցերը, անհրաժեշտության դեպքում նախաձեռնել օրենսդրական կարգավորման գործընթաց՝ համագործակցելով շահագրգիռ պետական մարմինների՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև էլեկտրամատակարարող ընկերությունների հետ:

Վերոնշյալ հաղորդմամբ բարձրացված հարցի քննարկման արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է, որ ստեղծելու է աշխատանքային խումբ, որում ներգրավված կլինեն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան մասնագետները:

3. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում 2019-2020թթ. ընթացքում տեղի ունեցած և գրանցված հրդեհների վիճակագրական ցուցանիշները,

որի արդյունքում պարզվել է, որ թեև 2019 թվականի համեմատությամբ մի շարք ցուցանիշներ 2020 թվականին գրանցել են նվազման միտում, այնուամենայնիվ, շարունակում են մտահոգիչ մնալ դրանց մեծությունները: Մասնավորապես՝ 2020 թվականի ընթացքում գրանցվել է 30 անտառային հրդեհ, 960 հրդեհ՝ բնակելի շենքերում և շինություններում, 30 հրդեհ՝ կազմակերպություններում, 15 հրդեհ՝ ուսումնական հաստատություններում, 34 հրդեհ՝ արդյունաբերական օբյեկտներում, 380 հրդեհ՝ տրանսպորտում:

Պետական շահերի պաշտպանության վարչության կողմից **հաղորդում է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**՝ առաջարկելով հրդեհների կանխարգելման ուղղությամբ ակտիվացնել ջանքերը՝ հակահրդեհային քարոզչության (մամուլով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ հրդեհային անվտանգության հարցերի պարբերական լուսաբանումների), հրդեհային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության խստացման, հրդեհների առաջացման հավանականությունը նվազեցնող կազմակերպատեխնիկական միջոցառումների և այլ միջոցներով՝ առաջնային թիրախ դարձնելով մեծ թվով մարդկանց կուտակման վայրերը, մասնավորապես՝ կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, արդյունաբերական օբյեկտները, տրանսպորտը, էներգամատակարարման օբյեկտները, գազամատակարարման օբյեկտները, բենզալցակայանները, վառելիքաքսուկային նյութերի պահեստարանները, առևտրի, բնակչության սպասարկման, ժամանցի օբյեկտները՝ մանրակրկիտ ստուգման ենթարկելով թվարկված օբյեկտներում աշխատակիցների հրդեհային անվտանգության հրահանգավորման պահանջների կատարումն ու հրդեհի դեպքում մարդկանց տարհանման ուղիների պլանների մշակված և համապատասխան վայրերում տեղադրված լինելը:

Նշյալ հաղորդմամբ բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) Արտակարգ իրավիճակների նախարարի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 348-Լ և Շրջակա միջավայի նախարարի 2020 թվականի մարտի 23-ի թիվ 104-Լ «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը սահմանելու մասին» համատեղ հրամանի պահանջների համաձայն՝ ճշգրտվել են Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 29 անտառտնտեսությունների և հատուկ պահպանվող տարածքների հրդեհների արձագանքման պլանները:

2) ՀՀ մարզպետներին առաջարկվել է տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատանքներ իրականացնել, որպեսզի պատրաստականության վիճակի բերեն հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված ուժերն ու միջոցները, գործուն միջոցներ ձեռնարկեն միջպետական, անտառամերձ և

բուսածածկ տարածքներում հնարավոր հրդեհների առաջացումը կանխելու ուղղությամբ:

3) «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ տարվել են աշխատանքներ՝ նոր հրշեջ հիդրանտների տեղադրման, անսարքների վերանորոգման, ասֆալտապատման հետևանքով գետնի տակ մնացածների վերագործարկման, իրենց ձևով և տրամաչափով Փրկարար ծառայության հաշվեկշռում գտնվող հրշեջ ավտոմեքենաների մարտավարատեխնիկական բնութագրերին չհամապատասխանող հրշեջ հիդրանտների համար սյունակների և բանալիների պատրաստման ուղղությամբ: Միաժամանակ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին առաջարկվել է իրենց իրավասություններով սահմաններում աջակցել խնդրի լուծմանը:

4) Արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվել է տեսահոլովակ՝ Հայաստանի Հանրապետության անտառային և հարակից բուսածածկ տարածքներում հրդեհների առաջացման, տարածման վտանգի կանխարգելման, դրանց հետևանքով բնակչությանը, բնությանը հասցվող վնասների ռիսկերի նվազեցման նկատառումներից ելնելով զգուշավորություն ցուցաբերելու և հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասին:

5) Ջերմային բարձր ֆոնով պայմանավորված հրշեջ-փրկարարական ջոկատները իրականացնում են ուժեղացված ծառայություն, միջոցներ են ձեռնարկվում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի հետ համատեղ երթուղիներ մշակելու և հրդեհային վիճակի ուսումնասիրության նպատակով երթուղիներով պարբերաբար շրջայցեր իրականացնելու, ինչպես նաև անօդաչու թռչող սարքավորումներով պարբերաբար ուսումնասիրություններ իրականացնելու համար:

4. Արարատի մարզի Նորաբաց համայնքի մի խումբ բնակիչների կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումի հիման վրա Արարատի մարզի դատախազությունում պետական շահերի պաշտպանության գործառույթների շրջանակներում իրականացվել է ուսումնասիրություն: Պարզվել է, որ համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շինարարության թույլտվության հիման վրա մի քաղաքացու կողմից համայնքի բնակելի տների անմիջական հարևանությամբ կառուցվում է քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայություններ իրականացնելու համար շինություն՝ «սգո սրահ»:

Այդ հանգամանքն առաջացրել է տվյալ թաղամասի բնակչության դժգոհությունը՝ պայմանավորված նրանով, որ սրահում նախատեսվող ծիսակատարությունները, դրանց մասնակցելու համար հաճախակի փողոց ժամանողների ենթադրվող մեծաքանակությունը և հոգեբանական,

տրամաբանական մի շարք այլ գործոններ կարող են խաթարել բնակչության բնականոն կյանքը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Արարատի մարզի Նորաբաց համայնքի ղեկավարի և ավագանու կողմից չեն կատարվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի պահանջները, որի համաձայն՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանում է համայնքի ավագանին:

Այսինքն, առկա է օրենսդրական իմպերատիվ պահանջ՝ «սգո սրահների» կառուցման համար համայնքի ավագանու կողմից պարտադիր ընդունելու նման ծառայություններ մատուցելու համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումներ նախատեսող նորմատիվ իրավական ակտ՝ հաշվի առնելով նաև, որ թե՛ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքով, և թե՛ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված են նույնանման կարգավորումներ, որոնց նպատակը բնակչության հոգեկան առողջության պահպանումն ու մշակութային կյանքի կազմակերպումն են, որոնք համայնքի պարտադիր խնդիրներն են:

Ըստ ուսումնասիրության շրջանակներում ՀՀ քաղաքաշինական, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված պարզաբանման՝ համայնքի ղեկավարը չի կարող տալ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու կամ իրականացնելու թույլտվություն՝ առանց ավագանու կողմից սահմանափակումներ նախատեսող նորմատիվ իրավական ակտի ընդունման:

Ուսումնասիրության ընթացքում հարցում է կատարվել Արարատի մարզպետարան՝ պարզելու՝ արդյո՞ք մարզի մյուս համայնքներում, ևս, ավագանիների կողմից պահպանվել են նշված օրենքի պահանջները: Ստացված պատասխան գրության և կից տրամադրված տեղեկատվության ուսումնասիրությամբ պարզվել է, որ մարզում կան բազմաթիվ համայնքներ, որոնց ավագանիները մինչ օրս չեն սահմանել քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումներ: Վերջինս ոչ միայն օրենքի պահանջի խախտում է, այլև պարարտ հող է ստեղծում հետագայում նաև այլ համայնքներում նմանօրինակ իրավիճակների առաջացման համար և հղի է կոռուպցիոն ռիսկերով:

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից և հիմք ընդունելով Արարատի մարզի Նորաբաց համայնքի մի խումբ բնակիչների դիմումը՝ հավաքված նյութերն ուղարկվել են ՀՀ ոստիկանության Մասիսի բաժին՝ քրեադատավարական կարգով

նյութեր նախապատրաստելու և պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու համար:

Բացի այդ, ՀՀ Արարատի մարզի դատախազի կողմից գրություն է հասցեագրվել Արարատի մարզպետին՝ հաշվի առնելով հարցի զգայունությունը՝ ձեռնարկելու գործուն միջոցներ Արարատի մարզի համայնքների ավագանիների կողմից օրենքի պահանջները կատարելու, հետագայում նմանատիպ դրսևորումները բացառելու ուղղությամբ:

Պետական շահերի պաշտպանության ոլորտում դրական արդյունքներ են արձանագրվել նաև ՀՀ զինվորական դատախազության կողմից: Այսպես.

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից 2021թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարվել է **423 ուսումնասիրություն** /2020թ.՝ 285/:

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է **308 խախտում** /2020թ.՝ 170/, ուղարկվել է **26 հաղորդում** /2020թ.՝ 38/: Պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ 2021թ. ընթացքում տրվել է **51 նախազգուշացում** /2020թ.՝ տրվել է 99/:

2021թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է պետությանը պատճառված **2.701.344.766 ՀՀ դրամի վնաս** /2020թ.՝ 2.005.453.363 ՀՀ դրամ/, որից **2.189.206.250 ՀՀ դրամը՝** պետական շահերի պաշտպանության բաժնի /2020թ.՝ 1.655.717.693 ՀՀ դրամ/, իսկ **512.138.516 ՀՀ դրամը՝** կայազորների զինվորական դատախազությունների կողմից /2020թ.՝ 349.735.670 ՀՀ դրամ/:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ ընդհանուր վերականգնվել է **1.177.473.888 ՀՀ դրամի** վնաս /2020թ.՝ 1.274.725.223 ՀՀ դրամ/:

2021թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել է **168 նյութ** /2020թ.՝ 134/, հարուցվել է **164 քրեական գործ** /2020թ.՝ 88/:

ՀՀ զինվորական դատախազության կողմից արձանագրված խախտումներից են, մասնավորապես.

1. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից, կայազորների զինվորական դատախազությունների և ՀՀ ՊՆ ՌՈ ԶՈՒՊ բաժնի հետ համատեղ ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 21.02.2019թ. «Փորձնական ծրագիր իրականացնելու և գնման գործընթաց կազմակերպելու մասին» թիվ 152-Ա որոշման հիմքով ՀՀ զինված ուժերի պարենավորումը մասնավոր ընկերությանը պատվիրակելու նպատակով ՀՀ

ՊՆ և մասնավոր ընկերությունների միջև կնքված՝ պետության կարիքների համար պարենավորման գործընթացի կազմակերպման պատվիրակման պետական գնման մի շարք պայմանագրերի կատարման գործընթացում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության վիճակը:

Վերոնշյալ բնագավառի ուսումնասիրությունների շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև սննդի մատուցման ծառայությունների ընթացքում համապատասխան մասնավոր կազմակերպությունների կողմից **ՀՀ ՊՆ զորամասերում ջրի և էլեկտրաէներգիայի օգտագործման օրինականությանն ու հիմնավորվածությանը:**

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ եզակի չեն դեպքերը, երբ ՀՀ ՊՆ զորամասերում պարենավորման ծառայություններ մատուցող կազմակերպություններն իրենց գործունեությունը սկսել են առանց նշված զորամասում ջրի և օգտագործման առանձին բաժանորդ դառնալու կամ որպես առանձին բաժանորդ «ՀԷՑ» և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություններում ձևակերպվել են զորամասում գործունեություն ծավալելուց որոշակի ժամանակ հետո, ինչի արդյունքում այդ ժամանակահատվածում օգտագործված ջրի և սպառված էլեկտրաէներգիայի ծախսերը հաշվարկվել են որպես զորամասի ծախս:

Արդյունքում՝ արձանագրվել է պետությանը պատճառված 58.212.926 ՀՀ դրամի վնաս՝ սպառած էլեկտրաէներգիայի և 2.344.590 ՀՀ դրամի վնաս՝ սպառած ջրի մասով: ՀՀ պաշտպանության նախարարին ներկայացված միջնորդագրի, ինչպես նաև պարենավորման ծառայություններ մատուցող կազմակերպություններին տրված նախազգուշացումների արդյունքում **պետությանը պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է:**

2. ՀՀ ՊՆ և ՀՀ ԶՈՒ համապատասխան պաշտոնատար անձինք, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել են իրենց պաշտոնեական դիրքը՝ խախտելով օրենսդրությամբ նախատեսված պահանջները՝ մրցութային գործընթաց նախաձեռնելու փոխարեն, հատուկ կամ բացառիկ իրավունքի բացակայության պայմաններում, «ռազմական տեխնիկա, սպառազինություն, ռազմամթերք և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանք» չհանդիսացող նյութական միջոցի ձեռքբերման նպատակով իրականացրել են մեկ անձից գնման ընթացակարգ, որի արդյունքում 2021 թվականի օգոստոսի 20-ին ֆիզիկական անձ հանդիսացող Կարեն Ռուշանյանի հետ կնքել են կոնկրետ տեսակի որոշակի քանակի վրանների գնման վերաբերյալ 4.820.000 ՀՀ դրամ արժեքով պայմանագիր՝ անզգուշությամբ առաջացնելով նյութական ծանր հետևանքներ:

Բացի այդ, ՀՀ ՊՆ և ՀՀ ԶՈՒ համապատասխան պաշտոնատար անձինք, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել են իրենց պաշտոնեական դիրքը՝ համապատասխան գնման պայմանագրի բացակայության պայմաններում, չունենալով գնման առարկայի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով նախատեսված պարտադիր բնութագրեր, 2021 թվականի մայիսի 22-ին «Օբորոն Տեքստիլ» ՍՊ ընկերությունից ի պահ ընդունման թիվ 18 և ընդունման թիվ 37 ակտերի հիման վրա ընդունել են 261 հատ վրան՝ առանց դրանց որակական հատկանիշների փաստացի ստուգում իրականացնելու: Այնուհետև, ՀՀ ՊՆ և ՀՀ ԶՈՒ համապատասխան պաշտոնատար անձինք, շարունակելով իրենց հանցավոր մտադրությունը, ՀՀ ՊՆ կարիքների համար վրանների ձեռքբերման անհրաժեշտության բացակայության պայմաններում, խախտելով օրենսդրությամբ նախատեսված պահանջները՝ մրցութային գործընթաց նախաձեռնելու փոխարեն՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի բացակայության պայմաններում, «ռազմական տեխնիկա, սպառազինություն, ռազմամթերք և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանք» չհանդիսացող վրանների ձեռքբերման նպատակով նախաձեռնել և իրականացրել են մեկ անձից գնման ընթացակարգ, որի շրջանակներում, դեռևս 2021 թվականի մայիսի 22-ին «Օբորոն Տեքստիլ» ՍՊ ընկերությունից ընդունված վրանների որակական հատկանիշների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով, նկարագրել են գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օբյեկտիվորեն չհիմնավորված, ոչ համարժեք և ամբողջական պայմաններ, ինչպես նաև նախատեսել են շուկայականից բարձր գներ, ինչի արդյունքում 2021 թվականի հունիսի 22-ին նշյալ ընկերության հետ կնքել են որոշակի քանակի վրանների գնման վերաբերյալ ընդհանուր 7.605.000 ՀՀ դրամ արժեքով պայմանագիր՝ անզգուշությամբ առաջացնելով նյութական ծանր հետևանքներ:

Դեպքի առթիվ 2021 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 375-րդ հոդվածի 2-րդ մասով ու 375-րդ հոդվածի 2-րդ մասով, և մի շարք անձինք ներգրավվել են որպես մեղադրյալ: Սույն գործով որպես մեղադրյալ է ներգրավվել նաև ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետը, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Նախաքննությունը շարունակվում է:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից 2021թ. հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է շուրջ **30 մլրդ 413 մլն ՀՀ դրամ** /2020թ.՝ 20 մլրդ 607 մլն/:

Այսպիսով, վերը բերված թվային ցուցանիշների համադրումը վկայում է այն մասին, որ վերջին տարիներին պետական շահերի պաշտպանության ոլորտում՝ դատախազությանը օրենքով վերապահված գործիքակազմի կիրառմամբ պետության և համայնքների շահերին պատճառված վնասի վերհանման, արձանագրման և օրենքով սահմանված կարգով դրանց վերականգնման դեպքերի

աճի միտումը պահպանվել է: Թեև հաշվետու ժամանակահատվածում արձանագրված օբյեկտիվ դժվարությունները (նոր կորոնավիրուսի համավարակ, հետպատերազմյան ժամանակաշրջան) իրենց ազդեցությունն են թողել իրականացված աշխատանքների ծավալների վրա, սակայն պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքի շնորհիվ հայտնաբերված՝ **պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է ավելի քան 32 մլրդ 776 մլն ՀՀ դրամ**, ինչը շուրջ 52.9 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա արձանագրված ցուցանիշները /2020թ.՝ ավելի քան 21 մլրդ 431 մլն ՀՀ դրամ/: Ընդ որում, 2018-2021թթ. պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքի շնորհիվ հայտնաբերված՝ **պետությանը պատճառված վնասն ընդհանուր կազմել է ավելի քան 135 մլրդ ՀՀ դրամ:**

Ինչպես 2021 թվականի, այնպես էլ վերջին տարիներին արձանագրված արդյունքները հնարավոր չէր լինի, եթե պետական մարմինները, պետությանը պատճառված վնասների բացահայտման նպատակով, օրենքով նախատեսված իրենց վերահսկողական գործիքակազմի միջոցով ՀՀ դատախազությանը չներկայացնեին անհրաժեշտ տեղեկություն: Բացի այդ, արձանագրված արդյունքները պայմանավորված են նաև դատախազական ներգործության միջոցների ամբողջ ծավալով կիրառումը դատախազության համապատասխան ստորաբաժանումների տարեկան ծրագրային գործունեության պարտադիր բաղադրիչ դարձնելու մոտեցմամբ:

Ընդհանրացնելով՝ պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության արձանագրած արդյունքները և հանրության արդարացի սպասումներն արդիական են դարձնում դատախազությանը լիարժեք պետական շահերի պաշտպանի դեր վերապահելու խնդիրը: Ընդ որում, այս նպատակի իրացման հարցում կարևոր նշանակություն ունեն նաև գործող իրավակարգավորումները, քանի որ հնարավոր չէ անհրաժեշտ և բավարար արդյունքներ արձանագրել առանց արդյունավետ օրենսդրական գործիքակազմի: Այս խնդիրը նույնպես ՀՀ դատախազության ուշադրության կենտրոնում է եղել և 2021 թվականին ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով, ի թիվս այլնի, առաջարկվում է ավելացնել պետական շահերին առնչություն ունեցող դատական ակտերի բողոքարկման գործընթացում դատախազության լիազորությունները, ընդլայնել «պետական շահեր» եզրույթի բովանդակային սահմանները և ապահովել դրա օրենսդրական իրացումը:

Այսպիսով, պետական շահերի պաշտպանության ոլորտը շարունակում է ՀՀ դատախազության համար մնալ հիմնական առաջնահերթություն և այդ համատեքստում ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության մարզային ստորաբաժանումներին հանձնարարվել է ընդլայնել պետական շահերի

պաշտպանության ուսումնասիրությունների շրջանակը՝ ըստ մարզերի առանձնահատկությունների, ինչպես նաև հանցավոր խախտումների յուրաքանչյուր դեպքի բացահայտման դեպքում պարտադիր հետամուտ լինել միջնորդագրերով պատկան մարմինների կողմից դրանց նպաստող հանգամանքներն ու պատճառները չեզոքացնելուն:

7. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ

«Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով /այսուհետ՝ Օրենք/ սահմանված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման բնագավառում, ՀՀ դատախազության լիազորությունների շրջանակում, 2021թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Այսպես, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության /այսուհետ՝ Վարչություն/ վարույթում 2021 թվականի ընթացքում առկա է եղել 279 ուսումնասիրություն, որոնք նախաձեռնվել են 2020-2021 թվականներին:

2021թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերը ստուգելու և ստուգման արդյունքներով համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով ՀՀ դատախազության ստորաբաժանումներից ստացվել է 55 քրեական գործով նյութ, 1 դատավճիռ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 23 նյութ՝ 105 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերը ստուգելու և ստուգման արդյունքներով համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով:

Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 65 որոշում, իսկ 40 անձի դեպքում կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 21 որոշում:

Ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին որոշումները կայացվել են Օրենքով նախատեսված՝ 50.000.000 ՀՀ դրամը գերազանցող ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալների բացակայությամբ պայմանավորված (թվով 11), միաժամանակ 2 անձի պարագայում չի նախաձեռնվել ուսումնասիրություն Օրենքով նախատեսված հանցագործությունների ցանկում չներառված՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածով մեղադրանք առաջադրված լինելու արդյունքում, 3 գործով ստացված օպերատիվ տվյալների հիման վրա կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու որոշում՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձ չհանդիսանալու հանգամանքով պայմանավորված, իսկ 2 գործով՝ ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ուղարկված լինելու հիմքով, 1 գործով մեղադրանք առաջադրված չլինելու հիմքով, 1 գործով մեղադրանք առաջադրելու փաստը հաստատող նյութեր չուղարկելու հիմքով, 1 գործով նույն անձի գույքի առնչությամբ արդեն իսկ սկսված ուսումնասիրության առկայության և ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ուղարկված լինելու հիմքով:

Համեմատության համար նշենք, որ 2020 թվականի ընթացքում Վարչությունում ստացվել է 201 քրեական գործով նյութ՝ 430 անձի վերաբերյալ և

կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 214 որոշում, իսկ 216 անձի դեպքում՝ ուսումնասիրություն չնախաձեռնելու վերաբերյալ 83 որոշում:

Համեմատության համար նշենք, որ 2020 թվականի ընթացքում Վարչությունում ստացվել է 201 քրեական գործով նյութ՝ 430 անձի վերաբերյալ և կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 214 որոշում, իսկ 216 անձի դեպքում՝ ուսումնասիրություն չնախաձեռնելու վերաբերյալ 83 որոշում:

Պետք է փաստել, որ 2021 թվականին Վարչությունում ուսումնասիրության ընթացքում են գտնվել 2020-2021 թվականներին սկսված, ընդհանուր առմամբ, 279 անձի պատկանող գույքի ուսումնասիրություն, որոնցից 14-ով ուսումնասիրությունները 2021 թվականի ընթացքում ավարտվել են: Ավարտված 14 ուսումնասիրությունով բացահայտվել է ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող 94 անշարժ և 23 շարժական գույք, 23 ընկերությունում մասնակցություններ, ինչպես նաև ընդհանուր հաշվարկով 27.717.123.932 ՀՀ դրամի չափով գումար:

Նշված ամփոփագրերի հիման վրա դատարան է ներկայացվել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին 16 դիմում, որոնք դատարանի կողմից բավարարվել են և համապատասխան անձանց գույքի նկատմամբ կիրառվել է արգելանք: Հարուցված կատարողական վարույթների թիվը 2021 թվականին կազմել է 40:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 3 հայցադիմում, որոնցով պահանջվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 18 անշարժ ու 7 շարժական գույք, որոնց միջին շուկայական արժեքների հանրագումարը կազմում է 13.046.765.353 ՀՀ դրամ, 3 իրավաբանական անձի մասնակցություն և 5.911.848.300 ՀՀ դրամի չափով գումար: Հայցադիմումները դատարանը ընդունել է վարույթ:

Հարկ է նշել, որ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի ձեռքբերման աղբյուրների, անձի եկամուտների, ծախսերի և ուսումնասիրության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների ստացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Վարչության կողմից կազմվել և իրավասու մարմիններին է ուղարկվել շուրջ 2500 հարցում:

Ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի իրական շահառուների, նրանց փոխկապակցված անձանց շրջանակը, գույքի ծավալը, ինչպես նաև ուսումնասիրության համար անհրաժեշտ այլ հանգամանքներ պարզելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմիններին տրվել է 171 հանձնարարություն:

Ուսումնասիրություններով բացահայտված ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքերի շուկայական արժեքը պարզելու նպատակով Վարչության դատախազների կողմից նշանակվել և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» է ուղարկվել դատաապրանքագիտական փորձաքննություն նշանակելու

մասին 21 որոշում՝ 205 գույքի շուկայական արժեքները պարզելու նպատակով, որոնցից 11 վարույթի վերաբերյալ ներկա պահին արդեն իսկ ստացվել է 18 եզրակացություն: Կայացվել է դատաապրանքագիտական բնագավառի մասնագետ ներգրավելու մասին 2 որոշում՝ 41 գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով, որոնց արդյունքները ստացվել են:

2021 թվականի ընթացքում Վարչությունում իրականացվող մի շարք ուսումնասիրությունների շրջանակներում 90 դիմում է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ բանկային, վարկային, ապահովագրական, առևտրային և/կամ նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով, որոնք մեծամասամբ ամբողջությամբ բավարարվել են, և դատական ակտերը կատարման նպատակով ներկայացվել են համապատասխան մարմիններ: Ստացվել է միջնորդությունների բավարարման վերաբերյալ 70 որոշում: Որոշ դեպքերում այդ միջնորդությունները բավարարվել են մասնակի:

Դիմումների մասնակի բավարարման վերաբերյալ կայացված 6 որոշում Վարչության դատախազների կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որոնցից 2-ը մերժվել է, 3-ը՝ բավարարվել, իսկ 1-ի վերաբերյալ վերջնական որոշում դեռևս առկա չէ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ բողոքը մերժելու վերաբերյալ 2 որոշում բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որոնցից 1-ի վերաբերյալ ներկայացվել է բողոքը հետ վերադարձնելու մասին դիմում, իսկ մյուսը Վճռաբեկ դատարանի կողմից ընդունվել է վարույթ:

Բողոքարկվող դատական ակտերը հիմնականում վերաբերել են բանկային գաղտնիք կազմող տեղեկության ստացման թույլատրելի ժամանակահատվածին, անկախ զբաղեցրած կարգավիճակից անձին պատկանող գույքի վերաբերյալ տեղեկություններ (ներառյալ՝ գաղտնիք կազմող տեղեկություններ) ձեռք բերելու իրավաչափությանը, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում գույքի վրա տոկոսային հարաբերակցությամբ արգելանք չդնելու իրավաչափությանը:

Միաժամանակ, 2021 թվականին իրականացվող ուսումնասիրությունների շրջանակներում հայցադիմումներ և բողոքներ են ներկայացրել ուսումնասիրվող անձինք և նրանց ներկայացուցիչները: Մասնավորապես՝ 4 գործով ՀՀ վարչական դատարան ներկայացված 9 հայցադիմումից 5-ը վերահասցեագրվել է առաջին ատյանի դատարան, 4 հայցադիմումի վարույթ ընդունելը մերժվել է, որոնցից մեկը բողոքարկման արդյունքում բավարարվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից՝ այն պատճառաբանությամբ, որ հայցադիմումի քննությունը պետք է վերահասցեագրվեր առաջին ատյանի դատարան (դրանցով դեռ չեն ստացվել առաջին ատյանի դատական ակտերը): Գործերից մեկով

վերահասցեագրման արդյունքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում է ընդունել:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 13 հայցադիմում 6 գործով, որոնք քննության արդյունքում մերժվել են: ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան է ներկայացվել 6 բողոք, որոնցից 5-ով կայացվել է վարույթ ընդունելու մասին որոշում, որոնցից 2-ի քննության արդյունքներով կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում: Վերաքննիչ բողոքները մերժվել են այն տրամաբանությամբ, որ մինչդատական փուլում վիճարկվող որոշումները բողոքարկման ենթակա չեն, և բացի այդ հայցվորը չի հիմնավորել, թե ինչպես են իրեն հասու դարձել դատարան ներկայացված փաստաթղթերը: 1 բողոք վերաքննիչ դատարանը ընդունել է վարույթ, սակայն դեռևս առկա չէ վերջնական դատական ակտ: 3 հայցադիմում բողոքարկվել է վերաքննիչ դատարան, տեղեկություններ առկա չեն վերաքննիչ դատարանը վարույթ ընդունել է, թե՝ ոչ:

Բողոքարկվող դատական ակտերը հիմնականում վերաբերել են բանկային, ապահովագրական գաղտնիքի, վարկային տեղեկության ստացման իրավաչափությանը, հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու իրավաչափությանը, իրավասու մարմնի կողմից իրականացվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը վարչական վարույթի տեսակ լինելուն և հետևաբար՝ ձեռնարկվող գործողությունները վարչարարություն համարվելուն, «Ուսումնասիրություն սկսելու մասին» որոշման, «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշման ուժով ուսումնասիրվող անձի և ՀՀ գլխավոր դատախազության միջև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքից ծագող իրավահարաբերությունների չառաջանալը ճանաչելուն, «Ուսումնասիրություն սկսելու մասին» որոշումը, «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումն անվավեր ճանաչելուն, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազի համապատասխան գրությունը անվավեր ճանաչելուն և դատախազի կողմից հայցվորին գույքերի ձեռքբերման պահի շուկայական արժեքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելը պարտավորեցնելուն:

Իրավասու մարմնի կողմից բոլոր գործերով ներկայացվել են պատասխաններ, ինչպես նաև նշանակված դատական նիստերին ապահովվել է ներկայացուցչությունը:

Վերոնշյալ գործողությունների արդյունքում ստացված տեղեկությունների համադրմամբ՝ 14 ուսումնասիրության շրջանակում ներկայացվել է նաև հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին 16 դիմում, որոնք դատարանի կողմից բավարարվել են, և որոշումներն ուղարկվել են հարկադիր կատարման. համապատասխան անձանց գույքի/գույքերի վրա դրվել է արգելանք: Հարուցված կատարողական վարույթների թիվը կազմում է 40:

Վերոնշյալ ուսումնասիրությունների նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձինք պաշտոնական հայտարարությունների «Ազդարար» առցանց հարթակի միջոցով Վարչության կողմից ծանուցվել են հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության ուսումնասիրությունների արդյունքում հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու նպատակով: Այդ անձանց մի մասն արդեն իսկ ներկայացել է Վարչություն և ստացել ուսումնասիրությունների նյութերը, ինչպես նաև որոշ գործերով շահագրգիռ անձանց կողմից ներկայացվել են դիրքորոշումներ: Այս համատեքստում դիտարկվում է նաև ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելու հնարավորությունը, որի պարագայում կարող է պետությանը փոխանցվել ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի նվազագույնը 75 տոկոսը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում 2021 թվականին Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 3 հայց, որոնցով նախատեսված բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 5.911.848.300 ՀՀ դրամ, բռնագանձման է ենթակա 25 գույք, որոնց միջին շուկայական արժեքների հանրագումարը կազմում է 13.046.765.353 ՀՀ դրամ: Ներկայացված հայցերն ընդունվել են վարույթ:

Պետք է նշել, որ Վարչությունն ինտենսիվ կերպով շարունակում է ուսումնասիրությունների ամփոփման գործընթացը, և 2022 թվականին արդեն իսկ մի քանի այլ գործերով Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան են ներկայացվել հայցադիմումներ և հայցի նախնական ապահովման վերաբերյալ դիմումներ:

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից և տեղեկության տրամադրման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմիններին ուղարկված խնդրանքների մասով կատարված աշխատանքների, ՀՀ տարածքում գտնվող գույքի առնչությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված միջազգային հարցումների շրջանակներում ներկայացված խնդրանքների մասով Վարչության կողմից կատարված աշխատանքների առնչությամբ հայտնում ենք, որ ՀՀ տարածքում գտնվող գույքի և (կամ) անձանց առնչությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել են միջազգային հարցումներ, որոնցում ներկայացված խնդրանքների կատարման ուղղությամբ Վարչության կողմից ձեռնարկվել և իրականացվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները: Այսպես, CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network)

միջազգային ոչ պաշտոնական ցանցի միջոցով Վարչության կողմից ուղարկվել է 10 հարցում, այդ թվում՝ 3 հարցում՝ Ռուսաստան, 2 հարցում՝ Ֆրանսիա, մեկական հարցումներ՝ Չեխիա, Սլովակիա, Հունաստան, Կիպրոս և Գերմանիա, որոնց արդյունքում ստացվել է 7 պատասխան գրություն: Միաժամանակ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 6 միջազգային հարցում՝ Ռումինիայից, Ուկրաինայից, Բելգիայից, Մոլդովայից, 2 հարցում՝ Ֆրանսիայից: Դրանց շրջանակներում Վարչության կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները, հարցմամբ հայցվող տեղեկությունները պարզելու նպատակով ուղարկվել են համապատասխան գրություններ, որոնց արդյունքներով ստացված պատասխանները թարգմանվել և հասցեագրվել են հայցող պետությունների իրավասու մարմիններին: Կազմվել և Արաբական Միացյալ Էմիրություններ է ուղարկվել մեկ պաշտոնական միջազգային հարցում:

Բացի այդ, ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող տվյալների հիման վրա Վարչության կողմից կազմվել է 7 զեկուցագիր:

Առօրյա աշխատանքից զատ, Վարչությունը նաև քայլեր է ձեռնարկում քննարկվող նոր գործիքի ինստիտուցիոնալ կայացման ուղղությամբ: Վարչության մեկ տարվա աշխատանքի ընթացքում ի հայտ եկած գործնական որոշ խնդիրների վերլուծության արդյունքներով Վարչության կողմից կազմվել և շրջանառության մեջ է դրվել Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթի նախագիծ, որն արդեն ուղարկվել է Արդարադատության նախարարություն՝ փորձաքննության:

Առաջարկվում է Օրենքում կատարել որոշ լրացումներ, որոնք հնարավորություն կտան օպերատիվ ճանապարհով ստացված տվյալների հիման վրա ուսումնասիրություն սկսել ոչ միայն հանրային պաշտոն, այլ նաև հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ, քանի որ ներկայումս գործող կարգավորման պարագայում նորմի գործողությունը տարածվում է պաշտոնատար անձանց խիստ սահմանափակ շրջանակի վրա և հաշվի չի առնում կոռուպցիոն տեսանկյունից պաշտոնատար անձանց ռիսկայնությունը:

Առաջարկվում է նաև նախատեսել ուսումնասիրություն սկսելու նոր հիմք՝ իրավասու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն սկսելու հնարավորությունը, որպեսզի իրավասու մարմինը հնարավորություն ունենա իր կողմից իրականացվող ուսումնասիրության շրջանակներում ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալներ ստանալու պարագայում ինքնուրույն նախաձեռնել գործընթացը:

Կարծում ենք, որ Ազգային ժողովի կողմից նշված նախագծի ընդունման պարագայում Վարչությանն Օրենքով վերապահված գործառույթների իրականացումը կդառնա առավել արդյունավետ:

Հարկ է նաև շեշտել, որ Վարչության դատախազների աշխատանքն առավելագույնս արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև աշխատանքի միասնական չափորոշիչներ և ուղենիշներ մշակելու նպատակով կազմվել են «Իրավական փոխօգնության հարցումների ձեռնարկ» և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար քաղաքացիական հայց հարուցելու հիմքերի ստեղծումը, հայցի նախապատրաստումը և մասնակցությունը դատական գործընթացներին» վերտառությամբ ձեռնարկները: Հետագայում, ընթացիկ կարիքների գնահատման հիման վրա, նախատեսվում է նաև այլ ուղեցույցների մշակում:

Հարկ է նշել, որ այս ինստիտուտի կիրառումն ապահովելու տեսանկյունից առանձնակի կարևորում ենք նշված ոլորտում պրակտիկ աշխատանք ծավալող անձանց մասնագիտական պատրաստվածության բարձրացումը և հետևողական մասնագիտական աճի ապահովումը, ինչով պայմանավորված՝ միջազգային փորձագետների ներգրավվածությամբ արդեն իսկ 6 դասընթաց է կազմակերպվել Վարչության դատախազների համար:

Ամփոփելով ներկայացվածը՝ հարկ է փաստել, որ Վարչության կողմից կատարվել և կատարվում են մեծածավալ աշխատանքներ՝ ուղղված ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքերի հայտնաբերմանն ու դրանց բռնագանձման ուղղությամբ հայցադիմումների համար հիմքեր նախապատրաստելուն:

Բացի այդ, աշխատանքներ են տարվել նաև Օրենքի կիրարկումն ապահովելու առումով: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության կնքման կարգը և օրինակելի ձևը: Նշյալ կարգով, մասնավորապես, սահմանվել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու առաջարկով կարող է հանդես գալ թե՛Վարչությունը, թե՛ այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

Ընդ որում, այն պարագայում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու վերաբերյալ առաջարկով հանդես է եկել Վարչությունը, ապա այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք (նրա ներկայացուցիչը), կարող է ներկայացնել իր գրավոր համաձայնությունը հաշտության համաձայնության կնքման վերաբերյալ առաջարկի ներկայացումից հետո 1 ամսվա ընթացքում: Այն պարագայում, եթե անձը սույն կետով սահմանված ժամկետում չի ներկայացնում իր համաձայնությունը հաշտության համաձայնության կնքման վերաբերյալ, ապա համարվում է, որ անձը մերժել է տվյալ առաջարկը:

Իսկ այն պարագայում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու վերաբերյալ գրավոր առաջարկով հանդես է գալիս այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, ապա Վարչությունը ստուգում է Օրենքով հաշտության համաձայնության կնքման համար սահմանված պայմանների պահպանվածությունը: Այն պարագայում, եթե պայմանները պահպանված չեն, իրավասու մարմինն առաջարկում է 10 օրյա ժամկետում իրականացնել համապատասխան պայմանների պահպանման համար անհրաժեշտ գործողությունները:

8. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում 2021 թվականի ընթացքում կատարվել է 1189 ստուգում և ուսումնասիրություն /2020թ. ընթացքում՝ 1134/, որոնց արդյունքում հայտնաբերվել է 153 խախտում /2020թ.՝ 63/: Պատկան մարմիններին ուղարկվել է 16 հաղորդում /2020թ.՝ 5/: Ներկայացվել է 34 միջնորդագիր /2020թ.՝ 20/, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 14 ակտ /2020թ.՝ 16/: Դատախազների կողմից կասեցվել է օրենսդրությանը հակասող 21 ակտ /2020թ.՝ 17/:

Վերը նշված 1189 ստուգումից և ուսումնասիրությունից 989-ը կատարվել են ձերբակալվածներին պահելու վայրերում /2020թ.՝ 913/, 131-ը՝ քրեակատարողական հիմնարկներում /2020թ.՝ 123/, 37-ը՝ ՀՀ պրոբացիայի ծառայությունում /2020թ.՝ 58/, 12-ը՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում /2020թ.՝ 39/, 2-ը՝ ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատությունում /2020թ.՝ 1/, իսկ 18-ը՝ այլ հարցերով /2020թ.՝ 0/:

Ինչպես նշվեց, քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է 131 ստուգում: Մասնավորապես.

1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ստուգվել է նախկին տարիներին ՀՀ դատախազության կատարած ստուգումներով վերհանված խնդիրների և խախտումների վերացման ուղղությամբ քրեակատարողական ծառայության ձեռնարկած միջոցառումների արդյունավետության վիճակը:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ նախկինում արձանագրված խախտումների մի մասը վերացված չէ: Դրանք հիմնականում վերաբերում են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության՝ 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված պահանջների չպահպանմանը:

Մասնավորապես, ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում, կալանավորված անձանց թվով պայմանավորված, որոշ խցեր եղել են գերբնակեցված, ինչով չի պահպանվել օրենքով սահմանված՝ պահվող մեկ անձին հատկացվող 4քմ տարածք ապահովելու պահանջը, ՀՀ ԱՆ «Արթիկ», «Սևան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկների խցերում պահվող անձանց որոշ քնելատեղերն առանց համապատասխան թույլտվության եղել են վարագուրապատված, ինչը քրեակատարողական ծառայողին հնարավորություն չի

տվել ամբողջությամբ դիտարկել խցում պահվող անձանց տեղաշարժը՝ անվտանգության ապահովման գործընթացն արդյունավետ իրականացնելու համար, ՀՀ ԱՆ «Սևան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում չեն պահպանվել կալանավորվածներին պահելու վայր բերված կալանավորված անձի և ուղղիչ հիմնարկ բերված դատապարտյալի ընդունումը կարանտինային բաժանմունքում կազմակերպելու պահանջը, ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում չեն պահպանվել դատապարտյալներին չվարձատրվող աշխատանքներում ներգրավելու կանոնները, քրեակատարողական հիմնարկների գերակշիռ մասում չեն պահպանվել խցերի կամ կացարանների մոտ սահմանված քանակով պահակետեր նշանակելու պահանջը, «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում արձանագրվել են քրեական ենթամշակույթը խորհրդանշող գրառումներ, ինչը չի կարող դրական անդրադարձ ունենալ պահվող անձանց ուղղման գործընթացի վրա և այլն:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացված՝ վերը նշված ստուգումների արդյունքում հայտնաբերված բոլոր խախտումները քննարկման առարկա դարձնելու և դրանք վերացնելու՝ հետագայում բացառելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու հանձնարարությամբ հաշվետու տարում համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին, որի հիման վրա ծառայության պետի կողմից անցկացվել են խորհրդակցություններ, և արձանագրված խախտումները վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ տրվել են անհրաժեշտ հանձնարարություններ:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական բաց ուղղիչ հիմնարկներում (այսուհետ նաև՝ Բաց ուղղիչ հիմնարկ) պահվող անձանց իրավունքների իրացման վիճակի ուսումնասիրության շրջանակներում ստուգվել է Բաց ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող և ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող դատապարտյալների կողմից աշխատանքի անցնելու, ընդհատումների և աշխատանքից ազատվելու հանգամանքները:

Այդ կապակցությամբ այցելություն է կատարվել բոլոր գործատուների աշխատանքային գործունեության վայրեր, որի արդյունքում հայտնաբերվել են մի շարք խախտումներ, որոնք քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը պատճառաբանել են բաց ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող և ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող դատապարտյալների կողմից աշխատանքի հաճախելու, ինչպես նաև աշխատանքի ընթացքում դրսևորած վարքագծի նկատմամբ փաստացի հսկողություն իրականացնելու իրավական ընթացակարգ սահմանված չլինելու հանգամանքով:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս այլ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորող

օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեև սահմանված է Բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների կողմից աշխատանքի այցելելու իրավական ընթացակարգը, սակայն իրավակարգավորումների թերի լինելու պատճառով իսպառ բացակայում է դատապարտյալների կողմից աշխատանքի հաճախելու և նրանց վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու հստակ իրավական ընթացակարգը:

Կատարված ստուգումը ցույց է տվել, որ աշխատավայր մեկնելու պահից մինչև ՔԿՀ վերադառնալը դատապարտյալների վարքագծի նկատմամբ որևէ հսկողություն չի իրականացվում, ինչը հակասում է պատժի կատարման և դատապարտյալի ուղղման ծրագրի իրականացմանը:

ՀՀ ԱՆ «Վարդաշեն», «Արթիկ» ՔԿՀ-երի բաց ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող երեք դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկներից աշխատանքի գնալու նպատակով դուրս գալու, սակայն առանց հիմնավոր պատճառների աշխատանքի վայր չներկայանալու հետևանքով նրանց աշխատանքի ներկայանալու հարցը վերանայելու և մեկուսացվածության առավել բարձր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հարցը քննարկելու համար ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության պետին ներկայացվել են միջնորդագրեր:

Արդյունքում՝ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի բաց ուղղիչ հիմնարկի երկու դատապարտյալ ենթարկվել է կարգապահական տույժերի, որոնցից մեկը տեղափոխվել է կիսաբաց ուղղիչ հիմնարկ, ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ-ի բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալի՝ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու համար համապատասխան միջնորդագիր ներկայացնելը ՔԿՀ-ի պետի կողմից համարվել է ոչ նպատակահարմար:

Բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում համակարգային փոփոխությունների միջոցով անհրաժեշտ իրավակարգավորումներ սահմանելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթը, այդ թվում՝ ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերում, Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները, ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: Ներկայացված առաջարկությունները, մասնավորապես, հանգում են հետևյալին.

1) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասը լրացնելու միջոցով սահմանել իրավակարգավորումներ այն մասին, որ Բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալի կողմից ՔԿՀ-ի սահմաններից դուրս գտնվելու ընթացքում պատշաճ վարքագիծ չդրսևորելու՝ երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ առանց հարգելի պատճառների ժամանակին աշխատանքի վայր չներկայանալու, աշխատավայրից բացակայելու, ժամանակին քրեակատարողական հիմնարկ չներկայանալու, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը փոփոխվելու կամ լուծվելու դեպքում դատապարտյալի կողմից ՔԿՀ-ի վարչակազմին

անհապաղ չհայտնելու հանգամանքները դիտարկել որպես պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտում:

2) ՀՀ քրեակատարողական օրենսգրքում սահմանել իրավակարգավորում այն մասին, որ Բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալը ՔԿՀ-ի սահմաններից դուրս այլ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ընթացքում, առանց հարգելի պատճառների աշխատանքի չներկայանալու, աշխատավայրից բացակայելու (այդ թվում՝ գործատուի թույլտվությամբ) իրավունք չունի, գործատուի հանձնարարությամբ աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների շրջանակներից դուրս կամ այլ տեղանքում աշխատանքներ կատարելու պարտականություններ չունի: Հիշյալ դրույթի առումով հարգելի պատճառ պետք է դիտարկել ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի քրեակատարողական ստորաբաժանման կողմից դատապարտյալի վերաբերյալ հիվանդության պատճառով անաշխատունակ լինելու մասին տեղեկանքը, ինչպես նաև պատճառաբանված դիմումի հիման վրա քրեակատարողական հիմնարկի պետի կամ վերջինիս փոխարինող անձի գրավոր կարգով թույլտվությունը (նախքան նման թույլտվություն տալը, դատապարտյալի կողմից աշխատանքի չներկայանալու մասին պետք է տեղեկացվի գործատուին):

3) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանել իրավանորմ, որի համաձայն՝ գործատուի կողմից դատապարտյալի աշխատավայրում գտնվելու կամ վարքագծի վերաբերյալ կեղծ տեղեկություն ներկայացնելու դեպքում, գործատուն տուգանվում է 500.000 ՀՀ դրամի, իսկ նույն արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

4) Քրեական օրենսդրությունը լրացնելու միջոցով պատիժ սահմանել նաև խաբեության, կեղծ փաստաթղթեր ներկայացնելու կամ այլ եղանակով Բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունները փաստացի չկատարելու միջոցով պատիժը կրելուց խուսափելու համար:

3. ՀՀ ԱՆ «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Աբովյան», «Սևան» քրեակատարողական հիմնարկներում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ՝ պահվող անձանց պահման պայմանների, դատապարտյալների ուղղման, սոցիալական վերականգնման ուղղությամբ իրականացվող միջոցառումների, դրանցում նրանց մասնակցության, ինչպես նաև պահվող անձանց օրենքով սահմանված հիմնական իրավունքների, այդ թվում՝ իրենց իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին տեղեկանալու, առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու հանգամանքի հետ կապված:

Պահվող անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ բժշկական օգնության և սպասարկման ծավալների ու տրամադրման, բուժօգնության դիմելու կարգերի մասին պահվող անձինք օրենքով սահմանված կարգով տեղեկացված չեն, այդ կապակցությամբ ոլորտը կարգավորող, այդ թվում՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրավական ակտերով պահանջվող փաստաթղթեր չեն ստացել, իսկ առանձին հիվանդություններով տառապող անձինք օրենքով իրենց հասանելիք հետազոտություններն անցել են մասնակի, ինչպես նաև արձանագրվել են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց բժշկական գաղտնիքի պահպանման կանոնների խախտման դեպքեր:

Վերը նկարագրված խախտումների, բացթողումների հարցը քննարկման առարկա դարձնելու, այդպիսիք վերացնելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու նպատակով համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարին, որի հիման վրա ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենին հանձնարարվել է ուժեղացնել ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում առկա բժշկական ստորաբաժանումների նկատմամբ հսկողությունը:

4. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք ներքին կանոնակարգը խախտելու համար տույժի են ենթարկվում գերազանցապես բջջային հեռախոսներ պահելու համար, այդ թվում՝ պատժախուց տեղափոխվելու ձևով:

Պարզվել է նաև, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող առանձին անձինք բջջային հեռախոսների միջոցով արտաքին աշխարհի հետ կապ պահպանելով կատարում են տարաբնույթ հանցավոր արարքներ, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, խարդախության կամ շորթման եղանակով գույքի հափշտակություն և այլն:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից բջջային հեռախոսների միջոցով տարաբնույթ հանցագործություններ կատարելը կանխելու միակ երաշխիքը դրանց ներթափանցմանն ու հայտնաբերմանն ուղղված կոնկրետ և արդյունավետ միջոցներ ձեռնարկելն է, ինչպես նաև բջջային կապի հաճախականության ռադիոալիքների խլացման նպատակով ռադիոհաճախականությունների խլացուցիչներ տեղադրելը:

Նախաձեռնված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախկինում տեղադրվել և ներկայումս անհրաժեշտ խլացուցիչներ առկա են միայն ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Կոշ», «Վարդաշեն» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում, սակայն որևէ քրեակատարողական հիմնարկում ներկայումս փաստացի ապահովված չէ բջջային կապի հաճախականության ռադիոալիքների խլացում՝ դրանց ոչ սարքին լինելու կամ իր նպատակային նշանակությանը մասնակի ծառայելու պատճառով:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերի և անազատության մեջ պահվող անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ վերջինները բջջային հեռախոսներ պահելու հանգամանքը հիմնականում պատճառաբանել են ընտանիքի անդամների հետ օրվա ընթացքում մի քանի անգամ հեռախոսային շփում ունենալու հանգամանքով:

Թեև ընտանիքի անդամների հետ, օրենքով սահմանված իրավակարգավորումների համաձայն, հաճախակի շփում ունենալու փաստարկն ինքնին կարող է ընդունելի համարվել անազատության մեջ պահվող առանձին անձանց դեպքում՝ հաշվի առնելով ընտանեկան վիճակը, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ հեռախոսակապից օգտվելու իրավունքը իրացնելու տեսանկյունից, սակայն անազատության մեջ պահվող առանձին անձանց մոտ համացանցի հասանելիություն ապահովող սարքերի հայտնաբերումը վկայում է, որ դրանք հիմնականում ծառայում են տարբեր սոցիալական ցանցերին հասանելիություն ունենալու նպատակով, առանձին դեպքերում նաև բջջային տարբեր հավելվածներ ներբեռնելու և դրանք օգտագործելու միջոցով հանցագործություններ կատարելու, ինչպես նաև այդպիսիք կազմակերպելու համար:

Իրականացված ուսումնասիրությունների և պահվող անձանց հետ դատախազների առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ անազատության մեջ պահվող անձինք քրեակատարողական հիմնարկներում տեղադրված տաքսոֆոններից չօգտվելը պատճառաբանել են դրանց սակագնի բարձր արժեքով, տաքսոֆոնների խափանմամբ, համապատասխան քարտերի բացակայությամբ, ինչպես նաև շաբաթվա ընթացքում ժամանակացույցին համապատասխան զանգ կատարելու քանակի սահմանափակմամբ:

ՀՀ կառավարության՝ 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման հավելվածի 182-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրամադրվում է, համապատասխանաբար, կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով:

Պարզվել է նաև, որ 2020 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում բջջային հեռախոս պահելու համար կարգապահական տույժի ենթարկելու մասին կայացվել է 1071 որոշում, որպիսի փաստը պահվող անձանց թվաքանակի հարաբերակցության առումով կազմել է շուրջ 50%:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ քրեակատարողական հիմնարկներում բջջային հեռախոսների ներթափանցումը բացառելու, իսկ դրանց ներթափանցման դեպքում անհրաժեշտ խլացուցիչներ տեղադրելու եղանակով շահագործումը չեզոքացնելու միջոցով հնարավոր է հասնել նաև անազատության մեջ պահվող անձանց կողմից բջջային հեռախոս պահելու

համար տույժերի նվազեցմանը: Հիշյալ հանգամանքը ոչ միայն կարող է խրախուսել անազատության մեջ պահվող անձանց կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելուն, այլև առանցքային նշանակություն ունի դատապարտյալների նկատմամբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը կիրառելու կամ պատժի հետագա կրումը մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու գործընթացում:

Վերը նշված ուսումնասիրության արդյունքներով ՀՀ արդարադատության նախարարին ուղարկվել է համապատասխան հաղորդում՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց կողմից բջջային հեռախոսներ ապօրինի պահելը բացառելու, դրան զուգակցված քրեակատարողական ծառայության մեջ ընդգրկված առանձին աշխատակիցների կողմից քրեակատարողական հիմնարկի տարածք կոռուպցիոն դրսևորումների դիմաց բջջային հեռախոսներ ներկրելը չեզոքացնելու, քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից բջջային հեռախոսների օգտագործմամբ հանցագործություններ կատարելը և կազմակերպելը կանխելու, քրեական ենթամշակույթ կրող անձանց կողմից հեռախոսակապի միջոցով քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը ղեկավարելով, դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված տարաբնույթ գործողություններ իրականացնելով, ազդեցության գոտիներն ընդարձակելու գործընթացի վրա ներազդելու, դրան խոչընդոտելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից հեռախոսակապից օգտվելու իրավունքի իրացումն ապահովելու նպատակով, գործուն միջոցառումներ իրականացնել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում բջջային կապի հաճախականության ռադիոալիքների խլացման ուղղությամբ՝ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանները, ինչպես նաև հարակից բնակավայրերի բնակիչների՝ հեռախոսակապից անխափան օգտվելու իրավունքը հաշվի առնելով՝ տեղադրել այնպիսի անհրաժեշտ սարքավորումներ, որոնք կգործեն միայն քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց համար նախատեսված բնակելի գոտում և կարգելափակեն նրանց կողմից օգտագործվող հեռախոսակապի ծածկույթը:

Նույն հաղորդմամբ առաջարկվել է նաև օրենսդրական առկա կարգավորումների շրջանակներում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից տաքսոֆոնից օգտվելու ժամանակացույցը քանակական առումով բարելավելու, ինչպես նաև մատուցվող հեռախոսակապի գնային բաղադրիչն առավել գրավիչ դարձնելու նպատակով իրավասու մարմինների հետ լուծումներ գտնելու համար:

Պատասխան գրության համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համակարգում արմատական բարեփոխումներ իրականացնելու, քրեակատարողական հիմնարկների պահպանության և

անվտանգության ապահովման խոցելիությունը վերացնելու, ինչպես նաև հանցագործությունների դեպքերը կանխելու և բացահայտելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Քրեակատարողական ծառայության կողմից իրականացվել է քրեակատարողական հիմնարկներում ռադիոհաճախականությունների խլացուցիչների առկայության, դրանց տեխնիկական վիճակի և հետագա կիրառման հնարավորության ու նպատակահարմարության ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքներով մշակվել են խնդրի լուծմանն ուղղված առաջարկներ: Ըստ այդմ՝ ձեռնարկվել են որոշ քայլեր, այդ թվում՝ իրականացվել են քննարկումներ բջջային օպերատորների հետ:

Նախատեսվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից տաքսոֆոնից օգտվելու ժամանակացույցը քանակական առումով բարելավելու ուղղությամբ:

Մատուցվող հեռախոսակապի գնային բաղադրիչն առավել գրավիչ դարձնելու նպատակով Քրեակատարողական ծառայությունը բանակցություններ է սկսել համապատասխան օպերատորների հետ:

5. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորության իրականացման շրջանակներում ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ում իրականացված ստուգումների արդյունքներով պարզվել է, որ դատարանների կողմից տարբեր ժամանակահատվածներում կայացված դատական ակտերով «Ավան» ՀԱԿ» ՓԲԸ-ում արտահիվանդանոցային հարկադիր բուժման և հսկողության մեջ են գտնվել ընդհանուր թվով 93 անձ, որոնցից 27-ը տևական ժամանակ չի հաճախել ՀՀ ԱՆ «Ավան ՀԱԿ» ՓԲԸ:

Արտահիվանդանոցային հարկադիր բուժման չներկայացող 27 անձի վերաբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նրանցից 6-ը՝ տևական ժամանակ դիսպանսեր չհաճախելու, անհրաժեշտ դեղորայք չստանալու արդյունքում՝ առողջական վիճակի վատթարացման պատճառով, գտնվել են ստացիոնար բուժման մեջ այլ հոգեբուժական հաստատություններում, 9-ը բացակայել է ՀՀ-ից, 2-ը պատիժ է կրում ՀՀ ԱՆ տարբեր ՔԿՀ-ներում, իսկ 10-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները պարբերաբար պարտավորեցրել են ներկայանալ «Ավան ՀԱԿ» ՓԲԸ՝ վերջիններից վերցնելով գրավոր պարտավորագրեր, սակայն այդ անձինք դրանից հետո ևս դիսպանսեր չեն հաճախել:

Արձանագրվել են դեպքեր, երբ արտահիվանդանոցային հարկադիր բուժում նշանակելուց կարճ ժամանակ անց հիշյալ անձինք հատել են ՀՀ պետական սահմանը և այլևս ՀՀ չեն վերադարձել, իսկ բուժումն իրականացնող իրավասու մարմինը նրանց առողջական վիճակի վերաբերյալ որևէ տեղեկություն չի ունեցել, ոստիկանության տարածքային ստորաբաժանումների կողմից նրանց հայտնաբերել

հնարավոր չի եղել, ինչի արդյունքում դատարանների կողմից կայացված դատական ակտերը փաստացի չեն կատարվել:

Ստուգմամբ արձանագրվել են նաև ոստիկանության տարածքային ստորաբաժանման կողմից «Ավան ՀԱԿ» ՓԲԸ կատարված հարցման վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություն տրամադրելու դեպքեր, մասնավորապես՝ հարկադիր բուժման մեջ գտնվող անձի՝ ՀՀ-ից բացակայելու և արտերկրում մշտական բնակություն հաստատելու մասին:

Մինչդեռ, դատախազության կողմից ձեռնարկված միջոցառումներով պարզվել է նույն անձի կողմից չորս տարվա ժամանակահատվածում, բազմիցս ՀՀ պետական սահմանը հատելու փաստը:

Հրազենի գործադրմամբ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, խուլիգանական դրդումներով, երկու կամ ավելի անձանց նկատմամբ սպանության փորձ կատարելու և հանրավտանգ եղանակով ուրիշի գույքը դիտավորյալ վնասելու համար անձը 2009 թվականի հունվարի 22-ի դատավճռով դատապարտվել է ազատազրկման՝ 9 տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 20.01.2010թ. դատական ակտով տվյալ անձի նկատմամբ կայացված դատավճիռը բեկանվել է և, հաշվի առնելով, որ նա տառապում է հոգեկան հիվանդությամբ, նշանակվել է հարկադիր բուժում՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում:

Դատարանի՝ 09.04.2013թ. որոշմամբ վերջինիս նկատմամբ հարկադիր բուժման տեսակը փոխվել է և նրա նկատմամբ նշանակվել է արտահիվանդանոցային հարկադիր բուժում: Դրանից հետո վերջինս ընդհանրապես դիսպանսեր չի հաճախել, հաշվառման վայրում չի բնակվել, իսկ ոստիկանության տրամադրած տեղեկության համաձայն՝ նրան հայտնաբերել հնարավոր չի եղել:

Մինչդեռ՝ դատախազության իրականացրած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նա 09.06.2013թ. մինչև 04.01.2020թ. ընկած ժամանակահատվածում պարբերաբար՝ շուրջ 18 անգամ, հատել է ՀՀ սահմանը՝ տարբեր անցակետերով, իսկ վերջին անգամ՝ 2020 թվականին ավտոմեքենայով «Բագրատաշենի» անցակետով վերադարձել է ՀՀ և այլևս ՀՀ-ից չի մեկնել:

Այսպիսով, ստուգման գործընթացի շրջանակներում պարզված վերոշարադրյալ փաստական տվյալների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս գալ եզրահանգման, որ դատարանների կողմից տարբեր ժամանակահատվածներում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած և հարկադիր բուժում նշանակված անձանց վերաբերյալ կայացված դատական ակտերը տևական ժամանակ փաստացի չեն կատարվում, որը, իր հերթին, պայմանավորված է նաև տվյալ ոլորտի օրենսդրական թերի կարգավորմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության կողմից

2006 թվականի հունիսի 22-ին ընդունված՝ «ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշման մեջ առկա է օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, դատախազության կողմից ներկայացվել են վերոհիշյալ իրավական ակտերում օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկություններ:

Մասնավորապես՝ առաջարկվում է մինչև բուժման ավարտն արգելել արտահիվանդանոցային հարկադիր բուժման մեջ գտնվող անձանց ելքը ՀՀ-ից, ինչպես նաև ոստիկանությանն օրենքով ընձեռել հնարավորություն՝ հարկադիր բուժումից խուսափող անձանց հարկադիր կարգով բժշկական հիմնարկներ բերման ենթարկելու համար:

6. Դատախազության կողմից ուսումնասիրվել է նաև ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում ՀՀ քրեակատարողական օրենսդրության նորմերի պահպանման վիճակը՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ոլորտում, որի արդյունքում արձանագրվել են խախտումներ՝ դատապարտյալների կողմից ինքնագործ միավորումներ ստեղծելու, հաշվառելու, դրանց աշխատանքներին դատապարտյալների մասնակցելու ոլորտում:

Արձանագրված խախտումները քննարկման առարկա դարձնելու, դրանք վերացնելու, հետագայում բացառելու համար գործուն միջոցներ ձեռնարկելու նպատակով համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի պետին, որի հիման վրա արձանագրված խախտումները և թերությունները վերացվել են, հանձնարարվել է հետայսու որոշումներ կայացնելիս, փաստաթղթեր կազմելիս խստագույնս պահպանել գործող օրենսդրության պահանջները:

7. Դատախազության կողմից ստուգվել է նաև դատապարտյալներին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու մասին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի /այսուհետ՝ Տեղաբաշխման հանձնաժողով/ կողմից կայացված 88 որոշում, որի արդյունքում 14 որոշում կասեցվել է և դրանք վերանայելու միջնորդագրեր են ուղարկվել Տեղաբաշխման հանձնաժողովին: Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից 4 որոշում վերանայվել է և փոփոխվել, 3 որոշում վերանայման արդյունքում թողնվել է անփոփոխ, 6-ի վերաբերյալ դեռևս վերջնական որոշում չի կայացվել, 1 դատապարտյալ վերանայման ընթացքում դատարանի որոշմամբ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է:

Վերը նշված 14 որոշումից 1-ով դատապարտյալը փակ ուղղիչ հիմնարկից տեղափոխվել է կիսափակ ուղղիչ հիմնարկ, 10 որոշմամբ՝ կիսափակից կիսաբաց, իսկ 3-ով՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկից՝ բաց ուղղիչ հիմնարկ:

Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից կայացված որոշումներով դատապարտյալները տեղափոխվել են մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ, սակայն այդ որոշումներով չի հիմնավորվել

դատապարտյալների կողմից դրական վարքագիծ դրսևորելու հանգամանքը, որը, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պարտադիր պայման է: Արդյունքում՝ կասեցվել են Տեղաբաշխման հանձնաժողովի վերը նշված որոշումները:

Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից օրենքով նախատեսված իմպերատիվ պահանջի անտեսմամբ դրական վարքագիծ չդրսևորած դատապարտյալին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հետևանքով խախտվում է ոչ միայն օրենքը, այլև կարող է նվազել տվյալ ոլորտում համապատասխան գործառույթներ իրականացնող պետական մարմնի հեղինակությունը, խաթարվել ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը:

8. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրացման վիճակը պարզելու, օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար պետության հաշվին անհրաժեշտ սննդով ապահովված լինելու, ՀՀ կառավարության կողմից սահմանված օրական միջին չափաբաժիններով սնունդ հատկացնելու, սննդի որակը և սննդարարության սահմանված չափաբաժինները պակասեցնելը որպես տույժի միջոց կիրառելը բացառելու, վերոշարադրյալ իրավունքներից ածանցված՝ պետության գույքային շահերին առնչվող հնարավոր չարաշահումները բացահայտելու, այդպիսիք լինելու դեպքում դրանք չեզոքացնելու նպատակով իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և համապատասխան ընկերության միջև կնքված՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի համաձայն՝ տվյալ ընկերությունը պարտավորվել է 1.357.800.000 /մեկ միլիարդ երեք հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով ապահովել 2020 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը ՀՀ ԱՆ 12 քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար թարմ ու որակյալ սննդի պատրաստում և մատուցում:

Պայմանագրին կից հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ սնունդը հատկացվում է նախօրոք հաստատված ճաշացուցակով, ճաշացուցակները կազմվում են կատարողի, իսկ հաստատվում՝ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից: Սնունդը պետք է լինի բազմազան, որակյալ և սննդի միջին օրական էներգետիկ արժեքը պետք է ապահովվի նվազագույնը՝ 2800 կիլոկալորիա:

ՀՀ ԱՆ «Սևան», «Վարդաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում, ճաշի մատուցման ժամանակ, Վարչության

կողմից ՀՀ սննդամթերքի անվտագության տեսչական մարմնի աշխատակիցների մասնագիտական աջակցությամբ, օրվա ճաշի համար նախատեսված բոլոր սննդատեսակներից կատարվել է նմուշառում՝ հետագա հետազոտման նպատակով:

Ստացված հետազոտությունների պատասխանների համադրման արդյունքում պարզվել է, որ նմուշառված գրեթե բոլոր սննդատեսակներում հայտնաբերվել են տարբեր տեսակի մանրէներ, այդ թվում՝ խմորասնկերի և աղիքային ցուպիկի տեսքով, ինչպես նաև սննդի էներգետիկ արժեքն էականորեն, շատ դեպքերում բացասական առումով 50 տոկոս և ավելի չափով, տարբերվում է կատարողի և քրեակատարողական հիմնարկի պետի կողմից հաստատված ճաշացուցակներով սահմանված սննդի էներգետիկ արժեքից:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևության, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար պետության հաշվին անհրաժեշտ առողջ սննդով ապահովված լինելու իրավունքը խախտվել է, իսկ վերը նշված քրեակատարողական հիմնարկներում մատուցված սնունդը չի համապատասխանում իրավասու մարմնի կողմից սահմանված չափորոշիչներով սննդի սննդարարության բաղադրիչին:

Այսինքն՝ կոպտորեն խախտվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածով սահմանված դրույթը, այն է՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, ինչպես նաև՝ սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

Բացի այդ, ուսումնասիրվել է նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց առողջության պահպանման, այդ թվում՝ անհրաժեշտ դեղորայքի առկայությամբ պայմանավորված բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրացման վիճակը:

Այդ նպատակով ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բոլոր ստորաբաժանումներում, որի շրջանակներում հայտնաբերվել է քրեակատարողական հիմնարկներում պահվող, պետության իրավազորության ներքո գտնվող անձանց համար նախատեսված 476.000 /չորս հարյուր յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ արժողության դեղորայքի և բժշկական պարագաների անհամապատասխանություն՝ դրանց փաստացի առկայության և փաստաթղթային մնացորդների հետ, որը գերակշիռ դեպքում արտահայտվել է պակասորդի տեսքով:

Այսպիսով՝ հայտնաբերված խախտումներն առերևույթ վկայում են այս ոլորտում հնարավոր չարաշահումների մասին, նկատի ունենալով, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդով ապահովելու նպատակով պետության կարիքների համար հատկացված գումարի դիմաց մատակարարվել է սահմանված

չափորոշիչներից էականորեն տարբերվող սնունդ, ինչը, իր հերթին, պետք է հանգեցներ հատկացված սննդի գնային բաղադրիչի նվազման, որը, սակայն, առկա չէ: Այլ կերպ ասած՝ պետության կողմից վճարված գումարը չի համապատասխանել հատկացված սննդի որակական հատկանիշներին:

Նույն հիմնավորումներով արձանագրված դեղորայքի և բժշկական պարագաների անհամապատասխանությունը, գերակշիռ դեպքում՝ դրանց պակասորդի տեսքով, առերևույթ վկայում են այս ոլորտում ևս հնարավոր չարաշահումների մասին:

Հայտնաբերված խախտումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով ձեռք բերված փաստական տվյալներով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Արձանագրված խախտումների ծնող պատճառները պարզելու, տեղ գտած թերությունները հետագայում բացառելու վերաբերյալ հաղորդում է ուղարկվել նաև ՀՀ արդարադատության նախարարին:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման և պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում, փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 2021 թվականի ընթացքում իրականացրել է 5801 վարույթ, որոնցից 3071-ը վերաբերել են նշանակված պատիժների կատարմանը, 2053-ը՝ իրականացվող վերահսկողություններին, իսկ 672-ը՝ դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին կազմված զեկույցներին, իսկ 5-ը՝ դատվածությունը հանելուն վերաբերող զեկույցներին:

Հաշվետու ժամանակահատվածում նշանակված պատիժների կատարման վերաբերյալ իրականացված 3071 վարույթից 2215-ը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված՝ տուգանք պատժատեսակի կատարմանը, 502-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելուն, իսկ 354-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածով նշանակված՝ հանրային աշխատանքներ պատժատեսակին:

Սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 2053 վարույթից 1645-ը վերաբերում են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելուն, 400-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելուն, 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածով նախատեսված՝ հատուկ

ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատություններում տեղավորելու միջոցով պատժից ազատելուն, իսկ 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելուն կամ պատժից ազատելուն:

2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում հաշվառված է եղել 39 անչափահաս անձ /2020թ.՝ 41 անձ/, որից՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով՝ 35 անչափահաս /2020թ.՝ 34/: Անչափահասին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, տուգանք պատժատեսակի դատապարտվելու կամ նշանակված պատիժը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու դեպքեր չեն գրանցվել: 4 անչափահաս ազատվել է քրեական պատասխանատվությունից և նրանց նկատմամբ կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ /2020թ.՝ 3/:

Հաշվետու ժամանակաշրջանում բռնագանձման ենթակա ընդհանուր գումարով 709.327.160 ՀՀ դրամ տուգանքից փաստացի բռնագանձվել է 244.472.510 ՀՀ դրամի չափով, իսկ 68.284.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու գործընթացը դադարեցվել է համաներման, ներման, դատապարտյալի մահվան, վաղեմությունն անցնելու, տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու կամ այլ պատճառներով, իսկ 396.570.650 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու գործընթացը շարունակվում է:

ՀՀ դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 1974 դատական քննության /2020թ. ընթացքում՝ 1252/:

Վերը նշվածներից 742-ը վերաբերում են դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն /2020թ.՝ 430/, 37-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը /2020թ.՝ 29/, 32-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն /2020թ.՝ 30/, 55-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն /2020թ. ընթացքում՝ 22/, 60-ը՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելուն /2020թ.՝ 24/, 527-ը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն /2020թ՝ 333/, 25-ը՝ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի այլ միջոցների կիրառումը փոփոխելուն կամ դադարեցնելուն /2020թ.՝ 31/, 106-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ այն դադարեցնելուն

/2020թ.՝ 47/, իսկ 390-ը՝ դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին /2020թ.՝ 306/:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 61-ով բերվել է վերաքննիչ բողոք /2020թ.՝ 48/, որոնցից 15-ը բավարարվել է /2020թ.՝ 17/, 13-ով բերվել է վճռաբեկ բողոք /2020թ.՝ 5/: Բերված 13 վճռաբեկ բողոքից 1-ն ընդունվել է վարույթ, 9-ը՝ մերժվել է, իսկ 3-ի քննությունը փոխանցվել է հաջորդ տարի: /2020թ. բերված բողոքների վարույթ ընդունելը մերժվել է/:

Պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ 32 գործից 1-ով բերվել է վճռաբեկ բողոք /2020թ. 0/:

Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ 55 գործերից 7-ով բերվել է վերաքննիչ բողոք /2020թ. 0/, որոնցից 1-ը բավարարվել է: Այս բնույթի գործերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կայացրած բողոքը մերժելու մասին դատական ակտերի դեմ բերվել է 2 վճռաբեկ բողոք, որոնք ընդունվել են վարույթ:

Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ 527 գործից բերվել է 9 վերաքննիչ բողոք /2020թ.՝ 1/, որոնցից 2-ը՝ բավարարվել է:

Այլ բնույթի 390 գործից /քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կայացված տարաբնույթ որոշումների բողոքարկում, համաներման, խրախուսանքների, տույժերի և այլնի վերաբերյալ/ 28-ով բերվել է վերաքննիչ բողոք /2020թ.՝ 11/, որոնցից 2-ը բավարարվել է /2020թ.՝ 1/:

2021թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1028 անձ /2020թ.՝ 1292/, որոնցից 202-ը՝ պատժի լրիվ կրումով /2020թ.՝ 249/, 182-ը՝ պայմանական վաղաժամկետ /2020թ.՝ 199/, 2-ը՝ ներման կարգով /2020թ. 0/, 10-ը՝ համաներումով /2020թ.՝ 13/, 385-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելով /2020թ.՝ 612/, 44-ը՝ դատարանի դահլիճից /2020թ.՝ 53 անձ/, 12-ը՝ հիվանդության պատճառով /2020թ.՝ 18/, 180-ը՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ /2020թ.՝ 145/, 11-ը՝ այլ հիմքերով /2020թ.՝ 3/:

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով մահացել է 13 պահվող անձ /2020թ.՝ 5/, որոնցից 8-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում առողջական վիճակի վատթարացման հետևանքով /«Վաղարշապատ» և «Վանաձոր» ԲԿ-ներում՝ 1-ական դեպք, «Էրեբունի» ԲԿ-ում՝ 2, իսկ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում՝ 4/, 5-ը՝ քրեակատարողական հիմնարկում՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում 1 անձ գործել է ինքնասպանություն, իսկ 2 անձ հանկարծամահ է եղել, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 1 անձ գործել է ինքնասպանություն, իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում 1 անձ մահացել է գանգուղեղային տրավմայի պատճառով:

Նշված դեպքի առթիվ 2021 թվականի օգոստոսի 11-ին ՀՀ ՔԿ ԵՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների 1-ին բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 15110021 քրեական գործը:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մահվան դինամիկան ունի հետևյալ պատկերը.

2012 թվականին՝ 28 պահվող անձ,

2013 թվականին՝ 19 պահվող անձ,

2014 թվականին՝ 38 պահվող անձ,

2015 թվականին՝ 28 պահվող անձ,

2016 թվականին՝ 29 պահվող անձ,

2017 թվականին՝ 17 պահվող անձ,

2018 թվականին՝ 18 պահվող անձ,

2019 թվականին՝ 21 պահվող անձ,

2020 թվականին՝ 5 պահվող անձ,

2021 թվականին՝ 13 պահվող անձ:

Այսպիսով, վերը նշված թվական տվյալներից տեսանելի է, որ 2020 թվականի համեմատ 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում թեև արձանագրվել է այնտեղ պահվող անձանց մահվան դեպքերի աճ, սակայն վերջին տասը տարվա ընթացքում արձանագրվել է մահվան դեպքերի կայուն նվազում:

2020 թվականի ընթացքում 4 դատապարտյալի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով /2020թ.՝ 2/:

2022թ. հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2128 /2021թ.՝ 1967/, որոնցից 1217-ը՝ կալանավորված անձ՝ 34-ը՝ կին, և 8 անչափահաս տղա /2021թ. հունվարի 01-ի դրությամբ՝ 914 կալանավորված անձ՝ 17 կին, 5 անչափահաս տղա/, 911 դատապարտյալ՝ 27 կին, /2021թ. հունվարի 01-ի դրությամբ՝ 1053 դատապարտյալ, որոնցից 29-ը՝ կին, 1 չափահաս տղա՝ մինչև 21 տարեկան/:

2022թ. հունվարի 01-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 86 անձ /2021թ.՝ 88/:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վիճակագրությունը հետևյալն է.

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 4532 մարդ, որոնցից 1215-ը՝ կալանավորված անձ,

2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 4756 մարդ, որոնցից 1228-ը՝ կալանավորված անձ,

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3923 մարդ, որոնցից 1035-ը՝ կալանավորված անձ,

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3880 մարդ, որից 1113-ը՝ կալանավորված անձ,

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3873 մարդ, որոնցից 1114-ը՝ կալանավորված անձ,

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3833 մարդ, որոնցից 1200-ը՝ կալանավորված անձ,

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3536 մարդ, որոնցից 1297-ը՝ կալանավորված անձ,

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2266 մարդ, որոնցից 929-ը՝ կալանավորված անձ,

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2221 մարդ, որոնցից 1017-ը՝ կալանավորված անձ,

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1967 մարդ, որոնցից 914-ը՝ կալանավորված անձ,

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2128 մարդ, որոնցից 1217-ը՝ կալանավորված անձ:

2021 թվականի ընթացքում ազատազրկման վայրերից Իրանի Իսլամական Հանրապետություն է տեղափոխվել 19 անձ /2020թ.՝ 28 անձ/, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ 2 անձ, Բելգիայի Թագավորություն՝ 1 անձ, Կորեայի Հանրապետություն՝ 1 անձ, Վրաստանի Հանրապետություն՝ 2 անձ, ՌԴ՝ 2 անձ /2020թ.՝ 4 անձ/:

ՌԴ ազատազրկման վայրերից ՀՀ ազատազրկման վայրեր տեղափոխվել է 6 անձ /2020թ.՝ 2 անձ/, Բելառուսից՝ 1 անձ /2020թ.՝ 1/, ԱՄՆ-ից՝ 1 անձ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2021 թվականի ընթացքում ստացվել է հացադուլ հայտարարելու 374 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով, հիմք ընդունելով ՀՀ դատախազության կոլեգիայի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշման պահանջները, ուսումնասիրվել է հացադուլ հայտարարողի նկատմամբ ՔԿ հիմնարկում ձեռնարկված միջոցառումների իրավաչափությունը, պարզվել են հացադուլ հայտարարելու պատճառները, բոլոր դեպքերում հացադուլ հայտարարած անձը հարցման է ենթարկվել, ընդ որում՝ մի շարք դեպքերում դատախազի կողմից տրամադրված խորհրդատվության շնորհիվ կալանավորված անձը կամ դատապարտյալը դադարեցրել է հացադուլը:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց կողմից 2021 թվականի ընթացքում արձանագրվել է **ինքնավնասման** 366 դեպք, որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական, առողջական խնդիրների հետ, որոշ դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, առանձին դեպքերում էլ ներկայացվել են անօրինական պահանջներ:

Քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնելուց հետո այս բնույթի հանցագործության դեպքերի վերաբերյալ 2021 թվականի ընթացքում հարուցվել է 14 քրեական գործ՝ նախորդ տարվա 16 քրեական գործի դիմաց:

Մտահոգիչ է նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքերի վիճակագրությունը: Մասնավորապես. 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրանց ձեռքբերման վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածների տարբեր մասերով հարուցվել է 69 քրեական գործ: Ինքնին առավել քան մտահոգիչ իրողություն է քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների ներգրավվածությունը թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերին: 2021 թվականի ընթացքում քրեական հետապնդում է իրականացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի 1 աշխատակցի նկատմամբ:

Միաժամանակ հարկ է նշել, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում, բացի արդեն իսկ վերը շարադրվածից, ի հայտ է եկել ոլորտը կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի առանձին դրույթների օրենսդրական բացի լրացման, ինչպես նաև որոշակի իրավակարգավորումների վերախմբավորման կամ լրացման անհրաժեշտություն:

Այդ կապակցությամբ ՀՀ դատախազությունը պատրաստել է օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծեր և ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն: Այսպես.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածն իրավակարգավորում չի սահմանում դատապարտյալի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած երկու կամ ավելի ինքնուրույն դատավճիռներով սահմանված պատժաչափերը լրիվ կամ մասնակի գումարելու միջոցով վերջնական պատժաչափ սահմանելու մասին:

Ներկայացված նախագծով առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածը 1.1-րդ մասով լրացնելու միջոցով սահմանել նման իրավական ընթացակարգ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածը և 438-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրելու միջոցով սահմանել՝ դատական որոշման վերաբերյալ կասկածների, անհստակությունների, օրինական ուժի մեջ մտած դատավճիռներով վերջնական պատժաչափի վերաբերյալ հարցի լուծման, ինչպես նաև միևնույն անձի վերաբերյալ երկու կամ ավելի ինքնուրույն դատավճիռներով վերջնական պատիժ սահմանելու վերաբերյալ իրավակարգավորումներ:

2) Կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն ի կատար ածելու փուլում, առանձին դեպքերում,

ոստիկանության տարածքային ստորաբաժանումների կողմից պատժի կրումից խուսափող դատապարտված անձանց հայտնաբերելու և պատժի կրման վայր տեղափոխելու գործընթացում առկա է ոչ միատեսակ իրավակիրառ պրակտիկա, ինչը պայմանավորված է տվյալ ոլորտի օրենսդրական բացով:

Նշված գործընթացը ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չկազմակերպելու պայմաններում, այն է՝ ողջամիտ ժամկետում ազատազրկման դատապարտված անձին չհայտնաբերելու և պատժի կրման վայր չտեղափոխելու արդյունքում, ստացվում է մի իրավիճակ, երբ տևական ժամանակ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու և դատապարտյալին չհայտնաբերելու պայմաններում առկա է վերջինի կողմից նոր հանցագործություն կատարելու բարձր հավանականություն:

Այս համատեքստում հարկ է նշել, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու վերաբերյալ կարգադրությունն ստանալուց հետո ոստիկանության կողմից պատժի կրումից խուսափող դատապարտյալին չհայտնաբերելու դեպքում հետախուզում հայտարարելու ժամկետների մասին որոշում կայացնելու վերաբերյալ թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, թե՛ ՀՀ Կառավարության՝ 2011 թվականի մայիսի 26-ի «Քրեական պատասխանատվությունից խուսափող, անհայտ կորած անձանց, ինչպես նաև պարտապանների հետախուզման կարգը սահմանելու մասին» թիվ 857-ՆԳ գաղտնի որոշմամբ որևէ իրավական կարգավորում նախատեսված չէ:

Ներկայացված նախագծով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434[1]-րդ հոդվածում սահմանել իրավակարգավորում այն մասին, որ հետաքննության մարմինը, օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի կատար ածելու մասին կարգադրությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում դատապարտյալին չհայտնաբերելու դեպքում, հայտարարում է հետախուզում և կազմում հետախուզական գործ, որի մասին անհապաղ հայտնում է դատարանին:

3) Գործող օրենսդրությունը չի սահմանել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքները մեղսունակության վիճակում կատարած անձանց նկատմամբ դատարանի կողմից հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում նշանակելիս՝ մինչև բուժման ավարտը հարկադիր բուժվող անձի մշտական բնակության վայրի փոփոխման սահմանափակման մասին իրավակարգավորում:

Ներկայացված նախագծով առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 99-րդ հոդվածները լրացնելու միջոցով՝ հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում նշանակելիս՝ անձի կողմից մշտական բնակության վայրը չփոխելու և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելու մասին դատարանի կողմից պարտավորություն սահմանելու մասին լիազորություն, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու միջոցով հետաքննության մարմնի համար սահմանել հարկադիր բուժումից

խուսափող անձանց հոգեբուժական կազմակերպություն (արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն ցուցաբերող առողջապահական մարմիններ) բերման ենթարկելու լիազորություն, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետը լրացնելու միջոցով սահմանել՝ հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում նշանակված անձանց (որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ սահմանվել է առանց դատարանի թույլտվության մշտական բնակության վայր չփոխելու պարտավորություն) կողմից Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղաշարժման սահմանափակում:

4) Ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին որոշում կայացվելու, ինչպես նաև վերադաս դատարանի կողմից հիշյալ որոշումը բեկանելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը վերացնելու մասին որոշում կայացնելու դեպքում, գործող իրավակարգավորումներով սահմանված չեն ինչպես դատապարտյալին արգելանքից ազատելու, այնպես էլ արգելանքի վերցնելու փաստացի ժամկետները և վայրը:

Հակադարձ խնդիրն առկա է արդեն վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից կայացվող ակտերի պարագայում, երբ վերջիններս բեկանում են ստորադաս դատարանի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին որոշումը: Առկա չեն կարգավորումներ առ այն, որ նման որոշումը ենթակա է անհապաղ կատարման, քանի որ դատապարտյալը տվյալ դեպքում ազատության մեջ է լինում:

Ընդ որում, այս խնդիրներն առկա են նաև գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, սակայն, հաշվի առնելով սույն նախագիծը շրջանառելու և ընդունելու հանգամանքով պայմանավորված ժամկետային հարցերը, առավել նպատակահարմար է առաջարկվող կարգավորումները նախատեսել արդեն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում՝ հաշվի առնելով, որ դրանով նույնպես բարձրացված խնդիրները լուծված չեն:

Ներկայացված նախագծով առաջարկվել է Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքի 350-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ և 6.1-րդ մասերով.

«5.1 Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին դատարանի կողմից որոշման կայացման դեպքում այն ի կատար է ածում այդպիսի որոշում կայացրած դատարանը և որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո

դատապարտյալն անմիջապես ազատ է արձակվում, այդ թվում՝ դատական նիստերի դահլիճից:

6.1 Այն դեպքում, երբ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը որոշում է կայացնում դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին ստորադաս դատարանի որոշումը բեկանելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը վերացնելու մասին, այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ենթակա է անհապաղ կատարման:»:

5) Ոլորտը կարգավորող իրավանորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ առանց որևէ իրավական հիմնավորման՝ պատիժը կրելու ընթացքում անձի կողմից հոգեկան խանգարմամբ հիվանդանալու դեպքում վերջինիս առողջական վիճակի հետազոտության և արդյունքում բժշկական հանձնաժողովի եզրակացություն կազմելու և տրամադրելու իրավական այլ ընթացակարգ է սահմանված, իսկ հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո անձի կողմից այլ (ոչ հոգեկան բնույթի) ծանր հիվանդությամբ հիվանդանալու դեպքում՝ այլ: Սահմանված կարգի համաձայն՝ անձի կողմից հոգեկան խանգարմամբ հիվանդանալու դեպքում վերջինիս առողջական վիճակը պարզելու նպատակով իրականացվում է դատահոգեբուժական հանձնաժողովային փորձաքննություն, իսկ հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո անձի կողմից այլ (ոչ հոգեկան բնույթի) ծանր հիվանդությամբ հիվանդանալու դեպքում բժշկական հանձնաժողովի կողմից իրականացվում է բժշկական փորձաքննություն:

ՀՀ դատախազության մոտեցումն այն է, որ ՀՀ արդարադատության նախարարության կազմից դուրս, ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դատապարտյալների առողջական վիճակը պարզելու նպատակով փորձաքննության իրականացումը՝ անաչառության, գերատեսչական ենթակայության բացակայության, արհեստավարժության առումով կարող է գերազանցել ՀՀ արդարադատության նախարարության բժշկական հանձնաժողովի կողմից փորձաքննության իրականացման արդյունքներին: Հետևաբար՝ ՀՀ դատախազությունը գտել է, որ ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու նպատակով դատաբժշկական փորձաքննությունը ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանձնաժողովին հանձնարարելն առավել նպատակահարմար կլինի: Մանավորապես՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան կիրականացվի դատաբժշկական փորձաքննություն, կսահմանազատվեն բուժող և փորձաքննություն իրականացնող բժիշկների գործողությունները, կդադարեցվի ՀՀ ԱՆ արդարադատության նախարարության բժշկական հանձնաժողովի

գործողությունը, հանձնաժողովում ընդգրկված «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի բժիշկ-մասնագետները զերծ կմնան լրացուցիչ ծանրաբեռնվածությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարին՝ խնդրելով քննարկման առարկա դարձնել ծանր հիվանդության հետևանքով խափանման միջոցը փոխելու կամ պատժից ազատելու նպատակով իրականացվող փորձաքննությունը ՀՀ արդարադատության նախարարությանը կից բժշկական հանձնաժողովից ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանձնաժողովին վերապահելու հարցը և արդյունքների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն:

2021 թվականի ընթացքում արձանագրվել է քրեակատարողական ծառայողների, ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում ոստիկանության ծառայողների, ինչպես նաև ազատությունից զրկման մյուս վայրերի ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև բռնություն գործադրելու վերաբերյալ 150 հաղորդում:

Հիշյալ հաղորդումներից ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 51 քրեական գործ, որոնցից 38-ով վարույթը կարճվել է, 7-ով վարույթը կասեցվել է, 6-ով նախաքննությունը շարունակվում է:

2021 թվականի ընթացքում արձանագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության դեպքերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում) քննվել է 50 քրեական գործ, որոնցից՝ 27 գործով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին, 16 քրեական գործի վարույթը կասեցվել է, իսկ 7 քրեական գործի նախաքննություն շարունակվում է:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքով հարուցվել է 1 քրեական գործ, որի նախաքննությունը շարունակվում է:

Վերջին տարիներին փակ, ուղղիչ հիմնարկներում, իրավապահ մարմինների հսկողության տակ հայտնված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի նախականխման նպատակով ՀՀ դատախազության կողմից բազմաթիվ գործնական միջոցներ են կիրառվել ինչպես իրավակարգավորումների, այնպես էլ կազմակերպական աշխատանքների բնագավառում, այդ թվում՝ կոնկրետ դեպքերով քննության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Իրավակիրառ պրակտիկայում առկա ոչ միասնական մոտեցումները, մեկնաբանությունները լուծելու, որոշակիացնելու ուղղությամբ ևս հսկայածավալ աշխատանքներ են կատարվել: Հաշվետու տարում այդ աշխատանքների արդյունքում կարևորվում է

նմանատիպ դեպքերով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման կայացումը:

Կարևոր ուղղորդիչ նշանակություն կունենա ՀՀ վճռաբեկ դատարանի ներքոհիշյալ որոշումը, որով, ըստ էության, ՀՀ դատախազության դիրքորոշումը նմանատիպ դրսևորումների առնչությամբ իր արտացոլումն է ստացել նախադեպային որոշմամբ:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ Վճռաբեկ դատարանը խոշտանգմանը վերաբերող գործով որոշմամբ կարևոր շեշտադրումներ է կատարել հատկապես պետության պատասխանատվության ներքո անազատության մեջ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության ապահովման և այդ անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից անհամաչափ ուժի գործադրման գործողությունների որակման վերաբերյալ:

Այսպես, նշված քրեական գործով ՔԿՀ աշխատակցին մեղադրանք էր առաջադրվել «Նուբարաշեն» ՔԿՀ շենքում կատարած արարքի համար պատժելու նպատակով, խուզարկության համար նախատեսված սենյակում, ՔԿՀ մի խումբ ծառայողների հետ, դատապարտյալին ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնելու, նրան դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելու և խոշտանգման դեպքը թաքցնելու համար՝ իբրև թե խուզարկության ժամանակ դատապարտյալի կողմից ագրեսիան կանխելու նպատակով, նրա նկատմամբ ֆիզիկական ուժ կիրառելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող կեղծ արձանագրություն կազմելու համար:

Դատական քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, վերաորակելով խոշտանգման մեջ Ա. Հ.-ին մեղսագրվող արարքը, դատավճռով նրան մեղավոր է ճանաչել մի խումբ անձանց հետ, բռնությամբ զուգորդված, պաշտոնեական լիազորություններն անցնելու (որն ավելի մեղմ պատիժ է նախատեսում), պաշտոնեական կեղծիք կատարելու հանցավոր արարքների համար և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով: Միաժամանակ, վերջինիս նկատմամբ կիրառվել է համաներում, և նա ազատվել է ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումից:

ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել էր դատավճռի դեմ ներկայացված բողոքները, ինչի դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը՝ խնդրելով բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների որոշումները, Ա. Հ.-ին մեղավոր ճանաչել խոշտանգում կատարելու համար և նրա նկատմամբ նշանակել համաչափ պատիժ:

Բողոքների քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը, միջազգային կոնվենցիաների, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի լույսի ներքո վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները, ըստ էության, ամբողջությամբ համաձայնել է դատախազության հիմնավորումների հետ:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ տուժողի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումը խիստ անհրաժեշտություն չի եղել. տուժողը գտնվել է ՔԿՀ տարածքում, անազատության վիճակում, նրա նկատմամբ բռնություն է կիրառվել անհասցե հայհոյանք հնչեցնելու կապակցությամբ:

Վճռաբեկ դատարանը ընդունելի չի համարել առաջին ատյանի դատարանի այն պնդումները, թե բռնությունը խոշտանգում որակելու համար անհրաժեշտ պայման է, որ դեպքին նախորդած լինի տուժողի կողմից հակաօրինական արարքի կատարում: Անընդունելի է համարել նաև արարքը վերաորակելու հիմքում դրված այն փաստարկը, թե ծեծի ընթացքում հատուկ միջոցներ չեն կիրառվել, ծեծը չի ուղեկցվել մշակված հատուկ մեթոդների կիրառմամբ, դաժան վերաբերմունքը երկար չի տևել, չի կրկնվել և այլն: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է՝ «Նշված հանգամանքներն իրենց համակցության մեջ չեն կարող բացառել քրեաիրավական իմաստով խոշտանգման հանցակազմի հատկանիշների առկայությունը, խոշտանգման արդյունքում անձի առողջությանը կարող է նույնիսկ առհասարակ վնաս չպատճառվել, տվյալ դեպքում կարևոր է ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի պատճառումը»:

Հղում կատարելով «Մ. Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի» որոշման մեջ ՄԻԵԴ-ի իրավական վերլուծություններին՝ Վճռաբեկ դատարանը հիշեցրել է, որ երբ անհատը զրկված է ազատությունից կամ, ընդհանուր առմամբ, բախվել է իրավապահների հետ, ֆիզիկական ուժի ցանկացած կիրառում, որը խիստ անհրաժեշտ չի եղել այդ անձի վարքագծի պատճառով, նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտում:

Այս իմաստով՝ Վճռաբեկ դատարանը հիշեցնում է՝ «Իրավապահի կողմից լիովին իր հսկողության տակ գտնվող անհատին հասցված ապտակը լուրջ հարձակում է վերջինիս արժանապատվության վրա, ապտակը խորն ազդեցություն է թողնում անձի վրա: Դեմքին հասցված ապտակն ազդում է անձի մարմնի այն մասի վրա, որն արտահայտում է նրա անհատականությունը, դրսևորում նրա սոցիալական ինքնությունը և հանդիսանում նրա զգայարանների՝ տեսողության, խոսքի և լսողության կենտրոնը, որոնք օգտագործվում են այլոց հետ հաղորդակցվելու համար: ... Դա հատկապես ճիշտ է, երբ ապտակը հասցվել է իրավապահների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող անձանց, քանի որ դա ընդգծում է այն առավելությունը և ստորադասությունը, որոնք, ըստ սահմանման, բնորոշում են առաջինի և երկրորդի միջև հարաբերությունները նշված հանգամանքներում: (...) Բացի այդ, ...ընդհանուր առմամբ բոլոր անձինք, ովքեր գտնվում են ոստիկանության կամ համանման մարմնի վերահսկողության ներքո, խոցելի իրավիճակում են: Իշխանությունները, հետևաբար, նրանց պաշտպանելու պարտականություն ունեն (...): Ոստիկաններից որևէ մեկի կողմից ապտակելու

միջոցով նվաստացում պատճառելով՝ իշխանություններն արհամարհում են այս պարտականությունը...»:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ տուժողը գտնվել է քրեակատարողական հիմնարկում՝ պետության վերահսկողության ներքո, փակ տարածքում և դրանով իսկ պայմանավորված՝ խոցելի իրավիճակում: Վճռաբեկ դատարանը նշել է՝ «Պետության պոզիտիվ պարտականությունն է հանդիսացել ապահովելու իր վերահսկողության ներքո, փակ տարածքում, առողջական վիճակով պայմանավորված արդեն իսկ խոցելի իրավիճակում գտնվողի պաշտպանությունը: Այս առումով կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ նշված պարտականության կատարումն ապահովելու համար պետության ներկայացուցիչները՝ ի դեմս քրեակատարողական հիմնարկի ծառայողների, պետք է անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերեն քրեակատարողական հիմնարկ ընդունվող անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի առումով»:

Ելնելով այս ամենից և արձանագրելով, որ Ա. Հ.-ին մեղսագրված արարքը վերաորակելու մասով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել խոշտանգման հանցակազմի հատկանիշները, սխալ են գնահատել գործում առկա փաստական տվյալները, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի էական խախտումներ՝ Վճռաբեկ դատարանը մասնակի բավարարել է դատախազության և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքները, բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Որոշմամբ իրավապահ մարմինների ծառայողների գործողությունների, խոշտանգման հանցակազմի վերաբերյալ արված իրավական վերլուծությունները և հետևությունները էական նշանակություն են ունենալու նմանատիպ այլ գործերով անձանց արարքները ճիշտ որակելու հարցում:

Որոշման օրինակը ՀՀ գլխավոր դատախազի կողմից ուղարկվել է ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն՝ աշխատակիցներին պատշաճ հրահանգավորելու, նմանատիպ դեպքերը գործնականում բացառելու նպատակով գործուն միջոցներ ձեռնարկելու համար:

ՀՀ դատախազությունը շարունակելու է նույն հետևողականությունը նմանատիպ անթույլատրելի դրսևորումները բացառելու ուղղությամբ:

9. Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ

Հայաստանի Հանրապետության դատախազության հիմնական առաջնահերթություններից մեկն է շարունակում մնալ միջազգային-իրավական կապերի, միջազգային կառույցների հետ հարաբերությունների ամրապնդումը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում այլ պետությունների իրավասու մարմինների հետ մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով համագործակցության խորացումը:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

1. Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին հարցումներ.

2021 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 177 միջնորդություն (2020թ.՝ 315, 2019թ.՝ 161), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 463 միջնորդություն (2020թ.՝ 520, 2019թ.՝ 456), ընդամենն ուղարկվել է 640 միջնորդություն (2020 թ.՝ 835, 2019 թ.՝ 617):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննչական մարմիններին փոխանցվել են տարբեր օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություններ կազմելու վերաբերյալ թարմացված ուղեցույցներ և կազմվող միջնորդությունների նախագծերը նախքան ուղարկելն աշխատանքային կարգով ուսումնասիրվում ու լրամշակվում են վարչության կողմից՝ դրանք համապատասխանեցնելով տարբեր միջազգային պայմանագրերի և ուղեցույցների պահանջներին, զգալիորեն բարելավվել է դրանց որակը, ինչի արդյունքում նաև կրճատվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից դրանց կատարման ժամկետները:

Հասարակական հնչեղություն ունեցող, բարդ, բազմադրվագ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, հատկապես հանցավոր ճանապարհով ձեռք բերված, օտարերկրյա պետություններում գտնվող գույքի հայտնաբերման, արգելադրման ուղղությամբ դատավարական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ 2019-2021 թվականներին իրավական օգնություն ցույց

տալու մասին ավելի քան 70 միջնորդություն է ուղարկվել՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Շվեյցարիայի Համադաշնության, ինչպես նաև Չեխիայի, Իտալիայի, Ավստրիայի, Հունաստանի, Լատվիայի, Ֆրանսիայի, Լիբանանի, Կիպրոսի Հանրապետությունների իրավասու մարմիններին:

Նույն նպատակով ակտիվորեն օգտագործվել են նաև Եվրոջասթի ուղիները: Իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ընթացքում ակտիվ կապ է պահպանվել առանձին գործընկեր երկրների իրավասու մարմինների հետ:

Տեսակապով քննարկումներ են կազմակերպվել՝ նաև վարույթ իրականացնող մարմինների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով պարզաբանել միջնորդությունների կատարման հետ կապված հարցերը և նպաստել միջնորդությունների պահանջների արդյունավետ կատարմանը:

Արդյունքում՝ օտարերկրյա գործընկերների կողմից ՀՀ իրավասու մարմինների միջնորդությունների հիման վրա կալանք է դրվել ՀՀ քրեական գործերով անցնող անձանց հաշիվների վրա:

Շարունակվել է համագործակցությունը Շվեյցարիայի Համադաշնության գլխավոր դատախազության հետ և օպերատիվ կերպով լուծվել է վերոնշյալ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունների ընթացքը, ինչի արդյունքում ստացվել են քրեական գործերի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցներ, այդ թվում նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որոնց արդյունքում բացահայտվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման բարդ սխեմաներ:

Շարունակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցությունը, որի արդյունքում ստացվել են քրեական գործերի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցներ, և ներկայումս շարունակվում են հանցավոր ճանապարհով ստացված գույքերի վրա կալանք դնելու հարցի վերաբերյալ քննարկումները:

Այդուհանդերձ, որոշ դեպքերում միջնորդությունների կատարման համար պահանջվում է բավականին երկար ժամանակ՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ երկրների ներքին օրենսդրական կարգավորումները, որոշ դեպքերում ուղարկված միջնորդությունների հիման վրա իրենց պետությունում քրեական վարույթ նախաձեռնելը, միջազգային որոշ պայմանագրերի չանդամակցությունը, ինչպես նաև համագործակցության բավարար մակարդակի բացակայությունը:

Այս խնդիրները լուծելու նպատակով՝ ակտիվորեն ներգրավվում են նաև դիվանագիտական կառույցների հնարավորությունները, բազմակողմ ձևաչափերով անցկացվող տարբեր միջոցառումների շրջանակներում նախաձեռնվում են

հանդիպումներ օտարերկրյա տարբեր պետությունների իրավասու մարմինների հետ՝ նշված խնդիրները քննարկելու և հնարավոր լուծումներ գտնելու համար:

Զգալիորեն աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ստացված միջնորդությունների թիվը:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 202 միջնորդություն (2020թ.-ին՝ 148, 2019թ.՝ 129), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 22 միջնորդություն (2020թ.՝ 29, 2019թ.՝ 34), ընդհանուր առմամբ ստացվել է 224 միջնորդություն (2020 թ.՝ 177, 2019թ.՝ 163):

ՀՀ գլխավոր դատախազությունն ապահովում է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների օպերատիվ և որակյալ կատարումը:

2. Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.

Աճել է նաև քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին ուղարկվող և ստացվող միջնորդությունների թիվը:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 43_միջնորդության նախապատրաստման և ուղարկման կազմակերպումը (2019 թ.՝ 40, 2020 թ.՝ 38), որոնցից 28-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 15-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված գրությունների հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթներն ուսումնասիրվում են վարչությունում, պահանջվում են դրանց լրամշակված տարբերակները, իսկ, անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում, միջազգային պայմանագրերի համաձայն, հայցվում և տրամադրվում են լրացուցիչ տեղեկություններ:

Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում բացառվում են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 43 հանձնման միջնորդությունից 14-ը բավարարվել է, 7-ը մերժվել է, 2-ը թողնվել է առանց քննարկման, 20-ը գտնվում է քննարկման փուլում, բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից ևս 7-ը:

Այս կապակցությամբ՝ հարկ է նշել, որ 2022 թվականի ընթացքում ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազների 5 հանդիպման արդյունքներով զգալիորեն կրճատվել են անձանց հանձնելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունների քննարկման ժամկետները ՌԴ իրավասու մարմինների կողմից: Այսպիսով՝ 2022 թվականին

միջնորդությունների քննարկման ժամկետները կազմել են միջինը 2-3 ամիս՝ նախկին 6-12 ամիսների փոխարեն:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 22 միջնորդությունից (2019թ.՝ 31, 2020 թ.՝ 20) բավարարվել է 8-ը, մերժվել՝ 4-ը, իսկ 10-ը գտնվում է քննարկման փուլում:

Բավարարվել է նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված 5 միջնորդություն:

Զգալիորեն աճել է նաև ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվողների թիվը:

ՀՀ գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 186 անձի վերաբերյալ (նախորդ տարի՝ 141):

Դատախազները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարան են ներկայացրել միջնորդություններ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց նկատմամբ ժամանակավոր, հանձնման համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորման ժամկետները երկարացնելու մասին և մասնակցել դրանց քննության դատական նիստերին:

Դատախազները մասնակցել են նաև հանձնումը թույլատրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումների դեմ բերված բողոքներով կայացած դատական նիստերին:

Հայտնաբերված հետախուզվողների հայտնաբերման մասին անմիջապես տեղեկացվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինները, պահանջվել են հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ նրանց ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում՝ առաջարկվել է ուղարկել հարուցված քրեական գործերը՝ ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

ՀՀ գլխավոր դատախազության ակտիվ ներգրավվածության և հետևողականության արդյունքում, փախստականների և ապաստանի բնագավառը կարգավորող միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության իրավունքի չարաշահման հարցի կարգավորման նպատակով, մի շարք իրավական ակտերում մշակված փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը 2021 թվականին ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից և 2021 թվականի օգոստոսից մտել է ուժի մեջ, ինչը թույլ կտա հստակեցնել օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու հայցով դիմելու կարգն ու ժամկետները, սահմանել այդ հայցերի քննարկման արագացված ժամկետներ, կրճատել բացասական որոշումների բողոքարկման և դրանք ՀՀ դատարանների կողմից

քննելու ժամկետները՝ հաշվի առնելով ակնհայտորեն անհիմն հայցերի դեպքում իրավունքի չարաշահման անթույլատրելիության սկզբունքը:

Օրենսդրական փոփոխություններով նախատեսված իրավական մեխանիզմներն ապահովելու (ձերբակալված անձանց ապաստանի համար դիմելու իրավունքի պարզաբանման) նպատակով հետևողականություն է ցուցաբերվել նաև ենթաօրենսդրական համապատասխան ակտերում փոփոխություններ կատարելու, այդ թվում՝ ՀՀ կառավարության 818-Ն որոշմամբ նախատեսված ծանուցումների ընթացակարգերը պահպանելու ուղղությամբ:

Մասնավորապես, ՀՀ ոստիկանությանը հանձնարարվել է նախապես ապահովել ծանուցման օրինակելի ձևերի՝ օտար լեզուներով թարգմանված օրինակների առկայությունը և օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող անձանց, նրանց ազատությունը սահմանափակելու պահից անհապաղ տրամադրել վերը նշված գրավոր ծանուցումը՝ իրենց հասանելի լեզվով:

Արդյունքում՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ միգրացիոն պետական ծառայության հետ համատեղ, մշակել է համապատասխան ձևաթերթ, որը թարգմանվել է տասը և ավելի օտար լեզուներով, ու ուղարկել ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ՝ հետագայում սահմանված կարգով կիրառելու նպատակով:

2021 թվականին շարունակվել է 2020 թվականին ներդրված՝ ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած և ՀՀ տարածքում հայտնաբերված ՀՀ քաղաքացիների ձերբակալման և կալանավորելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու պրակտիկան, որի արդյունքում բացառվել են անձանց անհարկի արգելանքի տակ պահելու, նրանց կալանավորելու մասին վիճահարույց միջնորդություններ դատարան ներկայացնելու դեպքերը:

3. Քրեական գործերով վարույթների փոխանցում (ստացված և ուղարկված քրեական գործեր և նյութեր).

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 2 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 4), որից 1-ը ուղարկվել է ԱՊՀ, իսկ 1-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից վարչությունում ստացվել է 16 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 12):

ՀՀ դատախազությունը քաղաքացիներին աջակցություն է ցուցաբերել նաև օտարերկրյա պետությունների տարածքներում խախտված իրավունքների պաշտպանության հարցում:

Մասնավորապես՝ քաղաքացիներից ստացված նմանատիպ դիմումներն ուղարկվել են օտարերկրյա պետությունների գլխավոր դատախազություններ, և հետևողականության արդյունքում նշված պետությունների գլխավոր

դատախազությունների կողմից ՀՀ քաղաքացիների բարձրացրած խնդիրները վերցվել են հսկողության, ինչի շնորհիվ կայացվել են վերջիններիս համար ցանկալի և արդարացի որոշումներ:

2021թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազությունը շարունակել է զարգացնել և ընդլայնել համագործակցությունն այլ պետությունների դատախազությունների, պետական այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

4. Համագործակցություն այլ պետությունների դատախազությունների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, մասնակցություն միջազգային և տարածաշրջանային միջոցառումներին ու երկկողմ հանդիպումներին.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Մասնավորապես.

1. Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2021 թվականի հունվարի 12-ին մասնակցել է ՌԴ դատախազության աշխատակցի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառումներին:

Այցի ընթացքում ստորագրվել է ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև 2021-2022թթ. համագործակցության ծրագիրը, որով նախատեսվում են փորձի փոխանակմանն ուղղված համատեղ աշխատանքներ դատախազական հսկողության մի շարք ոլորտներում:

Այցի ընթացքում ՌԴ գլխավոր դատախազի նախաձեռնությամբ տեղի է ունեցել եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի գլխավոր դատախազների մասնակցությամբ, որի ընթացքում բարձրացվել է հրադադարի մասին 2020թ. նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հայտարարության 8-րդ կետի հնարավորինս արագ կատարման անհրաժեշտությունը, Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիների և պահվող այլ անձանց սեղմ ժամկետներում Հայաստան վերադարձնելու, իսկ մինչ այդ նրանց կյանքի և առողջության երաշխավորման, նրանց այլ իրավունքների ապահովման հարցը:

2. ՌԴ գլխավոր դատախազի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2021 թվականի հունիսի 2-5-ը մասնակցել է Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովին, որի

շրջանակներում կազմակերպված՝ «Ներպետական իրավասության նկատմամբ վստահությունը որպես տնտեսության զարգացման և բիզնեսի պաշտպանության գործոն» թեմայով քննարկմանը ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել ելույթով:

Միջոցառման շրջանակներում կայացել է նաև ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը ՌԴ գլխավոր դատախազի հետ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև ձևավորված ամուր գործընկերային հարաբերությունների զարգացմանը, քրեական գործերով իրավական փոխօգնության, հանձնման ոլորտներում, ինչպես նաև միջազգային հանցավորության դեմ պայքարում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցությանը վերաբերող հարցեր:

Հանդիպման արդյունքում ստորագրվել է ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների 2021-2025թթ. համագործակցության առաջնահերթ ուղղությունների վերաբերյալ հուշագիր:

3. ՌԴ գլխավոր դատախազի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2021թ. հուլիսի 5-9-ը Սանկտ Պետերբուրգում մասնակցել է եվրոպական երկրների դատախազությունների ղեկավարների համաժողովին, որի նպատակն էր քննարկել ՄԻԵԴ-ի տեսանկյունից դատախազության դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, ինչպես նաև օրենսդրության կատարման նկատմամբ դատախազական վերահսկողության, քրեական արդարադատությունից դուրս դատախազության ֆունկցիոնալ դերակատարության, կիբեռհանցագործությունների, միջազգային ահաբեկչության հակազդման, իրավական փոխօգնության կառուցակարգերի կատարելագործման խնդիրները, ինչպես նաև նշված ոլորտներում միջազգային համագործակցությանը, լավագույն փորձի փոխանակմանն առնչվող հարցեր:

Համաժողովի շրջանակում ելույթ է ունեցել ՀՀ գլխավոր դատախազը:

Միջոցառման շրջանակներում կայացել է նաև ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը ՌԴ գլխավոր դատախազի հետ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել արցախյան հակամարտության գոտում ստեղծված հետպատերազմյան հումանիտար իրավիճակին, տարածաշրջանում խաղաղության ամրապնդման և Արցախի, ինչպես նաև ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակչության իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներին:

Բացի այդ, համաժողովի շրջանակում ՀՀ գլխավոր դատախազը երկկողմ հանդիպում է ունեցել Իտալիայի գլխավոր դատախազ Ջիովաննի Սալվիի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների միջև համագործակցությանը, ինչպես նաև քրեական գործերով իրավական օգնության բնագավառում գործընկերային հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցեր, այդ թվում՝ կոնկրետ քրեական գործերով ներկայացված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ուղղությամբ աշխատանքներն ակտիվացնելու հնարավորությունները:

Նույն համաժողովի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը երկկողմ հանդիպում է ունեցել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր վարչության ղեկավար Քրիստոս Յակումոպուլոսի հետ, որի ընթացքում մանրամասն քննարկվել են արցախյան պատերազմի հումանիտար հետևանքները՝ հատկապես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտումների տեսանկյունից:

4. 2021թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ գլխավոր դատախազը մասնակցել է Անկախ պետությունների համագործակցության կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի 6-րդ նիստին, որն անցկացվել է առցանց՝ տեսակոնֆերանսի ձևաչափով:

Նիստին քննարկվել են Միջպետական խորհրդի նախորդ նիստին ընդունված որոշումների, ԱՊՀ անդամ-երկրների համագործակցության համաձայնագրից բխող հակակոռուպցիոն հայեցակարգի իրականացման ընթացքները, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական և կազմակերպական հիմքերի զարգացմանն ուղղված քայլերը, այս ոլորտում ԱՊՀ անդամ-երկրների միջև փոխգործակցությունը: Անդրադարձ է կատարվել նաև քրեական հետապնդման շրջանակներից դուրս կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման մեխանիզմներին: Կայացվել են որոշումներ Խորհրդի հաջորդ նիստի անցկացման, ինչպես նաև Խորհրդի նոր ղեկավար կազմի վերաբերյալ:

Նիստի ընթացքում ելույթ է ունեցել ՀՀ գլխավոր դատախազը՝ ներկայացնելով վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվող կոռուպցիայի հակազդման օրենսդրական, ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքն ու միջանկյալ արդյունքները:

5. ՌԴ կառավարության նախագահի տեղակալ, Հեռավորարևելյան դաշնային շրջանում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը մասնակցել է ՌԴ Վլադիվոստոկ քաղաքում 2021 թվականի սեպտեմբերի 2-4-ը անցկացված Արևելյան տնտեսական 6-րդ համաժողովին:

Համաժողովի շրջանակում կայանալիք «Ազգային օրենսդրությունը և վստահությունը միջազգային հարաբերություններում՝ որպես ներդրումների ներգրավման երաշխիք» թեմայով քննարկմանը ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել ելույթով, որը վերաբերել է Հայաստանում ներդրումների խրախուսման և պաշտպանության արդյունավետ պայմանների ստեղծման գործընթացներում իրավապահ մարմինների դերակատարմանը:

Միջոցառման շրջանակներում կայացել է նաև ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը ՌԴ գլխավոր դատախազի հետ, որի ընթացքում քննարկման առարկա է դարձել նաև 2020թ.նոյեմբերի եռակողմ հայտարարությունից բխող՝ Ադրբեջանում ապօրինի կերպով պահվող ՀՀ ՋՈՒ զինծառայողների, քաղաքացիական և այլ

անձանց վերադարձման վերաբերյալ պահանջների կատարման անհրաժեշտության հարցը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել անդրազգային հանցավորության դեմ պայքարում ջանքերը համատեղելու, քրեաիրավական ոլորտում երկու երկրների քաղաքացիների իրավունքների պաշտպանության, հանցագործությունների բացահայտման ոլորտում գործակցության սերտացման, երկու երկրների դատախազությունների միջև ստորագրված համագործակցության հուշագրով նախատեսված միջոցառումների իրականացման, դրա շրջանակներում պատվիրակությունների փոխայցելությունների կազմակերպման խնդիրներին:

6. ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2021թ. սեպտեմբերի 23-ին մասնակցել է Ղազախստանի Հանրապետությունում անցկացվող ԱՊՀ անդամ-երկրների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի հերթական՝ 31-րդ նիստին:

Նիստի շրջանակներում քննարկվել են անդամ երկրների դատախազությունների փորձը կոռուպցիայի հակազդման, էկոլոգիական անվտանգության և բարենպաստ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիական իրավունքների պաշտպանության, բանկային գաղտնիք պարունակող տվյալների պաշտպանության և քրեական վարույթների շրջանակներում օգտագործման ոլորտներում դատախազական հսկողության, միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, ինչպես նաև քրեական գործերի թվայնացման, դատախազական մարմիններում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ իրականացվող գործընթացների արդյունավետության խնդիրները:

Բացի այդ, վերլուծվել են ԱՊՀ տարածաշրջանում հանցավորության, քննչական և դատախազական աշխատանքի ընդհանուր վիճակը, անդամ-երկրներում հանցագործությունների դեմ պայքարում միջազգային համաձայնագրերի կիրառման պրակտիկան: Հաստատվել են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հանցագործությունների, ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների, կոռուպցիայի և այլ բնույթի հանցագործությունների դեմ պայքարում անդամ-երկրների դատախազությունների համագործակցության ծրագրերին, Համակարգող խորհրդի աշխատանքների պլանի կատարողականին վերաբերող և այլ բնույթի որոշումներ:

Նիստի օրակարգի 1-ին հարցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել ելույթով, որի ընթացքում հանգամանորեն ներկայացրել է քրեական վարույթների շրջանակներում բանկային տվյալների պաշտպանության և օգտագործման հարցում մասնավոր ու հանրային շահերի հավասարակշռմանը միտված բարեփոխումները:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի գլխավոր դատախազների մասնակցությամբ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել պատերազմի ընթացքում անհետ կորած

անձանց, զինծառայողների փնտրման, այդ նպատակով կողմերի միջև միջնորդավորված տեղեկության փոխանակման գործընթացի ուղղությամբ ներդրված համատեղ ջանքերին և կարևորվել է այդ աշխատանքների շարունակման անհրաժեշտությունը:

ՀՀ գլխավոր դատախազը հանդիպման ընթացքում շեշտել է Ադրբեջանում պահվող ՀՀ քաղաքացիների վերադարձման անհրաժեշտությունը՝ որը նախատեսված է 2020թ. նոյեմբերի 9-ին ստորագրված հրադադարի հաստատման եռակողմ հայտարարության 8-րդ կետով, ինչը կարևոր ազդակ կարող է դառնալ տարածաշրջանում խաղաղության, հետագա հնարավոր համագործակցության, անվտանգության երաշխավորման, կողմերի միջև վստահության նախադրյալների ստեղծման համար:

7. ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2021 թվականի դեկտեմբերի 13-18-ը մասնակցել է Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում կայացած՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի 9-րդ նստաշրջանի աշխատանքներին:

Համաժողովի ընթացքում քննարկվել են, նախկինում ընդունված համապատասխան փաստաթղթերի համաձայն, անդամ-երկրների կողմից կոռուպցիայի կանխարգելման աշխատանքների իրականացումը, կոռուպցիայի միջոցով ստացված ապօրինի եկամուտների, ակտիվների վերադարձման մեխանիզմների կատարելագործումը և այս ոլորտում միջազգային առաջադեմ փորձը, կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն պայքարի հետ կապված ընդհանուր մարտահրավերները և դրանց հաղթահարման միջոցները, նշված բոլոր ոլորտներում միջազգային համագործակցությունը և դրա շրջանակներում անդամ-երկրների միջև իրավական փոխօգնության կառուցակարգերի զարգացումը, ինչպես նաև այլ խնդիրներ:

Համաժողովի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանում հակակոռուպցիոն համալիր՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակներն ու ընթացքը, անդրազգային կոռուպցիայի, փողերի լվացման ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման ՀՀ դատախազության տեսլականը:

ՀՀ պատվիրակության մասնակցության արդյունքում տապալվել է համաժողովի ընթացքում Ադրբեջանի կազմակերպած՝ “Misuse of fund raising activities for corruption and related criminal purposes” խորագրով հարակից միջոցառումը, որի նպատակն էր հայկական կազմակերպություններին որպես ահաբեկչության ֆինանսավորմամբ զբաղվող կառույցներ ներկայացնելը:

Համաժողովի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպում է ունեցել համաժողովում Եգիպտոսի Արաբական Հանրապետության պատվիրակության ներկայացուցիչ, Եգիպտոսի գլխավոր դատախազի առաջին տեղակալ Մոհամմադ Խալաֆի հետ, որի ընթացքում քննարկվել են դատախազական երկու կառույցների

միջև կապերի ընդլայնման, փորձի փոխանակման և դատախազների կարողությունների զարգացման համատեղ ծրագրեր իրականացնելու, իրավական փոխօգնության ոլորտում, անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում գործակցության խորացման հեռանկարներն ու հնարավոր կառուցակարգերը: Անդրադարձ է կատարվել նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերին:

Բացի այդ, նստաշրջանի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպում է ունեցել Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազ Նիդա Գրունսկինեի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների միջև կապերի ընդլայնման հնարավոր ուղիները, քրեական գործերով իրավական փոխօգնության մեխանիզմների գործարկման արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է նաև ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը Եգիպտոսի Արաբական Հանրապետության վարչական վերահսկողության ծառայության նախագահ Հասան Աբդել Շաֆի Ահմեդ Աբդել Ղանի հետ, որը նաև ընտրվել է Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի՝ ընթացող 9-րդ նստաշրջանի նախագահ:

Կողմերը քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Անդրադարձ է կատարվել անդրազգային հանցավորության, այդ թվում նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարում Հայաստանի և Եգիպտոսի միջև համագործակցության խորացման հնարավորություններին՝ կապված երկու երկրների քաղաքացիների փոխայցելությունների զգալի աճի հետ՝ միմյանց երկրներում նրանց իրավական պաշտպանության մակարդակի բարձրացման հարցին, իրավական ոլորտի տարբեր ուղղություններով գործակցության ամուր իրավական հիմքեր ձևավորելու հեռանկարներին:

Այնուհետև կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմիի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների համապատասխան կառույցների միջև իրավական ոլորտում համագործակցության արդիական հարցեր:

Առաջնային է համարվել տևական կայունության և խաղաղության ապահովումը, կողմերը վերահաստատել են իրենց սկզբունքային մոտեցումը տարածաշրջանը միջազգային ահաբեկչությունից զերծ պահելու հարցում:

Կրկին շեշտվել է այս ուղղությամբ ջանքերը համատեղելու, ահաբեկչության, ինչպես նաև անդրազգային բնույթի այլ հանցագործությունների դեմ պայքարում վճռականություն ցուցաբերելու և երկկողմ ու բազմակողմ ձևաչափերով գործակցության ընդլայնման անհրաժեշտությունը:

ՀՀ գլխավոր դատախազի հրավերով Հայաստան են այցելել նաև այլ պետությունների գլխավոր դատախազներ, մասնավորապես՝

1. 2021 թվականի ապրիլի 8-ին ՀՀ գլխավոր դատախազի հրավերով Հայաստան է այցելել ՌԴ գլխավոր դատախազ Իգոր Կրասնովը, որի ընթացքում կայացել է երկու երկրների դատախազների հանդիպումը:

Հանդիպման ընթացքում ՌԴ գլխավոր դատախազը կարևորել է միջազգային տարբեր կառույցներում ՀՀ և ՌԴ դատախազությունների գործակցությունը և ՀՀ գլխավոր դատախազին հրավիրել մասնակցելու 2021թ.հուլիսին Սանկտ Պետերբուրգում կայանալիք Եվրոպական երկրների դատախազությունների ղեկավարների համաժողովին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև 2020թ. տեղի ունեցած պատերազմից հետո տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը խոչընդոտող գործոնները:

Հանդիպման արդյունքներով ստորագրվել է համատեղ հայտարարություն՝ ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև համագործակցության զարգացման մտադրությունների վերաբերյալ, որն ուղղված է դատախազների որակավորման բարձրացմանը և բազմաթիվ ուղղություններով գործընկերության ամրապնդմանը:

Վերոնշյալ փաստաթղթի հիման վրա ՀՀ 6 դատախազ 2021 թվականին վերապատրաստման դասընթաց է անցել ՌԴ դատախազության ակադեմիայում:

2. 2021թ. հոկտեմբերի 12-15-ը ՀՀ գլխավոր դատախազի հրավերով, եռօրյա աշխատանքային այցով, Հայաստան է ժամանել ԻԻՀ գլխավոր դատախազ Մոհամմադ Ջաֆար Մոնթազերին, որի ընթացքում կայացել է երկու երկրների դատախազների հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների համագործակցության ծրագրերից բխող՝ հանձնման և քրեական գործերով իրավական օգնության բնագավառում համագործակցության, թմրամիջոցների մաքսանենգության և ապօրինի շրջանառության, ինչպես նաև ապօրինի սահմանահատումների և ապօրինի միգրացիայի դեմ համատեղ պայքարին, նման հանցավոր դեպքերով քննությունների, հանցավոր ծագման ակտիվների հայտնաբերման, առգրավման, բռնագրավման և արտերկրից վերադարձման ուղղությամբ փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումների շարունակման խնդիրները:

Քննարկման առարկա են դարձել քրեական գործերով իրավական օգնության շրջանակներում Իրանի իրավապահ մարմիններին ներկայացվող միջնորդությունների կատարման ժամկետների բարելավման միտումների խթանման հնարավորությունները, Հայաստանում պատիժ կրող Իրանի քաղաքացի դատապարտյալների պատժի կրման, հանձնման գործընթացները, մաքսանենգ եղանակով թմրամիջոցների ապօրինի ներմուծման և տարանցման դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների համագործակցության արդյունավետության

բարձրացումը, այդ շրջանակում մաքսակետերում հսկողության տեխնիկական միջոցների արդիականացման հնարավորությունները, հոգեմետ նյութ կամ թմրամիջոց պարունակող դեղահաբերի տեղափոխման սահմանափակումներից միմյանց երկիր այցելող քաղաքացիների իրազեկվածության բարձրացումը:

Անդրազգային հանցավորության դեմ պայքարի համատեքստում գլխավոր դատախազների կողմից կարևորվել է տարածաշրջանը միջազգային ահաբեկչությունից զերծ պահելու, ահաբեկչական խմբավորումների ներկայությունը տարածաշրջանում բացառելու անհրաժեշտությունը, որն արդիական է դարձել հատկապես 2020թ. արցախյան պատերազմի ընթացքում հակամարտության գոտի նման խմբավորումների տեղափոխման և տեղակայման պատճառով:

Քննարկվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, մասնավորապես, Արաքս գետի ավազանի բնակչության մաքուր շրջակա միջավայր ունենալու իրավունքի և բնապահպանական խնդրների լուծման իրավական մեխանիզմներ գտնելու, այդ ոլորտում հետագա համագործակցության համար աշխատանքային ձևաչափեր մշակելու հնարավորությունները, արդյունքում ձևավորվել է հայ-իրանական համատեղ աշխատանքային խումբ՝ Արաքս գետի հնարավոր աղտոտման հարցի ուսումնասիրման նպատակով:

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ աշխատանքային խմբի հայկական կողմի անդամները, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Աֆանդյանի գլխավորությամբ, Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2021 թվականի նոյեմբերի 19-ին ընդունել են իրանական կողմի պատվիրակությանը, աշխատանքային խմբի համագործակցությունը կրում է շարունակական բնույթ:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավասու կառույցների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ, մասնավորապես.

1. 2021 թվականի մարտի 25-ին և օգոստոսի 2-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև իրավական փոխօգնության, քրեաիրավական ոլորտում փոխհարաբերությունների զարգացման խորացմանը և փորձի փոխանակմանը միտված՝ նախանշված համատեղ միջոցառումների իրականացմանը վերաբերող հարցեր, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ խնդիրներ:

Անդրադարձ է կատարվել նաև Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց հայրենիք վերադարձման հնարավորություններին, այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին:

2. 2021թ. մայիսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքներն ուսումնասիրելու նպատակով Երևանում գտնվող Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) զեկուցող Փոլ Գավանին:

Քննարկվել են 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հումանիտար հետևանքներին, դրանցով պայմանավորված քրեաիրավական գործընթացներին վերաբերող հարցեր:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև 2020թ. տեղի ունեցած պատերազմից հետո տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը խոչընդոտող գործոնները:

3. 2021թ. թվականի հունիսի 10-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Անկախ պետությունների համագործակցության դիտորդական առաքելության շտաբի պատվիրակությանը, որը Հայաստան է ժամանել նույն թվականի հունիսի 20-ին կայանալիք ԱԺ արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացը դիտարկման ենթարկելու նպատակով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ընտրությունների ամբողջ ընթացքում դիտորդական առաքելության և ՀՀ դատախազության միջև հաղորդակցության և գործակցության եղանակներին, ՀՀ իրավապահ մարմինների կողմից ընտրական հանցավոր իրավախախտումների դեմ համակարգված պայքարի ընթացիկ արդյունքներին, այս ուղղությամբ ՀՀ դատախազության նախաձեռնություններին վերաբերող հարցեր:

4. 2021 թվականի հունիսի 10-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության պատվիրակության ղեկավար Օուեն Մերֆիին և առաքելության իրավական հարցերով վերլուծաբան Սվետլանա Չետայկինային:

Հանդիպման ընթացքում երկուստեք պատրաստակամություն է հայտնվել իրենց իրավասությունների սահմաններում օպերատիվ տեղեկատվության փոխանակման շուրջ: Ընդգծվել է, որ, ինչպես ընտրական մյուս սուբյեկտներին, այնպես էլ դիտորդական առաքելություններին, դատախազությունը մոտենում է որպես գործընկերների և պատրաստ է լայն համագործակցության՝ օրինական, թափանցիկ և լեգիտիմ ընտրությունների անցկացումը երաշխավորելու նպատակով:

5. 2021 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպում է ունեցել ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բահաա Էլ Դին Բահգատի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի անդամ-երկրների համաժողովի 9-րդ նստաշրջանին ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակության այցի կազմակերպմանը, Եգիպտոսի Արաբական Հանրապետության գլխավոր դատախազության հետ համագործակցության հեռանկարների և իրավական բազան երկու երկրների դատախազությունների կարողությունների զարգացման արդի կարիքներին համապատասխանեցնելուն առնչվող հարցեր:

6. 2021թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին, որի ընթացքում մանրամասն քննարկվել են գրասենյակի աջակցությամբ իրականացվող բարեփոխումների ինչպես ընթացիկ ծրագրերը, այնպես էլ մշակվող գործողությունների նոր պլանում ներառվելիք բարեփոխումների նոր ուղղություններ:

7. 2021թ. նոյեմբերի 2-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանն ընդունել է «Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը» ծրագրի աջակցող խմբի ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում կարևորվել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող՝ ՀՀ արդարադատության համակարգի բարեփոխմանն ուղղված ծրագրերի արդիականությունը և ձեռք են բերվել պայմանավորվածություններ կոնկրետ ծրագրային մոտեցումների և դրանց իրականացման մեխանիզմների վերաբերյալ:

8. 2021 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանն ընդունել է Եվրոպական միության «Էլեկտրոնային արդարադատության մշակման և իրականացման լուծումները» ծրագրի տեխնիկական աջակցության թիմին՝ Կեստուտիս Վասկևիսիուսի գլխավորությամբ:

Հանդիպման շրջանակներում քննարկվել են ներդրման տարբեր փուլերում գտնվող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի և քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային համակարգի փոխկապակցման հնարավորության հարցերը:

9. 2021 թվականի մարտի 12-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Մաքսիմ Լոնգագեին:

Հանդիպման ընթացքում կարևորվել է Եվրոպայի խորհրդի հետ ՀՀ դատախազության համագործակցությունը և արձանագրվել է հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու և այդ գործընթացում մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու հարցում Խորհրդի կողմից իրականացված ծրագրերի բարձր արդյունավետությունը:

Կողմերը ծավալուն քննարկում են ունեցել ՀՀ դատախազության նախաձեռնած՝ իրենց լիազորությունների իրականացման կապակցությամբ պաշտոնատար անձանց վիրավորանքի քրեականացման գաղափարի շուրջ:

10. 2021 թվականի սեպտեմբերի 15-ին ՀՀ գլխավոր դատախազությունում անցկացվել է կոռուպցիայի և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդիական հարցերով փորձագիտական քննարկում և համատեղ կլոր սեղան՝ ՀՀ և ՌԴ դատախազների մասնակցությամբ:

Միջոցառումներն անցկացվել են 2021 թվականի հունվարի 12-ին Մոսկվայում ստորագրված՝ ՀՀ գլխավոր դատախազության և ՌԴ գլխավոր դատախազության միջև 2021-2022 թվականների համագործակցության ծրագրի շրջանակներում:

ՀՀ և ՌԴ դատախազները քննարկել են հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը հատկապես աշխարհում տարածում գտնող ոչ ավանդական եղանակներով (առցանց POS տերմինալներով, համացանցային և բջջային բանկինգի, թվային քսակների, կրիպտոարժույթների միջոցով) կատարվող գործարքներով օրինականացնելու, կոռուպցիոն բնույթի քրեական գործերի քննության, դրանց նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկությունները, գործնականում հանդիպող խնդիրները և դրանց լուծման միջոցները, ՌԴ-ում և ՀՀ-ում անօրինական ակտիվների բռնագանձման մեխանիզմները, գործակցության կարողությունները, այս ոլորտներում դատախազների մասնագիտացման նշանակությունը:

2021 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվել է դեռևս 2017 թվականից սկսած օտարերկրյա գործընկերների հետ արդյունավետ համագործակցությունը քաղաքական և ազգային պատկանելիության շարժառիթներով Ադրբեջանի իրավասու մարմինների կողմից անձանց նկատմամբ անհիմն հետախուզում հայտարարելու համար նախաձեռնված հարցումները ձախողելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ ինչպես Արցախ այցելած, այնպես էլ այնտեղ գործունեություն ծավալող անձանց, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների ու ՀՀ գործող և նախկին որոշ պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով Ադրբեջանի կողմից միջազգային հետախուզում հայտարարելու փորձերի կապակցությամբ ձեռնարկված քայլերի արդյունքում, Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության /Ինտերպոլ/ գլխավոր քարտուղարության կողմից ձևավորվել է դիրքորոշում՝ այդ գործերով հարցումները Ինտերպոլի կանոնադրության 3-րդ հոդվածին չհամապատասխանող համարելու վերաբերյալ: Արդյունքում ադրբեջանական կողմից ստացված նմանատիպ հարցումներին Ինտերպոլի գլխավոր քարտուղարության կողմից ընթացք չի տրվում:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունը հետևողականություն է դրսևորում նաև նույն շարժառիթով ԱՊՀ հետախուզական ուղիները օգտագործելու Ադրբեջանի փորձերը ձախողելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությունն այս կապակցությամբ համապատասխան գրություններ է ուղարկել նաև ՌԴ գլխավոր

դատախազություն՝ վերոնշյալ անձանց նշված հիմնավորումներով ԱՊՀ շրջանակներում գործող ուղիներով հետախուզման անթույլատրելիության վերաբերյալ:

Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած հիմնավորումների՝ ՌԴ գլխավոր դատախազության գրությամբ հայտնվել է նշված անձանց հետախուզման վերաբերյալ տվյալների բացակայության մասին և կրկին վերահաստատվել դիրքորոշումն առ այն, որ անձանց հանձնման մասին միջնորդություններ ստանալու դեպքում դրանք քննարկվելու են օրենսդրության, այդ թվում՝ քաղաքական համոզմունքների և այդ պետության տարածքում հանցավոր չհամարվող արարքների համար հանձնման անթույլատրելիության համատեքստում:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունների միջև արդյունավետ համագործակցության արդյունքում կանխվել է Ադրբեջանում ծնված ՀՀ քաղաքացու՝ սխալմամբ վտարումն Ադրբեջանի Հանրապետություն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անձը ՌԴ տարածքում կատարել էր վարչական իրավախախտում, դատարանի կողմից կայացվել էր որոշում՝ նրան վարչական պատասխանատվության և ՌԴ տարածքից վարչական վտարման ենթարկելու մասին:

Վարչական պատասխանատվության և վարչական վտարման ենթարկելու մասին ՌԴ համապատասխան դատարանի որոշման ներածական մասում անձի տվյալները շարադրելիս դատարանը թյուրիմացաբար նշել էր, որ անձը Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի է, որպիսի պայմաններում առկա էր նրան Ադրբեջան վտարելու իրական վտանգ:

Չնայած վտարման գործընթացին ՀՀ դատախազության լիազորությունների որևէ առնչության բացակայության հանգամանքին, ՀՀ գլխավոր դատախազությունն անհապաղ միջոցներ է ձեռնարկել գործընթացի կասեցման ուղղությամբ՝ խնդրի լուծմանը ներգրավելով ՌԴ գլխավոր դատախազությանն ու ՀՀ պետական լիազոր մարմիններին:

ՌԴ գլխավոր դատախազության աջակցությամբ խնդիրը ներկայացվել է վերոհիշյալ որոշումը կայացրած դատարանի ուշադրությանը, որը սեղմ ժամկետում, համապատասխան լրացուցիչ որոշմամբ, փոփոխել է իր որոշման մեջ տեղ գտած անճշտությունը, և անձը վերադարձվել է Հայաստան:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազությունն ակտիվորեն ներգրավված է եղել տարբեր միջազգային գործընկերների մասնակցությամբ իրականացվող բազմաբնույթ ծրագրերում, որոնց շրջանակներում իրականացվել են ինչպես փորձի փոխանակման, այնպես էլ ՀՀ դատախազության գործունեության առանձին ոլորտներին վերաբերող փորձագիտական շփումներ: Մասնավորապես, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ «Ատելության շարժառիթով կատարված հանցագործություններ. վերապատրաստում դատախազների համար» ծրագրի շրջանակներում ստորագրվել

է փոխըմբռնման հուշագիր ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ գրասենյակի և Արդարադատության ակադեմիայի միջև, որով նախատեսվում է այս տարի ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների քննության վերաբերյալ թեմաներն ընդգրկել դատախազների, դատախազների թեկնածուների մասնագիտական վերապատրաստման ծրագրերում և անցկացնել համապատասխան վերապատրաստումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության ներկայացուցիչներն ակտիվորեն ներգրավված են եղել Արևելյան գործընկերության երկրների համար նախատեսված՝ Եվրոպայի խորհրդի և Եվրամիության «Cyber@East» համատեղ ծրագրի շրջանակներում իրականացվող վերապատրաստումներին՝ ուղղված համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ իրականացվող հանցագործությունների վերաբերյալ դատախազների մասնագիտական գիտելիքների բարձրացմանը: Հիշյալ ծրագրի շրջանակներում կազմակերպվել է նաև այցելություն Հունգարիա:

2021թ. ապահովվել է նաև ակտիվ համագործակցությունը ԵԽ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) հետ, որի շրջանակներում իրականացվել է տեղեկատվության ակտիվ փոխանակում վերջինիս փորձագետների հետ:

Ապահովվել է ակտիվ համագործակցությունը միջազգային գործընկերների հետ նաև ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդումը» ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, ծրագրի փորձագետների մասնակցությամբ իրականացվել է ուսումնասիրություն դատախազների վարքագծի կանոնների մեկնաբանությունների վերաբերյալ և կազմվել է համապատասխան ձեռնարկ, կազմակերպվել է ուսումնական այց Ալբանիա՝ ուսումնասիրելու դատախազների և դատավորների բարեվարքության ստուգման մեխանիզմները:

ՀՀ դատախազությունը չափազանց կարևորում է միջազգային գործընկերների հետ ակտիվ և գործնական համագործակցությունը՝ ուղղված նորարարական գաղափարների և միջազգային լավագույն փորձի ներգրավմամբ ՀՀ դատախազության գործունեության առանձին ուղղությունների բարելավմանը:

Իրավական ապահովման ոլորտ

2021 թվականի ընթացքում հանցավորության շարժընթացի, իրավակիրառ պրակտիկայի և հանցագործությունների քննության վիճակագրական տվյալների վերլուծությունների հիման վրա, հաշվի առնելով ՀՀ դատախազության 2021 թվականի գործունեության ամփոփիչ արդյունքների վերաբերյալ ՀՀ դատախազության ընդլայնված կոլեգիայի 2021 թվականի փետրվարի 26-ի նիստում հնչած կարծիքները, ՀՀ դատախազության կողմից հաշվետու ժամանակաշրջանում

մշակվել են քրեական դատավարության ոլորտին վերաբերող և ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր, որոնք միտված են եղել ուժեղացնելու առանձին հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի գործիքակազմը, հաղթահարելու տարբեր հանցագործությունների քննության ժամանակ երևան եկած օրենսդրական բացերը, ինչպես նաև ապահովելու ՀՀ դատախազության բնականոն գործունեությունը և դատախազների սոցիալական պաշտպանվածության երաշխիքները:

Այսպես՝ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազության կողմից նախապատրաստվել և իրավասու պետական մարմիններ են ուղարկվել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ: Նշված օրենսդրական նախաձեռնությունների ճնշող մեծամասնությունը վերաբերում է քրեական արդարադատության ոլորտին:

Մասնավորապես.

1. Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից մշակվել և արդարադատության նախարարություն են ներկայացվել «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Հիշյալ նախագծերի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

«Դատախազության մասին» ՀՕ-198-Ն օրենքը ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին, ուժի մեջ մտել՝ 2018 թվականի ապրիլի 9-ին: Օրենքի գործողության շուրջ 3 տարվա ընթացքում առաջ են եկել որոշակի խնդիրներ, որոնց վերաբերյալ օրենքի կարգավորումները պարունակում են տարընթերցումներ, օրենսդրական բացեր և ներքին հակասություններ: Բացի այդ, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՕ-207-Ն օրենքի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն հստակեցնելու ՀՀ դատախազության կառուցվածքին վերաբերող՝ օրենքում առկա կարգավորումները: Հարկ է արձանագրել նաև, որ «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ հրամանով հաստատված գործողությունների ծրագրով առկա են ՀՀ դատախազության բարեփոխումներին առնչվող որոշակի կետեր, որոնց իրացումը հնարավոր է ապահովել օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով: Այսինքն՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող իրավական նոր կարգավորումներն ուղղված են ապահովելու ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների արդյունավետ իրացումն օրենսդրության մեջ:

Նախագծերով առաջարկվող կարգավորումների բնույթը հետևյալն է.

– Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում է դատախազության համակարգը: Տվյալ դրույթը դիտարկելով Օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքը սահմանող դրույթի, ինչպես նաև «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, ակնհայտ է դառնում, որ Օրենքով ՀՀ դատախազության կառուցվածքում ներառված չեն ՀՀ գլխավոր դատախազի, վերջինիս տեղակալների, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի և վերջինիս տեղակալի պաշտոնները, ՀՀ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները, ինչի լուծման նպատակով առաջարկվել է փոփոխություններ կատարել Օրենքի 8-րդ հոդվածում՝ դրանում ներառելով նաև գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների պաշտոնները: Առաջարկվող փոփոխության դեպքում վերանում է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորման անհրաժեշտությունը:

– Օրենքի 11-րդ հոդվածում գլխավոր դատախազության կառուցվածքը հստակ և ամբողջական կարգավորված չէ, ինչի լուծմանն էլ ուղղված է համապատասխան փոփոխությունը:

– Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասում առկա «խախտումներ» եզրույթը անորոշ է և հասկանալի չէ, թե տվյալ եզրույթը վերաբերում է քրեադատավարական կամ քրեական օրենքի խախտումներին, թե՞ նաև դատախազի վարքագծի կանոնների խախտումներին: Քանի որ բոլոր դեպքերում տվյալ խախտումները վկայում են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքերի մասին, ուստի առաջարկվել է «խախտումներ» եզրույթը փոխարինել «դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր» բառերով:

– ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրով նախատեսված է փոփոխել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով: Ըստ այդմ, առաջարկվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական նշանակելու ՀՀ գլխավոր դատախազի՝ Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորությունը փոխանցել ՀՀ դատախազության կոլեգիային: Բացի այդ, նախատեսվել է սահմանել հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը՝ հաշվի առնելով որոշակի օբյեկտիվ պայմաններ:

– Օրենքով կարգավորված չէ հանրային ծառայության այլ բնագավառներում աշխատող սուբյեկտների նկատմամբ կարգապահական վարույթ (ծառայողական քննություն) հարուցելու միջնորդություն ներկայացնելու դատախազի լիազորությունը: Հարկ է նշել, որ իրականացվող քրեական վարույթների ընթացքում (մասնավորապես՝ կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով քննվող գործերով) շատ հաճախ արձանագրվում են իրավիճակներ, երբ հաստատվում է հանրային ծառայողի կամ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների կողմից թերացումների կամ խախտումների փաստը, որին, սակայն, տարբեր օբյեկտիվ պատճառներով (անցած են լինում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, անձի կողմից հատուցվում է պատճառված վնասը, արարքի մեջ բացակայում է հանցակազմը և այլն), հնարավոր չի լինում տալ քրեաիրավական գնահատական: Նման իրավիճակներում հանցագործություն ծնող պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով արդյունավետ գործիքակազմ կարող է հանդիսանալ Օրենքի 25-րդ հոդվածում առաջարկվող լրացումը՝ դատախազին խախտումներ թույլ տված անձի նկատմամբ կարգապահական վարույթ (ծառայողական քննություն) հարուցելու միջնորդություն ներկայացնելու լիազորություն տալը:

– Բացի այդ, անհրաժեշտ է համարվել Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանել հանցագործությունից բացի, նաև այլ իրավախախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով դատախազի կողմից միջնորդագիր ներկայացնելու հնարավորությունը: Ընդ որում, հիշյալ հոդվածի 6-րդ մասում անհրաժեշտ է սահմանել դատախազի՝ քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում քննիչին կամ հետաքննության մարմնին հանձնարարական կամ ցուցում տալու լիազորությունը:

– Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող կարգավորումները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվող լրացումները միտված են կարգավորելու դատախազական խմբի ստեղծման, դատախազական խմբի ղեկավարի դատավարական լիազորությունների հստակեցման հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես, առաջարկվել է օրենսդրորեն սահմանել այն հանգամանքը, որ դատախազական խմբի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս խմբի ղեկավարը հանդիսանում է վերադաս՝ դատախազական խմբի մեջ մտնող այլ դատախազների նկատմամբ, ինչպես նաև հստակեցնել դատախազական խմբի ղեկավարի դատավարական լիազորությունները:

– Օրենքի հիշյալ հոդվածում առաջարկվել է նաև սահմանել ստորադաս դատախազի վարույթից գործը մեկ այլ դատախազի կամ իր վարույթ տեղափոխելու՝ անմիջական վերադաս դատախազի լիազորության իրականացումը գործնականում շատ հաճախ հանդիպող այն դեպքերի համար, երբ դատախազը, իր

աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով, օբյեկտիվորեն չի կարողանում պատշաճ կերպով իրականացնել իր լիազորությունները կամ տեղափոխվում է ՀՀ դատախազության համակարգի այլ ստորաբաժանում:

– Նախագծի 11-րդ և 12-րդ հոդվածները կոչված են հստակեցնելու դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները, քանի որ գործնականում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, երբ Օրենքի առկա կարգավորումները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացնում որևէ անձ, որի 22 տարին դիցուք լրանալու է 2 ամիս անց: Տվյալ իրավիճակում Օրենքը չի պարունակում հստակ կարգավորումներ, թե արդյոք տվյալ անձը կարո՞ղ է մասնակցել մրցույթին, թե՞ ոչ, քանի որ 22 տարին լրացած լինելը վերաբերում է դատախազ նշանակվելու ընդհանուր պահանջներին, այլ ոչ թե դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հնարավորությանը:

– Առաջարկվել է նաև Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթը շարադրել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 113-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի և 160-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի տրամաբանությանը համահունչ: Մասնավորապես, Դատական օրենսգրքի հիշյալ հոդվածների համաձայն՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձը հանվում է ցուցակից, եթե, ի թիվս այլնի, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով, իսկ դատավորի լիազորությունները դադարեցվում են, եթե, ի թիվս այլնի, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով: Այլ կերպ ասած, բացակայում է քրեական հետապնդումը ոչ արդարացման հիմքով չիրականացնելու վերաբերյալ դրույթը իբրև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձին ցուցակից հանելու կամ դատավորի լիազորությունները դադարեցնելու հիմք: Ուստի, անհրաժեշտ է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 62-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և 63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը շարադրել նույն տրամաբանությամբ՝ առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ հաճախ միջազգային փաստաթղթերում ընդգծվում է դատավորներին տրամադրվող երաշխիքները նմանապես դատախազների վրա տարածելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (Consultative Council of European Prosecutors - CCPE) 2018թ. նոյեմբերի 23-ին ընդունված՝ «Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը և

էթիկան» փաստաթղթի[6] 14-րդ կետում նշվում է, որ. «*Հաշվի առնելով դատավորների և դատախազների առաքելությունների նմանությունը և փոխլրացնող բնույթը, ինչպես նաև պաշտոնավարման պայմաններին և կարգավիճակին ներկայացվող պահանջները, դատախազները պետք է ունենան այնպիսի երաշխիքներ, որոնք համանման են դատավորներին տրամադրվող երաշխիքներին (Taking into account the proximity and complementary nature of the missions of judges and prosecutors, as well as of requirements in terms of their status and conditions of service,[7] prosecutors should have guarantees similar to those for judges)»:*

– Նախագծի 14-րդ հոդվածով դատախազության պաշտոնների դասակարգման առաջարկվող տարբերակը պայմանավորված է ՀՀ դատախազության ստորաբաժանումների (ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարածքային) ավագ դատախազների և դատախազների՝ միևնույն պաշտոնների խմբում չընդգրկելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ինչպես աշխատավարձերի տարբերությունը, այնպես էլ պաշտոնեական պարտականությունների շրջանակը: Բացի այդ, Օրենքի գործող կարգավորումների պարագայում կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետի պաշտոնը, որպես զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, ընդգրկված է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, իսկ կայազորի զինվորական դատախազի պաշտոնը՝ նույն մասի 4-րդ կետում: Այսինքն կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետն ընդգրկված է ավելի ցածր պաշտոնների ենթախմբում, քան կայազորի զինվորական դատախազը, որի ենթակայության ներքո գտնվող ստորաբաժանման աշխատանքները վերջինս ի պաշտոնե կոչված է վերահսկելու, ինչն անտրամաբանական է:

Հարկ է արձանագրել, որ սույն նախագծով առաջարկվող մի շարք կարգավորումներ պայմանավորված են նաև ՀՀ ստանձնած միջազգային հանձնառությունների, մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Կոռուպցիայի դեմ պայքարի եվրոպական երկրների խմբի (ԳՐԵԿՈ) հանձնարարականների պատշաճ կատարմամբ:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների

---

[6] Հասանելի է https://www.coe.int/en/web/ccpe/opinions/adopted-opinions հղմամբ:

[7] Տես նաև Opinion No. 9 (2014) of the CCPE, Explanatory Note to the Rome Charter, paragraph 53.

նախագծերով առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածում կատարել լրացում և նախատեսել, որ եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում ի հայտ են եկել նրա վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած երկու կամ ավելի ինքնուրույն դատավճիռներ, որոնցով վերջնական պատիժ չի նշանակվել, ապա դատապարտյալի, նրա պաշտպանի, դատախազի, կամ քրեակատարողական հիմնարկի միջնորդությամբ վերջին դատական ակտը կայացրած դատարանը նոր դատական ակտով դատապարտյալի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանում նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Այս կարգավորման ամբողջական իրացման նպատակով համապատասխան փոփոխություններ են առաջարկվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 430-րդ և 438-րդ հոդվածներում:

Սույն նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պրակտիկայի ուսումնասիրությամբ ի հայտ են եկել միևնույն անձի վերաբերյալ ընդհանուր իրավասության տարբեր դատարանների կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած երկու ինքնուրույն դատական ակտեր (դատավճիռներ), որոնցով, սակայն, անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով՝ դատավճիռների համակցությամբ, վերջնական պատիժ նշանակված չէ, ինչը, իր հերթին, իրավակիրառ պրակտիկայում դատապարտյալի կողմից պատժի կրման տեսանկյունից առաջացնում է դժվարություններ՝ վերջնական պատժաչափի և պատժի կրման ժամկետի հաշվարկման մասով:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված քրեական գործերով իրականացվող քննությունը, պայմանավորված ապացուցման առարկայով, գործնականում կարող է տևել բավականին երկար ժամանակ: Դրա հետևանքով հանցանք կատարած անձինք կարող են խուսափել իրական քրեական պատասխանատվությունից: Անգամ վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրության դեպքում, պայմանավորված բացառապես օբյեկտիվ պատճառներով, անհնար է դառնում մեղավոր անձանց դատապարտել և ենթարկել իրական պատժի: Արդյունքում խախտվում են ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված՝ պատասխանատվության անխուսափելիության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքները:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի սանկցիաները խնդրահարույց են ոչ միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների համատեքստում, այլ նաև արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահանջների առումով: Նույնիսկ քրեական պատասխանատվության ժամկետների սահմաններում անձի վերաբերյալ մեղադրական դատավճիռ կայացնելիս սահմանված պատիժները մեղմ

են և չեն համապատասխանում քննարկվող հանցանքների հասարակական վտանգավորությանը, չեն կարող ապահովել քրեական օրենքով նախատեսված պատժի նպատակները, կատարված արարքի համար կիրառվող քրեաիրավական հարկադրանքի միջոցի համաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում որպես պատժատեսակ նախատեսել ազատազրկումը՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելուց կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց զրկելը նախատեսելով որպես լրացուցիչ պատժատեսակ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայում խստացնել ազատազրկման ժամկետները՝ ներկայումս գործող առավելագույնը 1 տարի ժամկետով ազատազրկման փոխարեն սահմանելով առավելագույնը 6 տարի ժամկետով ազատազրկում:

Նախագիծը հետագայում ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառությունից հանվել է՝ բարձրացված խնդրին նոր քրեական օրենսգրքով տրված համակարգային լուծման պատճառաբանությամբ:

4. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է հստակեցնել քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նախատեսված հանցակազմերի առարկաները, 324-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նախատեսված հանցակազմերը միավորել մեկ մասում՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով պաշտոնական փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կամ պաշտոնական փաստաթուղթ չհանդիսացող կարևոր այլ փաստաթղթեր հափշտակելու, ինչպես նաև դրանք ոչնչացնելու, վնասելու կամ թաքցնելու համար, որը կատարվել է շահադիտական դրդումներով կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով: Բացի այդ, հաշվի առնելով այն, որ պաշտոնական փաստաթղթերի, դրոշմների, կնիքների կամ պաշտոնական փաստաթուղթ չհանդիսացող կարևոր այլ փաստաթղթերի հափշտակությունը պակաս հանրային վտանգավորություն չունի, քան դրանք թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը, Նախագծում առաջարկվել է որպես սանկցիա նախատեսել գործող խմբագրությամբ 324-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված սանկցիան:

Բացի այդ, հաշվի առնելով տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների հափշտակության դեպքերի տարածվածությունը, հիշյալ հանցագործությունների որակման շուրջ առկա տարակարծիք մոտեցումները, ինչպես նաև արարքները որակելիս գործնականում առաջացող դժվարությունները, իրավական որոշակիություն ապահովելու նպատակով առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի առարկաների շարքում նախատեսել նաև տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշները: Հաշվի առնելով նաև տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների շորթման

տարածվածությունը, միևնույն ժամանակ չբացառելով 324-րդ հոդվածի մյուս առարկաների դեմ շորթման եղանակով կատարվող ոտնձգությունների հնարավորությունը, առաջարկվել է 324-րդ հոդվածի օբյեկտիվ կողմի երկընտրելի գործողությունների շարքում նախատեսել նաև շորթումը:

5. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 172.4-րդ հոդվածով, ըստ որի՝ հասարակական վայրում, զանգվածային լրատվության միջոցով կամ համացանցով (այդ թվում՝ սոցիալական ցանցերով՝ անձանց անորոշ շրջանակի համար հասանելի եղանակով) խոսքի, պատկերի, նշանի, ձայնի կամ այլ միջոցով հայհոյանքը կամ անպարկեշտ արտահայտությունը, եթե չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

Այսինքն՝ առանձնացված են այն հարթակները կամ տեղերը, որոնցում կարող է դրսևորվել հայհոյանքը, այն է՝ հասարակական վայրը, զանգվածային լրատվության միջոցը կամ համացանցը (այդ թվում՝ սոցիալական ցանցերը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առաջարկվող կարգավորմամբ սահմանվել են նաև հայհոյանքի դրսևորման ձևերը, այն է՝ խոսքի, պատկերի, նշանի, ձայնի կամ այլ միջոցով՝ նպատակ ունենալով հնարավորինս համապարփակ կերպով ամրագրել հիմնական ձևերը՝ չբացառելով դրսևորման այլ ձևերի հնարավորությունը:

Միաժամանակ, բացառելու համար որակման հետ կապված հնարավոր խնդիրները և փակուղային իրավիճակները, սահմանվել է պայման, ըստ որի կատարված արարքը չպետք է պարունակի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (խուլիգանություն) հատկանիշներ:

Որպես պատասխանատվության տեսակ սահմանված է տուգանքը, իսկ տուգանքի չափ է սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսունապատիկը՝ նպատակ ունենալով հնարավորություն տալ իրավակիրառին, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հաշվի առնելով արարքի բնույթը և օրենսդրությամբ նախատեսված այլ հանգամանքները, ողջամիտ կիրառել՝ ի թիվս այլնի՝ նաև համաչափության սկզբունքի հստակ պահպանմամբ: Ընդ որում, տուգանքի չափի ընտրությունը պայմանավորված է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 13-րդ գլխով (*Հասարակական կարգի դեմ ոտնձգող վարչական իրավախախտումներ*), որտեղ նախատեսվում է կատարել հիմնական լրացումը՝ սահմանված պատժաչափերի հաշվառմամբ: Բացի այդ, պատժաչափի ընտրության հարցում էական է եղել նաև այն մոտեցումը, որ, հաշվի առնելով դրա առնչությունը (սակայն ոչ երբեք պաշտպանությունը) կարծիքի ազատ

արտահայտման՝ սահմանադրական և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով ամրագրված իրավունքին, պատժաչափը չպետք է լինի այնքան բարձր, որ իր բնույթով ընկալվի իբրև քրեական բնույթ ունեցող:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացվող 172.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել են կարգավորումներ, որոնք նպատակ ունեն կանխելու անձի կողմից նոր այդպիսի արարքի կատարումը՝ սահմանելով առավել խիստ իրավական ներգործության միջոցներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առաջարկվող կարգավորմամբ նախատեսված մյուս նոր կարգավորումները, որոնք վերաբերում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 13-րդ, 224-րդ, 261-րդ, 277-րդ և 287-րդ հոդվածներին, լրացվող 172.4-րդ հոդվածի լիարժեք իրացումն ապահովող հարակից լրացումներ և փոփոխություններ են:

Նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության կողմից հանվել է շրջանառությունից այն պատճառաբանությամբ, որ առաջարկվող կարգավորումները հակասում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված՝ արտահայտվելու ազատության իրավունքին:

6. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի, ««Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերով առաջարկվել է «Ոստիկանության մասին» օրենքի 10-րդ հոդվածում կատարել լրացում և նախատեսել, որ ոստիկանությունը, օրենքով սահմանված կարգով և դեպքերում, պարտավոր է հոգեբուժական կազմակերպություն (արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն ցուցաբերող առողջապահական մարմիններ) բերման ենթարկել հարկադիր բուժումից խուսափող անձանց:

Բացի այդ, առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասում կատարել լրացում և դատարանին իրավունք վերապահել, պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս, դատապարտյալի համար, ի թիվս գործող պարտականությունների, նախատեսել առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելու պարտականություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածում առաջարկվել է կատարել լրացում, որի միջոցով դատարանը հնարավորություն կունենա հոգեբույժի մոտ հարկադիր արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում նշանակելիս անձի վրա դնել առանց դատարանի որոշման մշտական բնակության վայրը չփոխելու և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելու

պարտականություն: Միաժամանակ, նախատեսվել է, որ անձը կարող է դիմել դատարան՝ մշտական բնակության վայրը փոխելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքը լքելու թույլտվություն տալու վերաբերյալ որոշում կայացնելու խնդրանքով:

Վերոգրյալի հիման վրա՝ ՀՀ Կառավարության կողմից 2006 թվականի հունիսի 22-ին ընդունված՝ «ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետում առաջարկվել է կատարել լրացումներ, որոնք ուղղված են ապահովելու վերոնշյալ նոր կարգավորումների ընդունման արդյունքում դրանց պահպանումը:

7. ՀՀ գլխավոր դատախազության կողմից կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն ի կատար ածելու փուլում, առանձին դեպքերում, ոստիկանության տարածքային ստորաբաժանումների կողմից պատժի կրումից խուսափող դատապարտված անձանց հայտնաբերելու և պատժի կրման վայր տեղափոխելու գործընթացում առկա է ոչ միատեսակ իրավակիրառ պրակտիկա, ինչը պայմանավորված է տվյալ ոլորտի օրենսդրական բացով:

Նշված գործընթացը ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չկազմակերպելու պայմաններում, այն է՝ ողջամիտ ժամկետում ազատազրկման դատապարտված անձին չհայտնաբերելու և պատժի կրման վայր չտեղափոխելու արդյունքում, ստացվում է մի իրավիճակ, երբ տևական ժամանակ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու և դատապարտյալին չհայտնաբերելու պայմաններում առկա է վերջինի կողմից նոր հանցագործություն կատարելու բարձր հավանականություն:

Վերոշարադրյալ խնդրին լուծում տալու և առկա օրենսդրական բացը լրացնելու նպատակով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434[1-րդ] հոդվածը լրացնել նոր պարբերությամբ, ըստ որի՝ հետաքննության մարմինը՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի կատար ածելու մասին կարգադրությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում դատապարտյալին չհայտնաբերելու դեպքում, հայտարարում է վերջինիս հետախուզում և կազմում հետախուզական գործ, որի մասին անհապաղ հայտնում է դատարանին ու հսկող դատախազին:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածում օգտագործվող «անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը» ձևակերպումը բավական անորոշ է, ինչը իրականում խոչընդոտում է կանխամտածված սնանկության դեպքերի բացահայտմանը և քրեական պատասխանատվության իրացմանը: Այսինքն՝ օրենսդիրը չի բացահայտել, թե որոնք են այն հանգամանքները, այն իրավաբանական փաստերը, որոնք կարող

են որակվել որպես անվճարունակության հատկանիշներ: Իրավական այս անորոշ ձևակերպման պատճառով դատարանները կայացնում են արդարացման դատական ակտեր:

Նշված հոդվածի իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրներին լուծում տալու նպատակով առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի «այլ անձանց շահերից ելնելով,» բառերից հետո ավելացնել «որոնք դրսևորվել են հաշվեկշռում առկա կամ սեփականության իրավունքով պատկանող գույքի դիտավորյալ ոչնչացմամբ, վնասմամբ, ակնհայտ անշահավետ, կեղծ, շինծու գործարքներ կնքելով, ակնհայտ անհիմն նվիրատվությամբ, պահանջի ակնհայտ անհիմն ներմամբ, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջմամբ, գույքը ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառելով, ծառայությունը կամ աշխատանքը ակնհայտ անհամարժեք ցածր գնով մատուցելով, ուրիշի պարտքը սեփականը դարձնելով, միջոցները ոչ նպատակային օգտագործելով, ակտիվների նվազեցմամբ» բառերը:

Նման կարգավորումը հնարավորություն կտա հստակեցնելու, լիարժեք բացահայտելու օրենսդրի կամքը և վերացնելու իրավական անորոշությունը՝ նպաստելով այս հոդվածի կիրառման տեսանկյունից կանխատեսելի քրեական քաղաքականությանն ու արդյունավետ արդարադատությանը:

Նախագիծը հետագայում ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառությունից հանվել է՝ բարձրացված խնդրին նոր քրեական օրենսգրքով տրված համակարգային լուծման պատճառաբանությամբ:

9. 2021 թվականի օգոստոսի 16-ին ուժի մեջ է մտել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N ՀՕ-185-Ն օրենքը, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որն ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում: Իրավասու մարմնի պաշտոնատար անձը սույն մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նրա իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ծանուցագիր և ապահովում է նրա իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N 818-ն որոշման մեջ փոփոխություն

և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի՝ «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումներից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» N 818-Ն որոշման մեջ իրականացնել համապատասխան փոփոխություններ: Մասնավորապես, առաջարկվել է սահմանել, որ այն օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի նկատմամբ, որն ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, քրեական հետապնդում հարուցած, նրան ազատությունից զրկած կամ նրա ազատությունն այլ կերպ սահմանափակած իրավասու մարմնի պաշտոնատար անձը վերջինիս պարզաբանում է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքով նախատեսված՝ ծանուցման պահից 15 օրվա ընթացքում ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու իրավունքի մասին, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ծանուցագիր և ապահովում է նրա իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմնին:

Ներկայացված նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 04.11.2021թ. N 1791-Ն որոշմամբ:

10. Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգիրքը, որոշ բացառություններով, ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից: Չափազանց կարևոր է, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքով սահմանված կարգավորումները լինեն հնարավորինս որոշակի, չպարունակեն ներքին հակասություններ, անհստակություններ, ինչը իրավակիրառ պրակտիկայում կարող է բացասական հետևանքներ առաջացնել՝ ինչպես իրավասու մարմինների արդյունավետ գործունեության, այնպես էլ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից:

Այս առումով նմանատիպ օրենսդրական խնդիր առկա է ՀՀ նոր քրեական օրենսգրքի 198-րդ և 199-րդ հոդվածներում: Այսպես, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների կատարման եղանակ է դիտարկում հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելը: Հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակի բովանդակությունը բացահայտված է նույն հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը, կամ 12 տարին չլրացած անձը: Իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանման

տեսանկյունից կարող են խնդիրներ առաջանալ այն հարցի տեսանկյունից, թե արդյոք 12 տարին չլրացած անձի հետ իր կամքով սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելու դեպքում անձը ենթակա՞ է քրեական պատասխանատվության, թե՞ ոչ: Բացի այդ, նման արարքը նշյալ հոդվածի 1-ին մասով որակելը, հաշվի առնելով կատարված արարքի բնույթը, վտանգավորության աստիճանը, այնքան էլ արդարացված չէ:

Իրականում, այս պահին առկա կարգավորմամբ օրենսդիրը նպատակ է ունեցել պաշտպանելու 12 տարին չլրացած անձին նաև այն դեպքում, երբ սեռական բնույթի գործողությունը կատարվել է իր համաձայնությամբ, կամքով: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ այս դեպքում կամքի վերաբերյալ դատողությունը, իր հերթին, որոշակիորեն պայմանական է, քանի որ այդ տարիքում կամքը, որպես այդպիսին, լիարժեք ձևավորված չի լինում: Այլ կերպ ասած, 12 տարին չլրացած անձը, տարիքային առանձնահատկությամբ պայմանավորված, ունակ չէ լիարժեք գիտակցելու իր արարքի բնույթը, հետևանքները, ուստի, նույնիսկ այն դեպքում, երբ նա սեռական բնույթի հարաբերություն է ունենում իր կամքով, ապա նրա հետ սեռական բնույթի հարաբերություն ունեցողին պետք է ենթարկել քրեական պատասխանատվության: Այս առումով, խնդիրն այն է, որ առկա ձևակերպումն այնպիսին է, որ կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ և չմեկնաբանվել այնպես, ինչպես վերոգրյալում նշվեց:

Որոշակի խնդիր առկա է նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածում: Այսպես, 199-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում անչափահասին, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը՝ 12-ից 16 տարին չլրացած անձին սեռական բնույթի գործողությունների հարկադրելու համար:

Վերոհիշյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվել է ՀՀ նոր քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «12-ից» բառը հանել, որի արդյունքում 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական պատասխանատվություն առկա կլինի անչափահասի նկատմամբ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների կատարման դեպքում, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ 14 տարին չլրացած անձի նկատմամբ նման արարք կատարելու դեպքում: Առաջարկվել է քննարկվող հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում կատարել հստակեցում և անչափահասի փոխարեն նշել կոնկրետ տարիքային միջակայքը՝ հաշվի առնելով, որ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նույնպես խոսքը վերաբերում է անչափահասին:

Բացի այդ, նախատեսվում է ՀՀ նոր քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 4-րդ մասում «կամ 12 տարին չլրացած անձը» բառերը հանել և դրա փոխարեն ավելացնել նոր 1.1 մաս՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով 12 տարին չլրացած անձի նկատմամբ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակման կամ

սեռական կարիքները բավարարելու համար, եթե այն կատարվել է 12 տարին չլրացած անձի կամքով:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իշխանության ներկայացուցչի պարտադիր տարր է, ի թիվս այլնի, կարգադրիչ լիազորություններով օժտված լինելու հանգամանքը: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձանց կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրվել կամ բռնություն գործադրելու սպառնալիք է եղել, մինչդեռ հնարավոր չի եղել արարքը որակելու ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով, քանի որ վերը նշված կարգադրիչ լիազորությունը բացակայել է:

Նման իրավիճակները բացառելու և անձանց արարքին պատշաճ, հանրային վտանգավորությանը համարժեք քրեաիրավական գնահատական տալու նպատակից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ քրեական օրենսգրքում կատարելու համապատասխան փոփոխություն, որի շնորհիվ որպես տուժող հանդես կգան ոչ միայն իշխանության ներկայացուցիչը կամ նրա մերձավոր ազգականը, այլև «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք: Այդ իսկ պատճառով ՀՀ դատախազության կողմից մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով, բացի հիշյալ փոփոխությունից, առաջարկվել է նաև ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 317[1] հոդվածով, որի 1-ին մասով նախատեսվում է սահմանել, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձին վիրավորելը կամ զրպարտելը, կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով: Միաժամանակ, Նախագծի նշյալ հոդվածի 2-րդ մասով առաջարկվել է սահմանել, որ այդ հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զանգվածային լրատվության միջոցներով կամ հրապարակային այլ եղանակով՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Սույն առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ հանրային կյանքում մարդկային հարաբերությունների որակի նվազումն իր ազդեցությունն է թողել նաև հանրային իշխանության նկատմամբ հարգանքի վրա, ինչի վկայությունն այն է, որ հաճախակիացել են դեպքերը (հաճախ նաև համացանցի միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով), երբ հանրային ծառայության մեջ գտնվող անձին, այդ թվում՝ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձին, վիրավորում կամ զրպարտում են: Ընդ որում, դա դրսևորվում է հրապարակայնորեն

և, ամենակարևորը, ուղղակիորեն փոխկապակցված է լինում տվյալ անձի կարգավիճակի հետ: Այսինքն՝ անձին վիրավորում կամ զրպարտում են ոչ թե նրան դիտարկելով որպես իրավահարաբերությունների մասնավոր սուբյեկտի, այլ որպես հանրային ծառայության մեջ գտնվող անձի, որը կատարում է իր ծառայողական պարտականությունները:

Ներկայացված նախագիծը հետագայում հանվել է շրջանառությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեականացվել է ծանր վիրավորանքը՝ առանց տարբերակելու վիրավորանքի օբյեկտը:

ՀՀ դատախազության ակտիվ ներգրավվածությամբ մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքը, որով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է նոր՝ 137.1-ին հոդվածով: Նշված հոդվածով քրեականացվել է անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ արժանապատվությունն անպարկեշտ կերպով նվաստացնելը կամ անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը: Որպես ծանրացնող հանգամանք է նախատեսվել նշված արարքը տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով կատարելը, ինչպես նաև նշված արարքները անձի հանրային գործունեությամբ պայմանավորված կամ միևնույն անձի նկատմամբ պարբերաբար կատարելը: Հստակեցվել է նաև «հանրային գործունեություն» հասկացությունը: Այսպես, հանրային գործունեություն է համարվում անձի կողմից իր մասնագիտական, գիտական-կրթական, ստեղծագործական, աշխատանքային, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված գործողությունը կամ անգործությունը:

Բացի այդ, ՀՀ դատախազության ակտիվ ներգրավվածությամբ մշակվել և 2021թ. մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով լուծվել է երկար ժամանակ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրը՝ կապված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ՀՀ Ազգային ժողով ուղարկվել դեռևս 2020թ. ՀՀ դատախազության ներկայացրած՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված՝ «ծառերը, թփերն առանց թույլտվության

տեղափոխելը» բառերը փոխարինել «ապօրինի ձեռք բերված արմատախիլ արված կամ հատված կամ մասնատված ծառերը, թփերը տեղափոխելը» բառերով:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման առանձին եղանակ հանդիսացող՝ «ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելու» եզրույթի հետ կապված գործնականում հանդիպող խնդիրները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից շարունակվել են աշխատանքները՝ զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու բնագավառում: Մասնավորապես, այդ նպատակով 2021 թվականի ընթացքում հերթական ատեստավորման է ներկայացել 61 դատախազ: ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումների համաձայն՝ 39 դատախազ համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին, 14-ը համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին՝ ընդգրկվելով ծառայողական առաջխաղացման ցուցակում, 8-ը համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով:

ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությամբ արտահերթ առաջխաղացման է ներկայացվել 29 դատախազ, որոնցից 27-ի վերաբերյալ հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն առաջխաղացման ցուցակում ընդգրկելու համար, 2-ի վերաբերյալ՝ բացասական:

2021թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն, դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացրել է 2 մրցույթ՝ մեկ բաց մրցույթ (հունվար ամսին) և մեկ արտահերթ բաց մրցույթ (հոկտեմբեր ամսին):

Բաց մրցույթներին մասնակցելու համար դիմել է 164 հավակնորդ, որոնցից 36-ը չեն ներկայացել մրցույթին: 59 հավակնորդի վերաբերյալ հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է դրական եզրակացություն՝ դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Դրական եզրակացություն ստացած 59 հավակնորդի ՀՀ գլխավոր դատախազն ընդգրկել է դատախազների թեկնածուների ցուցակում: Դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված 54 անձ ուղարկվել է ուսումնառության Արդարադատության ակադեմիա:

2021թ. ընթացքում փակ մրցույթին մասնակցելու խնդրանքով դիմել է 42 անձ: ՀՀ գլխավոր դատախազը բոլոր դիմորդներին թույլատրել է մասնակցել փակ մրցույթին: 42 մասնակցից 23-ի վերաբերյալ հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, իսկ 19-ի վերաբերյալ՝ դրական:

Դրական եզրակացություն ստացած 19 անձից 7-ն ընդգրկվել է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

ՀՀ գլխավոր դատախազի՝ 2021 թվականի նոյեմբերի 16-ի հրամանով ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը: Վարչության դատախազների հաստիքների թիվը կազմում է 13, որից համալրված է 9-ը: Նշանակման գործընթացը տեղի է ունեցել «Դատախազության մասին» օրենքում լրացում կատարելու մասին« ՀՕ-338-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 6-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հաշվետու ժամանակահատվածում կարևոր փոփոխություններ են տեղի ունեցել դատախազների թեկնածուների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց և փակ մրցույթների կազմակերպման, ինչպես նաև դատախազների առաջխաղացման գործընթացում: Մասնավորապես, ««Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքով (ուժի մեջ է մտել 2021թ. հոկտեմբերի 29-ին) նախատեսվել է դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց, ինչպես նաև առաջխաղացման հավակնող դատախազների բարեվարքության պարտադիր ստուգման ինստիտուտը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Ընդ որում, նշված մեխանիզմի ներդրումից հետո արձանագրված ցուցանիշները վկայում են, որ այն ներկայումս լիովին գործարկված է, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացությունները կարևոր դեր են խաղում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կամ ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան որոշումներ կայացնելիս: Այսպես, բարեվարքության ստուգման մեխանիզմի ներդրումից հետո, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահի կողմից, օրենքով սահմանված կարգով, ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացվել արտահերթ առաջխաղացման համար անցկացվող մրցույթին մասնակցող՝ 20, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած՝ 7, դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած՝ 88 և դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող փակ մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 1 անձի կողմից լրացված բարեվարքության հարցաթերթիկները: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից արտահերթ առաջխաղացման համար անցկացվող մրցույթին մասնակցող 20 դատախազից 15-ի դեպքում տրվել է դրական եզրակացություն, 5-ի դեպքում՝ դրական եզրակացություն՝ վերապահումով: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ

իրականացնող դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 7 անձից 6-ի դեպքում տրվել է դրական եզրակացություն, 1-ի դեպքում՝ դրական եզրակացություն՝ վերապահումով: Դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 88 անձից 57-ի դեպքում տրվել է դրական եզրակացություն, 8-ի դեպքում՝ բացասական եզրակացություն, 18-ի դեպքում՝ դրական եզրակացություն՝ վերապահումով, 5-ի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը եզրակացություն չի տվել՝ ներկայացված փաստաթղթերը թերի լինելու պատճառով: Դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող փակ մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 1 անձի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն:

Արտահերթ առաջխաղացման համար անցկացվող մրցույթին մասնակցող դատախազների վերաբերյալ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վերապահումով տրամադրված 5 դրական եզրակացություններում նշված հանգամանքները լրացուցիչ ստուգման են ենթարկվել ՀՀ գլխավոր դատախազությունում անցկացված ծառայողական ուսումնասիրությունների շրջանակում: Առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել են միայն այն դատախազները, որոնց վերաբերյալ վերը նշված հանգամանքների կրկնակի ստուգման արդյունքում վերջիններիս բարեվարքությունը կասկածի տակ դնող հանգամանքներ ի հայտ չեն բերվել:

Դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված 8 բացասական եզրակացությունները մանրակրկիտ ստուգման առարկա է դարձել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կողմից: 6 դեպքում հանձնաժողովը, նաև հիմք ընդունելով հայտատուի բարեվարքության վերաբերյալ տրամադրված բացասական եզրակացությունը, դրական եզրակացություն չի տվել ՀՀ գլխավոր դատախազին՝ տվյալ անձանց դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար: 2 դեպքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը, գնահատելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մատնանշած հանգամանքների փաստարկվածությունը և բնույթը, այդպիսիք գնահատել է հայտատուի բարեվարքությունը կասկածի տակ չդնող և դրական եզրակացություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ տվյալ անձանց դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար:

Բացի այդ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության հարցաթերթիկներում առկա տեղեկատվության

ուսումնասիրության և ամփոփման արդյունքում 10 դեպքով բացահայտվել են առերևույթ հանցագործության հատկանիշներ, որոնք չեն ներառվել եզրակացության հիմնական մասում և կցվել են եզրակացությանը՝ որպես հավելված: Դրանցում նշված հանգամանքները ստուգելու նպատակով հիշյալ հավելվածներում առկա տեղեկատվությունն ուղարկվել է իրավասու մարմիններին՝ առերևույթ հանցագործության հատկանիշների ստուգման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում, միջազգային գործընկերների հետ ակտիվ ներգրավվածությամբ, ապահովվել է համագործակցությունը նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ, որի շրջանակներում կազմակերպվել են տարբեր սեմինար-քննարկումներ և վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված կոնկրետ ոլորտներում դատախազների գործնական հմտությունների բարձրացմանը:

Մասնավորապես, Արդարադատության ակադեմիայի և Եվրոպայի Խորհրդի հետ համատեղ, իրավաբան-մասնագետների համար, մարդու իրավունքների ուսուցման (HELP) եվրոպական ծրագրի շրջանակներում, կազմակերպվել է «Արդարադատության մատչելիությունը կանանց համար» թեմայով դասընթացը, որին մասնակցել է 8 դատախազ:

Արդարադատության ակադեմիայի կողմից, Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական Միության հետ համատեղ, «CyberEast» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կիբեռհանցավորությունը և էլեկտրոնային ապացույցները» վերտառությամբ առցանց դասընթացներին մասնակցել է 7 դատախազ:

Արդարադատության ակադեմիայի և Եվրոպական Միության ու Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ իրականացվող՝ «Հայաստանում արդարադատության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Էթիկա և վարքագծի կանոններ», «Բարեվարքություն» վերտառությամբ դասընթացներին մասնակցել է 42 դատախազ: Նույն ծրագրի շրջանակներում կազմակերպված «Հաղորդակցություն» դասընթացին մասնակցել է 10 դատախազ:

Հիշյալ ծրագրի շրջանակներում կազմակերպվել է նաև «Կիբեռհանցավորության դեմ պայքար» վերտառությամբ դասընթացը, որին մասնակցել է 22 դատախազ:

ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ ակտիվ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են նաև վերապատրաստումներ՝ նվիրված կրիպտոարժույթներին առնչվող հանցավոր դրսևորումների և ատելության խոսքի դեմ քրեաիրավական պայքարին, որին մասնակցել են համապատասխանաբար՝ 4 և 8 դատախազներ:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների դիմում-բողոքների, պետական այլ մարմիններից ստացված հաղորդումների, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարների կողմից

ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերի հիման վրա իրականացվել է 71 ծառայողական ուսումնասիրություն՝ 79 դատախազի նկատմամբ (2020թ.՝ 56 ծառայողական ուսումնասիրություն՝ 73 դատախազի նկատմամբ):

Ծառայողական քննություն իրականացնելու համար հիմք են հանդիսացել նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության ընթացքում առերևույթ թերություններ, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների առերևույթ խախտումներ թույլ տալը: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հարուցվել է 8 կարգապահական վարույթ՝ 12 դատախազի նկատմամբ (նախորդ տարի՝ 7 կարգապահական վարույթ՝ 7 դատախազի նկատմամբ):

Կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել քրեական գործով նախաքննության նկատմամբ թերի և մակերեսային դատավարական ղեկավարում իրականացնելը, վերադաս դատախազի կողմից ոչ պատշաճ վերահսկողությունը, դատավարական ժամկետները չպահպանելը, դատախազի վարքագծի կանոնները խախտելը:

Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 7 դատախազի նկատմամբ հարուցված 4 կարգապահական վարույթ դադարեցվել է ՀՀ գլխավոր դատախազի 05.06.2018թ. N 49 հրամանի 26-րդ կետի հիմքով (կարգապահական վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարությամբ այն հանձնում է հանձնախմբին, կամ յոթնօրյա ժամկետում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է լինել նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7-օրյա ժամկետում էթիկայի հանձնաժողովի քննարկմանը չներկայացվելու դեպքում կարգապահական վարույթը դադարում է): 3 դատախազի նկատմամբ նշանակվել են «նկատողություն», 2 դատախազի նկատմամբ՝ «խիստ նկատողություն»[8], 1 դատախազի նկատմամբ՝ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժերը:

[8] Նշված 2 դեպքից մեկով կարգապահական վարույթը հարուցվել է 2020թ. դեկտեմբերի 23-ին, որի արդյունքներով տույժը նշանակվել է 2021թ. փետրվարի 8-ին:

10. Քաղաքացիների ընդունելության, դիմում-բողոքների քննարկման և հանրային կապերի ոլորտ

2021թ. ՀՀ դատախազությունում քաղաքացիներից ստացվել է 10.918 դիմում-բողոք՝ նախորդ տարվա 10.435-ի համեմատ: Ստացված դիմումների թիվն ավելացել է 483-ով կամ 4.6%-ով: Դիմումներից 2183-ը եղել է կրկնակի, 966-ը բավարարվել է (2020թ.՝ 1011), 2862-ին տրվել է պարզաբանում, 2204-ը մերժվել է (2020թ.՝ 2095), 172-ը թողնվել է անհետևանք (2020թ.՝ 143), 3-ը վերադարձվել է դիմումատուին (2020թ.՝ 9), 19 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2020թ.՝ 22), 78 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2020թ.՝ 93), 4473 դիմում ուղարկվել է այլ մարմին, 346 դիմումի քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ (2020թ.՝ 159):

2021թ. ստացված դիմում-բողոքներից 2559-ը վերաբերում է սեփականության և դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող հարցերին, 1836-ը՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող հարցերին (այդ թվում՝ 287-ը ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող հարցերին) 2106-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործություններին վերաբերող հարցերի, 1177-ը՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններին վերաբերող հարցերի:

2021թ. դատախազությունում կազմակերպվել է 1820 ընդունելություն՝ նախորդ տարվա 1375-ի դիմաց: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից քաղաքացիների ընդունելության դեպքերը, նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ համեմատած, ավելացել են 445-ով կամ 32.3%-ով:

Գլխավոր դատախազի մոտ կազմակերպվել է 15 ընդունելություն, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների և ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների մոտ՝ 9, ՀՀ զինվորական դատախազությունում՝ 233, ՀՀ գլխավոր դատախազության վարչություններում ՝ 269, Երևանի ու վարչական շրջանների դատախազություններում՝ 345, մարզերի դատախազություններում՝ 800, ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնում՝ 128 ընդունելություն:

Քաղաքացիների ընդունելությունների զգալի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազության ստորաբաժանումների առջև խնդիր է դրվել էականորեն ակտիվացնել շփումները քաղաքացիների, դատավարության մասնակիցների հետ՝ առաջին հերթին դատախազների մոտ ընդունելությունների կազմակերպման հաճախակիացման միջոցով: Նշվածը ոչ միայն հանրության հետ հաղորդակցության միջոցով համակարգի նկատմամբ վստահության բարձրացման նպատակ է հետապնդում, այլ նաև դատախազներին օգնում է կոնկրետ իրավիճակներում ստանալ հավելյալ տեղեկատվություն, որոշակի իրողությունների, հանգամանքների վերաբերյալ

դատախազների մոտ ձևավորել օբյեկտիվ պատկերացումներ և ներքին համոզմունք կարևոր դատավարական որոշումներ կայացնելուց առաջ:

Հայաստանի Հանրապետության դատախազության ռազմավարական կարևոր ուղղություններից մեկն իր գործունեության վերաբերյալ հանրության պատշաճ իրազեկվածության, քրեաիրավական ոլորտում հանրության իրավական գրագիտության բարձրացման, առաջնային մի քանի ուղղություններով հանցավորության դեմ պայքարում քրեական հետապնդման մարմինների գործունեության արդյունքների ներկայացման, դատախազության հրապակայնության, հաշվետվողականության, հանրային վերահսկողության, արդյունավետ հաղորդակցությամբ միջոցով ՀՀ դատախազության նկատմամբ հանրային վստահության մակարդակի առավել բարձրացման ապահովումն է:

Հիմնական ուղերձային նպատակը հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիության, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների կենսագործման անշեղության, քրեական քաղաքականությունն իրավունքի գերակայության վրա խարսխելու, մասնավոր և հանրային շահերի հավասակշռության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարում և պետության խախտված իրավունքների վերականգնման, քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով դատախազության հետևողականության, քրեական արդարադատության հանրային մատչելիության ապահովման հարցերում հասարակական համոզմունքի ամրապնդումն է:

Այդ նպատակներով, մասնավորապես, ՀՀ դատախազությունը 2021թ. ընթացքում կառուցել է ինչպես թիրախավորված մասնագիտական շրջանակների, այնպես էլ լայն հանրության հետ արդյունավետ նախաձեռնողական ուղղակի և անուղղակի՝ միջնորդավորված հաղորդակցություն՝ գործադրելով հնարավոր տեղեկատվության փոխանակման հիմնական բոլոր կրիչներն ու եղանակները՝ առաջին հերթին ապավինելով մեդիա և ցանցային հաղորդակցության ռեսուրսներին:

ՀՀ դատախազության 2021թ. տեղեկատվական քաղաքականությունն իրականացվել հետևյալ ուղղություններով:

- Լուսաբանել հանրապետությունում ընդհանրապես և Երևան քաղաքում, մարզերում՝ մասնավորապես, հանցավորության ընդհանուր վիճակը, միտումները:
- Լուսաբանել կոնկրետ ուղղություններով, մասնավորապես՝ հիմնականում անչափահասների հանցավորության, բնակարանային գողությունների, ճանապարհային երթևեկության կանոնների հանցավոր խախտումների, խոշտանգումների, կազմակերպված հանցավորության, ապօրինի անտառահատումների, կրկնահանցագործությունների, համակարգչային տեխնիկայի կիրառմամբ իրականացվող հանցագործությունների նախականխման, կանխարգելման, խափանման, բացահայտման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների կատարած ընթացիկ աշխատանքը, դրանց հետ կապված խնդիրները, իրավապահ մարմինների համագործակցությունը, ինչպես նաև՝ դրանց ուղղված ՀՀ

դատախազության նախաձեռնությունները դատախազական ներգործության իրավաչափ միջոցներով:

- Կոնկրետ դեպքերի, ինչպես նաև ենթաոլորտային ուսումնասիրությունների արդյունքների ներկայացմամբ հանրայնացնել կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարը՝ ինչպես հանցավոր արարքներ կատարած պաշտոնատար անձանց քրեական հետապնդման ենթարկելու, հատկապես սխեմատիկ բնույթ ունեցող կոռուպցիոն հանցագործություններն արմատախիլ անելու, կոռուպցիայով պետությանը, համայքներին պատճառված վնասների բացահայտման և վերականգնման ուղղությամբ իրականացված աշխատանքների համատեքստում: Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում լուսաբանման հիմնական օբյեկտ են եղել սոցիալական աջակցության, պետական և համայքային կառավարման, առողջապահության, պետական և հանրային գույքի պահպանության, հողօգտագործման, էներգետիկայի, ընդերքօգտագործման, ենթակառուցվածքների կառավարման, կրթության, պետական գնումների, զինվորական դատախազության իրավասության շրջանակներում՝ թիկունքային ծառայության, սպառազինության, ռազմաբժշկական ոլորտները:
- Ընդհանուր վիճակագրության, առանձին վարույթներին առնչվող տվյալների կանոնավոր հրապարակման միջոցով լուսաբանել ՀՀ դատախազության նոր գործառույթներից մեկի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացը, այդ թվում բռնագանձման ենթակա գույքի, դրամական միջոցների, ընկերություններում մասնակցությունների հայտնաբերման, որպես հայցի ապահովման միջոց՝ գույքերի նկատմամբ կալանքների կիրառման, ապօրինի ծագում ուենցող գույքի բռնագանձման հայցերի ներկայացման ուղղությամբ դատախազության նախաձեռնությունները:
- Կոնկրետ հանցավոր դրսևորումների, իրավիճակների, քրեական գործերի քննությունների լուսաբանմամբ ներկայացնել իրավական պետության կայացման, օրինապաշտ քաղաքացիական հասարակության ձևավորման ճանապարհին ամենավտանգավոր և հանցածին երևույթներից մեկի՝ քրեական ենթամշակույթի դեմ պայքարում պետության և իրավապահ մարմինների հետևողականությունը:
- Ապահովել պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազական գործառույթի իրացման շրջանակներում դատախազության կողմից կատարված ոլորտային ուսումնասիրությունների արդյունքների, դրանց հիման վրա հարուցվող քրեական գործերի, դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքներին պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ գործադրված ջանքերի արդյունքների, դատարան ներկայացվող՝ պետությանը պատճառված վնասների վերականգնմանն ուղղված հայցապահանջների, դրանց քննության արդյունքների լուսաբանումը՝ ինչպես համապատասխան վիճակագրության հրապարակման, այնպես էլ կոնկրետ դեպքերով արդյունքների ընթացիկ և ամփոփ տվյալների ներկայացման միջոցով:

- «Ծանր վիրավորանքի» քրեականացման հանգամանքով պայմանավորված և հաշվի առնելով հանրային լայն հետաքրքրությունը՝ ընդհանուր վիճակագրական տվյալների ներկայացմամբ և առանձին գործերի հանգամանքների մասին տեեկատվության հրապարակմամբ ներկայացնել այս նոր հանցատեսակով նախաքննական և դատական պրակտիկայի ձևավորման գործընթացը և հատկապես այդ արարքի քրեականացմամբ պետության կողմից հետապնդվող նպատակներն ու խնդիրները, դրա ներհասարակական համերաշխության սոցիալ-քաղաքական ու մենթալային նշանակությունը:
- Պայմանավորված 2021թ. ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների, ինչպես նաև խոշորացված համայնքներում մի քանի փուլով տեղական ինքնակառավարման մարմինների խմբավորված ընտրություններ անցկացվելու հանգամանքով՝ ներկայացնել հնարավոր ընտրական հանցագործությունների հակազդման, արձանագրվող դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, այդ դեպքերին պատշաճ իրավական ընթացք տալու առումով դատախազության նախաձեռնությունները: Այս համատեքստում հիմնական նպատակներից է եղել նախազգուշացնել քաղաքացիներին ընտրական հանցավոր հարաբերությունների մեջ մտնելու քրեաիրավական հետևանքների մասին՝ նոր քրեականացված արարքները, ընտրական հանցագործությունների համար պատիժների խստացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունները մատչելի կերպով բացատրելու միջոցով: Բացի այդ հիմնական խնդիրներից է եղել քաղաքացիներին իրազելը իրենց ընտրական իրավունքները պաշտպանելու մեխանիզմների մասին և ձևավորել կայուն ընկալում առ այն, որ դրանք անվերապահ պաշտպանվում են դատախազության և իրավապահ մարմինների կողմից: Այս աշխատանքներում ակտիվորեն ներգրավվել են դատախազները:
- Ներկայացնել դատախազության ներսում կատարված կառուցվածքային փոփոխությունները՝ դատահիրավական ոլորտի հակակոռուպցիոն բարեփոխումների համատեքստում:
- Ներկայացնել իրավունքի զարգացման, քրեադատավարական պրակտիկայի բարելավման, ինչպես նաև հանցագործությունների կատարմանը նպաստող օրենսդրական բացերի, թերությունների վերցման նպատակով դատախազության նախաձեռնությունները՝ որպես քրեական քաղաքականության անքակտելի բաղադրիչ: Այդ թվում մատչելի կերպով ներկայացնել կատարված վերլուծությունների հիման վրա մշակված օրենսդրական փոփոխությունների նախագծերը՝ ստեղծելով դրանց կապակցությամբ գործուն հետադարձ կապ և հանրային քննարկումների միջավայր:
- Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկվող գործերի, ընդհանուր վիճակագրական պատկերի, պարզաբանումների միջոցով ներկայացնել 2020թ. արցախյան պատերազմով պայմանավորված՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ

պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի, ռազմաքաղաքական ղեկավարության կողմից կատարված՝ մարդկության և խաղաղության դեմ ուղղված ծանրագույն հանցագործությունների, միջազգային հումանիտար իրավունքի կոպտագույն խախտումների, ահաբեկչության, ահաբեկչության հովանավորման դեպքերի քննության արդյունքները, ՀՀ և ԱրՀ զինված ուժերում հայկական բանակի մարտունակության, զինվորական ծառայության դեմ ուղղված՝ կատարված հանցագործությունների բացահայտմանը, քրեաիրավական գնահատականներ տալուն միտված՝ քրեական հետապնդման մարմինների աշխատանքների արդյունքները:

- Ներկայացնել 2021թ. ընթացքում, որպես հետպատերազմյան իրողություններ, ՀՀ տարածք ադրբեջանակն զինված ուժերի ապօրինի ներթափանցման դրսևորումներին, տարածքային ամբողջականության դեմ ուղղված գործողություններին, հրադադարի հանցավոր խախտումներին իրավական հակազդման, ինչպես նաև ՀՀ և ԱրՀ քաղաքացի հանդիսացող անձանց նկատմամբ Ադրբեջանում հարուցված քրեական հետապնդումների, ապօրինի հետախուզումների անցանկալի հետևանքները չեզոքացնելուն ուղղված ՀՀ դատախազության քայլերը:
- Լուսաբանել ՀՀ գլխավոր դատախազի այցերը արերկիր, մասնակցությունը միջազգային դատախազական և այլ կառույցների ամենամյա համաժողովներին, նիստերին, երկկողմ և բազմակողմ հանդիպումները, դրանց օրակարգերը՝ ՀՀ դատախազության առաջնահերթությունների, ՀՀ ազգային, պետական շահերի պաշտպանության համատեքստում:
- Լուսաբանել ԻԻՀ և ՌԴ գլխավոր դատախազների այցերը ՀՀ, դրանց շրջանակում կայացած հանդիպում-բանակցությունները, երկկողմ, բազմակողմ համագործակցության շուրջ ձեռքբերվող պայմանավորվածությունները, առանձին դեպքերում՝ ստորագրվող գործակցության ծրագրերը՝ ՀՀ դատախազության հետապնդած նպատակների, ՀՀ ազգային պետական շահերի պաշտպանության համատեքստում:
- Հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ սերտ գործակցության ծավալումը՝ հատկապես հակակոռուպցիոն վարքագծի խրախուսմանը միտված ուսուցողական, իրազեկման նախաձեռնությունների իրականացմամբ:

Այս աշխատանքներն իրականացվել են հանրային կապերի ապահովման հիմնական բոլոր միջոցներով: Մասնավորապես՝

– ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ զինվորական դատախազության և ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարների, քրեական գործերով դատավարական ղեկավարում և հսկողություն իրականացնող դատախազների կողմից տարբեր ձևաչափերով հարցազրուցների, ճեպազրույցների, առանձին հարցազրույցների անցկացմամբ,

– ՀՀ դատախազության կողմից պատրաստվող հեղինակային՝ տեղեկատվական բնույթի թեմատիկ տեսանյութերի, ռեպորտաժների պատրաստմամբ,

– ԶԼՄ-ների լայն շրջանակի հետ համագործակցությամբ պատրաստվող հրապարակումներին դատախազների մասնակցության ապահովմամբ:

ՀՀ դատախազության ռեսուրսներով, հեռուստատեսային, համացանցային լրատվամիջոցների և լրագրողների հետ համագործակցությամբ 2021թ. պատրաստվել և հրապարակվել է դատախազության և դատախազների գործունեության տարբեր ասպեկտներին առնչվող 129 տեսանյութ, որը 43%-ով ավելի է 2020թ. համեմատ:

- Բացի այդ, նպատակային տեղեկատվական կանոնավոր հոսք ապահովվել է նաև ՀՀ գլխավոր դատախազի, դատախազության ստորաբաժանումների գործունեության, հանրային հետաքրքրություն ունեցող քրեական առանձին գործերով միջանկյալ կամ վերջնական արդյունքների, պետական շահերի պաշտպանության գործառույթի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուսումնասիրությունների, իրավական փոխօգնության և հանձնման գործընթացում գործըներ երկրների իրավասու մարմինների հետ համագործակցության, դատախազության բողոքների հիման վրա վճռաբեկ դատարանի որոշումներով նախադեպային իրավունքի զարգացման և բազմաթիվ այլ ուղղություններով պաշտոնական հաղորդագրությունների, պաշտոնական պարզաբանումների, մեկնաբանությունների հրապարակման միջոցով:

2021թ. ՀՀ գլխավոր դատախազությունն այս եղանակներով հրապարակել է ընդհանուր առմամբ 275 հաղորդագրություն, որը 2020թ. համեմատ ավելի է շուրջ 11%-ով: Դրանք հրապարակվել են ինչպես ՀՀ դատախազության պաշտոնական կայքում, այնպես էլ տրամադրվել են հանրապետական և մարզային բոլոր լրատվամիջոցներին, տարածվել սոցիալական ցանցերում:

Առանձին, դրվագային իրավիճակներում պաշտոնական տեղեկատվություն, կամ տարբեր իրողությունների, հանգամանքների վերաբերյալ դատախազության պաշտոնական դիրքորոշումը հրապարակվել է միայն սոցիալական ցանցի միջոցով:

- Հանրության հետ հաղորդակցությունը ՀՀ դատախազությունը կառուցել է նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիման վրա քաղաքացիներից, ԶԼՄ-ներից, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, այլ սուբյեկտներից ստացված բանավոր և գրավոր հարցումներին հնարավորինս օպերատիվ պատասխանելու միջոցով:

2021թ. ընթացքում ՀՀ դատախազությունը միայն գրավոր եղանակով պատասխանել է ընդհանուր 244 հարցման: Այս ցուցանիշը 2020թ. համեմատ ավելի է 32.6%-ով:

- Հանրային հաղորդակցության ոլորտում էական նշանակություն ունի նաև ԶԼՄ մշտադիտարկման իրականացումը:

Տարվա ընթացքում իրականացվել է 10 տպագիր մամուլի, 120 էլեկտրոնային տեղեկատվական կայքերի և ռեսուրսների, 15 հեռուստա և ռադիոընկերությունների մշտադիտարկում:

Այս գործիքի կիրառումը ոչ միայն տեղեկատվական քաղաքականությունն առավել թիրախային և նպատակային դարձնելու հնարավորություն է տալիս, այլ նաև միջոց է արձանագրելու հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող տվյալներով ԶԼՄ և սոցցանցային հրապարակումները և նախաձեռնելու դրանց կապակցությամբ պատշաճ իրավական գործընթաց: Այլ կերպ ասած՝ ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի մշտադիտարկումը ՀՀ դատախազությունը համարում է առերևույթ հանցագործության նյութական հետքերի հայտնաբերման հիմնական աղբյուրներից մեկը՝ իր նախաձեռնությամբ դրանց հետամուտ լինելու նկատառումով: **Դրա մասին է վկայում հանգամանքը, որ 2021թ. մշտադիտարկման արդյունքներով ընթացք է տրվել ընդհանուր 296 հրապարակման, որը 2020թ. համեմատ ավելի է 35%-ով:**

2021թ. այս արդյունքների վրա էապես ազդել է տարվա ընթացքում տեղի ունեցած ընտրական գործընթացների շրջանում առավել հետևողական և բծախնդիր մշտադիտարկման իրականացումը, որի արդյունքում արձանագրվել են իրավական ընթացակարգով ստուգման ենթակա ավելի շատ հրապարակումներ:

Հանրային կապերի արդյունավետության հետագա բարձրացումը շարունակում է առաջնահերթություն հանդիսանալ ՀՀ դատախազության համար, որի իրականացման տեսանկյունից կարևոր ուղղություն է դիտարկվելու է նաև դատախազների և քաղաքացիների, դատավարության մասնակիցների միջև ուղղակի հաղորդակցության զարգացումը՝ առաջին հերթին դատախազների նախաձեռնությամբ ընդունելությունների կազմակերպման միջոցով: